

ՄԿՐՏԻՉ ԵՐԻՑԱՆՑ

**ԶՕՐԱՎԱՐ ՍՄԲԱՏԻ
ՅՈՒՅԵՐԸ**

Արտատպուած՝ «ՆՈՐ ԵՐԿԻՐ» ԷՃԱ



ԳԻՆ 15 ՖՐԱՆԲ

Տպարան Յ. ԹԻԻՐԱՊԵԱՆ

227, Bld. Raspail, Paris (14)

1936

ՄԿՐՏԻՉ ԵՐԻՑԱՆՑ

ԶՕՐԱՎԱՐ ՍՄԲԱՏԻ ՅՈՒՅԵՐԸ

Արտատպուած՝ «ՆՈՐ ԵՐԿԻՐ» էն



Ա. ՀԱՏՈՐ
1900 - 1914

Տպարան՝ Յ. ԹԻԻՐԱՊԵԱՆ

227, Boul. Raspail — PARIS (14)

ROYAL CANADIAN MOUNTED POLICE

1885

1885

ՔԱՆԻ ՄԸ ԽՕՍՔ

Չորրորդ անգամն է որ յուշերս քաղելու բարոյական հարկադրանքին առջեւ կը գտնուիմ եւ ամէն անգամ ունեւալ, վարանուծը կը բռնէ զիս :

Տակաւին այս օրերուս, երբ հայութեան ամենէն աւելի կոտորուած ու տանջուած մասին ճակատագիրը կախուած կը տեսնենք բարակ թելէ մը, կան որ յեղափոխական հին օրերու, մարտական հին գործունէութեան վերադարձի օրերը կ'երազեն ու կը մշակեն պայքարի ծրագիր, նոյն խանդավառութեամբ, յազթանակի նոյն միամիտ հաւատքով, ինչպէս այն օրերուն, երբ մեր ձեռքին մէջ հասարակ չախմախի մը կը ճակատագնէինք թրքական մովզէրին դէմ :

Առոնց համար, համայնակուել ջարդն ու ամենաւերաքորը, թրքահայութեան բնաջնջումը ու հայրենական հողերու ամայացումը անցած ~ գացած են, ինչպէս մեղմ հովը կ'անցնի ծառներուն մէջէն, ոչ իսկ տերեւ մը թափելով :

Յաճախ երանի կուտամ առոնց որ թղթի կտոր մը սեղանին վրայ մատիտ մը ձեռքերնին, կը գծեն ու կը գրեն, գիծէն ու գիրէն սպասելով հրաշք մը որ շեւտեսներ ո՞ւր եւ ի՞նչպէս պիտի յայտնուի :

Առոնց դէմ ալ կան որ, թէեւ նոյնքան հայրենասէր, ամէն ինչ տուած են ջուրին, ծայրայեղ յուսալքումով :

Առաւելապէս խառնուածքի խնդիր : Ոչ առաջինները կրնամ մեղադրել — այնքան ջերմ ու կենդանի կը գրա-

նեմ իրենց հայրենասիրութիւնը . ոչ ալ վերջինները ,
այնքան արդար կը թուի ըլլալ յուսահատութեան տրամարանութիւնը , համազգային ամուլ գոհողութիւններէ
վերջ , դար արժեցնել շփացանք :

Ինչ որ սակայն դիտ վարանումի կը մասնէ , ասրեց
թէ երիտասարդ այն նորեւուկներն են , որ ոչ միայն հին
ամէն արժէքի կը նային գոուղ արհամարհանքով , ոչ
միայն հալածուած , ջարդուած ու հարստահարուած ժողովուրդի մը ըմբոստացման բնական իրաւունքը կը դիտան
անըմբռնելի անտարբերութեամբ , այլ քիչ է մնացեր
որ գոհը դնեն դահիճի դերին մէջ :

Կրնայ ըլլալ որ հայ յեղափոխական մարտական
շարժումը թերութիւններ , նայն իսկ մեծ սույթաքումներ
ունեցած ըլլայ : Պատմութիւնը , որ մը , ամէն ինչ իր արժանի
տեղը կը դնէ :

Բայց այն օրերուն երբ սրտունց մը վատող եւ կոշտ
մը կտայար կեանքի արժէքով կը գնահատուէին , ամենէն
կենսական պիտոյքէն իսկ դուրի ըմբոստական շարժումը ,
հալածուած ոչ միայն թշնամի , այլ մփնչեւ իսկ
ժողովուրդին ամենէն ուժեղ ու կենսունակ տարրէն , չէր
կրնար անթերի կատարելութեամբ շարժիլ ու գործել :

Արդար չէ թրքահայ յեղափոխութեան վրայ բնուցնել
սրտերական ջարդերու մեղքը , երբ թրքական
սրտամութիւնը գրուած է նուաճեալ երկիրներու եւ ժողովուրդներու
արխնովը :

Արդար չէ ըմբոստական շարժումը գնահատել իր ելքով
ու , աւելի ճիշդը՝ մեր այսօրուայ կացութիւնը շափանիչ
բոնելով , երբ ան փաստօրէն՝ իբր ըմբոստութիւն
վայրագ բոնահայութեան մը գէմ , փաստօրէն

կանց կ'առնէ Օսմանեան Սահմանադրութեան սեմին վրայ :

Վասն կ'որակենք այն անձը որ համակերպութեամբ ու լոռութեամբ կը պատասխանէ իրեն հասցուած անարդանքին, վնասին եւ անարդարութեան :

Դարեր տեւող ու հետզհետէ ամբայցող սարկութեան շղթան թօթափելու ուշացաւ իսկ հայ ժողովուրդը :

Այս է որ կը հաստատէ առողջ տրամաբանութիւնը :

Ու որքան ալ, թրքահայ ժողովուրդին քաղաքական ազատագրութեան տեսակէտէն, հայ յեղափոխական կազմակերպուած շարժումը արդիւնաւոր չնկատուի, որքան ալ ան դանդուածային ըմբոստութեան մը համեմատութիւնները առած չլլայ՝ պատմութեան մէջ արձանագրելով մեծ թուականներ ու անկիւնադարձներ, այսուհանդերձ ան փաստը կը բերէ թրքահայ ժողովուրդին ամենէն աւելի ճնշուած կաշկանդուած ու սարքկացած մասին կենսունակութեան ու աւնականութեան :

Բարեկամ ու թշնամի թող վստահ ըլլան : Փաստերու եւ առողջ դատողութեան լոյսին տակ պատմութիւնը օր մը սխալի հաստատէ ինչ որ իմ խոր հաւատքս է :

Թէ նախկին եւ ներկայ Հայաստանները՝ իբր մին միւսին շարունակութիւնը՝ իրենց ծագումն ու դոյուրութիւնը կը պարտին այն հողին որ իր սնունդը քաղեց եւ անով գորացաւ, — հայ մարտական շարժումին :

Յրհնեալ այդ շարժումը որ դժբախտաբար չվարակեց բոլոր հայ սրտերն ու գլուխները, կորովի անսպասողբերներ սակայն բացաւ հայկական հողին խորը, թաքուն ու թերու անհուն շտեմարան մը երեւան բերաւ : Սերունդ մը գոնէ, այն սերունդը որ հայութեան ամենէն ճակատագրական պահերուն չվարանեցաւ դարհու-

ընկի զըրկանքներու եւ զոհոյութիւններու գինով, քայլ
առ քայլ պաշտպանելու նորաստեղծ հայ հայրենիքը՝
ընդդէմ քառապատիկ, կուշտ ու կուռ թշնամիի մը,
անաներ էր անով, իր հոգին ջրդեղեր էր անոր ներշն-
չումներով :

Եւ այսօր, երբ կարգ մը համբաւներ կը ջանան հայ
հայդուկը ներկայացնել իբր տեսակ մը աւազակ, ա-
ռանց բառը արտասանել յանդգնելու, այս խոր գիտակ-
ցութեան եւ անխախտ համոզման մէջ է որ հպարտու-
թիւնս կը վերագտնէ ինքզինքը :

Եւ այդ հպարտութեամբ ալ, ես որ ողջ մնալու
դժբախտութիւնն ունեցայ, յարգանքի եւ հիացումի իմ
սրտաբուխ տուրքս կը մատուցանեմ բոլոր անոնց որ
ինձմէ հեռու, կամ իմ կողքիս, անտրտունջ ինկան ազա-
տագրութեան արիւնստ ճամբուն վրայ :

Անոնց անգին զոհոյութիւնը պսակուած է այսօր :

Մէկ աչքս կուլայ՝ երբ կը նայիմ ամբողջ աշխարհի
մէջ ցրուած թրքահայ բեկորներուն : Բայց միւսը հը-
պարտութեամբ եւ հաւատքով կը ժպտի, երբ կը դառ-
նամ մեր Հայաստանին, որ առողջ, կենսունակ մանուկի
մը պէս կ'աճի ու հասակ կը նետէ :

Ու վստահ եմ որ անոնց հոգիներն ալ կը խայտան ի-
մինիս հետ :

Թող այս քանի մը տողերս կենդանի պահեն անոնց
յիշատակը՝ մոռացկոտ սրտերուն մէջ :

Մ Ա Ն Կ Ո Ւ Թ Ի Ի Ն Ս

Համեստ, արհեստաւոր, չարքաշ ընտանիք մըն էին Բորոյեանները, երբ աշխարհ եկայ 1881-ին, Մշոյ Ս. Մարինէ թաղը: Հայրս ու հօրեղբայրս կօշկակարութիւն կ'ընէին. մօրս հայրը՝ հացագործ էր:

Կրթութիւն չեմ տեսած: Ուսման ամբողջ պաշարս կը կազմէ ինչ որ կարելի է քաղել մէկ երկու տարուան ընթացքին, Տէր Թողիկեան դասարանէ մը:

Վեց – եօթը տարեկանիս զիս կը տեղաւորեն թաղին վարժարանը, որ ըստ սովորութեան եւ ինչպէս ամէն տեղ, եկեղեցիին կից էր: Չեմ յիշեր թէ այրն ու բենը սորվելու համար որքան ժամանակ եւ ի՞նչ տաժանելի աշխատանքի լծուած պէտք է ըլլամ: Կը յիշեմ միայն Նիկողոս վարժապետին հոգէառի լրջութիւնը, գրաբառ սաստերը, խոսքու կանչերը եւ երկար գաւազանը որ անխնայ կ'իջնէր ամէն սխալի, մանկական չարածճիտութեան կամ նոյն իսկ սովորական մրափի առթիւ:

Իմ օրերուս, ամբողջ գիտութիւնը պարակուած էր Աւետարանին, Սաղմոսին ու Նարեկին մէջ: Դիւրին է ըմբռնել թէ՛ նման խոժոռ պայմաններ չէին որ մէջս պիտի արթնցնէին սորվելու հետաքրքրութիւն այն տարիքին՝ երբ խազ ու գրօս ամենէն աւելին կը հրապուրեն:

Դպրոցէն փախուստ եւ տարեկիցներու հետ խմբովին անառակութիւն սովորական բաներ էին:

Մեծ հայրս Յովհաննէս Բորոյեան, որ որմնագիր էր, ստանձներ էր աղջկանց վարժարանի մը շինութիւնը՝

ապոց վարժարանին դիմացը : ժամանակիս մեծ մասը
 հոն կ'անցնէի, մեծ հօրս ստքերուն տակ՝ հոգ ու քար
 կրելով : Փոխանակ գպրոց յաճախելու, կ'օգնէի ուրիշի
 մը շինութեան : Ինձի համար սարքերու թիւն չէր ընելը :
 Ընդհակառակն աւելի հաճելի էր ցեխի ու տախտակի
 հետ խաղալ՝ նոյն խիչ յոգնելով՝ քան թէ Նիկոզոս վար-
 ժապետին դաստիարակի սպասնալիքին տակ աչքի լոյս
 թափել թուղթի վրայ :

Այս, եթէ այն ատեն ինձի հասկացնող մը ըլլար գրե-
 շին հրաշայի ուժը : Եթէ դիտնայի թէ ան կրնայ յեղա-
 փոխականը աւագակի վերածել մէկ հարուածով եւ ա-
 լագակը սրբացնել . . . :

Բայց մեր վարժապետն իսկ չէր դիտեր եւ հետեւա-
 քար կը մեծնայի թաղին ազատ լաճերուն հետ, խաղեր
 սարքելով :

Մտա երկու տարի, մէկ ստքս Նիկոզոս վարժապետի
 գպրոցն էր, միւս ստքս մեծ հօրս շինած վարժարանին
 մէջ : Մէկէն պիտի ստանայի այր ու բենի պաշարը, որ
 սարիներու բնթացքին լեռներու, ձորերու կամ քաղաք-
 ներու մէջ, սպասելու աստիճան պիտի նուազէր : Միւսէն
 կը քաղէի չարքաշութեան ու ժուժկալութեան անսպառ
 մթերքը որ դեռ այսօր ինձի պէս դեռ բազմաթիւ ուրիշ-
 ներու ալ կը բաւէ լիուլի ու կ'աւելնայ . . . :

Երբ աղջկանց վարժարանին շինութիւնը վերջացաւ
 եւ մեծ հայրս յանձնեց գրան բանալին, իմ ալ ստքս
 կարեցաւ Նիկոզոս վարժապետին դասարանէն :

Կերեւի, անասակ եւ անհամոզարտ բնաւորութիւն մը
 առնէի, հակառակ որ մեր տան մէջ դիս շփացնող ալ
 չկար : Ընդհակառակն սաստ, յանդիմանութիւն, կըրչ -

տամբանք եւ ընտանեկան այլ պատիժներ անպակաս էին
գլխէս :

Տասներկու – տասներեք տարեկանիս, ամենէն սիր-
րական զրօսանքս էր, տարեկիցներու հետ խումբեր կազ-
մել, եւ արշաւել մօտակայ այգիները, պտոյտի ելլել հա-
րեւան գիւղերը կամ բարձրանալ Ս. Աւագիոց վանքը,
որ խորհրդաւոր հմայքով մը կը տիրապետէր մանուկ
թէ շափահաս հոգիներուն վրայ :

Մեր խմբական արշաւանքներու ընթացքին, յաճախ
կը պատահէր որ ընդհարումներ ունենանք թուրք պա-
տանիներու հետ, որոնց հանդէպ բարեկամութիւն տա-
ծելու ոչ մէկ պատճառ կրնայինք ունենալ : Ընդհակա-
ռակն : Յեղաշին հակակրանքի եւ ատելութեան զգացու-
մը որ ընտանեկան յարկի տակ կը շնչէինք, կը մեծնար,
կը գորանար մեկ հետ, մանաւանդ որ առօրեայ պազ ու
կասկածոտ յարարերութիւնները Քիւրտերու եւ թուր-
քերու հետ, ու պարբերական ծանր միջադէպեր առատ
սնունդ կը մատակարարէին սրտերը թշնամութեամբ
լարելու իրարու հանդէպ :

Սովորական բան էր սպասել աղբիւր գացող թուրք
աղջիկներու ճամբան՝ կտորելու համար անոնց կուժե-
րը, իբր փոխվրէժ՝ թուրք պատանիներու նման արարք-
ներուն :

Վերջապէս, հօրս ուղած խելօք դպրոցասէր ու հնա-
զանդ պատանին չէի : Անոր մտքին մէջ, կ'երեւի, անվե-
րաքննելի կերպով, վճռուած հարց էր որ ես մարդ չեմ
ըլլար եւ այդ մտածումով ալ որոշեց զիս արհեստի դնել :

Հօրեգրայրս Ղազարը վարպետ կօշկակար էր : Ձիս
քովը գրին : Բայց շատ չանցած, հայրս գործով կը փո-
խադրուէր Մանազկերտ հոն հաստատուելու : Յնագլխս

մատաղբուխներն էր դիտ յանձնել կօշկակար հօրեղբորս
խնամքին, արհեստին լաւ վարժուելու համար: Սակայն,
հաշուի չէին առած իմ կարծիքս ալ: Ճամբորդութիւն,
նոր քաղաք, նոր վայրեր շատ գրաւիչ էին ինձ համար,
մանաւանդ որ մօրմէս ալ բաժնուելու ցաւը խոր տխրու-
թիւն կը պատճառէր ինձի:

Պնդաւմներս՝ որոնց կ'ընկերանային աղաչանք, լաց
ու սպառնալիք ի հարկին, յաղթանակը տարին: Մեկնե-
ցայ Մանազկերտ, Սիւխանայ ստորոտը՝ ծնողքիս հետ:

Երեք տարի մնացինք հոն: Հօրս գործը մեծ մասով,
չըջանի Քիւրտերուն հետ էր, որոնք իրենց աշտարակա-
յին բարախներով, հրացաններով եւ փամփշտակալնե-
րով՝ նախանձ գրգռելու աստիճան կ'ազդէին վրաս:
Սկսեր էի ցաւ զգալ որ քիւրտի տղայ չեմ, որպէս զի ես
ալ կարենամ գէնք կրել ու գործածել: Այս տրամադրու-
թիւնս հետզհետէ կը զօրանար մէջս, ամէն անգամ որ
զինուած Քիւրտեր հօրս կ'այցելէին եւ ինձի հետ խաղի
ու կատակի կ'ելլէին:

Մանազկերտ տեղափոխութեան ընթացքին, հօրս ըն-
կերացած էր նաեւ մէկ հօրեղբայրս. միասին կը գոր-
ծէին: Գործերը յաջող կ'երթային, ինչ որ նախանձը կը
չարժէր թուրքերու եւ Քիւրտերու: Հետեւանքն այն ե-
ղաւ որ սկսան ամէն միջոցի դիմել հօրս առեւտուրը վը-
տանդելու համար: Մանաւանդ որ աւանդական վարժու-
թիւնն ալ ունէին Հայուն ապրանքը չափով մը իրենցը
նկատելու: Մեծ քանակութեամբ ապրանք կը յանձնա-
բարէին, խոստանալով գրամը վճարել անյապաղ: Բայց
նապրանքը ստանալէ յետոյ, կը յիշէին իրենց վաղեմի,
ժողովական սովորութիւնը ու կը մոռնային վճարելու
իրենց խոստումը: Եւ ահա, վէճ, անախորժ խօսակցու-

Թիւն ու կուի՝ հօրս եւ իր յաճախորդներուն միջեւ :
 Հայրս ու հօրեղբայրս տաքարիւն մարդիկ էին եւ շատ ալ
 խօսքի ու սպառնալիքի տակ մնացող խմոր չունէին : Ինչ
 որ անչուշտ, կը նպաստէր միայն իրենց յարաբերու
 թիւնները աւելի սրելու :

Անգամ մը Քիւրտերը փորձեր էին մեր Սօսի անու
 նով ձին գողնալ : Չէին յաջողեր : Մինչեւ իսկ մեր կեան
 քին դէմ դաւելու միտքեր սկսեր էին յղանալ : Յղանալ
 որ կ'ըսեմ, սխալ չհասկցուիմ : Հոն, այդ օրերուն, սպա
 նութիւնը երկար բարակ խորհրդածութեան չէր կարօ
 տեր, երբ մանաւանդ հարցը կը դառնար ռայայի մը
 շուրջ : Մէկ վայրկեանի գործ էր : Բայց մերիններուն
 հետ, ստիպուած էին զգուշութեամբ շարժիլ, ծանօթ ըլ
 լալով անոնց աներկիւղ նկարագրին :

Քիւրտ երկու եղբայրներ, երկուքն ալ ցեղապետ,
 քանի մը անյաջող փորձեր կատարեցին խաղի բերելով
 սպաննելու հայրս ու հօրեղբայրս : Անգամ մըն ալ հրա
 ցան պարպեցին մեր տան վրայ : Կեանքը կը սկսէր ան
 տանելի դառնալ Մանազկերտի մէջ : Ու հակառակ շրջա
 պատի գրգռութեան, գործերը լաւ կ'երթային, բայց
 կեանքը աւելի թանկագին է ամէն տեղ եւ ամէն մարդու
 համար ու մերոնք որոշեցին վերադառնալ Մուշ, Մա
 նազկերտ ձգելով ինչ որ ունէին :

Մանազկերտի մէջ թէեւ հայկական դպրոց մը կար,
 բայց ոչ ես տրամադրութիւն ունէի յաճախելու, ոչ ալ
 հայրս զիս հոն ղրկելու : Գիտէր թէ աւելորդ ժամավա
 ճառութիւն է : Վարպետ կօշկակար մըն ալ չգտաւ որ
 զիս քովը տեղաւորէ, աշկերտութիւնս շարունակելու :
 Իբր հացթուխ մտայ փուռ մը ուր գործեցի մէկ տարի,

իրբ աշխատանքի վարձք ստանալով մեր տան սկաքցու
հայր :

Մուշի մէջ կրկին գտած էի իմ օդս ու ջուրս , որոնց
կարօտը քաշեր էի Մանուկեբաի մէջ : Ինձի համար եր-
կար ու տխուր բացակայութենէ մը յետոյ՝ ծննդավայր
վերադարձը նոր կորով հայթայթեր էր անառակու -
թեանս որ թուրք լամուկներու վրայ յարձակումները կը
կազմակերպէի աւելի կանոնաւորութեամբ : Օր մըն ալ
թագին մէկ Թրքուհին ծեծեցի : Եւ ահա , իրարանցում
ու յուզում բնակչութեան մէջ , տրտունջ ու բողոք ծնող-
քիս՝ ինձ դէմ :

Այս միջադէպը պատճառ եղաւ որ գիս կանչեն Ա-
ռաջնորդարան : Հոն , փոքրիկ սենեակի մը մէջ հաւաք-
ուած են Ղզլայաճի Արմենակը (Հրայր - Գծոխք) , Գե-
ղամ Տէր Կարապետեան եւ հօրեգօրս տղան՝ Վահանը :
Փոխն ի փոխ բաւական քարոզ կարգացին զլխուս , խը-
րատ , յանդիմանութիւն : Փորձեցին հասկցնել թէ ըն-
թացքս կրնայ վտանդել ծնողքս :

Մտիկ կ'ընէի յարգանքով , լուս գրեթէ երկիւղած՝
ինչպէս վայել է տղու մը որ Առաջնորդարան կը կանչուի
եւ ասով իսկ արդէն՝ ինքզինքը մեծցած , մարդու տեղ
դրուած կը սկսի նկատել . . . :

Բայց , ի՞նչ մեղքս պահեմ . շատ բան չէի հասկնար
խօսուածներէն :

Չհասկցայ նաեւ թէ ինչո՞ւ ասջեւս դրին մեծկակ
տեսարան մը որուն աջ ու ձախ եղերքներուն վրայ՝ մէկ
մէկ մամ կը փակէր , եւ յանձնարարեցին ինձի որ երգ-
ուրնեամբ Աւետարանին վրայ , թէ այլ եւս անառակու -
թիւն չպիտի բնեմ :

Ապշած կը գիտէի այս արարողութիւնը որ աչքան-

դակ տպաւորութեան մը տակ կաշկանդեր էր գիտ : Չէի
կրնար խօսիլ, մինչ խրատատուներս կը պնդէին որ երդ-
ուքնամ, մինչև որ բերանս բացուեցաւ :

— Ես, բոխ, գիրք ու մամ չեմ գիտնար. չեմ ալ հաս-
կնար թէ ի՞նչ է կը խաղաք :

Աւ գուռը երեսի վրայ գարնելով փախայ :

Այլ եւս, անգամ մըն ալ չզբաղեցան ինձմով, բայց
հօրս գէժքը երկար ատեն խոժոռ մնաց :

Ամէն յոյս վերջնապէս կտրեր էր ինձմէ եւ կերպով
մը՝ գիտ քաղաքէն հեռացնելու հարը կը մտածէր : Ա-
սի՞ծը շուշացաւ :

Այդ միջոցին, հայրս կերպասեղէնի տակաւորով կը
զբաղէր շրջակայ գիւղերուն մէջ : Եթէ ոչ տեւականօ-
րէն, գոնէ պարբերաբար՝ թաղը իմ անբաղձալի ներկա-
յութեանէս փրկելու միակ միջոցն էր, գիտ հետը քաշկա-
տել՝ ամէն անգամ որ գիւղերը երթար : Կէս թափառա-
կան այդ կեանքը, որ ինձ համար հրապուրիչ էր գիւ-
ղական նորութիւններով, իմ ալ փափաքիս կը համա-
պատասխանէր : Մկսայ ընկերանայ հօրս՝ իր տակաւորա-
կան թափառումներուն մէջ : Կերպասեղէն կը փոխանա-
կէ ինք, ցորենի, դարբի եւ այլ երկրագործական արտա-
դրութեանց հետ, եւ այդպէս հաւաքուած ապրանքները
կը բերէ ինք քաղաք ծախելու, գրամի վերածելու :

Ժամանակ մը այսպէս թաւալեցաւ կեանքը՝ աւանց
միջոցէպի :

Հայրս գոհ էր ինձմէ : Առեւտրական ընդունակու-
թիւն նշմարելը էր մէջս եւ սկսեք էր կարծիքը փոխել իմ
մասին : Կը սկսէր հաւատալ թէ ես ալ կարգին մարդ կը-
նամ դասնայ ու կը քաջուրէր գիտ :

Մինչև որ գարձեայ եւ այս անգամ անդամնայի

կերպով յուսախար եղաւ ինձմէ, հետեւեալ պարագա-
ներուն տակ:

Գործի բերումով հայրս քաղաքէն կը բացակայէր
օր մը: Մեր ձեռքը դանուած ապրանքները ծախուած եւ
կամ մթերուած էին ապահով տեղ մը: Այնպէս որ որ եւ
է աշխատանք չունէի կատարելիք: Կը մնար ժամանակը
հաճելի կերպով անցընելու մասին մտածել ու քանի մը
ընկերներով, որոշեցինք, աւելի ճիշդը նիւթեցինք դէպի
Առաքելոց վանք՝ արշաւ մը:

Բոլորս ալ սակայն դրամի երես չէինք տեսներ: Իսկ
Առաքելոց վանք ուխտի երթն անգամ, նոյն իսկ երա-
նելի այն օրերուն, երբ ընտանիք մը օր կ'անցընէր երկու
երեք դրուշով, դրամ կը պահանջէր:

Բոլորս միացեալ ջանքերով, գլուխ գլխի տուած ինչ
որ ըրինք չկրցանք փոքրիկ դումար մը քով քովի բերել:
Բայց մտադրած էի ընկերովի արշաւել: Ու լոյսը նորէն
ինձմէ ծագեցաւ:

Օգտուելով հօրս բացակայութենէն, անոր մթերքէն
վերցուցի տասը կոտ ցորեն ու ծախեցի:

Այս մաքսանկնդութիւնը գրականս մտցուց հարիւր
դրուշ որ հարստութեան մը հաւատար էր իմ երեւակա-
յութեանս համար: Եւ այդ դումարին մեզ ներշնչած հը-
պարտ վստահութեամբը, ճամբայ ինկանք:

Օր մը, երկուք, մինչեւ որ դրամը ջուրը քաշեց:
Ընկերներս վերադարձան վանքէն տուն: Ես կը շարու-
նակէի մնալ Առաքելոց վանքի ուխտաւորներուն մէջ, ա-
սանց ո եւ է ուխտի, իրբ շուարած հեթանոս մը, որ
խղճի խայթերէ ալ կը տատապի եւ հողերով բեռնաւոր
գլուխ մը կը պատպնէ անկիւնէ անկիւն:

Հարիւր դրուշը հաճոյքով եւ ուրախութեամբ կե-

բեր, լմնցուցեր էի ընկերներուս հետ, իբր անոնց ազան :
 Պէտք եղաւ որ առանց դրամի մնամ, որպէս զի սկսիմ
 յիշել թէ հօրս տալիք հաշիւ ունիմ : Ի՞նչ պիտի ըսէի
 տնեցիներուն, որոնց լուր իսկ չէի տուած բացակայու-
 թեանս մասին :

Հօրս խոժոռ դէմքը արդէն սարսուռ կը պատցնէր
 կոնակիս վրայ, ուր կը նախազգայի հօրենական ծանր
 թաթերու հարուածը : Մեծէն աւելի, կարգ մը տհաճելի
 հարցումներու տրուելիք պատասխաններն էին որ միտքս
 կը շարշրկէին ու վերագարծի վարանումները կը սասա-
 կացնէին մէջս :

Բայց օրերը կ'անցնէին ու Առաքելացի ուխտաւոր-
 ները կը քաշուէին : Վաճառքը կ'ամայանար ու իմ չամաս-
 ներկայութիւնս այնպէս, կրնար նոր վտանգ բանալ
 գլխուս :

Տուն դառնալէն ուրիշ ճար չկար, մանաւանդ որ
 ուտեստի պակասը այնքան ալ հաճոյք չէր պատճառե-
 ինծի : Աւտան օրուան բացակայութենէ յետոյ, խաչս
 հանեցի ու քաջարար ճամբայ ինկայ գէպի տուն :

Մնացքս երկար փնտռել էին զիս ապարդիւն եւ թի
 վերջոյ, ճարահատ, բացակայութիւնս վերագրելով կա-
 մաւոր փախուստի, ջնջել էին զիս տնեցիներու ցանկէն :
 Յանկին մէջ դարձեալ իմ տեղս ու կարգս գրաւելու հա-
 մար պէտք եղաւ որ հանդուրժեմ ձեռի մը, որ անգամ
 մըն ալ եկաւ անհերքելի կերպով փաստելու եւ հաստա-
 տելու միտիս ու սակարներուս ամբուլթիւնը : Յուսուցեր
 էի որ վերագարծիս առթած ուրախութիւնը գոնէ, մայրս
 պիտի գրգէ միջամտելու եւ կակղելու հօրս դայրս թր :
 Ինձ տրուած էր յուստիար ըլլալ գառնօրէն : Մայրս ոչ
 միայն չէր միջամտել ալ ձեռին կ'ընկերանար խիստ

յանդ իմ անութիւններսով եւ սպառնայիքնելոսով :

Յե՛ծին տաղ իսկ, նկատեր էի սր աչլ եւս յսրվոր, խրատ շէն կարգար դլխոււս : Աչլ ամենէն մեղմ խօսքը անէ՛ծք մըն է կամ սպառնայիք մը :

Չեմ յիշեր թէ յիշատակալի այդ օրը, երբ Յոսեփ Երանելիին անդամ, թերեւս կրկին պիտի անխճէր իր ծնողքը եւ ծննդեան օրը, որոշեցի՞՞ կամ խոստացա՞յ կարգին մարդ գասնալ, ինչպէ՛ս կը պահանջէին :

Գիտեմ թէ ատեն մը յետոյ, հայրս դեռ բաւական բան քաշեց ձեռքէս : Ինձ համար կարեւորն այն էր սր ծեծը մեղմացուցեր էր իր դայրոյթը եւ անկից յետոյ՝ իբր ընտանիքի պատուական մէկ անդամը՝ յօժարեր էր գարձեալ զիս տեսնելու ճաշի սեղանին շուրջ, որուն այնքան կարօտն էի քաշեր :

Անկից յետոյ, ըստ աւաջնայն, շարունակեցի հօրս հետ թափառիլ գիւղէ գիւղ, մարդելու իմ տեւարական ընդունակութիւններս, մինչեւ որ գէպքերը եկան վերջ գնելու իմ սոսարէզիս, որուն մէջ, եթէ Հաճի Բրբանոս մը կամ Գալուստ Կիւլպէնկեան մըն ալ չըլլայի, թերեւս հասնէի գիրքի մը, որ պատկասանք սպգէր անոնց որ այսօր պէտք կը տեսնեն զիս արհամարհելու իբր մի ոմն « մշեցի իմ քապեա » , մոռնալով որ ժամանակին քիչ մը խունկ ալ ինձի ծիամձ են, իրենք գիրենք փառաւորելու համար :

Օր մը, հայրս Մզսու տղայ Վահանն ու ես ճամբայ ինկանք գէպի Չէրքէզներու շրջանը, ուր կանգ առինք Յիսափու կոչուած գիւղը :

Հոգ, մենք մեր ապրանքները տարածած, յաճախորդի կը սպասէինք, Քիւրտ մը մօտեցաւ եւ խնդրանքէն մինչեւ սպառնալիս պահանջ, կտար մը կերպտուե-

դէն ուզեց : Ի հարկէ , առձեց վճարումի : Եթէ գոհա-
ցուն չստանար , լուր պիտի տար աւագակախումբի մը ,
որ մեր ամէն ինչը կողոպտէր : Սպանալիքը ըստ երե-
ւոյթին , համոզիչ էր : Հայրս ու վահանը կակուղցեր էին
եւ տեղի տալու նշաններ կը մատնէին , եթէ միջամտու-
թեամբս շխանդարէի իրենց թոյլ արամագրութիւնները :

Պարզապէս կատուեր էի , Քիւրտին անիրաւութիւնն
ու յամտութիւնը՝ այնքան զայրացուցեր էին զիս , որ
եթէ ինքզինքս փոքր չզգայի անոր լայնշի իրանին առ-
ջեւ , պատրաստ էի վրան նետուելու : Կատաղութիւնս
մերիններէն կ'առնէի լեզուիս տալով , մինչեւ որ սրոշե-
ցին , ճամբել Քիւրտը՝ իր աւագակախումբին քով , ա-
ռանց բան մը տալու : Բայց միեւնոյն ատեն ալ սրոշեցին
հեռանալ այդ վայրէն , դէպի Չըրընք եւ Այնան գիւղերը :

Տաժանելի ճամբորդոթիւն՝ վախի սպաւորութեան
տակ : Ամէն մէկ քայլի , թուփի մը տակէն յանկարծ
յայտնուող մէկ քանի Քիւրտերու , կամ հեռուէն մեզ
ուղղուած հրազէնի մը պայթիւնին կը ազատէին հայրս
ու վահանը , որոնց վախը չէի բաժնէր պատանեկան ան-
փութութեամբ :

Հանդարտօրէն , առանց միջադէպի , հասանք վերջա-
պէս Չըրընք գիւղը , ուր հայրս լայն շունչ մը քաշեց :

Այս գիւղն եղաւ աղետարական թափառումներու
վերջին հանգրուանը , ուր առաջին անգամ ըլլալով ,
սիրաս դարեւաւ աղջկան մը համար : Հանդիպեր էի Մավի
անունով չէրքէզ տարեկից աղջկան մը , որուն շարու-
թեամբ լեցուն տկնարկները նետի պէս մխուէր էին սիր-
տըս : Փեղեցիկ , բարեկազմ ու շնորհալի , մանուսանդ
յանդուզն նայուածքով , բաւական ալ համարձակ իր
շարժումներուն մէջ , աղջիկը անմիջապէս գրաւեր էր

պատանիի տաք երեւակայութիւնս, որ մինչեւ այն ա-
տեն, կաշկանդուած մեծցեր էր խստակրօն տան մը ու
միջավայրի մը ազդեցութեան տակ:

Բայց կ'երեւի, կապերը քակելու տարիքս եկած էր
որ առանց նկատի առնելու շրջապատի մոլեւանդ խստու-
թիւնը, առիթը չէի փախցնել զեզերելու Մավիենց տան
շուրջը, գողունի ակնարկ մը փոխանակելու, ժպիտ մը
քաղելու յոյսով:

Այջիկը դիտէր իմ տաք տրամադրութիւններս իրեն
հանդէպ ու քաջալերանք չէր որ կը պլանար: Մինչեւ
իսկ, եթէ պատահէր որ դիտ շտեմնէր իր տան շուրջ,
ինքն իսկ փողոց կ'իյնար դիտ վնասելու:

Պատահեցաւ որ իրարու բաւական ալ մօտենանք, ի-
րարու ձայն լսելու, իրարու հետ մէկ քանի խօսք փո-
խանակելու միջազգային բարբառով, որ քրտերէնն էր:

Այդ դադտապողի տեսակցութիւններու ընթացքին,
Չէրքէզուհին ինծի նուիրեր էր դաշոյն մը, զոր խնամ-
քով կը պահէի բարձիս տակ:

Բայց, կ'երեւի, գրուած էր որ ամենէն անմեղ հա-
ճոյքն իսկ պիտի խանդարուէր: Ոչ միայն հայրս բաներ
մը կրտահած էր, այլ եւ դուռ դրացի սկսեր էին նախ
փափաւ, յետոյ կոպիտ ակնարկութիւններ ընել, հուսկ
ուրեմն, թշնամական բացայայտ վարմունքով զգացնե-
լու համար իրենց դժգոհութիւնները:

Մինչեւ որ հայրս ստիպուեցաւ իր օրհնած բերանը
կրկին բանալ՝ քաջալերուած Վահանէն: Դարձեալ խը-
րատ, յանդիմանութիւն, սպառնալիք, մինչեւ իսկ ազա-
շանք: Արովհետեւ ոչ միայն իրենց առեւտուրը կը վը-
տանդուէր, այլ եւ կեանքն ալ լուրջ սպառնալիքի տակ
էր:

Յր մըն ալ, շար բախտէն պատահեցաւ հետեւեալ միջոցէսը :

Օրուան առեւտուրէն յետոյ՝ յողնած, երեքս մէկ քաշուեր էինք մեր սենեակը հանգչելու : Հայրս ու Վահանը առիթ ու պատրուակ գտեր էին նորէն զիս կշտամբելու սիրահարական խաղաղ ելոյթներու համար երբ անակնկալ կերպով, տանտէրն եկաւ դուռը կղպեց մեր վրայ եւ աւանց ս եւ է բացատրութիւն տալու հեռացաւ զնաց :

Բնականաբար, հոն ուր բացատրութիւն չի տրուիր, պատճառ կը փնտռուի : Ու պատճառը պատրաստ էր : Ես էի միշտ իմ ընթացքս : Այս անգամ ալ՝ սիրարանութիւնս չէր քէզ աղջկան հետ : Բայց, հայրս, կ'երեւի, բուսական խելացի էր որ հասկցաւ թէ այդ նեղ պահուն ոչ ինձի ուղղուած յանդիմանութիւն ու անէծք կրնան դուռը բանալ տալ, ոչ ալ մեզ փրկել կացութենէ մը որ տխուր ենթադրութիւններու կը մղէր մեզ բոլորս : Ու սենեակին մէջտեղը, ծնրագիր ու բազկատարած, հրեշտակներն ու սուրբերը կը կանչէր օգնութեան :

Մութը կոխեր էր արդէն : Գլուխս դրած բարձին, որուն տակ կը հանգչէր Մազիի նուիրած դաշոյնը, սկըսայ քնանալ, մինչ հայրս ու Վահանը կ'որոշէին ամբողջ գիշերը աղօթքով լուսցնել :

Կ'երեւի Աստուած լսեց անսնց աղօթքը, որ յաջորդ տուտուն, տանտէրն եկաւ դուռը բանալու ու բացատրութիւն տալու :

Յայտնուեցաւ թէ Յրօնքի մէջ կուի մը տեղի ունեցեր էր յեղափոխականներու — Գուրգէնն ու իր խումբը — եւ կատապարական զինուորներուն միջեւ, թէ գեղացիները բոլորը սարսափած էին եւ զգուշութեան հա-

մար դուռը փակեր էր մեր վրայ, որպէս զի որ եւ է վը-
տանդ չգայ մեր դիտուն :

Այդ գէպքը պատճառ եղաւ որ հայրս հաւաքէ իր
գոյքերը ու բոլորս մէկ աճապարանքով քչէ քաղաք :

Յրօնքի կռիւը գերագրգուեր էր Տարօնի ժողովուրդը
որուն ազգային գիտակցութիւնը նոր կը սկսէր արթըն-
նալ ու արմատանալ դարաւոր մրափէ մը յետոյ :

Առողջ մանուկի մը պէս, որ տարիքին հետ կը սկսի
խելք կապել, եւ իր կեանքին կապուած գէպքերը եւ
գէմքերը կը դիտէ սեփական ուժի մը հստատութեամբ,
Տարօնի ժողովուրդը օրէ օր կը հասուննար բոնութեան
գէմ ընդդիմութեան գաղափարին մէջ :

Վաթսուռական թուականներէն առդին, երբ Քրիմ-
եան սկսեր էր Մշոյ մէջ պտտցնել իր արժուային սրա-
տես աղնարկները, սթափման ալիքը թաւալեր էր քա-
ղաքէն դէպի գիւղերն ու վանքերն անգամ : Պօսքի ու
գիրի ուժով, Հայոց Հայրիկը քարոզեր, ներշնչեր, ան-
խոնջ կազմակերպեր ու զարթօնքի հարուածը տուեր էր
քնացող ուղեղներուն, մինչ միւս կողմէ, Պոլսոյ Ազգա-
յին Սահմանադրութեան հեռաւոր արձագանդներն ան-
գամ, երբեմնի ճակատագրապաշտ, կամարեկ ժողո-
վուրդին կը սորվեցնէին ազգային հստատութեան զգա-
ցումը որ այլ եւս թոյլ չէր տար հանդուրժելու օտարին
քնահաճ ու անպատուարեր տիրապետութեան, թուրք
եւ քիւրտ միացեալ հարստահարութեանց ու հալածանք-
ներուն :

Ս. Կարապետի ժառանգաւորացէն եւ Ս. Առաքելոցի
վարժարանէն դատ, յետին գիւղին մէջ խի քացուեր էր
ճիտական վարժարան մը, ուր ճիշդ է թէ մանուկը ամէն
բանէ առաջ կը վարժուէր լաւ տիրացու գառնալ, բայց

կը սորվէր հայ մեծնայ :

Այգային զարթօնքի մթնոլորտի մը մէջ էր որ ութ-սունական թուականներուն, Միացեալ Ընկերութիւնը Մուշի մէջ կը հիմնէր Կեդրոնականը, որ մաքի մեծ հերոսի մը Մկրտիչ Սարեանի կրակոտ շնչին տակ, կոչուած էր հասցնելու անվեհեր սերունդ մը յեղափոխական գործիչներու եւ դաստիարակներու, ինչպէս անմտանայի Մարգար Վարժապետը, Հրայրը, Գեղամը եւ գեռ այնքան ուրիշներ :

Սարեանին որ դժբախտ ճակատագիր մը ունեցաւ եւ թշուառ ու լքուած, 1900-ին մեռաւ Իզմիր, հիւանդանոցի մը մէջ, իբր Միացեալի անօրէն կը յաջորդէր յեղափոխական ուրիշ տիտան մը՝ Միհրան Տամատեանը, որ յայտնի էր իբր Հնչակեան գործիչ :

Պէտք է ըսել թէ Միացեալի վարժապետները աւելի յեղափոխական քարոզիչներ ու կազմակերպիչներ էին, որոնք կը ծպտուէին ուսուցիչի դերով ու դիմակով, ոչ միայն զպրօցներուն այլ ժողովուրդին մէջ մանաւանդ, աւելի աղատօրէն կարենալ ցանկու համար աղգային գիտակցութեան սերմերը :

Ու սերմերը կ'իյնային պարարտ հողին վրայ, շնորհիւ անիշխանական կացութեան, որ թուրք կառավարութեան վարչական եղանակն էր : Հարստահարութիւն, կողոպուտ, հայաժանք՝ հայուն բաժինն էին : Իսկ հայուն կեանքը հազիւ թէ փամփուշտի մը գինը արժէր :

Կառավարութիւնը գեղացին կը կողոպտէր իր օրինաւոր միջոցներով : Քիւրտ պէյն ու աւազակը կը թաշանէին իրենց քմահաճոյքով, որ Հայուն համար՝ օրէնքի աժ ունենալու էր : Կառավարական հարկահաւաքման համար հայ գիւղերը գրկուած ստիկաններուն բռնու-

Թիւնները կը գլխին ամէն երեւակայելի լրբութեան սահման : Իսկ քիւրտ պէյերու անհաշիւ հարստահարութիւնները որոնց գէմ բողոքն իսկ յաճախ խեղճ գեղացիին կը վերադառնար փոխվրէժի սարսափներով, պարզապէս կը քաջալերուէին կառավարութեան կողմէ, որ եթէ ուղէր իսկ անոցը էր սանձելու քրտական աւատապետութիւնը :

Այս կացութիւնը յեղափոխական քարոզչութեան շունչին տակ, Մուշի եւ շրջակայքի գիւղերուն մէջ ըստեղծէր էր ըմբոստ տրամադրութիւն մը, որ միւս կողմէ սնունդ կ'առնէր տեղական թէ հեռաւոր ազգային գէպքերով :

Այդ թուականներուն արդէն կազմակերպուած էին յեղափոխական կուսակցութիւնները ու կը գործէին գաղտնօրէն թէ հրապարակաւ :

Հնչակեանները, որ ամենէն առաջ՝ իբր կազմակերպուած ուժ, լծուեր էին աղատագրական պայքարին, Մուշի եւ Սասնոյ շրջանները զրկեր էին իրենց լաւագոյն գործիչները, որոնք ամենայեալին գիւղին մէջ իսկ ըստեղծէր էին գաղտնի այլ ամուր, քաջարի կորիզներ :

Դաշնակցութիւնը որ համեմատաբար աւելի նոր էր շրջանին մէջ իր կարգին ջանք չէր խնայեր կազմակերպչական գետնի վրայ :

Ու հակառակ խիստ գրաքննութեան, որ լրագրական տողերուն մէջ սխալ տառ մը անգամ չէր փախցնէր, բունութեան գէմ կազմակերպուած ցոյցերու եւ գէպքերու ազմուկը, բերնէ բերան, կամ գաղտնի թղթակցութեամբ, աւելի խոշորցած կը հասնէին մինչեւ գիւղական յեալին անկիւնը կորովի կանչելով ամենէն թոյլ հողիներն անգամ :

Արդէն տեղի ունեցեր էին Կարնոյ դէպքը, Գուժ – Գափուլի*եւ Պապը – Ալիի ցոյցերը, Օսմանեան գրամատան գրաւումը, Չէյթուեի յաղթական ըմբոստութիւնը՝ յիշելու համար զլիսաւորները, եւ մեզ աւելի մօտիկը, տեղւոյն վրայ, ու թէեւ տեղական բնոյթով Վարդենիսէն յետոյ, մանր կռիւներ, Տալուրիկի կորովի ընդդիմութիւնը, եւ այլն:

Յրօնքի կռիւը սակայն ամենէն աւելի պիտի ազդէր իմ վրաս, եւ վերջնապէս պիտի ուղղէր պատանեկան տրամագրութիւններս դէպի դործօն մասնակցութիւն ազատագրական շարժման:

Յրօնքի դէպքին, որ տեղի ունեցաւ 1899-ի ապրիլին, արդէն 18 տարեկան երիտասարդ էի եւ ինձ նման շատերու պէս վրէժով ու ասեղութեամբ վառուած, Թուրքին ու Քիւրտին դէմ, յեղափոխական պայքարին մէջ կը տեսնէի աւելի կեանքի, ինչքի եւ պատուի ապահովութիւն, ինչպէս կ'ըսէին:

Ազատագրութիւնը իր այսօրուան լաջն իմաստով, հեռու կը մնար մեր բմբուսումէն եւ բաղձանքներէն: Բռնակայութեան ճնշումներուն դէմ, աւելի շատ մեր վերաւորուած հարատւութիւնը, արժանապատուութեան զգացում մըն էր որ զիս ու տարեկիցներէս շատերը համակրութեամբ կը լեցնէր յեղափոխականներուն հանդէպ, որոնց իւրաքանչիւրը, ամենէն համեմատն իսկ մեր երեւակայութեան առջեւ կը կանգնէր խորհրդաւոր վեհութեամբ ու մեծութեամբ: Մանաւանդ որ հալածանքէ ու մատնութենէ իռնաստիելու անհրաժեշտութիւնը լուծութիւն ու դադանիք կը պարտագրէր բոլորին:

Ու Յրօնքի կռիւը սրուն ամենէն փոքր մանրամասնութիւնն իսկ բերնէ բերան կը պատմուէր ահեղ դիւ-

ցազներդութեան մը հմայքովը, կուգար ինձ նման դեռ
ուրիշ շատ երիտասարդներու վարանող կամքերը ցըն-
ցելու :

Եւ իրօք, դէպքը ինքնին փոքր, կը մեծնար անհու-
նօրէն, պայքարող յեղափոխական տղոց կորովի դիմա-
դրութեան եւ անլուր քաջութեան շնորհիւ :

Ինն հոգինոց խումբով մը Գուրգէն՝ բուն անուամբ
Պաղտասար Մալեան, մտեր էր գիւղ, ուր մարազի մը
մէջ պահուած կը մնային երբ կաթօլիկ Հայու մը մատ-
նութեան հետեւանքով, յանկարծ կը պաշարուէր գիւղը
կառավարական ուժերու կողմէ, որոնց գլուխն էին
յայտնի հարստահարիչ մը թայիպ Էֆէնտի եւ Ալայի
պէյը :

Փախստականներ կը փնտուեն տունէ տուն: Անոնք
սկիզբները չէին համարձակեր դուրս ելլել իրենց թաքս-
տոցէն, վախնայով որ իրենք գիրենք փրկելու համար,
գիւղը կը վառնուին: Յուսացեր էին որ իրենց թաքստոցը
աննշմար կ'անցնի: Սակայն խուզարկու հրէշները չէին
ուղեր ծակ ու ծուկ ձգել ու կանդ առեր էին մարազին
առջեւ անխուսափելի դարձնելով կռիւր որ սկսեր էր ան-
հաւատար ուժերու միջեւ:

Բաղաքէն հասած կանոնաւոր զօրքին կ'ընկերանար
քիւրա ու թուրք խուժան մը:

Ճարահատ, պաշարողները քարիւղ բերել տուեր էին
մօտակայ գիւղէ մը ու կրակի տուեր էին հայգուկներու
թաքստոցը:

Աւրիշ ճար չէր մնար, եթէ ոչ մահն աչք առնելով,
գուրս նետուիլ մարազէն, որ բոցավառ խարոյկի էր փե-
րածուեր, քան ողջ այրիլ առանց կասելի:

Ու, առաջնորդութեամբ Գուրգէնի, ինք մէկէն

դուրս նեաուեր էին, կուրծք տալով խելացնոր համա-
գարկին ու վիրաւոր գրեթէ բոլորն այ, մինչեւ վերջին
շունչ մաքաուեր էին անհամեմատ կերպով ուժեղ թշնա-
միին դէմ պինդ դրկած իրենց հրացանները:

Օրհատական այդ կուռին ինկեր էին հրէշ Թալիպը,
Ալաշի պէյին մօտիկ մէկ ազդականը սպայ մը 8 - 10 գին-
ուոր եւ մէկ քանի Քիւրտեր:

Ի՞նչ երկիւղած հիացումով կը պատմուէր սարսա-
փահար ու միանգամայն դայրալից ժողովուրդին մէջ թէ
խումբէն մէկը միայն անզուգական երիտասարդ մը
Մկրտիչը յանդգնութեամբ մը որ քիչերուն է արուած,
յաջողեր էր կարել պաշարման շղթան ու հասնել Մեդ-
րազեաի եզերքը, ուրիչ միամինակը շարունակեր էր
կուռիլ, հազար կատաղած գաղաններու դէմ մէկ, մին-
չեւ սպաուեր էր իր փամփուշտի մթերքը եւ հուսկ ուրեմն
վիրաւոր, սպաւիններ էր իր դաշոյնին:

Արիւնը կը հոսէր վէրքէն, հեաղհեաէ սպաուելով
Մկրտիչի ուժը, բայց թշնամիէն ոչ ոք քաջութիւնը ու-
նեցեր էր մօտենալու եւ մահացու հարուածը տալու,
այնքան վախ էր սրտածաուեր դաշոյն ի ձեռին, մահա-
մերձ հերոսին տեսքը, մինչեւ հեռուէն արձակուած փառ-
պնդակ մը՝ խլեր էր քաջին վերջին շունչը:

Մէկ երկու օր յետոյ, հերոսներուն անիւնները քա-
ղաք կը բերուէին ու կը թաղուէին Ս. Մարինէ եկեղե-
ցին գերեզմանաաան մէջ, երբ արդէն խուժանը՝ կա-
ռաւարութեան քաջալերութեամբ աւարի տուեր ու տ-
ւերակ դարձուցեր էր Յրօնքը:

Անմիջապէս, աշուղները իրենց թրթուուն սրտերուն
ցուր կը յանձնէին երգերու միաթարութեան: Չկար ըն-
տանեկան հաւաքոյթ ուր Յրօնքի կուռին ու հերոսներուն

յիշատակը շփոթարանուէր մանրամասնութեանց պատ-
ճութիւնով կամ անոնց նուիրուած երգերով : Մենք ալ
մէկ քանի տարեկիցներ, զազտագողի կը հաւաքուէինք
ամայի կամ ապահով անկիւն մը, կուռին մէկ մանրա-
մասնութիւնը լսելու իրազեկէ մը կամ մեր տաք սրտերը
հանդարտեցնելու յեղափոխական երգերով, զոր կ'եր-
գէինք մեզմ ձայնով, երկիւղած ինքնամփոփումով :

Յրօնքի դէպքէն յետոյ, այլ եւս դժուար կը զսպէի
տրամագրութիւններս, ժամ առաջ միանալու խումբի մը
եւ մասնակցելու յեղափոխական պայքարին, որուն ոչ
դառնութիւնները կը նախատեսէի, ոչ ալ գրկանքներն ու
տանջանքները կրնայի մտքէս անցընել :

Հայդուկային կեանքը որ երեւակայութեանս կը
ներկայանար երազային դրուագներով, ինձ համար մեծ
անձանօթն էր, որ զիս կը հմայէր հոգեկան մեծ դոհա-
ցումներու խոստումով :

Թաքստոցներու մենութեան մէջ սպասումներով
կարծցող կեանքին տաղտուկը, սահող ժամերու միօրի-
նակութիւնը զոր կը ջանաս սպաննել անակնկալներու
յոյսով, չէի կրնար իսկ երեւակայել :

Այդ կեանքը անընդհատ շարժում էր ինձ համար
լեռնէն դաշտ, դաշտէն դեղ ու քաղաք, հարստահարու-
թեան դէմ տկարներու պաշտպանութեան, անարդարու-
թեան դէմ յեղափոխական պատժի, անպատուութեան
դէմ վրէժխնդրութեան պայքարով :

Ու հոգիով կը կանչէի այդ պայքարը : Առանց դանե-
լու, կը փնտռէի այն որ ոտքերուս ու ձեռքերուս առջեւ
պիտի բանար անոր ճամբան որ միշտ գաղտնի կը մնար :

Չէի կրնար իսկ ճանչնալ մէկը որուն կարենայի
յայտնել բազմանքս ու տրամագրութիւնս : Այնքան լուռ

կը տարուէր յեղափոխական գործի կազմակերպումը՝
այդ օրերուն : Որ եւ է մէկուն հարցում մը ուղղելն իսկ ,
կրնար կասկած հրաւիրել ամենէն անկեղծ մարդուն մը-
տաղբութեան վրայ :

Եւ տարեկից ընկերներու հետ կը գոհանայինք ի-
րարու յայտնելով ինչ որ կը լսէինք աջէն ու ձախէն
հայդուկներու մասին որոնց անունները միշտ անձանօթ
կը մնային ու միասին երազելով այն երանելի օրը , երբ
մենք ալ զէն ի ձեռին՝ պիտի ստանայինք արեան մկր-
տութիւնը :

Տրօնքի դէպքէն առաջ , իմ տարեկիցներու եւ մաս-
նաւորաբար իմ վրայ , ազդեր էին երկու նախընթաց
դէպքեր , մէկը Կիւլիգարի առեւանգումը , միւսը Արքա-
վանք գիւղի բէս Յանի ողջակիզումը՝ Մուսա պէկի
կողմէ :

ԲԵՍ ՕՀԱՆԻ ՈՂՋԱԿԻՉՈՒՄԸ

Կ'ըսեն թէ մանկութեան օրերու պատահարներն ու
դէպքերը առ յաւէտ կ'ազդեն մարդոց հոգիին ու մտքին
վրայ , երբ մանաւանդ ինչպէս էր մեզմէ շատերուն պա-
րագան , կը մեծնան ու կը հասունանան նոյն միջավայրին
միօրինակ , գրեթէ անփոփոխ պայմաններուն մէջ :

Առեւանգում , կողոպուտ , հալածանք , սպանութիւն ,
կամայական բանտարկութիւններ սովորական էին մեր
չրջանին մէջ ինչպէս ամէն տեղ փոքրիկ տարբերութիւն-
ներով :

Բայց , կային պարագաներ որ , կը շեղէին վայրա-
դութեան հասարակ գիծէն եւ կը ցնցէին ստրկութեան
մթնոլորտին տակ թունաւորուած ու մեղկացած ժողո-
վուրդն իսկ :

Այդ կարգէն էր Քէս Օհանի ողջակիզումը :

Չարքաշ գիւղացիին արիւնհարրու տղրուկն էր կա-
ֆիր կոչուած տուրքը : Արեւուն տակ մրկող, անձրեւէն
ու բուքէն չորցած հէք գիւղացին իր վախտ վաստակին
լուսպոյն մասը պարտաւոր էր յատկացնել քիւրտ աւա-
տապետին բերքով կամ համարժէք դրամով :

Քիւրտ պէկին աստուածատուր իրաւունքն էր հայ
դեղջուկին բերքէն իր առիւծի բաժինը ապահովել նախ,
մնացեայր յանձնելով կասաւարութեան տուրքերուն,
կամ իր մարդոց թաղանին :

Վա՛յ այն գիւղին որ իր յօժար կամ քով չէր յանձներ
իւր բռնատուրքը : Կենթարկուէր ամէն ինչ կորսնցնելու
վտանգէն դատ, կեանքն ալ վրայ տալու սպառնալիքին :

Քիւրտ պէկերը այնքան իրաւացի կը զգային իրենք
զիրենք որ, իրենց ենթակայ գիւղերը՝ մինչեւ իսկ կը
ծախէին իրարու, իբր իրենց պապերէն ժառանգ ինկած
տպրանք :

Տարիներ անցած, այսօր ամէն ինչ կորսնցնելէ յե-
տոյ, օտար քաղաքակիրթ միջավայրերու մէջ, ուր ամէն
ապատու թիւն կը վայելենք՝ մինչեւ իսկ ամէն սրբու-
թիւն արհամարհելու եւ հեզնանքի տալու, կարելի է
անշուշտ իբր դրօտանք վէճի ենթարկել հայ յեղափոխա-
կան շարժումը, խեղաթիւրել անոր ծագման պատճառ-
ներն ու դարգացման պարագաները, նոյն իսկ դայն ներ-
կայացնել իբր տեսակ մը աւաղակային հասանք, որ կը
ծպասուէր ժողովրդային շահերու պաշտպանութեան գի-
ւակին տակ :

Բայց, դարաւոր սարկութեան, ու ուղիտութեան
տակ ծիւրած ժողովուրդին աչքը սկսեր էր բացուիլ շը-
նորհիւ իր իսկ ծոցէն հատած քաջարի, համեատ ու անձ-

նազոհ տարբերու :

Հեռուները չէր նայեր ան տակաւին , չէր կրնար տեսնել քաղաքական ազատագրութեան հեռանկարը որ մինչեւ իսկ կը խուսափէր շատ ղեկավար տարբերու աչքէն :

Բայց , կ'անդրադառնար անարդարութեան , որուն հանդուրժեր էր սերունդէ սերունդ , օգնութեան կանչելով միայն հրեշտակներն ու սուրբերը :

Ու ժողովրդային անվեհեր գործիչներու շունչին տակ , ան կը կերպարանափոխուէր աստիճանաբար , կը յեղաշրջուէր , թէեւ մերթ ազամայ , ցաւով , ինչպէս կը պատահի մէկու մը , որ սիրական մէկ մոլութենէն կը բռնադատուի հրաժարիլ : Մերթ մանկունակ խանդավառութեամբ որ տեղի - անտեղի շափազանցութիւններու ալ կրնար մղել :

Հաճիրութեան վարհուրելի տուրքն էր որ ամենէն աւելի կը նեղէր ժողովուրդը եւ զայն կը մղէր տեղ - տեղ կանգնելու քիւրտ պէկերուն դէմ , որոնց ամենէն վայրենի տիպարներէն մէկն էր Մուսա բէկը : Կը կողոպտէր , կը թալանէր , կը սպանէր , կ'առեւանդէր , կը թնամ իր ուժին եւ քաջալերուած կառավարութեան թոյլատու ընթացքէն եւ նաեւ տկարութենէն :

Արքավանք , որուն բէսն էր Օհան , կը պատկանէր Մուսա բէկի աւատապետական շրջանին , ու քանիցս ընդգիւմացեր էր գոռոզ ու յիրք բէկին , մինչեւ որ հրէշը զգերանց յարձակեր էր գիւղին վրայ , բռներ էր բէսը ու կաշկանդելէ յետոյ , բուխերիկին մէջ դնելով՝ սղջ սղջ այրեր էր :

Բէս Օհանի թաղումը կատարուեցաւ մեր թաղին եկեղեցիին մէջ , խուսն բարձրութեան մը ներկայութեամբ ,

որ դժուար կը դասէր իր ցասումը :

Անհատի մը սպանութիւնը անշուշտ , անսովոր դէպք մը չէր : Բայց վայրագութիւնը որ ի գործ դրուեր էր ըմբոստ բէսը ողջ այրելով իբր պատիժ իր ընթացքին , զայրոյթով լեցուցեր էր սրտերը :

Տակաւին պատանի էի երբ այդ դէպքը պատահեցաւ :

Իբր սուգի նշան , թաղմանը օրը դպրոցն ալ , ուր կը յաճախէի փակուեր էր : Ու դէպքին պատմութիւնները այնքան ազդեր էին վրաս , որ օրերով երեւակայու թեանս մէջ կը բանէին :

Ինծի եւ իմ տարեկիցներուս համար , տեղական շատ մեծ նշանակութիւն ունեցող դէպք մըն ալ եղած էր Ղարս գիւղացի Միրոյի աղջկան Կիւլիպարի առեւանդումը Մուսա բէկի կողմէ :

Դէպքը յաճախ յիշատակուած է իբր տիպար օրինակ մը նման անսանձ արարքներու եւ ծանօթ բոլորին :

Ի հարկէ , ոչ առաջինն էր եւ ոչ ալ վերջինը եղաւ :

Բայց մեծ համեմատութիւն ստացաւ անով որ , ոչ մէկ ջանք խնայուեցաւ այդ առեւանդումը օգտագործելու , բողոքի հսկայ կազմակերպութիւն մը երեւան բերելու , ոչ միայն ատով շջմեցնելու համար քիւրս տէրէպէյիները եւ թրքական իշխանութիւնները , այլ հայկական ցուերը մասամբ ծանօթացնելու համար քաղաքակիրթ աշխարհին :

Այս հսկայ աշխատանքին հողին էր , տակաւին շատ երիտասարդ , համեատ այլ անվեհեր Գեղամ Տէր Կարապետեանը , որուն ջանքերը յաջողութեամբ կը պսակուէին , եթէ կարելի է յաջողութիւն նկատել մէկ պարագայի մէջ տարուած յաղթանակը , երբ կեանքը կը շարունակէ իր սովորական ընթացքը նոյն տիտուր պայման-

ներսն տակ :

Յոյցեր կը կազմակերպուէին , բողոքի հետագրեր
կ'ուղղուէին Պատրիարքարան , դիմում կ'ըլլար կառա-
վարութեան , դատի կը քաշուէր Մուսան , Գեղամ եւ ե-
րեւելիները Պոլիս կ'երթան վկայութեան , տէրէտէյին
կը դատաւարուի եւ կիւլիզար կ'առնուի անոր քովէն :

Նման յաղթանակ մը փոքր բան չէր սարկութեան
վարժ ժողովուրդի մը համար , որ նոր կը սկսէր թօթ-
ուել իր շղթաները եւ ինչ դանդաղութեամբ ու անոր ար-
ձագանդները տարուէ տարի կը լեցնէին մեր տկանջները
մեր մանուկ հոգիներուն ներշնչելով աւելի կարեւոր
նուաճումներու հաւատքն ու վստահութիւնը :

Կիւլիզարի ատեւանդումը իր սղմկայօյլ հետեւանք-
ներով եղած էր այն դէպքերէն՝ որոնք ժողովուրդի մը
մտայնութեան վրայ իրենց կնիքը կը դնեն :

Այդ օրերէն յուզիչ յիշատակ մը կը մնայ աշուղական
հետեւեալ երգը՝ որուն հեղինակն էր Գոմերու Ղուկաս
վարժապետը , ժողովրդային ուրիշ տեսակ հերոս մը ,
անձնուէր , մունջ , այլ յամառ գործիչ՝ որ ներշնչում ու
թելադրութիւն կը քաղէր իր արնուական օրակէն .

ՈՂԲ ԱՌԵԻԱՆԳԵԱԼ ԱՂԶԱՅ ՄՕՐ

(Սարսայ Միրօ Գուլոյի ատեւանդումը)

Գեռ երէկ շէն էր եւ ուրախ մեր տուն ,
իմ խեղճ միամիտ նստած ժրդէր տուն ,
էսօր սուգի մէջ մըր բոլոր բուլփաթ ,
Քու ապով հառչէ , կը քաշէ հասրաթ ,
Վախ իմ խորտախ մէկ հատիկ Գուլօ ,
Քօնցան իմ աչքեք տարաւ գփի Մուսայ :

Տասներեք տարու տեսնդ խորասիկ,
 Թշերդ Ազատերսու նմանին խրեճորիկ,
 Շորօր կաֆու ալէս ֆէլէս մանտրքաիկ,
 Շէկիկ են ծամերդ գուն մեր տան ծաղիկ,
 Իսկ միկայ ո՞ւր ես, ո՞ւր ես. իմ Գուլօ,
 Վա՛յ իմ արեւուն, տարաւ զքի Մուսայ:

Վըք սպիտակ ֆակտիդ փեկրուար գագաթ,
 Ճղերն էր սուրմայ, օրթէն էր արծաթ,
 Հալառ ու ֆէմէր ֆըզի կար հագար,
 Այրբջան ու շարֆ գինդ, նըխշուն միգար,
 Երկեց զքի օտար, իմ պեպախտ Գուլօ,
 Փրբցուց զիմ նիկար, տարաւ զքի Մուսայ:

Խարսայ Զըխուրայ բմէն պատանի,
 Սափտաքար դառնայ, զըքկէ մատանի,
 Բարանց մէկլէ չէ ֆըզի արծանի,
 Զքի վարդենիսցին, հարս պիտի տանի,
 Բայց ա՛խ կը խելըռիմ, իմ պեպախտ Գուլօ,
 Էկեր կը տանի զֆըզի ֆիւրտ Մուսայ:

Հաւա՛ր, Ադանան, հաւա՛ր ուն Միւսայ,
 Արի՛ նորբնծայ, ե՛լ բշտադ Արօ,
 Հանդէ ֆիւրտ եկաւ, կը տանի աւար,
 Թաղնէ գմեր տուն, շո՛ւտ հասէֆ հաւար,
 Հանդէ կը տանին զիմ աղջիկ Գուլօ,
 Զիմ աղջիկ տանէ էդ գագան Մուսայ:

Զարկէ՛ք, տօ նըծեր, էդ սնիրաւ ֆիւրդ,
 Զարկէ՛ք էդ շընէր, բրէֆ ջարդ ու բուրդ,

Առէ՛ք կեն, կորալ, բիր, վարոց, խարզան,
Թի, փետաւտ, ուօկան, խանչալ, թուր, հրացան,
Հասէ՛ք ազբբտանի, տանին զիմ Գուլօ:
Սանամ ձգի խուրպան գարկէ՛ք զէդ Մուսայ:

Զարկինք ու գարկուանի շանց թիւ շատ էր,
Աղնոն ու Միքոն վրբ միջաց պատեր,
Աբօն ուր արնի մէջ կը թափըլտկէր,
Տէրտէր լէ շիւար, հաւար կը կանչէր,
Թոսիան դրկեցնեալ, բայց գփի Գուլօ,
Զըկրցան յետ խիել ու տարաւ Մուսայ:

Լսի ես գփում յետփի նիգ վիստ,
Լսի՛ր հաղպաթ դու լէ զիմ յետփի խրատ,
Եաման, իմ աղջիկ, իսկի չեղնիս վատ,
Զեղնի ուրանաս, թորկես լուս հաւատի,
Զեղնի մերկանաս, փակտիդ սուրբ մեռօն,
Լա է դուն մեռնիս քանց սիրես զՄուսայ:

Հըմլա կ'ասենք ու խելաւծ կէրթէնք դէմ
Պալփիմ զիմ աղջիկ քրտից ազատեմ,
Կամ պարի մեռնիմ իմ աղջկայ ուղրուն,
Անկուման շրբջայ լնկայ վրբ հողուն,,
Կողցեր եմ զիմ ուշք, իսկ գփի Գուլօ,
Քաշկրտէ տանի էդ գագան Մուսայ:

Տարան վափելէ՛ր. զիմ աղջիկ տարան,
Զիմ նրագ ընցուցին, զիմ տուն ըրին վերան,
Տարան զծերուկ լէ, տարան տապտուն,
Տաղնի վրէն գրեցին Գուլօի ուղրուն,

Տարան զիմ ջուխտակ աշից լոյս Գուլօ,
Մըթնի քու ջուխտակ աշից լոյս Մուսայ :

Վայլըմէն Գուլօ, քույիր զիս պէգար,
Կիլամ գեռ սեւ բախտ, քաշեմ ախ ու գար,
Խօզի չէր ծներ, խօզի մեռնէր դուն,
Քանց եղնէր գերի անիրաւ քըրտուն,
Խօզի չէր խորտ, իմ պէպախտ Գուլօ,
Պալքիմ չէր տանի գքի շու Մուսան :

Երկինք իմալ իշեցիր, գէտ գարծ
Իմալ մօր եւ աղջկայ սիրուն ըրիր փարձ,
Յորի շիջուցիր կէծակ ու քրկուրդ
Էրել ու ջնջել, գէղ գագան ազգ քիւրդ,
Երկիր քէ շուգեր կուլ տալ զՄուսան,
Պարի կուլ տայիր զիմ աղջիկ Գուլօն :

Գամերու ՂՈՒԿԱՍ ՎԱՐԺԱՊԵՏ

Իմ պատանեկան հոգիիս վրայ աղղած են նաեւ այդ
չքջանի ինքնահաս հայդուկներէն Արարոյի եւ անմտա-
նալի Մարգար Վարժապետի կապուած պատմութիւն -
ները :

Արարօն իւրայատուկ ըմբռնումի յեղամտխական ե-
ղած է :

Աւելի, ան տխարն եղած է խիզախ, անվեհեր, ու
ժողովրդասէր այն տխարներուն, որոնք եթէ չիյնային
մեծ երազի մը հմայքին տակ, պիտի դառնային կարգ մը
հարստահարիչ տարրերու ինքնեկ պատուհաս, իբրեւ

տեսակ մը արդարութեան ինքնակոչ գործիք, որ պակասը կը լրացնէ կառավարական տկարութեան :

Արաբօն իր խումբերն ունէր ու կը գործէր Մուշի եւ Տիգրանակերտի ճամբաներուն վրայ, կողոպտելու համար բեռնատար կարաւաններ :

Բայց կողոպուտը կը յատկացնէր զէնք գնելու եւ անով ժողովուրդը զինելու :

Արաբօ, որուն գործունէութիւնը սարսափ ձգած էր կառավարութեան եւ քիւրա աշիրէթներուն վրայ, գործերու կարգադրութեան եւ խորհրդակցութեան համար, իր մարդիկը կը հաւաքէր Առաքելոց վանքի մօտերը՝ անմառին դարաւոր ծառերուն տակ ծածկուած քարայրի մը մէջ, որ յետոյ, կը ճանչցուէր Արաբոյի Քար անունով :

Ինքը բնիկ Սասուն գիւղացի էր. ձմեռը կ'անցնէր քաղաքին մէջ՝ հարուսաներու տուներուն մէջ ծառայելով հաւատարմօրէն : Իսկ ահաբեկող գործունէութիւնը կը պահէր ամրան :

Ոչ ոք կ'ենթադրէր թէ այդ համեստ, խելօք ու անշշուկ մշակին մէջ կը պարտկուի ձորերու եւ ճամբաներու սարսափը :

Առաքել — այս էր իր մկրտութեան անունը — իր խմբական գործունէութեան նեղ օրերուն, ուտեստ եւ այլ օթանդակութիւն կը ստանար Ալիզանանցի Լեւոնէն, որուն մտերիմն էր եւ որ կը մասնակցէր յաճախ՝ անոր վտանգաւոր արշաւներուն :

Կառավարութիւնը, ի վերջոյ, լրջօրէն մտահոգուեր էր եւ քիւրա աշիրէթներու օգնութեամբ ամէն ջանք ի գործ կը դնէր ողջ կամ մեռած ձեռք անցընելու խումբը եւ անոր պետը մանաւանդ, որուն անունը — Արաբօ —

տարածուած էր ամէն տեղ, բայց որուն գէմքը տեսնող
չէր եղած :

Արաբօ երբ նկատեց թէ շղթան կը սեղմուի իր շուրջ
եւ իր գործունէութիւնը կը բախի մեծ դժուարութիւն-
ներու, մանաւանդ վախնալով մատնութիւններէ, որո-
չեց ժամանակի մը համար ցրուել խումբերը :

Տղաներէն մաս մը կը մեկնէին դէպի Վան : Իսկ ին-
քը կը հեռանար Մուշէն Կովկաս անցնելու մտադրու-
թեամբ :

Կանգ կ'առնէ Կարս, ուր կը հանդիպի մշեցի ծա-
նօթներու, որոնց միջոցաւ կը փորձէ կապ հաստատել
տեղին յեղափոխական տարրերուն հետ : Կ'ուզէր կրկին
վերադառնալ երկիր, բայց լաւ զինուած, կանոնաւոր
խումբերով :

Հող՝ իրեն կը հասկցնէին թէ, ժամանակ մը, ան-
կարելի է գոհացում տալ իր բաղձանքին : Կառավարու-
թիւնը խտրացուցած է հսկողութիւնը. Քիւրտերը — ա-
ւելի թշնամութեամբ լեցուած են Հայոց հանդէպ, եւն. :

Նոր էր կազմուեր համխտիյէ ալայը՝ որուն միակ
գործն էր հայ հալածել ու ջարդել :

Արաբօ կ'որոշէր պահ մը համբերել ձեռնաձալ, եւ
սպասել Կարս, մինչեւ լաւ ծրերը բացուէին : Բայց ապ-
րիլ պէտք էր եւ գիւղակից երիտասարդներու հետ, կ'եր-
թայ աշխատելու խճուղիին վրայ, որ նոր կը շինուէր :

Ժամանակը կ'անցնէր եւ Արաբօյի յոյսերը չէին ի-
րականանար : Միւս կողմէ, իր հայրը որ բարի պտուղ
մը չէր, սկսեր էր մտահոգուիլ իր տղուն վիճակովը :

Վեց ամիս է հեռացեր էր տունէն եւ ոչ մէկ տեղե-
կութիւն կը ղրկէր իր մասին : Հայրը կ'ենթադրէր որ իր
զաւակը Կովկաս անցած, պէտք է հսկայ հարստութեան

սիրացած ըլլայ :

Եւ օր մըն ալ ճամբայ կ'ելլէ փնտռելու իր դաւակը անոր շուքով փառաւորուելու :

Կը հանդիպի Կարս, ուր իր Առաքելը կը հարցնէ Մշեցիներու :

Մանօթները նախ կը ծածկեն իրականութիւնը հօրմէն, բայց կը ցուցնեն այն վայրը՝ ուր հայրը կրնար հանդիպիլ իր զաւկին :

Արարօ, ճամբուն մէկ եղերքը կեցած, մուրճով քար կը կտորէր խճուղիին համար, կռնակը դարձուցած այն ուղղութեան, որմէ կը յառաջանար հայրը :

Վերջապէս, հարցնելով — փնտռելով հայրը կը հասնի իր զաւկին, զոր կը ճանչնայ կռնակէն եւ առանց երեսը նայելու, առանց բարեւ տալու իր զաւկին այդ վերաւորուած հայրը, կը գոչէ զայրագին .

— Առաքել, լաս, այդ դուն ես քար կը ջարդես : Հապա կարաւանները որ Ռուսաստանէն քաղաք պիտի քշէիր : Թո՛ւ . մօրդ կաթը հարամ քեզի . . .

Ու առանց մնաս բարովի, առանց տղուն երեսը նայելու, կը հեռանար :

Մուրճը, որով քար կը կտորէր իջեր էր Արարոյի սրտին : Սաստիկ առնուեր էր հօրը յանդիմանութենէն եւ իր հպարտ հոգին կ'ըմբոստանար ճակատագրին դէմ որ լեռներու ազատ բարձունքէն, գինքը կ'իջեցնէր նուաւսութեան ստորոտը :

Ու նոյն իրիկունն իսկ, ճամբայ կ'ելլէր դէպի Թիֆլիս, հետապնդելու իր սիրական բաղձանքին հետապնդումը :

Հոն յարաբերութեան կը մտնէր Հ. Յ. Գաշնակցութեան Կեզրոնին հետ եւ կը պարզէր զինեալ խումբով եր-

կիր մանկու իր ծրագիրը :

Արարոյի անունը արդէն ծանօթ էր : Ոչ ոք կը կասկածէր անոր յանդգնութեան ու ճարպիկութեան վրայ : Բայց հոն ալ կային զինելու եւ ճամբելու նոյն դժուարութիւնները . կը խոստանային սակայն անհրաժեշտը կարգադրել . ու մինչ այդ՝ պատասպարուելու եւ սնանկելու համար , գինքը կը տեղաւորէին այրի կնոջ մը տունը :

Մեռած յեղափոխականի մը կինն էր , որ հասուն աղջիկ մըն ալ ունէր : Արարօ բաւական ժամանակ մնաց հոն : Թէեւ շատ թուխ , բայց սիրուն երիտասարդ էր : Տան աղջկան եւ իր միջեւ հաստատուեր էր փոխադարձ համակրութիւն մը , որ շնորհիւ ամենօրեայ յարաբերութիւններու , Արարոյի լեռնականի սրտին մէջ կը վերածուէր բուռն կիրքի :

Եւ օր մըն ալ , երբ աղջիկը սովորականին պէս՝ ասիւնով մը Արարոյի սենեակը բերեր էր ճաշը , ան գրեթէ բռնութեամբ , քիչ մը աւելի սենեակին մէջ պահեր էր աղջիկը . . .

Այդ միջադէպէն յետոյ , Արարօ ստացաւ զէնք , ունեցաւ իր խումբը եւ մեկնեցաւ երկիր , ուր Գէօլ - Առաջի մէջ իր բախումը թշնամի ուժեղ տարրերու հետ , ծանօթ է իր հետեւանքներով :

Իմ տարեկիցներուս վրայ ազդած են մանաւանդ , ինչպէս ըսի , տեղական զէմքեր ու զէպքեր :

Խաբախանեան Ներսէս վարդապետի հեռացումը , Մատթի , հաճի Յակոբի , Նազիքի , Բոթիկեան Արշաւիրի եւ ուրիշներու աքսորը երկար ատեն խօսակցութեան նիւթ կը մատակարարէին , անշուշտ հայրենասիրական մեկնաբանութիւններով :

Վարդենիս գիւղացի Մարգար վարժապետը որ կու-

տաղի կռիւ մղեր էր Կիւլիզարի առեւանդիչներուն զէմ
 եւ կախաղան բարձրացեր էր՝ վերջին շունչը փչելով՝
 հայ ժողովուրդին ուղղուած ըմբոստութեան կորովի
 կանչի մը մէջ, պաշտամունքի արձանի պէս կը կանգ-
 նէր մեր մանկական երեւակայութեան առջեւ :

Նոյնպէս համբաւաւոր Խալիֆան, Յակոբ Սարկաւա-
 քը, հայրը ուրիշ կորովի յեղափոխականի մը, Արամ
 Տարօնացիի որ մեռաւ Ամերիկայի մէջ, կազմակերպիչ-
 ներէն մէկը Կուկուենեանի արշաւախումբին, առաջին
 զոհերէն մէկը եղբայրասպան գնդակին, որ պատկառանք
 կը պարտադրէր հաւասարապէս Հայուն, Թուրքին ու
 Քիւրտին :

Իսկ Սասունի առաջին ըմբոստութիւնը, արդէն կը
 դառնար մկրտութեան աւազանը ուր հեղգ հողիները կը
 սրբուէին իրենց վերջին վարանումներէն :

Ահա, այս տեսակ միջավայրի մը եւ ազդեցութեանց
 շրջանակի մը մէջ էր որ մանուկ հողիս քաղեր էր իր ա-
 ռաջին ներշնչումները, որոնք յաջորդող տարիներու ըն-
 թացքին, զիս առեր էին անխուսափելի տիրապետու-
 թեան մը տակ :

Արդէն հասուն պատանի էի ու հօրս առեւտուրին
 մասնակցելով մէկտեղ, առիթ եւ միջոց կը փնտռէի իմ
 բաժինս բերելու յեղափոխական ձեռնարկներուն, որոնց
 կազմակերպիչները, հրահրիչները ինձ անձանօթ կը մը-
 նային : Զանոնք երեւան հանելու համար, փնտռաւոր-
 ներս ապարդիւն մնացեր էին, մինչեւ որ օր մը, անակն-
 կալ յայտնութիւն մը զիս դրաւ այն ճամբուն վրայ՝ ուր-
 կէ ետ չպիտի դառնայի այլ եւս :

Ա Ն Ա Կ Ն Կ Ա Լ Ը

Օր մը, Տէրտէրենց Արամը, որ դիտէի թէ յեղափոխական գործերու մէջ էր, բայց միշտ իմ դիտումնաւոր խօսակցութիւններս իրեն հետ, շեղեցուցեր էր վարպետ դադանապահութեամբ, մօտեցաւ ինձի եւ առաջարկեց Մսկունք երթալ:

Արամը՝ հակառակ որ ինձմէ տարիքի մեծ տարբերութիւն մը չունէր, յաճախ ցոյց կուտար հասունութիւն մը որ ինձի պատկառանք կ'ազդէր: Գիտէի թէ մասնակցեր էր Վարդենիսի կռիւին, որուն մասին ոչինչ կը պատմէր, երբ հետաքրքրուէինք, եւ թէ կապ ունէր Վարդան վարդապետի հետ, որուն համար բերնէ բերան կը պատմէին թէ գիւղացիները զինելու եւ զինեալ խումբեր կազմելու գործերով կը զբաղի:

Երբ ուրեմն, Արամ առաջարկեց Մսկունք երթալ, յուզումը բռնեց զիս կանխազգացումով մը:

— Ինչո՞ւ համար, հարց տուի:

— Գող մի ելլեր, պատասխանեց: Կը խոստանա՞ս մարդու բան չըսել:

— Երդում, քեզի:

— Լաւ, երթանք ճնճողուկները տեսնելու:

Այդ օրերուն, « ճնճողուկ » անունին տակ կը ճանչցուէին յեղափոխականները, թերեւս յատկանշելու համար անոնց թափառական անկայուն կեանքը, որուն ենթարկուած էին այնքան յօժարութեամբ, խուսափելով մէկտեղ բռնատիրութեան թակարդներէն ճիշդ տեղին զարնելու համար իրենց պողպատեայ կտուցները:

Արամ յայտնեց թէ պիտի երթայինք տեսնելու Գէօրգը իր հինգ ընկերներով, ու ինձի տուաւ դադանա-

պահութեան առաջին դասերը՝ անհրաժեշտ պատճառաբանութիւններով:

Գործը, որուն անոնք լծուած էին, նուիրական է. փոքրիկ ակնարկութիւն մը թուլբերաններու եւ վատագի մարդոց առջեւ սնափառ պարծանքի համար արտասանուած խօսք մը ոչ միայն կրնայ վտանգել անոնց կեանքը, այլ եւ ամբողջ գործը որմէ կախում ունի հայ ժողովուրդին փրկութիւնը:

Ահա, այս գիտակցութեամբ, անգաղտնապահութիւնը « դաւաճանութիւն » է, եւ թուլբերանը կ'ենթարկուի յեղափոխական ամենախիստ պատիժի:

— Ինչ որ տեսնես ու լսես, Սմբատ, այնքան գաղտնի պէտք է պահես, որ չապիկդ անգամ չիմանայ: Պէտք է մոռնաս դէմքը որ տեսար, խօսքը որ լսեցիր, տեղն ուր ոտք կոխեցիր:

Այդ գիշեր չկրցայ քնանալ: Չէ՞ որ տարիներու երազիս կը մօտենայի այնքան անակնկալ կերպով:

Տարիներու ընթացքին անքուն գիշերներ անցընելու առիթը չէր որ պակսեցաւ ինձի: Բայց մինչ, անքուն գիշերները բան մը կը պակսեցնէին սեփեա ու կորովէս, այդ գիշեր արիւնս կ'եռար. անհամբերութեամբ կը սպասէի արշալոյսին:

Եւ լոյսին հետ աչք բացող մշակներէն առաջ փողոցին կած, երբ կ'երթայի Արամը տեսնելու, կը քալէի՞ թէ կը սահէի:

Երբ Տէրաէրենց տունը հասայ, Արամն արդէն ոտքի էր ու ինձի կը սպասէր: Եւ որպէս զի մեր միասին մեկնումը, ուշադրութիւն չգրաւէ, ժամագրուեցանք Մոկունքի ճամբուն վրայ՝ Դաշոյենց կամուրջին գլուխը:

Բաժնուեցանք իրարմէ, ես անցայ շուկայ:

Մէկ քանի ժամ յետոյ, ճամբայ ինկեր էի դէպի ուրոշեալ կամուրջը, երբ հանդիպեցայ Ռատիկանապետ Նաման Էֆէնտիին որ կեցուց զիս եւ հարցուց .

— Ո՞ւր կ'երթաս :

Մտքէս չէր անցներ, բողձանքներու իրականացման ճամբուն վրայ, առաջին քայլերու խի, հանդիպիլ վրտանդաւոր արարածի մը, որ ինձմով հետաքրքրուէր :

Իժբախտ անակնկալ, որ զիս կը մատնէր վտանգաւոր կացութեան մը : Պէտք էր ստել . բայց ի՞նչ սուտ գլորել որ ընդունուէր եւ եթէ հետապնդուէր, գաղտնիք մը երեւան չհանէր : Ի՞նչ պատասխանել : Կը մնար սուտը իրաւին խառնել :

Գիտէի թէ Մոկունքցի Իզնատիոս որ Գէորգի խումբին հետ կապ ունէր, կ'ամուսնանար այդ օրը : Կարելի էր ուրեմն սուտին տալ իրականութեան կերպարան եւ առանց վարանման պատասխանեցի .

— Մոկունք կ'երթամ :

— Ի՞նչ գործ ունիս հոն :

— Իզնատիոսի հարսնիքին կ'երթամ :

— Վա՞յ, կը կարգուի՞ Իզնատիոսը :

— Հապա :

Եւ ահա, խօսակցութեան այս կէտին փողոցին անկիւնէն երեւան ելաւ Արամը, որ կանդ չառաւ, փորձեց անցնիլ, շարունակել ճամբան առանց կանդ առնելու, յարգալիբ բարեւ մը տուաւ ու քալեց, երբ Նաման կեցուց զայն :

— Իուն ո՞ւր կ'երթաս :

Հարցումը իմ սրտիս կ'իջնար : Հապա եթէ Արամը սխալ պատասխան մը տար : Ի՞նչ կ'ըլլար իր կացութիւնը եւ ի՞նչ վիճակի կ'ենթարկուէի ես, եթէ Արամի հետ

կապս մէջտեղ ելլեր : Բայց մտքէս չէր անցներ թէ Արամը այդ ճամբուն վրայ՝ արդէն բաւական հեռաւորութիւն կարեր էր :

— Մոկունք կ'երթամ, պատասխանեց աւանց վարանումի :

— Ի՞նչ ընել :

— Իզնատիոսի հարսնիքին : Կ'ուզես երթանք միասին : Եստ կ'ուրախանայ եթէ քեզ հոն տեսնէ :

Արամի պազարիւնն ու հրաւերը ապշեցուցած էին զիս : Ոստիկանապետը շնորհակալութիւն կը յայտնէր եւ կը յանձնարարէր իր շնորհաւորութիւնները յայտնել Իզնատիոսի ու կը հեռանար : Մինչ մենք զսպելով մեր ինդուքը կը քալէինք դէպի Մոկունք :

Արամի հետ ճամբորդութիւնս մինչեւ Մոկունք հաճելի գրօսանքի մը վերածուեցաւ, շնորհիւ այս համեստ կարիճին պատմութիւններուն, որոնք յեղափոխական կեանքին ու դէմքերուն մասին, բուն հետաքրքրութիւնս կը գոհացնէին, միշտ աւելի սրելով :

Հասանք վերջապէս Մոկունք, եւ անվտանգ մտանք վանդակէն ներս, այն տունն ուր « ճնճղուկները » պատսպարուած էին, միշտ թռելու կազմ ու պատրաստ :

Սենեակի մը մէջ տեղաւորուած ծալապատիկ նստած տախտակամածին վրայ, հրազէն ու փամփշտակալ իրենց ձեռքին մօտիկը, այդ երիտասարդ կարիճները որոնցմէ ոմանք տարիքի շատ մեծ տարբերութիւն մը ունենալու չէին ինձմէ, պատկառանք կ'ազդէին ինձի. կուրծքս կ'ուռէր հպարտ ուրախութեամբ մը, որ այսօր դժուար է ինձ բացատրել :

Այդ օր կեանքիս ամէնէն ուրախ վայրկեաններէն մէկը ապրած եմ. եւ թերեւս ասոր համար է որ չեմ կր-

նար բացատրել կրած տպաւորութիւնս : Մարդ հաւասարապէս կը շնորհուր ու կը լռէ մեծ ուրախութիւններու եւ մեծ տխրութիւններու առջեւ :

Յիշողութիւնս ցարդ շատ քիչ խաբած է զիս , բայց այդ պահէն կը յիշեմ միայն ինչ որ քիչ վերը պատմեցի : Մտքիս առջեւ , այս պահուս , ոչ մէկ մանրամասնութիւն կը ներկայանայ : Հիացումէն շնորհած աչքերս ուրիշ բան կրնայի՞ն տեսնել , քան այդ կենդանի պատկերը իր ամբողջութեան մէջ՝ տեսակ մը խորհրդաւոր մշուշով պարուրուած :

Պիշերը լուսուցինք Իզնաախոսի տան մէջ ու հարսնիքէն յետոյ , Արամը դարձեալ զիս տարաւ հայդուկներու թաքստոցը : Կ'երեւի ինք արդէն որոշ տեղեկութիւններ տուեր ու վստահութիւն ներշնչեր էր իմ մասին , որ երբ ներս մտայ , Պէորդ , որ կը վարէր այդ խումբը , սկսաւ հետս խօսիլ համակրական վերաբերումով եւ հարցուց թէ կրնա՞մ իրեն բերել մեր այգիին բանալին :

Բացատրեց թէ իրենց համար կենսական արժէք կը ներկայացնէ ապահովել մեր այգիին ազատ մուտքը այն նկատումով որ Աստղաբերդի շրջանին մէջ գանուող այդ հողը լաւ դիրք ունի եւ հայդուկներուն համար իբր թաքստոց ի հարկին՝ մեծ ծառայութիւն կը մատուցանէ :

Պոստացայ առանց վարանման , հպարտութեամբ եւ ուրախութեամբ որ ծառայութիւն մը կ'ուզուի ինձմէ : Ինձի համար արդէն , մեծ նշանակութիւն ունէր բանալի մը յանձնելու պարտքան , քանի որ անսկզմէ ուզուած էր :

Հաղիւ տուն դարձած , սուի մեր այգիին բանալին ու տարի յանձնեցի Մոկուկի Ղազարին :

Այդ եղաւ յեղափոխական առաջին դործս :

Վերադարձի ճամբուն վրայ , Արամ շարունակեց էր

իր յեղափոխական դասերը տալ ինձի՝ մասնաւորաբար շեշտելով թէ մեր ժողովուրդին ազատագրութեան ճամբուն վրայ, ամէն մէկ քայլ որ կ'առնուի, ամէն մէկ գործ որ կը կատարուի, մէկը թէ միւսը որքան ալ աննպաստ թուին, կամ որքան ալ մեծ, դիրար կը լրացնեն եւ ատով իրարու կը հաւասարին: Մէկ անգամէն կ'ըսէր, չես կրնար ազգը փրկել, որ ահա վեց հարիւր տարի է կը տանջուի Քիւրաին ու Թուրքին ձեռքէն: Երկար ժամանակ պէտք է թերեւս հասնելու համար մեր նպատակին: Մէկ քայլ նետելով, չես կրնար ուզած տեղդ հասնիլ: Մէկ գործով ալ չես կրնար բաղձանքիդ տիրանալ: Որքան զոհողութիւն պէտք է:

Եւ այս բոլոր քարոզը անոր համար որ, հասկցուցեր էր ինձի թէ պէտք է պատրաստուիմ շալակաւոր, այսինքն յեղափոխական բեռնակիր դառնալու, երբ իմ աչքս դէնքի ու փամփշտակալի կ'ուղղուէր այնքան կարօտով:

Շալակաւոր բաւը, ոչ միայն հիասթափեր էր զիս, այլ եւ զայրացուցեր:

— Կ'երեւի, ըսեր էի Արամին, կռնակս ամուր տեսան, հա՛, թող հոգ չընեն, բազուկներս աւելի ուժեղ են:

Բայց, պէտք էր սկսիլ արուած որոշումին գործադրութենէն, եւ ինքզինքը մխիթարել այն սկզբունքով, որ ազատագրութեան ճամբուն վրայ գործին մեծն ու պզտիկը չկայ:

Ու նոյն իրիկունն իսկ, առիթ ունեցայ ճանչնալու համեստ ու չարքաշ շալակաւորին բաժին ինկող յուսմաները:

Չանազան վայրերու մէջ պահուած մանր արկղեր պիտի հաւաքէինք ու կեդրոնացնէինք մեր տան ներքնայարկը: Այդ արկղներուն մէջ տեղաւորուած էին վա-

բօղ, պայթուցիկ պատարոյք, զինագործի յատուկ կարգ մը մանր թէ մեծ գործիքներ :

Մեր սուներ երկյարկանի էր : Վերնայարկը կը բնակէին ընտանիքիս անդամները՝ ձմրան պատճառաւ : Գետնայարկը ամայի էր եւ յատուկ դուռ մըն ալ ունէր, ուրիշ կարելի էր մտնել ելլել առանց վերէն լսուելու :

Ինձ տրուած պատուէրին համաձայն, աշխատանքը պէտք է կատարուէր այնքան ղգուշութեամբ, որ ոչ ստիկանութիւն, ոչ ալ անեցիք բան չզգային :

Մէկ քանի ընկերներով, « ասրանք » ներու փոխադրութիւնը լրացուցինք մէկ քանի գիշերուան աշխատանքով, որ մեզ նման նորեկներու համար՝ զերծ չէր յուզումէ եւ հետաքրքրութենէ : Ու մեր տան ներքնայարկը դարձաւ մթերանոց :

Շալահաւորի տիտղոսն ու աշխատանքը ոչ թաքուն յաւակնութիւններս կը գոհացնէին ոչ ալ գոհունակութիւն կը պատճառէին ինձի : Այսուհանդերձ ուրախ տրամադրութեան մէջ էի : Առաջին քայլն առած էի արդէն անակնկալ կերպով, երբ որ եւ է յսյս չունէի այլեւրս : Կը մնար համբերութեամբ յարատեւել :

Կէտ մը միայն կար որ կը մտատանջէր զիս : Տունը մթերանոցի վերածած էի ծնողքէս գաղտնի : Այդպէս ալ պէտք էր մնար, ըստ յանձնարարութեան որ երկդիմութիւն չէր վերցներ : Հապա՞ եթէ չար բախտէս յայտնուէր եւ իմ առաջին գործս վարկաբեկուէր առ յաւէտ :

Մտքիս մէջ անընդհատ կը դառնային իրարու կը զարնուէին Գէորգի յորդորները, այն պահուն որ Մոկունքի մէջ, իրմէ հրաժեշտ կ'առնէի :

Յայտնած էր թէ քաղաքին մէջ կոմիտէ մը կայ որուն անդամներուն անունները կը մնան գաղտնի, թէ

անոր հրահանգները գիշեր թէ ցերեկ, լաւ թէ գէշ օրի,
մօտաւոր թէ հեռաւոր վայրերու համար, պէտք է կա-
տարուին առանց արտունջի, առարկութեան եւ ընդդի-
մութեան եւ մանաւանդ խիստ դաղտնապահութեամբ.
Թէ փոքր թերացում մը կրնայ զանցառուին վրայ հը-
րաւիրել ամէնէն անողոք ու դաժան սրտիժը:

Պատիժի սպառնալիքէն աւելի, անպատուութեան
պարագան էր որ կը խռովէր զիս, եթէ ինձ վստահուած
այդ տարրական դործն իսկ ձախորդ վերջ մը ունենար
դիպուածով:

Բարեբախտաբար քանի մը օր վերջ որոշուեցաւ
տան միտերքը Մսկունք փոխադրել ու ես ալ թեթեւցայ
վախէս ու յանցանքէս:

Առաջին ձիւնը սկսեր էր տեղալ արդէն: Բայց
ձամբաները տակաւին անանցանելի չէին դարձած: Քա-
նի մը հողի հաւաքուեցանք, վերցուցինք միտերքին մէկ
մասը, դարկինք կռնակնիս ու Տէրտէրենց վահանին ա-
ռաջնորդութեամբ ձամբայ ինկանք դէպի Մսկունք:

Ձամբու ընթացքին, հարցուցի Արամին թէ ի՞նչու
մէկ քանի հողի աւելի չառինք, որպէս զի մէկ անդա-
մէն միտերքը փոխադրուէր:

Այդ ալ եղաւ առաջին խորհրդատուութիւնս՝ յե-
ղափոխական դործին մէջ: Բայց Արամը փութաց իր
տեղը նստեցնել խելքս, յայտնելով թէ փոխադրութեան
դործը ամէն մարդու կարելի չէ վստահիլ, հաւատա-
րիմներ պէտք են, որոնց թիւը տակաւին շատ քիչ է:

Առի իմ մխիթարութեանս բաժինը Արամի այս
խօսքերէն, ինքզինքս գնելով հաւատարիմներու ցանկին
վրայ: Հասանք վերջապէս Մսկունք, բեռները տեղա-
ւորեցինք, քանի մը ժամ հանգստացուցինք մեր յող-

նաձ ուսերը ու բռնեցինք վերադարձի ճամբան: Բայց պէտք եղաւ որ քալենք ճիւնին վրայ դրոշմուած մեր ստնահետերուն վրայէն, զանոնք աւրելու խառնչակելու գիտումով:

Արամ ատով կը յաւակնէր մեզի տալ խորամանկութեան դաս մը:

Յաջորդ գիշեր կրկնուեցաւ մեր բեռնակրային պարտականութիւնը եւ բարեբախտաբար, մթերքը ըստ պառեցաւ:

Հայն շունչ մը քաշեցի: Հաւատարիմներու շարքին մէջ մտած ըլլալով մէկտեղ, մտատանջուելու պատճառներէ ալ զերծ էի:

Քանի մը օր յետոյ, մեր տան հասցէով հօրս անունով, Կովկասէն նամակ մը եկաւ, որ խորհրդաւոր խօսակցութեան մը տեղի տուաւ հօրս ու հօրեղբօրս միջեւ: Հայրս ոչ մէկ կապ ունէր Կովկասի հետ, ոչ մէկ ծանօթ այնտեղ, որ իրեն գրելու պէտք ունենար: Ու թէեւ նամակը իր անունին էր, բայց չէր համարձակեր բանալ, ենթադրելով որ ուրիշին է: Բայց չէր ալ գիտեր թէ ո՞վ է այդ ուրիշը, որուն յանձնէ: Կ'երեւի գիտէր որ մեր մօտիկ ազգականը Վահան գաղտնի կազմակերպութեան մէջ է եւ ենթադրելով որ նամակը կըրնայ անոր պատկանիլ զիս ճամբեց զայն կանչելու:

Իրօք, նամակը կը պատկանէր Վահանին, որ յայտնեց թէ ինք է տուեր մեր տան հասցէն, աւելի ապահովութեան համար. բայց եթէ կը դժկամակին, կրնայ փոխել: Մերոնք որ եւ է անպատեհութիւն չտեսան. ընդհակառակն ուրախութեամբ յայտնեցին թէ Վահան կրնայ ուզած կերպով գործածել մեր հասցէն:

Այս միջադէտը լաւ տալաւորութիւն գործեր էր վը-

րաս : Ուրեմն արդէն Վահանով , յեղափոխական մտայնութիւնը մտեր էր մեր տան մէջ ինձմէ առաջ եւ գաղտնի , զգուշաւոր շարժումի տանջանքէն ազատելու համար , կը մտածէի թէ ատենն եկած է թերեւս ծնողքիս յայտնելու որ ես ալ արդէն առաջին քայլերս նետած եմ Գործին մէջ :

Եւ որ մը , օգտուելով հօրս տաք տրամադրութիւններէն յայտնեցի իրեն , միեւնոյն ատեն յիշելով թէ արդէն տունը անգամ մը , իբր մթերանոց ծառայած է :

Կը սպասէի որ հայրս անակնկալի գայ , զարմանայ , քիչ մը նեղուի եւ կամ արդելքի խօսքեր ընէ : Ընդհակառակն , քաջալերեց զիս ու դոհացաւ զգուշութեան յորդորներ տալով :

Եսուզեռի օրեր կ'ապրէինք :

Յեղափոխական խումբեր կը պատրաստուէին մըրցումի տենդով ու թէեւ ամէն ինչ գաղտնի կը կատարուէր , բայց ժողովուրդին մէջ յայտնուած փափուք մը գաղտնապահութեան անխուսափելի խոստումով , բերնէ բերան կը տարածուէր ուռելով ու այլակերպելով : Միջակ ու հասարակ խաւին պատկանող ընտանիքներ պարծանք կը սեպէին օժանդակել Գործին ու կը հպարտանային եթէ իրենցմէ մէկը ուղղակի կապ ու մասնակցութիւն ունէր :

Մանրավէպ մը այդ օրերէն :

Օր մը մայրս բաղնիք էր գացեր : Վերադարձին յուզումով պատմեց թէ իրեն հետ ուրիշ կիներ , բաղնիքին մէջ , տաք ջուր առնելու կ'երթային , յանկարծ մէկը առաջ էր անցեր , ջուր առնելու առաջնութեան իրաւունքէն ճառելով :

Եւ ահա վէճ ու փոխասացութիւն :

Կինը սակայն իր իրաւունքը արժեցուցեր էր յայտնելով թէ իր մարդը յեղափոխական խմբապետ է : Եւ հետեւաբար , կինն ալ իրաւունք կը զգար թերեւս յեղափոխելու բաղնիքին սովորութիւնները :

Բայց մտքէն չէր անցուցեր անշուշտ թէ արժանապատուութիւնը կը վիրաւորէ մօրս , որ միջադէպը պատմելէ յետոյ , խրատեց զիս :

— Աճապարէ Սմբատ , դարձիր նշանաւոր յեղափոխական որ քու մայրդ ալ յարգուի . . .

Գիտեմ թէ , իմ յետադայ դորձունէութիւնս բաւական աչքի ջուր թափել ասուաւ մօրս , բայց արդե՞օք կրցաւ գոհունակութիւն մը զգալ , ամէնէն ասաջ ջուր ասնելով բաղնիքին մէջ՝ իբր հայգուկի մայր :

Քաղաքին մէջ սակեղծուած յեղափոխական մտայնութիւնը կը նպաստէր խումբերու լայն ցանցի մը արագ կազմակերպման :

Սակայն անդամներու ընտրութիւնը կը կատարուէր խիստ ընտրութեամբ , դատմով :

Տեղական վարիչներ , որոնք յաճախ , շնորհիւ պայմաններու խոր ծանօթութեան , յաճախ շատ աւելի ողջամիտ ու հեռատես կղած են , քան հեռաւոր անկիւններէ հրամայող ու կարգադրող ղեկավարները , կը նախընտրէին իրենց ձեռքին տակ ունենալ յանդուգն , կորովի , վստահելի կտրիճներէ կազմուած փոքրաթիւ խումբեր , քան թէ մեղկ ու թույլ , ցուցամով ու անպէտ բազմութիւն մը : Կը բաւէր որ կարենային ժողովուրդը տողորել իրենց զգացումով ու մտայնութեամբ :

Իւրաքանչիւր նոր անդամի ընդունելութիւն կը պայմանաւորուէր վստահութեան խոր ներշնչումով , ինչ որ կը պահանջէր խումբերէն դուրս կատարուած

աշխատանքներ :

Նորեկը խումբին բոլոր անդամներուն ներկայութեան, երգում կուտար Յաչի, Աւետարանի եւ Դաշոյնի վրայ :

Նշանակութիւնն այն էր որ խաչով ու աւետարանով պիտի պատժուէին բոլոր անոնք՝ որոնք յեղափոխականի անվայել բարոյական յանցանքի մէջ կ'արատաւորուէին :

Իսկ դաշոյնով՝ մասնութեան ու դաւաճանութեան պարագային :

Այս կերպով կազմուած, Մուշի մէջ խումբեր ունէին հետեւեալ թաղերը, — Վարդանանց խումբ (Ս. Մարինէ թաղ), Երկաթ (Չորաթաղ), Աշոտ (Վերին թաղ), Պողոսատ՝ Բրտի թաղ) եւ Ճկրաչէնի տասնեակ : Բոլորը միասին հազիւ հարիւր հոգի կը կազմէին :

Խմբապետներ կը նշանակուէին երբ խումբը տասը հոգի ունենար : Ժողովները տեղի կ'ունենային ամիսը մէկ անգամ, զբաղելու համար զանազան հարցերով, կազմակերպչական խնդիրներ, վերին հրահանգներու գործադրութիւն. ներքին դատական վէճեր, անհամաձայնութիւններ : Այս կերպով ստեղծուած էր տեսակ մը տեղական, դազանի կառավարութիւն, որուն ժողովուրդն ալ յաճախ կը դիմէր՝ իր վէճերուն ու դատերուն կարգադրութեան համար :

Խումբերը կը գտնուէին հսկողութեանը տակ պատասխանատու մարմնի մը որուն կ'անդամակցէին Հաճի Յակոբ, Պոլսյեան Մճօ, Վահան Բորսյեան՝ հօրեղբորս տղան, Բղէեան Միսաք, եւ Քեղամ Տ. Կարապետեան :

Այս մարմնին զլխաւոր գործերն էին նաեւ զէնքե-

րու փոխադրութիւնը, արտասահմանեան մարմիններու հետ յարաբերութիւնը:

Քաղաքի կազմակերպութենէն զատ, կար նաեւ Իաշտին կազմակերպութիւնը որ կը զբաղէր աւելի լեռը բարձրացած հայդուկներուն պարէնաւորման հոգերով եւ առաւելապէս գիւղերու կազմակերպութեամբ:

Այս գործին լծուած էին Վարդան, Մխիթար Շէխիկեան, Յիսաւու Յարութիւն, Սուլուխցի Սերոբ, Ալիճանցի Պետիկ, Հավրան գիւղացի Ասօ, եւն.:

1900ի սկիզբները, երբ արդէն Մուշ քաղաքի բոլոր թաղերը օժտուած էին խումբերով, իսկ ես ալ բաւական փորձուած, դիմեցի Հաճի Յակոբին՝ որպէս զի գիւրացնէ խումբի մը մէջ մուտքս:

Պատասխանեց որ բոլոր խումբերը բաց են ինծի համար:

Ու մտայ Երկաթ խումբի մէջ:

Շատ շանցած սակայն, նշմարեցի թէ խումբի մը մասնակցութիւնն ու կեանքն ալ չէր կրնար գոհացնել զիս: Որքան ալ հաճելի ըլլար խմբական աշխատանքը, ի վերջոյ միօրինակ կը դառնար, մանաւանդ որ անոր գործունէութիւնը կը սահմանափակուէր քաղաքին մէջ, որ նեղ կուգար ինծի:

Շարժում պէտք էր ինծի: Լեռներու կեանքը կը փնտռէի որ կ'ուշանար:

Այդ ձանձրոյթին մէջ, հրապուրիչ նորութիւն մը եղաւ գէպի Ս. Կարապետ վանք երթեւեկս մասնաւոր պաշտօնով մը:

Կարելոր նամակներ յանձնուէր էին ինծի Գոմատանելու եւ յանձնելու Իսոյին եւ Ս. Կարապետ վանքի Վարդան Վարդապետին:

Ինչ որ կատարեցի հպարտութեամբ եւ ուրախութեամբ: Շարաթ մը վանք մնալէ յետոյ, առի նամակներուն պատասխանները եւ վերադարձայ քաղաք:

Պահ մը ուրեմն ինձ տրուեցաւ սուրհանդակի դեր կատարել քաղաքին եւ գիւղերուն ու թաքստոցներուն միջեւ:

Այդ առթիւ էր որ առիթն ունեցայ ճամբորդելու համար մինչեւ Տիգրանակերտ յանձնելու կարգ մը նամակներ եւ միեւնոյն ատեն ուղեկցելու այն ատենուան առաջնորդ Բաբգէն Եպ. Կիւլէսէրեանի (այժմ աթոռակից Կիլիկիոյ կաթողիկոսին) ծնողքին որոնք հոն կ'երթային:

Նամակները պիտի յանձնուէին Չաւէն վարդապետին (յետոյ Պատրիարք):

Կարաւանը, որուն կ'ընկերակցէի, եօթը օրուան տաժանելի ճամբորդութենէ մը յետոյ, առանց միջադէպի հասաւ Տիգրանակերտ, ուր նամակները յանձնեցի տեղը:

Քանի մկ օր վերջ այնտեղի կոմիտէին անդամները եկան գտան զիս եւ գիշերանց տարին ընկերական հաւաքոյթի մը, ուր խօսակցութիւնը անցաւ գլխաւորաբար մեր շրջանի կազմակերպութեան եւ մանաւանդ, Աղբիւր Սերոբի սպանութեան մասին, որուն յիշատակը թարմ կը մնար մտքերուն մէջ:

Մէկ եւ կէս ամիս մնացի այնտեղ եւ ջորեպաններու հետ, որոնց երկուքը հայ էին եւ մեր գինական փոխադրութեան գործին կը մասնակցէին, բռնեցի դէպի Մուշ վերադարձի ճամբան:

Երբ կարաւանը Ըլրճա հասաւ, հոն Մուշէն եկող ջորեպաններ յայտնեցին թէ՛ Սասունի մէջ կռիւներ

սկսած են :

Լուրը բնական է , ոգեւորութեամբ պիտի լեցնէր
 զիս : Մէկուկէս ամսուան ընթացքին , ոչ մէկ իրական
 տեղեկութիւն ստացեր էի քաղաքէն եւ անցուղարձե-
 բուն բոլորովին անտեղեակ էի : Չէի գիտեր թէ ի՞նչ
 պատահեր է որ Սասունը յանկարծ բռնկի , մանաւանդ
 որ իմ մեկնումի օրերուս ոչ մէկ պատրաստութիւն կը
 տեսնուէր մօտաւոր բախումի մը նախատեսութեամբ :
 Քիտէի միայն թէ հայդուկային դործունէութեան լըր-
 ջօրէն հետեւող կառավարութիւնը իր անմիտ հետա-
 պնդումներով կրնար պատրուակ մը տուած ըլլալ ,
 կրնար ասեղ բռնկումի մը պատրոյգը վառած ըլլալ
 կամայ թէ ակամայ :

Հետաքրքրութիւնս յազեցնելու համար , վարպե-
 տօրէն հարցումներ կ'ուղղէի ջորեպաններուն , որոնք ,
 սակայն , ընդհանուր տպաւորութիւններէ զատ ոչինչ
 ունէին հազորդելիք :

Բառ չէին գտներ գովելու յեղափոխականներու
 յանդգնութիւնն ու քաջութիւնը , որոնք իրենց աչքին ,
 հրաշագործ հսկաներու մեծութեամբ կ'երեւէին , կը
 պատմէին թէ անոնք իրենց տրամադրութեան տակ , ա-
 նըսպատ քանակութեամբ փամփուշտ ունին եւ որ աւե-
 լին է , նոր զէնքեր կը գործածեն :

Կաւագոյնը , ժամ առաջ տեղս հասնիլն էր , մանրա-
 մասն եւ ստոյգ տեղեկութիւններ քաղելու համար : Չէնք
 դործածելու մարմաջը կը վառէր զիս :

Բայց անախորժ անակնկալ մը կը սպասէր ինձի :

Հազիւ Մուշ հասած , հազորդեցին ինձի թէ , իմ բա-
 ցակայութեանս ընթացքին ոստիկաններ եկած զիս հար-
 ցուցած են , ճամբորդութեանս պատճառները ուզած են

առուզել :

Տրուած բացատրութիւնները զիրենք չէին գոհացուցեր :

Նոր մտեր էի տուն, երբ ստախկան մը զիս պաշտօնատուն հրաւիրեց :

Երթալէն ուրիշ ճար չունէի, քանի որ ներկայութիւնս տանս մէջ իսկ բռնուած էր եւ փախուստս կրնար տնեցիները վտանգել :

Շիտակ բանտ առաջնորդեցին զիս եւ յաջորդ օրը միտջն կանչեցին քննութեան :

Գլխաւորաբար կ'ուզէին հասկնալ թէ ի՞նչ կապ կրնամ ունենալ յեղափոխականներու հետ եւ թէ Տիգրանակերտ ճամբորդութիւնս չունէ՞ր գաղանի նպատակ մը :

Պարզ էր որ այդ օրերու եւ նման պարագաներու միակ առաքինութիւնը՝ ուրացումը՝ պիտի կիրարկէի իբր բոլոր նրբութիւններովը, Աստուածը վկայութեան կանչելով՝ իր հրեշտակներու փաղանգովը :

Ի վուր սակայն, վստահութիւն ներշնչելու համար մարդոց, սրտնց գլխաւոր առաքինութիւններէն մէկն էր կասկածամտութիւնը : Կը բաւէր որ լայնքով ու հասակը սովորական կազապարէն յորդէին : Ընդունուած չափին վերածելու միակ միջոցը՝ բանտն էր ուր առաջնորդեցին զիս առանց այլ եւ այլի :

Ի հարկէ, բանտի նստուկ կեանքը չէր ուրդոհացում պիտի տար շարժումի իմ պէտքիս : Մանաւանդ որ հովը լուրեր կը փոքտար Սասունէն եւ չէի գիտեր թէ մերոնք ի՞նչ կը ձեռնարկեն զիս ազատելու համար :

Ու փախուստս արդէն ծրագրեցի եւ սկսայ աշխատանքի առանց ժամանակ կորսնցնելու :

Եսա շանցած խախտեցի պատուհանին վեց եօթը առ

դիւաները, եւ իրանիս համար բաւական լայն անցք մը
պատրաստելէ յետոյ, աղիւսները տեղաւորեցի, սպասե-
լով կէս դիշերուան մութին բարերար օժանդակութեան :
Պատուհանէն վար, բարձրութիւնը մեծ բան մը չէր :
Պիտի կրնայի անվտանգ դետին կոխել : Յետոյ Աստուած
ողորմած էր :

Բայց փախուստի ծրագիրս դործադրելու առիթը
չտրուեցաւ ինձ եւ նոյն օրն իսկ, մեր թաղին ընկերները
խորհրդակցեցին եւ Մութթարին միջոցաւ դիմեցին
կառավարութեան, երաշխաւորութեամբ զիս ազատ ազ-
ձակելու համար :

Հազիւ բանաէն դուրս ելած, լծեցին զիս տենդոս
աշխատանքի : Մեր տունը արդէն վերածուած էր կեդրո-
նատեղիի ուր դիզուած էր հազուատեղէն եւ կապար :

Բայց, երթեւեկ ու փոխադրութիւն որքան ալ դադա-
նի եւ զգոյշ կատարուէին, չէին խուսափեր լրտեսներու
եւ ոստիկաններու աչքէն եւ կառավարութիւնը որոշեց
էր խուզարկել մեր տունը :

Բայց ոստիկանապետ Մահմուտ էֆէնտին որ հօրս
հին բարեկամն էր եւ անոր աւատաձեռնութիւնը վայե-
լած լայնօրէն, առիթը կը դռնէր յայտնելու արուած ո-
րոշումը եւ յորդորելու որ վտանգաւոր բաներ հեռա-
ցնենք փութով :

Երբ ոստիկանները, անակնկալի բերելու հպարտու-
թեամբ, կոխեցին տունը, քանի մը կտոր քուրջէ գոտս
ոչինչ գտան :

Սակայն մեր տան կը սպասէր ուրիշ դժբախտու-
թիւն մը :

Այդ օրը մեր տունէն յետոյ խուզարկեր էին նաեւ ու-
րիշ մէկ քանի բնակարաններ ալ որո՞ք վերջ անակնկալ

կերպով վերադարձեր ու կրկին կոխեր էին մեր տունը :

Երկրորդ խուզարկութենէն առաջ ես հանդարտ արտով եւ ամէն վտանգ անցուցած մարդու ապահովութեամբ, կը գտնուէի մեր տան դիմացը՝ բարձրադիր տուն մը ուր գացեր էի փախստական բարեկամ մը Լեւոն Առլանեանը տեսնելու : Երբ լուր բերին թէ մեր տունը նորէն պաշարուեցաւ, սրտատրոփ բարձրացայ վերի յարկի պատուհանէն դիտելու, անշուշտ չնշմարուելու զգուշութեամբ :

Շատ չանցած, տեսայ որ ոստիկանները հայրս փողոց հանեցին, կոնակը տուած երկու չախմախլը հին հրացան եւ ձեռքը՝ երկու դաշոյն : « Ֆէտայի » ... բռնած էին, ու հպարտութեամբ, առջեւէն ու ետեւէն պաշարած, զայն կ'առաջնորդէին բանտ :

Մտահոգութիւններէս մէկը փարատեցաւ : Ենթադրեցի որ տան մէջ պահուած զէնքերէն ու փամփուշտներէն միայն երկու հին հրացան երեւան հանած էին : Քերիչ ոչինչ գտած էին :

Սակայն, ուրիշ կարգի մտահոգութիւն մը կը տանջէր զիս : Գտած էին արդեօք լեռն ապաստանած խումբերուն համար պատրաստուած կերպասեղէնը, որմէ հագուստ պիտի շինուէր եւ որ գողցուած ու մեր տունը պահուած էր հետեւեալ պարագաներու մէջ :

Այդ օրերուն, կը լսէինք թէ յեղափոխական կազմակերպութեան կեդրոնը Թիֆլիս, Պոլիս, Ամերիկա եւ ամէն տեղ դրամ կը հանգանակէր յատկացնելու համար խումբերու սնունդին, սպառազինութեան եւ այլ պէտքերու :

Լուրերը ի հարկէ հաղորդակցութեան նախնական պայմաններու այդ օրերուն, մեզ կը հասնէին շափաղան-

ցումս ու մեզ կը տագորէին խանդավառ լաւատեսու-
թեամբ :

Իրաւականութիւնը սակայն հետու էր ամենէն ժուժ-
կայն ու անձնուէրն իսկ մխիթարելէ : Լեռը կամ գիւղա-
կան թաքստոցները ապաստանած խումբերը գրեթէ ար-
տաքին օժանդակութիւն չէին ստանար : Շատ անգամ կը
անանէին գիւղացիներու շնորհիւ : Կը պատահէր որ չոր
ու դամաք հացը օրական միակ սնունդը կազմէր :

Տեղական կազմակերպութիւնն ալ, ոչ միայն լայն
միջոցներէ բոլորովին գուրկ էր, այլ չէր ազեր իսկ նիւ-
թական գոհողութիւն պարտադրել քաղաքացիներուն թէ
գիւղացիներուն, վախնալով զանոնք խրաչեցնելէ : Հա-
մոզումի ճամբան լաւագոյնը կը նկատուէր, տեղւոյն
հայ բնակչութիւնը կապելու համար յեղափոխական ձեռ-
նարկներուն, եւ ի հարկէ այդ ճամբան կրնար տարած-
ուիլ ու զարգանալ, միայն եւ միայն համեստ, աշխատա-
ւոր խաւերուն մէջ, որոնք ամենէն աւելի ենթարկուած
կողոպուտի եւ հարստահարութեան, չէին գլանար ինչ
որ կրնային :

Ու մեծ բան մը չէին կրնար անշուշտ :

Գալով ունեւորներուն, անոնց մօտենայն իսկ կրնար
դժուարութիւններ յարուցանել : Արդէն իսկ գէշ արա-
մադրուած յեղափոխական շարժման հանդէպ, որ իրենց
քմբոնումով, զիրենք եւ հետեւաբար Հայերը կասկածելի
կը դարձնէր կառավարութեա նաչքին, կրնային մինչեւ
իսկ միանալ եւ դարձակցիլ թշնամի տարրերուն :

Այս վախը շարժման ղեկավարները կը մղէր զգու-
շութեամբ շարժելու եւ գոհանալու գիւղացիներու գրե-
թէ ինքնաբուխ, այլ ճղճիմ տուրքովը՝ ծածուկ հիւրը-
կայութեան ձեւին տակ եւ ամսական մէկ գրուշի տուր-

քով որ կը գանձուէր ամէն մէկ անգամէ :

Հասկնալի է թէ այս ձեւով հաւաքուած գումար մը ինչ գոհացում կրնայ տալ պահանջին որ անհամեմատ մեծ էր :

Ու Ֆէտայիներու շարքաչ կեանքին մասին մեզ արուած կցկտուր տեղեկութիւնները ոչ միայն դառնու թեամբ կը լեցնէին մեզ, այլ մեզմէ շատերուն յանգուզն գաղափարներ ու ծրագիրներ կը թելադրէին :

Քիչ չէին անոնք որ տրամադիր էին իրենց ամբողջ ունեցածը գոհելու եւ յատկացնելու գործին : Պոլոյեան Մճօն, գիտէինք թէ ուրիշ ոչինչ ունենալով տուեր էր իր կնոջ գոհարեղէնները ու տան ամբողջ արժէքաւոր իրեղէնները, որպէս զի անոնց բերած գումարը անհրաժեշտ պէտքի մը յատկացուի :

Նման պատմութիւններ շատ կը լսէինք, եւ օր չէր անցնէր որ գլուխ չյողնեցնէինք խումբերուն նիւթական օժանդակութեան միջոցներ փնտռելով :

Իմ տարեկիցներու մէջ, աչքի կը գարնէր Էլեօն Ասլանեանը սակաւախօս, այլ վառվռուն տղայ մը, որ կը մրկէր յեղափոխական կրակով, եւ մեր ընկերական խումբին մէջ, կ'ուզէր առաջնութիւն շահիլ՝ նիւթական օժանդակութեամբ մը :

Մեր հանգիպումներու ընթացքին, քանիցս յայտնէր էր թէ միջոց մը գիտէ իր նպատակին հասնելու եւ թէ անսակնկալ մը պիտի ընէ :

Չէինք գիտեր թէ ի՞նչ կ'որոճար երբ օր մը յանկարծ մեզ դրաւ կատարուած իրողութեան մը առջեւ :

Բարեկենդանի շարաթն էր եւ այդ առթիւ խանութները քանի մը օր դոց մնացին : Իր հօրը խանութին կից կը գանուէր Սահակեան կոչուած անձի մը կերպասեղէնի

վաճառատուներ: Լեւոն օգտուելով տօնական այդ օրերուն առթիւ շուկային ամայութենէն, կը ծակէ իրենց խանութին պատը, կը վերցնէ 20 - 25 զգեստացու կերպասեղէն, կը կոտորէ նաեւ դրամարկղը ուր կը գտնէ 70 մէճիտիէ եւ կը գրպանէ:

Իր խելքով՝ կերպասեղէնը պիտի դրկուէր լեւոնականներուն որոնք շատ պէտք ունէին զգեստի եւ 70 մէճիտիէն ալ պիտի յատկացուէր անոնց սնունդին:

Երբ նոյն գիշերն իսկ, եկաւ իրողութիւնը ինծի պատմեց, նախ շմեցայ: Կատարուածը վերջապէս՝ գողութիւն էր եւ որքան ալ յատկացուած ըլլար նուիրական նպատակի մը, չէր կրնար արդարանալ մեր բարոյականով եւ մանաւանդ տեղական մոլեռանդ ըմբռնումով:

— Եթէ լսուի, ըսի իրեն, ամբողջ շարժումն է որ կը վարկաբեկուի:

— Եթէ լսուի պատասխանեց, ես միայն կ'անպատւրուիմ. ո՞վ ինչ գիտէ թէ ուր է գացեր: Ես ու դուն գիտենք: Ուրիշ ոչ ոք:

Չէի կրնար համոզուիլ սակայն: Չիս իրեն մեղասակեց կը դարձնէր. այդ չէր որ զիս կը մտահոգէր: Վստահ էի իր գաղտնապահութեան վրայ: Բայց մերոնք պիտի ընդունէին գողօնը: Որովհետեւ, պարզ էր որ, առաջին առթիւ իսկ, պիտի հասկցուէր թէ գողցուած ապրանք է: Մանաւանդ որ, 20 - 25 զգեստացու կերպաս եւ 70 մէճիտիէ՝ հարստութիւն մը կը ներկայացնէին:

— Մտիկ ըրէ, Սմբատ, ըսաւ, Սահակեան կոչուած մարդը, ոչինչ տուած է մեր տղաներուն համար, որ ժողովուրդը պաշտպանելով զինքն ալ պաշտպանած կ'ըլլան. արդար չէ որ միայն հացի կարօտ խեղճերը տան ու տան. նկատէ որ Քիւրտերն եկան եւ զինքը կողոպտե-

ցին : 70 մէճիտիէ եւ քանի մը կտոր լաթեղէն ի՞նչ է որ
 իրեն համար : Մի վարանիր . առ ու տար ուր որ պէտք է :
 Եւ շուտ , եթէ ուշացնես , կ'իմացուի եւ անոնք ալ կը
 մերժեն : Ըրածս պարապին կ'երթայ : Տար յանձնէ , թող
 կերպասը անմիջապէս կտրեն եւ դրամը բաժնեն : Իմաց-
 ուի իսկ ուշ կ'ըլլայ . չեն կրնար տեղը դնել եւ ստիպուած
 կ'օգտուին անկից : Իսկ եթէ գողութիւնը յանցանք է , ես
 մեղքը կը քաւեմ Աստուծոյ առջեւ :

Առանց համոզուած ըլլալու , ընդունեցի որ մինչեւ
 տեղը հասցնելս , քանի մը օրուան համար , կերպասեղէնը
 մե րտունը պահուի 70 մէճիտիէն ալ ինծի յանձնեց :

Մեծ պահքի երկուշաբթին էր որ սատիկանները կո-
 խեցին մեր տունը , ուրկէ տակաւին , գողցուած ապրան-
 քը չէի կրցեր փախցնել : Գողութիւնը շուտով յայտնուեր
 էր եւ արդէն կասկածը կը ծանրանար Լեւոնին վրայ , որ
 ստիպուած պահուեր էր այն տունը ուր ես գացեր էի զին-
 քը տեսնելու եւ միեւնոյն ատեն ուտելիք տանելու :

Այն կերպով էր որ երկրորդ խուզարկութեան պա-
 հուն , հող կը գտնուէի եւ մտահոգութեամբ կը հետեւէի
 անցուղարձին : Եթէ ապրանքը բռնուէր , ի՞նչ անպատ-
 ւութիւն ինծի , հօրս , գերդաստանիս : Կրնայի՞ իրակա-
 նութիւնն ու իրողութիւնը յայտնել :

Բայց , յայտնուած ըլլալով մէկտեղ թէ գողութիւնը
 Լեւոնի գործն էր , կասկածներ կը ծանրանային իմ վրաս
 թէ՛ իբր անոր մտերիմը , եթէ մեղսակից ալ չեմ գոնէ
 տեղեակ եմ :

Լեւոն , գողութենէն ի վեր անհետացեր էր : Իր ծը-
 նողքն ու ազգականները դիմեր էին եղբօրս Աբգարին եւ
 պնդելով որ ես անպատճառ գիտեմ անոր թաքստոցը
 ինչքեր էին որ յայտնեմ եւ զիրենք յարաբերութեան մէջ

զնեմ փախստականին հետ :

Թուղարկութեան գիշերն իսկ, մեր խումբը հրաւիրուեցաւ ստիպողական ժողովի, որմէ չէի կրնար բացակայիլ : Պիտի քննուէին մեր տան մէջ պահուած մթերքէ հարցը, եւ Լեւոնի գողութեան պարագան :

Որոշուելէ յետոյ որ մթերքը որքան կարելի է շուտ նոյն գիշերն իսկ փոխադրուի կրու Մջոյենց տունը, կարգը եկաւ գողութեան : Ստիպուեցայ յայտնել ճշմարտութիւնը իր բոլոր մանրամասնութեան մէջ :

Խումբին մէջ տիրող արամադրութիւնն այն էր որ պէտք էր սուսձքն առնել գայթակղութեան ամէն միջոցներով, թէ լաւագոյն էր գողոնը վերադարձնել, որովհետեւ կրնար յեղափոխութիւնը արատաւորել : Յանձնարարուեցաւ որ Լեւոնի եւ ծնողքին միջեւ հանդիպում մը կարգադրեմ եւ անոնց հետ միասին վէճը փակելու մասին մտածեմ :

Դիւրին էր յանձնարարել : Բայց պիտի կրնայի՞ համոզել Լեւոնը. պիտի ենթարկուէ՞ր այս կարգադրութեան թէ պիտի նախընտրէր ամէն կապ խզել իրեններուն հետ եւ գլուխն առնել երթալ :

Եթէ յաջողէր, ապուն ու ծնողքին հանդիպման խումբին կողմէ ներկայ պիտի ըլլար Ռաֆայէլ Սէմէրճեանը :

Բարեբախտաբար, Լեւոն ո եւ է ընդդիմութիւն չբրաւ ու նոյն գիշերն իսկ, օգտուելով մթութենէն առանց նշմարուելու մտանք Լեւոնի մօրաքրոջ տունը, ուր արգէն կը սպասէին իր ծնողքը :

Լեւոն գիտէր թէ իմ վրաս ալ կասկածներ կը ծանրանան եւ ինքնիրեն պարտք սեպեր էր յայտնել ճշմարտութիւնը : Բայց չէր ուզեր գողօնը յանձնել. ոչ ոք գի-

տէր ներկաներէն թէ ո՞ւր պահուած է կերպասեղէնը եւ
ի՞նչ եղած է դրամը :

Լեւոն կ'ըսէր .

— Անոնք պիտի երթան իրենց նպատակին , երբ
Ռաֆայէլ միջամտեց կտրուկ կերպով .

— Չեմ գիտեր թէ ո՞ւր ես պահած դրամն ու լու-
թը , բայց գիտցիր թէ ասոնք ընդունող չպիտի ըլլայ :

Ռաֆայէլ որ լու կը ճանչնար Լեւոնը , անոր պար-
կեշտութիւնն ու զգացումները , գառապարտութեան ոչ
մէկ խօսք ըրաւ անոր արարքին համար , բայց երկարօ-
րէն ծանրացաւ անպատուութեան վրայ , որ կուգար յե-
ղափոխութեան :

Տղու պէս կուլար Լեւոնը : Իր վարկարեկումը չէր
որ զինքը կը վշտացնէր , այլ ցաւը որ չէր կրցած իր մը-
տադրած օժանդակութիւնը հասցնել նպատակին :

Երբ հանդարտեցաւ , դարձաւ ինձի .

— Դէ՛հ , Սմբատ , ըրէ ինչպէս կ'ուզեն :

Դրամ ու կերպասեղէն յանձնուեցան արտօջը որ
խոստացաւ ոչ մէկ դիմում կատարել կառավարութեան
եւ ոչ ոքի առջեւ ոչ մէկ ակնարկութիւն ընել :

Կը մնար հօրս բանտարկութեան պարագան եւ իմ
կացութիւնս :

Նոյն գիշերուան ժողովին մէջ խումբը ինձի յանձ-
նարարեր էր քանի մը օր փախստական մնալ , մինչեւ որ
հասկցուէր կառավարութեան մտադրութիւնը :

Փախիլ ու պահուելուիլ դիւրին էր : Բայց խիղճս կը
տանջուէր : Հայրս ձերբակալուեր ու բանտարկուեր էր
իմ պատճառովս : Պարագան աւելի կը ծանրանար գրա-
նուած գէնքերով ու դաշոյններով : Գիտէի թէ ինչ
տանջանք կը սպասէ բանտարկեալին՝ նման պարագա-

ներու մէջ : Ոսք մը փրցնելու համար , կանգ չէին առներ ո եւ է վայրագ միջոցի առջեւ : Ազգանով քաշել եղունգները եւ խաշած , տաք հաւկիթ զետեղել մարմնին վրայ՝ սովորական էին՝ ծեծէն յետոյ՝ որմէ ողջ ու առողջ ազատողը կրնար իրաւամբ պարծենալ իր տոկունութեամբը :

Եթէ յանձնուէի , հաւանաբար հայրս ազատ կ'արձակուէր , մանաւանդ որ սատիկանապետը զինքը վաղուց կը ճանչնար եւ քանիցս բարեկամական զգացումներ յայտներ էր գործով :

Բայց , ի՞նչ կ'ըլլար իմ վիճակս : Այդ պարագային ի՞նչ կեանք ու ճակատագիր կը սպասէր ինծի : Ընկերները յանձնարարել էին սպասել քանի մը օր : Եթէ այդ քանի մը օրուան ընթացքին , հայրս ազատ չարձակուէր , կը մնար փախուստի լուրջ ձեռնարկ մը կազմակերպել :

Միտքս աւելի այդ ուղղութեամբ կը բանէր եւ արդէն ծրագրեր ալ կ'որոճայի : Յանձնուելու գաղափարը հետզհետէ տեղի տուաւ այս մտածումին առջեւ , մանաւանդ որ Տիգրանակերտէն դարձէս ասդին , երկու անգամ էր որ ձերբակալուել էի :

Երկրորդը զիս անակնկալի բերել էր : Առաջին հարցաքննութենէ մը յետոյ , երբ զիս ազատ ձգել էին , չէի գիտեր թէ լրտեսներ կապած են ոտքիս : Մտքէս իսկ չէր անցներ : Օր մը յանկարծ սատիկան մը կանգներ էր դէմս եւ յայտներ էր որ սատիկանապետը զիս կ'ուզէ :

Երբ պաշտօնատուէն ներս մտայ սատիկանապետին սենեակը , հոն տեսայ երկու մշեցի Հայեր , որոնց վրայ կասկած կը ծանրանար թէ կը լրտեսեն ու մատնութիւններ կ'ընեն :

Վախը բռնեց զիս : Չէի գիտեր թէ ի՞նչպիտի վերա-

գրեն ինձի: Բայց Հայերու այդանոց ներկայութիւնը վստահութիւն չէր ներշնչեր:

— Հա՛, ըսաւ սատիկանապետը, եկա՞ր դուն: Ո՞ւր ես, քանի որ է քեզ կը փնտռենք:

— Կը պատիմ, էֆէնտի: Մէջտեղն եմ:

— Այս օրերս, բնաւ գիւղերը չգացի՞ր:

— Այո, հօրս հետ, առեւտուրով կ'երթամ կուգամ:

— Գէորգին ո՞ր գիւղը հանդիպեցար:

— Ի՞նչ Գէորգ, ո՞վ է սատիկա, չեմ ճանչնար:

— Լաւ, լաւ:

Ու այսպէս, ճիւղէ ճիւղ ցատկոտելով, անկապ հարցումներ ուղղելով, առաջարկեր էր որ սատիկան գրուիմ, պատիւներ ալ խոստանալով ինձի:

Մերժում ստացեր էր բնականաբար, որմէ յետոյ մինչեւ իրիկուն, զիս վար դրեր էր անօթի ծարաւ: Երեկոյեան դէմ միայն, կանչել տուեր էր զիս դարձեալ եւ պետութեան հանդէպ հաւատարմութեան կարգ մը յորդորներով, ճամբեր էր:

Հօրս հետ ձերբակալուած ու բանտարկուած էին Տէրտէրենց Արամը, Աղաճանը, Թրդկայ Համբօն, որոնք գիտէին թէ առաջին բանտարկութեանս պատէն քանի մը աղիւս քակելով, փախուստի անցք մը բացեր էի: Ինձի լուր էին դրկեր որ մէկ քանի օր սպասեմ իրենց քաղաքին մէջ, մինչեւ որ իրենք յաջողին փախուստ տալ: Հապուակ պարագային, ազատ կը ձգէին զիս իմ շարժումներու մէջ:

Սպասելը սակայն անհարելի էր: Քաղաքին մէջ յարմար թաքստոցը կը պակօէր ինձի, մանաւանդ որ տուն երբեք չէի կրնար ոտք կոխել եւ լրտեսներէն ալ կը վախնայի: Իսկ մերոնք արդէն, հօրս ձերբակալութենէն

չեառյ, փոխադրուեր էին Մոկունք:

Կայծակ - Վաղարշակի եւ Մճոյի կարգադրու -
թեամբ, հրացան տրուեցաւ ինծի եւ երկու հոգիի ընկե-
րակցութեամբ, ես ալ գացի Մոկունք, այն յայտով որ,
իմ կացութեանս մասին հոն վերջնական կարգադրու -
թիւն մը կը կատարուի:

Հաղիւ մէկ երկու օրէ ի վեր Մոկունք ապաստաներ
էի, երբ լուր բերին թէ մեր բանտարկեալ աղաքը փա-
խած ու հասած են արիւնշուայ սաքերով:

Փախուաւր յաջողուցեր էին հետեւեալ կերպով:

Հայրս՝ շնորհիւ սասիկանապետին հետ իր բարեկա-
մութեանը, որ կը սնանէր առատ նուէրներով, վատահ
էր թէ անվնաս ու անվտանգ պիտի փրկուի բանաէն, եւ
իր իսկ հաւանութեամբ, երեք ընկերները՝ բանտապա-
հին զինքը կը ներկայացնեն իբր վտանգաւոր յեղափո-
խական մը, անոր վրայ կեդրոնացնելու համար ամբողջ
հսկողութիւնը: Իսկ իրենք կը սկսին բարեկամութիւն
մշակել անոր հետ, ծխախոտ, ըմպելի հրամցնելով եւ
երբեմն ալ քիչ մը դրամ խաղցնելով:

Եւ օր մըն ալ օգտուելով բանտապահին լաւ մէկ
արամադրութենէն, ու փախուստի ոչ մէկ կասկած
չներշնչելու համար, իրենց կօշիկները ձգելով դրան
առջեւ, եւ գրեթէ կիսամերկ, իրարու ետեւէ կ'երթան
արտաքնոց, որ բանտին բակին մէջ, փորուած փոս մըն
էր: Իրենց ընկերացոյ սասիկանը կը կենայ քիչ անդին,
անախորժ հոտերէն ու աղմուկներէն հեռու մնալու հա-
մար: Երեկոյեան դէմ էր արդէն մութը սկսեր էր կո-
խել: Փոսին առջեւ կար տախտակէ կարճ սրմ մը, որ
սասիկանը կ'արգիլէր զիրենք տեսնել:

Օգտուելով մութէն ու տախտակորմէն, կը սկսին

զգուշութեամբ սողալ գէպի պատ, ուր իրարու ուսի վը-
րայ բարձրանալով կը յաջողին բռնել դաշտի ճամբան:

Ոչ ոք նշմարեր էր զիրենք: Բայց բոպիկ էին, եւ երբ
Մոկունք հասան հեւասպառ ու յոգնաբեկ, իրենց ոտ-
քերը կ'արիւնէին:

Գէորգ հետաքրքրուեցաւ մեր վիճակով եւ ինքն ալ
յայտնեց թէ Դաշտ կ'երթայ զբաղելու Օրթոտոքսու -
թեան խնդրով:

Ահա թէ ի՞նչ էր այդ խնդիրը:

Այդ օրերուն, Պիթլիսի ոււսական հիւպատոսարա-
նը մեծ ջանք կը թափէր Հայերը դաւանափոխ ընելու եւ
ուսու եկեղեցիին կապելու: Ու գիւղերու մէջ տարուած
աշխատանքը այդ ուղղութեամբ, ամուլ չէր մնար: Գիւ-
ղացին, որուն մէջ նոր արթնցեր էր ազգային գիտակ-
ցութիւնը, պէտք է խոստովանիլ թէ ինքնապաշտպա -
նութեան համար կ'ընէր կարելի զոհողութիւնը:

Քիչ չէին անոնք որ իրենց ընտանիքին բերնէն կը
կարէին գէնքի կտոր մը ձեռք ձգելու համար: Հակա-
ուսի այս տարածուած յուսադրիչ մտայնութեան, քիչ
չէին սակայն անոնք որ թուրք եւ քիւրտ միացեալ հարս-
տահարութիւններէն փրկուելու միջոց մը սկսեր էին նը-
կատել օրթոտոքսութիւնը: Այնքան ալ մեղադրելի չէ
անշուշտ: Ապրող մարդուն համար, օղին հետ ամենէն
կարեւոր պայմանը կը կազմէ կեանքի ապահովու -
թիւնը:

Իսկ մեղ համար օրթոտոքսութիւնը կը ներկայանար
իրը վտանգ մը յեղափոխութեան: Մեր տեսակէտով
կրօնափոխութիւնը արդէն ազգուրացութիւն էր: Ու
Գէորգ մտադրած էր տարհամոզել զիւղացիները:

Գէորգ բաժնուեցաւ իր խումբով գէպի Դաշտ, իսկ

մենք սկսանք բարձրանալ դէպի Սասուն, Գէորգի իսկ
թելադրութեամբ :

Ձիւնը սկսեր էր հալիլ արդէն. պաղ արեւը չէր կը-
նար կորով ու լաւատեսութիւն ներշնչել մեզ : Կը քալէինք
յուսարեկ ու պարտուած փախստականներու նման, տը-
խուր մտածումներով ծանրացած : Մեր անորոշ կացու-
թիւնը մանաւանդ՝ կը ճնշէր մեզ :

Կաղն ի կաղ, հասանք վերջապէս Ծիրնկատար, ո-
րուն առջեւ Մշոյ դաշտը կը պարզուէր սպիտակ սաւանի
մը պէս : Գիւղերու բուխերիկներէն մուխը կը բարձրա-
նար՝ իբր թէ հայկական շէն օճախներու շունչն ըլլար :
Ու քաղաքը կը տարածուէր հանդիսաւոր հանդարտու-
թեամբ մը, որ կը յուզէր մեզ :

Հոն մենք ալ ունէինք մեր փոքրիկ անկիւնը, ուր
պիտի կրնայինք կեանքի խաղաղ ու անմեղ հաճոյքները
վայելել. բայց ուրկէ քշեր էր մեզ բռնութիւնը՝ ապաս-
տան փնտռելու թաքստոցներու ցուրտ ու թաց մենու-
թեան մէջ :

Բայց, տխուր մտածումներով, կամ քաղցը յիշա-
տակներով ու երազներով յամենալու ժամանակը չէր.
պէտք էր փութալ ժամ առաջ հասնելու Սէմալ, ուր պի-
տի հանդիպէինք Անդրանիկին, որ արդէն Աղբիւր - Սե-
րոբի եղերական մահէն յետոյ, տիրական դէմք էր դար-
ձեր :

Օր մը յետոյ միայն լուր առինք թէ Անդրանիկը հա-
սած է Սէմալ, գացինք զինքը տեսնելու :

Տխուր էր : Իր առնական դէմքը կը մատնէր մտա-
հոգութիւն մը, որուն գաղտնիքը մեզ յայտնուած էր
զիւղացիներու հետ խօսակցութեան ընթացքին : Սօսե-
լու տրամադրութիւն ցոյց չէր տար ու մենք կը զգուշա-

նայինք հարցեր ուղղելէ :

Երբ իրեն պատմեցինք պարագաները որոնք մեզ ստիպեր էին այդ ճիւնին ու ցուրտին բռնելու լեռներու ճամբան եւ յայտնեցինք հայդուկային խումբերու մէջ մտնելու մեր մտադրութիւնը, մէկու մը պէս որ սիրտը բանալու առիթ կը փնտռէ, ըսաւ .

— Մեզ իսկ դինաթափ կ'ընեն, դուք ելեր էք դէ՞նք վերցնելու :

Անդրանիկի տխրութեան պատճառը հետեւեալն էր :

Հրայր որ Մշոյ շրջանի յեղափոխական շարժման ամենէն ողջամիտ, հեռատես ու անչափանդիր գործիչն էր, ուզեր էր կասեցնել զինեալ խումբերու գործունէութիւնը :

Ան, գիտեր էր որ թուրքեփերտ բռնակալութիւնը անանց հայ յեղափոխութեան ալ կը հարստահարէ ու կը հալածէ հայ ժողովուրդը . բայց իր վայրագութիւնները սասակացնելու պատրուակ կը ծառայեցնէ զինեալ խումբերու գոյութիւնը : Օր չէր անցներ որ փախստական մը, կամ հայդուկ մը փնտռելու պատրուակով, գիւղ մը շտուգարկուէր :

Իսկ ամէն մէկ խուզարկութիւն ուստիկաններուն ու խուժանին առիթ կուտար անխնայ կողոպտելու խեղճ գիւղացիները : Յեղափոխականներ հալածելու եւ պատժելու մտքով ալ իբր թէ, թուրք կառավարութիւնը թէեւ անշուշտ պաշտօնապէս չէր արտօներ, բայց ամէն կերպով կը քաջալերէր քիւրտ ցեղապետներու աշանն ու թալանը : Ու թուրքեփերտ զինեալ դաշնակցութեան դէմ, հայ գիւղացին չէր որ պիտի կրնար պաշտպանել իր կեանքը, ինչքը եւ դաժան աշխատանքին արդար վատտակը :

Գիւղերը որ ամէնէն աւելի կ'ենթարկուէին հա-
 րըստահարութեան, տակաւին պատրաստ չէին կորովի
 գիմադրութեան: Այս՝, գիւղեր կային, որոնք ամէն
 զոհողութիւն կ'ընէին ինքնապաշտպանութեան միջոց-
 ներ հայթայթելու: Բայց նոյն իսկ դրամ տեղար եր-
 կինքէն, անօգուտ էր երբ զէնք ու ռազմանիւթ ճարելու
 դործը կը բախէր դարհուրելի դժուարութեանց եւ կը
 պահանջէր երկար, լուռ ու զգուշաւոր դործունէու-
 թիւն: Մանաւանդ որ յեղափոխական ամէնէն թեթեւ
 շարժումներն իսկ կը վտանգուէին շնորհիւ հայ լրտես-
 ներու, որոնց թիւը հեազհետէ կը յաջողէր բազմացնել
 կառավարութիւնը: Ան իբր թէ արգելելու համար հայ-
 գուկներու մուտքը, ամէն մէկ գիւղի մէջ, նշանակե-
 ՚ր թուրք պահապաններ, դինեալ, որոնք գիշերները
 կը շրջէին գիւղերու փողոցներն ու շրջակայքը: Հսկո-
 ղութիւնը երթալով կը կազմակերպուէր ու կը կանո-
 նաւորուէր:

Այս կացութեան հանդէպ ի՞նչ կ'ընային ընել փոք-
 րաթիւ հայգուկային խումբեր: Աւելի չէի՞ն նպաստեր
 դազանը կատղեցնելու եւ գրգուելու որ նետուի անմեղ
 անզէն ժողովուրդին վրայ:

Հրայր այս մուայլ պատկերին առջեւ, հասեր էր
 այն եղրակացութեան թէ պէտք է դադրեցնել մատնակի
 ամէն գործողութիւն, որոնք քիչ մըն ալ ցուցական
 կերպարանք կը ստանային: Երկար, համբերատար աշ-
 խատանք պէտք էր գինելու համար գիւղերն ու քաղաք-
 ները, ոչ միայն Մշոյ շրջանին, այլ Վանի, Ախլաթի,
 Էրզրումի մէջ եւ պատրաստել ընդհանուր յեղափոխու-
 թիւն: Ասով միայն ան կը յուսար հայ ժողովուրդը
 փրկել թուրք եւ քիւրա բռնատիրութենէն: Իսկ այդ,

ինչպէս ըսինք, կը պահանջէր երկար աշխատանք: Նրման աշխատանքի մը դժուարութիւնները կարելի է բացատրել մէկ խօսքով երբ ըսենք թէ Թիֆլիսէն նամակի մը պատասխանը երկու ամիսէն չէր հասներ. թըղթակցութիւնն իսկ պատահականութեան կը մնար եւ կը վտանգէր սուրհանդակները: Իսկ կանոնաւոր, գաղտնի կապը շրջաններու միջեւ որ անհրաժեշտ էր նման պարագայի մը, կը բախէր անհարթելի խոչընդոտներու:

Ու Հրայր, որոշեր էր զինաթափ ընել բոլոր խումբերը, զանոնք լծել գէնքի փոխադրութեան եւ ժողովուրդը զինելու գործին, մինչեւ ժամանակը հասունանար:

Իսկ Անդրանիկ չէր ուզեր հասկնալ Հրայրի այս ծրագիրը ու մերժեր էր ենթարկուիլ զինաթափ ըլլալու համար պատասխանատու Մարմնին տուած հրահանգներուն: Պէտք է ըսել թէ Անդրանիկ միակ չէր իր այս տեսակ մը ըմբոստացման մէջ: Իրեն ուժ կուտային Սասունի մաս մը իշխանները իրենց մարդոցով:

Անդրանիկ ու Հրայր քանիցս խօսակցեր էին իրարու հետ: Անդրանիկ միշտ յամառ էր. չէր կրնար բաժնուիլ իր գէնքերէն մինչեւ որ Հրայր ստիպուեր էր զեմել խորամանկութեան:

Գիշերմը, երբ Շէնքի մէջ կը հանգստանային խումբով, Հրայր իր մարդոցով կը վերցնէ Անդրանիկի եւ իր քանի մը հոգինոց խումբին գէնքերը:

Անդրանիկ, առաւօտուն երբ կ'արթննայ, գայրոյթով կը տեսնէր որ գէնքերը վերցուած են:

Այս ցաւալի պայմաններուն տակ էր որ Անդրանիկ Յէմալ կը մտնէր եօթը հոգինոց զինաթափ խումբով:

մը, ընկճուած, տխուր եւ շատ մըն ալ վիրաւորուած
իր արժանապատուութեան մէջ:

Այս ծածուկ զինաթափումը կատարուեր էր Հրայ-
րի եւ պատասխանատու մարմնի կարգադրութեամբ,
Քեաթիպ Միքայէլի ձեռքով ու գիտնալով Անդրանիկի
տաք նկարագիրը, կը վախցուէր որ բուն միջադէպեր
պատահին յեղափոխական զինակիցներու միջեւ, որ
սերտ կապուած կը մնային թշնամիին դէմ, իրարու
համար իրենց կեանքն իսկ կը զոհէին, բայց չէին վա-
րաներ ամէնէն բիրտ հարուածը իջեցնելու փոխադար-
ձարար՝ ուրիշ պարագաներու մէջ:

Զինաթափութենէն յետոյ, մինչ Անդրանիկ Սէմալ
մեկնէր էր, Չրիկ գիւղացի Համբարձում եւ Ռերուզայ
Արթին մնացեր էին Շէնըք, բանակցելու համար Հրայ-
րի հետ եւ կերպ մը գտնելու Անդրանիկին եւ իր խում-
բին վերադարձնելու գէնքերը:

Իէպքը, որ արդէն լսուեր էր գիւղին մէջ, մեծ յու-
զում պատճառեր էր. գիւղացիները կը վախնային Ան-
դրանիկէն եւ որովհետեւ համամիտ էին կատարուած
կարգադրութեան, որ եւ է քայլի դէմ նախադրուչական
միջոցներ կը կաղձակեյալէին:

Իսկ Սէմալի մէջ կար երկու խումբ: Ռէս Մնոյի
խումբը որ զինաթափութիւն կը պահանջէր, եւ Տէր-
տիրոջ խումբը որ դէմ էր: Սէմալի այս կացութիւնն ալ
կը մտահոգէր Անդրանիկը, որ միեւնոյն ատեն, Շէնը-
քէն իրեն դէմ ուղղուած յարձակման մը կը սպասէր եւ
անընդհատ, զիտակը ուղղած գիւղին վրայ, յառաջա-
ցող խումբեր կամ անհատներ կը զննէր:

Եւ իրօք, լուր եկաւ թէ Շէնըքցիներ որոշած են
քալել Սէմալի վրայ՝ իր խումբին դէմ: Լուրը չէր կր-

նար գոհունակութիւն պատճառել Անդրանիկի, որ չափազանց գրգռուեցաւ: Եթէ յարձակում գործուէր իր վրայ, պիտի պաշտպանէր անշուշտ ինքզինքը: Բայց ի՞նչ պիտի ըլլար հետեւանքը: Ժողովուրդը որ խանդավառուած էր ազատագրական պայքարի գաղափարով, եւ երկիրը զածութեամբ լեցուած Փէտայիներուն հանդէպ, բոլորովին պիտի յուսալքուէր տեսնելով ու լսելով եղբայրասպան բախումները: Կառավարութիւնը չպիտի ուշանար շահագործելու կացութիւնը, ու հարուածը ամբողջ ծանրութեամբ պիտի իջնար գիւղացիութեան գլխուն:

Անդրանիկ որոշեց հեռանալ ատկից ալ ու մէկ քանի գէնք առնելով տեղացիներէն, մեկնեցաւ Կէլիկիւզան: Իսկ ես ու ընկերներս, չունենալով որոշ հրահանգ Պատասխանատու Մարմնէն, Անդրանիկի իսկ թելադրութեամբ, միացանք իր խումբին ու հետեւեցանք իրեն:

Հազիւ հող հասած, Անդրանիկ նամակներ գրեց Քէորզին, Համբարձումին ու Արթինին որ շուտով վերադառնան, խորհրդակցելու համար եւ ինքը մեր օժանդակութեամբ սկսաւ նորոգել գէնքերը, որոնք Կէլիկիւզան կը մնային Սանասորի ձախող արշաւանքի օրէն:

Արթին եւ Համբարձում վերադարձան շուտով, ինչպէս կը նախատեսուէր, առանց դրական արդիւնքի: Հրայր՝ այս փափկասիրտ յեղափոխականը, որ գործելէ առաջ շատ կը մտածէր, որոշում մը տալէ յետոյ ետ թռնողը չէր, ու մերժեր էր վճռապէս՝ կատարուած կարգադրութեան գէմ շարժիլ:

Քանի մը օր վերջ, երբ տակաւին չէր վերջացած գէնքերու նորոգութիւնը, Քէորզ վերադարձաւ: Լսեք

էր կառարուածը բայց չէր հաւատացեր, մինչեւ ստացեր էր Անդրանիկի նամակը:

Փէորզի վերադարձով խումբը գտեր էր իր ամբողջական կազմը: Անդրանիկ՝ խմբապետները կանչեց ժողովի՝ խորհրդակցութեան համար, որուն անշուշտ՝ իբր նորեկ գինւորներ՝ ես ու ընկերներս չէինք մասնակցեր:

Այ դժողովին մէջ, նուստացած հայդուկները տուեր էին վճռական որոշումներ: Պիտի պահանջէին զէնքերը. իսկ մերժումի պարագային՝ մահուամբ պիտի պատժէին մէկ քանի ղեկավարներ որ տուեր ու գործադրեր էին խումբերու գինաթափութեան որոշումը:

Յակոբն այդ պահանջը ներկայացնելէ առաջ, Անդրանիկ ու Փէորզ Տերզէվանք ժողովի կանչեցին Քեղամբ, Մճօն, Հաճին ու Վարդանը, միշտ նոյն հարցին շուրջ. խաղաղ ելք մը գտնելու համար: Ժողովին կը բացակայէր Քեղամբ:

Հաճին բացատրելէ յետոյ որ այս պառակտումը շատ վատ տպաւորութիւն գործած է ժողովուրդին վերայ, թէ կառավարութիւնն արդէն որոշ տեղեկութիւններ քաղած է, խոստացեր էր հակառկ պարագային, իր իսկ պատասխանատուութեամբ, մինչեւ 15 օր վերադարձնել զէնքերը:

Այս խոստումը չափով մը գոհացուցեր էր Անդրանիկը, որ նախընտրեր էր սպասել դրական արդիւնքին:

Ձէնքերը արդէն նորոգուած էին. Անդրանիկ անոնցմով գինեց իր տղաքը եւ որոշեց կէլիէկիւզանէն հեռանալ գէպի Սասուն: Ես մնացի գիւղ:

Ճամբան փոքրիկ խումբը, երբ կը հասնի Բերդակ գիւղ եւ կը նստի պահ մը հանգչելու, կը նշմարեն որ

կառավարական ուժ մը գիւղը պաշարած է : Կուրը ան-
խուսափելի էր : Հայդուկները գերք կը բռնեն . զէնքե-
րը կը պայթին : Թշնամին քանի մը սպանեալ կը թողու-
ու կը քաշուի , մերիններէն թեւէն կը վերաւորուի մէկ
հոգի Գալէն : Ու խուճբը կը վերադառնար Կէլիէկիւ -
զան :

Անդրանիկի խուճբին Կէլիէկիւզան վերադարձո-
վը , հարցը կը բարդանար , մանաւանդ որ ինքնապաշտ-
պանութեան դժուարութիւններուն կը խառնուէր ու-
տեստի նեղութիւնը : Սուճբը որ հետզհետէ կը սառու-
բանար նոր փոխատականներով , հասեր էր 50-55 հո-
գիի եւ գիւղը չէր կրնար սնուցանել այդ բազմութիւ-
նը , մանաւանդ որ այդ տարին բերքն ալ շատ չէր եղած :

Անդրանիկի կարգադրութեամբ խուճբը ցրուեցաւ
զանազան գիւղեր , ատեն մը պատասպարուելու : Ինքը
10-15 հոգիով կը մնար Կէլիէկիւզան , իսկ ես եօթ հո-
գինոց խուճբով մը գացի գիւղին մօտիկը Ալոճիկ գոմ :
Մեզ հետ էր վերաւոր Գալէն : Չինքը դարմանելու հոգը
ստանձնած էր Կէլիէկիւզանի աէյս Աւէն , որ գիւղին բը-
ժըչի համբաւը կը վայելէր :

Չեմ գիտեր թէ աէյսը ի՞նչպէս կը կիրարկէր իր
գիտութիւնը , զոր սորված ըլլալու էր հանիէն , բայց
իր խնամքներուն շնորհիւ , Գալէի վէրքը կը գոցուէր
օրէ օր : Սուճբը գիշերը կը պարտկուէր գոմին մէջ , մօա-
շորս հարիւրի չափ ոչխարներու հետ , իսկ ցերեկը
զինավարժութեամբ կ'անցընէր ժամանակը :

Գալէն բաւական ուժեղ կը զգար ինքզինքն արդէն ,
երբ մեզի հրահանգ եկաւ հաւաքուելու Ստան գիւղը ,
որպէս զի այնտեղէն ուրիշ խուճբերու հետ անցնինք
Կեպին սարը : Մօտ վաթսուն հոգի էինք հաւաքուած

այնտեղ ուր մնացինք մէկ քանի օր :

Տակաւին անկից չմեկնած , լուր եկաւ թէ Մոկուների մէջ սպաննուած է քիւրա ցեղապետ մը՝ Քէօթան դատէ Շէրիֆ աղա : Շէրիֆ այն հազուագիւտ ցեղապետներէն էր որոնք Հայոց հանդէպ , եթէ սրտաբուխ բարեկամութիւն ալ չէին տածեր , թշնամութենէ ալ կը խուսափէին : Իր յարաբերութիւնները սովորաբար , լաւ էին մեզ հետ : Աղատ մուտք ունէր հայկական գիւղերը , բայց իր գործերուն բերումով , կը յաճախէր ամէնէն աւելի Մոկուներ :

Տեղացիները անպատեհութիւն չէին տեսներ զինքը հիւրասիրելու երբեմն երբ իրենց դուռը կը դարնէր պահ մը հանգչելու համար :

Մոկուներ իր յաճախակի երթեւեկի ընթացքին , նշմարեր էր Եսթեր անունով հայ աղջիկ մը , որուն գեղեցկութիւնը զինքը հմայեր էր . աւելի ճիշդ է ըսել , գրգուեր էր քիւրտին ջիզը :

Անկից յետոյ , ան ջուրի ճամբայ դարձուցեր էր Մոկուները , բայց միշտ զգուշանալով իր գաղտնիքը մատնելէ : Սակայն , ամէն անգամ որ Եսթերի հանդիպէր , չէր քաշուեր իր սէրը յայտնելէ : Բայց , ի դուր :

Աղջիկը թերեւս սխալ մըն էր գործեր քիւրտին հետապնդումը չյայտնելով իր ազգականներուն : Բայց , գիւղական ամօթխածութիւնը միայն կրնայ բացատրել այդ գաղտնապահութիւնը , մինչ քիւրտը դայն մեկներ էր թերեւս , իբր լուս համամտութիւն եւ ատով սնուցաներ էր իր անտաշ երեւակայութեան թռիչքները :

Եւ գիշեր մըն ալ , մութը կոխելէն յետոյ , ափ առեր էր Եսթերենց դուռը հիւրասիրութիւն խնդրելով :

Հայ գիւղացին անվերապահ է իր ասպնջականու-

Թեան մէջ, մանաւանդ որ Շէրիֆ Աղան պարկեշտ քիւրտի համբաւ կը վայելէր: Եսթերի ընտանիքը առանց ու եւ է դոյզն կասկածի, մանաւանդ որ ոչինչ դիտէր, քիւրտին շնական հետապնդումներէն, հիւրասիրեր ու պատուեր էր զայն: Եւ, որովհետեւ, ժամանակն ալ ուշ էր, անպատեհութիւն մը չէր տեսնէր անկողին մը փռելու անոր համար:

Եսթերենց տունը ընդամէնը մէկ գետնաշարկ սենեակէ կը բաղկանար, ուր բոլորը մէկ, կ'եփէին, կ'ուտէին, կը նստէին ու կը պառկէին: Բնականաբար, Շէրիֆ, որուն միտքը պղտոր էր, պիտի պառկէր հոն՝ իբրը ընտանիքի մէկ անդամը՝ բոլորին հետ:

Հազիւ ճրագը մարած, օրուան աշխատանքէն յոգնած տնեցիները կը մտնէին խոր քունի մէջ: Իսկ միամիտ Եսթերի մտքէն իսկ չէր անցնէր որ քիւրտը կրնայ իր ընտանիքին ներկայութեան, որ եւ է վատ յանդրդնութիւն ունենալ:

Իսկ Շէրիֆը կը տանջուէր անկողնին մէջ: Փուշի վրայ պառկած էր: Մէկ կողմէն միւսը կը դառնար հանդիստ փնտուելով, բայց Եսթերի հանդէպ սնուցած կերքը կը բանէր իր մտքին մէջ, հետզհետէ կատղեցընելով զինքը:

Ու վերջապէս, Շէրիֆ որոշումը կուտայ: Կը նստի անկողնին մէջ ու ահանջ կը դնէ, բոլորը կը քնանան: Կ'ելլէ անկողնէն ու սողոսկելով կը մօտենայ Եսթերի անկողնին, որ սենեակին միւս անկիւնը դրուած է: Իբեւ անոր միջեւ, Եսթերի մօրն ու փոքր եղբօրը անկողինները կան: Եթէ անոնք արթննան իսկ, կը մտածէ, պիտի վախնան աղմկելէ: Պիտի նախընտրեն լռութեամբ ծածկել անպատուութիւնը, մանաւանդ որ այդ պարա-

դային, սրուշած է հօր դեր կատարել տան մէջ: Եսթերի հայրը մեռած է: Իրենք աղքատ են. իսկ Շէրիֆ աղան հարուստ. կրնայ բարիքներով սղոզել բոլորը:

Ու կը մտնէ Եսթերի անկողինը: Չեւքը պինդ դըրած աղջկան բերնին, խափանելու համար օգնութեան կանչերը, անուշ խօսքեր ու խոստումներ կը փսրտայ աղջկան որ սարսափէն սառ կտրած է ու կէս քուն, կէս արթուն, չի հասկնար իսկ թէ ի՞նչ է պատահածը:

Բայց քիւրտը արդէն յագեցուցած է իր կիւրքը: Գոհ ու երջանիկ է: Ոչ ոք ոչինչ իմացած է: Աղջիկը, սարսափէ՞ն թէ հաճոյքէն, ինքը չի դիտեր, ճիշ չէ հանած, դարձեալ կը սողոսկի դէպի անկողինը ու կը մըտնէ արդարի քունի մը մէջ:

Մինչ Շէրիֆ իր այս վայրագ կիւրքը գոհացնելէ յետոյ, տան գիշերային հանդարտութիւնը կը խանդարէր իր խապտ խունդիւններով, Եսթեր նոր սթափած, կ'իջնար հողեկան տանջանքի դժոխքին մէջ: Մարմնական ցաւեր ալ կը զգար որ կուզային սաստկացնելու իր տաղնասլը: Քանի վայրկեանները կ'անցնէին, անմեղ աղջիկը այնքան կը մատնուէր զարհուրելի անդոհանքի մը: Ուզեր էր պոտալ, օգնութեան կանչել: Սարսափի աղղեցութեան տակ, թերեւս կարծեր էր թէ պոռացած ալ է: Բայց ի՞նչու իր մայրն ու եղբայրը չէին հասած, կամ գոնէ ձայն տուած: Ի՞նչու երբ Քիւրտը իր կիւրքը կը յագեցնէր, ոչ մէկ շարժում, ոչ մէկ աղմուկ նշմարած ու լսած էր սենեակին մէջ, երբ իրեն այնքան մօտիկը պառկած ըլլալու էին անոնք: Արդեօք նախապէս ծրագրուած խաղի մը զոհն էր, անեցիներուն իսկ մեղսակցութեամբը: Չէ՞ որ քիւրտը զինքը հետապնդեր էր օրերէ ի վեր, բայց ի գուր եւ արդէ՞օք իրմէն յուսա-

հաս, գներ էր իր մօրն ու եղբօրը լուսթիւնն ու հաւա-
նութիւնը: Հապա ի՞նչու այդ գիշեր ան հոն էր մնա-
ցեր:

Սարսափելի կասկածը կը կրծէր խեղճ Եսթերին
միաքը ու չէր համարձակեր տակաւին ձայն տալ:

Սակայն ժամը կը սահէր. Քիւրաին անհող ու ջը-
զապրզիո խոնդիւնը հեղնանքի քրքիջներու պէս աւելի
կը սրէր իր ցաւը, մինչ իր մօրն ու եղբօրը շնջիւնը,
անվրդով քունը վհատութեան կը մղէին զինք:

Սակայն, մարմնական ցաւեր ալ կը գգար. ուղեց
զխոնայ թէ ի՞նչ է: Վախով եւ գգուշութեամբ վառեց
ճրագը ու սարսափէն քարացաւ: Սպիտակ սաւանին վը-
րայ՝ արեան խոշոր արատ մը կը տարածուէր:

Երբ քիչ մը սթափեցաւ, մօտեցաւ իր եղբօր որ մը-
շիկ-մշիկ կը Փշար. մշտեց ու կամաց ձայն տուաւ:

Երբ ան, աչքերը բացաւ, բռնեց թեւէն, քաշեց իր
անկողնին ու ցոյց տուաւ խեղդուկ ձայնով.

— Նայէ, ըսաւ:

Եղբայրը չէր հասկնար թէ ինչ է պատահած ու
գարմանքէն ու նաեւ զարհուրանքէն խոշոր բացած աչ-
քերը քրոջ աչքերուն ուղղած, բացատրութեան կը ըս-
պասէր:

— Եկուր դուրս որ պատմեմ, ըսաւ:

Քոյր ու եղբայր, ձեռք ձեռքի բռնած դուրս ելան
ճրագը մարելով. ու հոն, տնակին առջեւ, հեկեկալով
քոյրը պատմեց իր եղբօր անպատուութիւնը սրուն եւ-
թարկուած էր.

— Ահա, ըսաւ, քոյրդ անպատուուած է: Մեր սան
վրայ սեւ արատը քսուած է: Այլեւս չենք կրնար մար-
դու աչքի մէջ նայիլ: Բոլորը մեզ մտանացոյց կ'ընեն

հեղնանքով ու անարգանքով: Կամ կը մեռնիմ, կամ այս արատը կը սրբուի:

Եսթերի եղբայրը հազիւ մէկ տարի տարբերութիւն ունէր իրմէ: Բայց արդէն կարչնեղ պատանի մը խրոխտ խառնուածքով, շատ ալ չէր վարաներ յանդուգն քայլերու առջեւ, երբ պահանջը ներկայանար:

Ու քոյր եւ եղբայր որոշեր էին վրէժ լուծել:

Ու դարձեալ ձեռք ձեռքի սողոսկեցան տնակէն ներս: Եսթեր վառեց ճրագը. եղբայրը գնաց անկիւնէն մէջտեղ հանեց եաթաղան մը, հին, ժանգոտ, քուրջի կտորներու մէջ փաթաթուած. մերկացուց դայն ու մօտեցաւ բռնաբարողին անկողնին:

Քիւրտը միշտ կը խուկար, բայն իրանը փռած անկողնին վրայ: Տաքէն վերմակը նետեր էր վրայէն: Չախին պառկած, դէմքը դարձուցեր էր պատին: Եղբայրը վարանում չունէր. վճռած էր քրոջը վրէժը լուծել: Բայց վախ մը դինքը բռներ էր: Եթէ մէկ հարուածով չկարենար Քիւրտը սպաննել, աղմուկ կը բարձրանար դուռ դրացի կը լսէին, գործը կը հասնէր կառավարութեան ահանջը ու ամբողջ գիւղը այս անգամ կը վրտանդուէր:

— Մի վախնար կը խրատէ քոյրը: Միասին կը կոխենք:

Ու քոյր ու եղբայր իրենց դողդոջ ձեռքերը միացուցած եաթաղանին կոթին վրայ, հարուածը կուտան Քիւրտին կողին: Ուժ ու կորով ստացած, կը հրեն մահացու գործիքը որ կը ծակէ թոքերը ու այժմ կողէն կը խրի անկողնին մէջ:

Քիւրտը խոնդիւն մը կ'արձակէ ցնցում մը կ'ուռնենայ, կը փռուի կռնակի վրայ. վերջին շունչը փչած է:

Վրէժը լուծուած է : Արդարութիւն է կատարուած :
 Բայց նոր վախ : Քիւրտին ցաւատանջ խոնդիւնը
 արթնցուցած էր մայրը որ ճրագին աղօտ լոյսին տակ ,
 ստուերոտ աչքերով , սաքսափահար կը դիտէ տեսարա-
 նը՝ առանց հասկնալու :

Ի՞նչ կայ . ի՞նչ է պատահած : Ի՞նչ կ'ընեն հող-
 Քիւրտին քով իր տղաքը : Կը տեսնէ արիւնը որ կար-
 մբցուցեր էր սաւանն ու սարափի ճիշ մը կ'արձակէ :

Աղջիկը այլեւս լեզու չունի բացատրելու եւ պատ-
 ճելու : Կը յայտնէ իր սաւանին կարծիքը : Մայրը հաս-
 կըցած է . մէկ ոստուկով ոտքի է : Կը մօտենայ քիւր-
 տին :

— Սասկա՞՞՛ է , սասկա՞՞՛ է :

Այո , վախ չկայ որ ողջնայ :

Կը մնայ անհետացնել : Մարդ չի դիտեր թէ Քիւր-
 տը իրենց տունն է , մութին եկած է : Եթէ նշմարող ալ
 եղած է , կարելի է պնդել թէ սուրճ խմելէ յետոյ մեկ-
 նեցաւ : Գործի ուրեմն :

Եղածին պէս , երեքը մէկ , ձեռք ձեռքի , անկողին
 ու վերմակ կը պլորեն դիակին վրայ : Գետինը արեամբ
 հետք չկայ : Անկողինը ծծած է ամբողջ արիւնը : Պա-
 րաններով ամուր կը կապեն արիւնոտ ծրարը ու կը քաշ-
 քըշեն դէպի դուրս :

Առաքելոց վանքին ու Մզրայի միջեւ անդնդածեւ
 ձոր մը կը խորանայ , ուր ջուրը կը նստի տղմուտ հունի
 մը մէջ :

Հոն պիտի տանին ու նետեն : Ճամբան յոգնեցուցիչ
 է : Բայց կը բաւէ որ մարդ չտեսնէ :

Շէրիֆի երկարող բացակայութիւնը պիտի մտա-
 տանջէ անշուշտ իր ընտանիքը , որ մէկ քանի օր յետոյ

գիմուճ կատարեր էր կառավարութեան :

Ոստիկանութիւնը մէկ քանի շարաթ պրպտումներ խուզարկութիւններ ու քննութիւններ կատարելէ յետոյ, ձորին մէջ երեւան հաներ էր ՇէրիՓի դիակը :

Երբ դիակը գտնուեցաւ, Մոկուեքը ինկաւ սպանալիքի եւ վտանգի տակ : Մէկ քանի յեղափոխականներ որոնց մէջ Իսրօն, Մկրտիչը եւ Եսթերի եղբայրը Յակոբ, խուզարկութիւններէն վախնալով՝ փախեր աղաստաններ էին Սասուն :

Արդէն գիւղին մէջ լսուեր էր թէ ՇէրիՓ սպաննուած է Եսթերենց տան մէջ : Յակոբի փախուստն ալ ուշադրութիւնը գրաւեր էր լրտեսներու ու ոստիկանները որ մը ուրիշ քառասուն գեղացիներու կարգին, ձերբակալեր էին նաեւ Եսթերն ու մայրը :

Եսթերի խոստովանութեամբ, միւս բոլոր բանտարկեալները ազատ արձակուեցան : Իսկ ինքն ալ ամիսներ յետոյ, երբ յղի էր մնացեր, տարին ՇէրիՓ ազայի տունը, ուր մանչ զաւակ մը ունեցաւ :

ՇէրիՓի սպանութեան լուրը երբ մեզի հասաւ, որոշուեցաւ մէկ քանի հոգի զրկել գիւղ, մանրամասն տեղեկութիւններ քաղելու : Միեւնոյն ատեն գացողները ցորեն պիտի փոխադրէին Սասուն Առաքելոց վանքէն ուր հաւաքուած էր գաշտէն :

Կառավարութիւնը, Եսթերի իսկ խոստովանութեամբ, հաստատած ըլլալով մէկտեղ գիւղացիներու անմեղութիւնը, կ'ուզէր զայն պատրուակ ծառայեցրնել գանոնք նեղելու, հարստահարելու, շահագործելու :

Անոնք որ ազատ արձակուած էին, ապահովութիւն չունէին իրենց օրը խաղաղ ու հանգարտ սնցնելու : Օրընց մէջ, ոստիկաններ կը ներկայանային ու այս ու այն

բանա կ'առաջնորդէին իբր թէ Շէրիֆի սպանութեան մեղսակիցներ երեւան հանելու համար: Այնպէս որ բանար գրեթէ ամէն օր լեցուն էր մոկունքցիներով: Գիւղական աշխատանքները դադրած էին: Ժողովուրդը վախի եւ վրդովումի օրեր կ'անցընէր:

Այս կայութիւնը մեղմացնելու եւ կառավարութեան գիտումնաւոր հետապնդումները կասեցնելու համար, Քէորդ մտածեց հետեւեալ խաղը սարքել:

Մոկունքէն վառել մէկ քանի փլած-փլփլած տուներ եւ բողոքել բուն կերպով կառավարութեան, կասկած ծանրացնելով Շէրիֆի մարդոց վրայ, թէ վրէժխնդրական արարքներու կը դիմեն Մոկունքցիներուն հանդէպ: Միեւնոյն ատեն ձեռքի տակէ հասկցնել թէ մէկ կողմէ կառավարութեան, միւս կողմէ Շէրիֆի մարդոց տուած նեղութիւնները, կրնան գիւղացիները բոլորը կատաղեցնել եւ ամբողջ շրջանը կանգնեցնել կառավարութեան դէմ: Լաւագոյն է ուրեմն, ազատ արձակել Մոկունքի այրերը որ գիւղը պաշտպանեն ի հարկին Քիւրտերուն դէմ:

Պէտք է ըսել թէ, իրականութեան մէջ, Քէորդի այս մտածումը, խաղ մը չէր: Այլ կը ծառայէր միայն ստեղծուած կայութիւնը աւելի ողբերգական ներկայացնելու իբր պատրուակ:

Շէրիֆի ցեղախումբը առիթը չէր փախցնել նեղելու Հայերը: Սպաննութիւններ յաճախադէպ էին: Գիւղէն դուրս գիշերային երթեւեկը բոլորովին դադրած էր: Գիւղը երբեմն յարձակման կ'ենթարկուէր ցերեկ ատեն:

Տրուած սրտումը գործադրելու համար, հրձիգներու խումբին գլուխը անաւ ինքը Քէորդ: Ընդամէնը 7

Հողի էինք: Այրուելիք տուները նշանակուեցան գիւղա-
ցիներու խկ հաւանութեամբ:

Ու գիշեր մը մութին վառեցինք նշանակուած տու-
ները ու վերադարձանք Առաքելոց վանք: Հող մնացինք
մէկ քանի օր, գրադելով կապարի, վառօղի եւ ցորենի
փոխադրութեամբ:

Անկից յետոյ անցանք Սասուն, ուր պիտի վճռուէք
խումբերու ցրուումին հարցը:

Իրականին մէջ սակայն, զինեալ խումբերը բոլո-
րովին ցրուելու հարց չկար: Այլ եղած խումբերը պա-
հելով մէկտեղ, անոնց թիւը նուազեցնելու կամ նո-
րերու կազմութեան առաջին առնելու հարցն էր որ կը
մտահոգէր վարիչ մարմինը:

Արդէն նիւթական միջոցները չէին բաւեր խումբե-
րը պահելու, եւ կ'ապրէին աւելի քան վանականի մը
ժուժկալութեամբ: Միւս կողմէ սակայն, փախստա-
կաններու թիւը երթալով կը շատնար, լուրջ դժուա-
րութեան մատնելով յեղափոխական շարժումին վարիչ-
ները՝ տնտեսական եւ զինական նկատումներով: Սա-
սունէն դուրս, գրեթէ երկրորդ Սասուն մըն ալ կազմը-
ւած էր սարին վրայ շնորհիւ փախստական կտրիճնե-
րու, որոնք կը թափառէին Անդրանիկի եւ Գէորգի
խումբերուն շուրջը, ժամ առաջ զինուելու եւ գործի
լծուելու անհամբերութեամբ:

Ահա այս կացութիւնն էր որ կրնար փտանդաւոր
դառնալ եւ պէտք էր ժամ առաջ դարձանուէր:

Այս խորհրդակցութիւնը կատարուեցաւ Անդրա-
նիկի, Գէորգի Համբարձումի, Ուլուղայ Արթինի եւ
Սպաղանաց Մակարի միջեւ:

Ուրիշ ճար չէին գտեր, եթէ ոչ կարգադրել որ փա-

խրատականներ անցնին Կովկաս, եւ հոն սպասեն մինչեւ
որ վերին մարմինները ի վիճակի ըլլան նոր կարգա-
գրութիւններ ընելու:

Այդպէս ալ առաջարկեցին: Կը մնար ենթարկուիլ:
Ինծի միացան Տէրտէրենց Արամը, Համբոն եւ Ա-
ղաճանը: Իբրեւ ճամբու ծախք, մեզ տրուեցաւ մէկա-
կան մէջիտ:

Այդ որոշումէն յետոյ, յանձներ էինք բնականա-
բար մեր զէնքերը. իսկ ինքնապաշտպանութեան համար
մեր քով կը մնային հին ատրճանակներ ու դաշոյններ:

Կտրած սրտով, շորս մէկ ճամբայ ինկանք գէպի
Մաղրայ՝ Առաքելոց վանքի դիմացը, ուր հանդիպե-
ցանք ծանօթի մը, Մանուկին, որ հայդուկներու մտե-
րիմն էր եւ ոչինչ կը իմայէր անոնց ամէնէն նեղ պահե-
րուն իսկ, օգնութեան հասնելու: Պարզ էր որ պիտի
հետաքրքրուէր մեր վիճակով: Տրուած բացատրութիւն-
ներէն յետոյ, ստիպեց որ գիշերը իր մօտ անցնենք:
Քայց շատ շանցած լսուեցաւ որ ստաիկանները կը պա-
շարէին Առաքելոց վանքը: Մղրան վաանգի տակ էր:
Վանքէն յետոյ կրնային մեր վայրն ալ խուզարկել: Մա-
նուկ մեզ առաջնորդեց թաքստոց մը, ուրկէ երեկոյեան
գէմ, եկաւ մեզ հանելու ու հաղորդեց որ ստաիկաննե-
րը Շէրիֆի գիակը փնտռեր ու գտեր էին:

Հոգ գիշերելը անխոհեմութիւն էր: Օգտուելով
մութէ նուղուեցանք Առինճ, ուր ծանօթներ իմացու-
ցին թէ հայրս աղատած է բանտարկութենէն եւ առաջ-
ուան պէս մանրավաճառութեամբ կը պրաղի: Իմաց
տուին նաեւ որ ջերմ փափաք ունի անդամ մը տեսնելու
եւ ամէն տեղ գիս կը հարցնէ:

Արքան ալ կարօտը տանջէր գիս, աւելի կը նախըն-

արէի խուսափիլ հօրս հետ հանդիպումէ մը: Կը վախ-
նայի որ փորձէ արդիւել զիս մեկնելէ, յուսալով կառա-
վարութենէն ներում ստանալ ինձ համար: Արդէն խում-
բի մէջ գտնուող Աղաճանն ու Համբօն ներում ստացեր
էին:

Այս լուրը մեզի տուողն էր Մխիթար Շէխիկեանը,
որ միեւնոյն ատեն ինձ յայտնեց թէ Վահան ու եղբայրս
Արզարը խորհուրդ կուտան ինձի քաղաք չվերադառ-
նալ եւ երթալ կացութեան մասին Հրայրի խորհուրդը
առնելու:

Ներման արժանացած Համբօն ու Աղաճանը բաժ-
նուեցան ու մեկնեցան քաղաք:

Ես ու Արամը մնացինք մինակ, ու որոշեցինք անց-
նիլ Ղըլլաղան ուր, Հաւատորիկցի ոստիկան Մակարի
մատնութենէն յետոյ ապաստաներ էր եւ կ'ապրէր իբր
փախտական Հրայրը:

Նոյն խորհուրդը կուտար մեզ, նաեւ Ճիւղող Սահակ,
որ Գոմիտէի անդամ էր:

Հրայր մեր պատմութիւնը եւ բացատրութիւնները
լսեց, բայց անմիջական ո եւ է կարգադրութիւն չը-
րար: Այլ յանձնարարեց սպասել պահ մը եւ մեզ համար
ապաստան գոյց տուաւ Արթիւնեան տունը:

Մեզ հոն առաջնորդեց Քէօրօղլի, որ Արմենակի
գինուորներէն էր:

Արթիւնեան տունը մնացինք քանի մը շաբաթ, ա-
ռանց որ եւ է տեղեկութիւն ու հրահանգ ստանալու
Հրայրէն:

Տառնեւհինգ օր յետոյ միայն կրկին տեսանք Հրայ-
րը որ յայտնեց թէ այսքան սպասցնելնուն պատճառն
եղած է այն, որ Վան գրկած ուրհանդակը տակաւին

չէ վերադարձած : Տեղեկացուց նաև որ Սուլուխի Սե-
րոբը իր երկու գաւակներով լեռ ապաստանած է , իսկ
Կուրավայ Նազարն ու Քիւրա Քեռին , նոյնպէս փա-
խրատական , իրեն կուգան : Կրկին յորդորեց համբերել
քանի մը օր , մինչեւ որ սուրհանդակն ու երկու փախրո-
տականները հասնին :

Երկու օր յետոյ սուրհանդակները վերադարձան ,
Ջիսուրի Չնդօն եւ Վարդենիսի Սուրատը ու նամակներ
յանձնեցին Հրայրին :

Սերոբ իր երկու աղաքներով , Քեռին ու Նազարը
արդէն միացեր էին մեզի ուրիշ փախատականներով ,
որոնց թիւը կը շատնար ամէն օր , վտանգի ենթարկե-
լով շրջակայքը : Այս կացութեան հանդէպ Հրայր չէր
կրնար անտարբեր մնալ : Ստիպուած զէնք տուաւ անոնց
որ շունէին ու փոխեց հին զէնքերը՝ ստեղծելով ՉՆ հո-
գինոց զինեալ խումբ մը :

Մէկ քանի օր վերջ , Հրայր մեզ առաջնորդեց Ս .
Յովհաննու վանքը , ուր մտանք գիշերանց , գաղտազո-
ղի , խուսափելով վանքին թուրք սատրիկաններուն հրո-
կողութենէն : Հոն էին արդէն Ղուկաս վարժապետն ու
Հրայրի մէկ քանի ընկերները :

Վանահայրը՝ Մկրտիչ վարդապետ , զայրացեր էր
տեսնելով այդքան զինեալ բազմութիւն՝ վանքին մէջ ,
ոչ միայն կը վախնար սատրիկաններէն , որոնք կրնային
նշմարել յեղափոխականներու ներկայութիւնը , այլ եւ
իրեն հակառակորդ մէկ քանի վանականներէ :

Ղուկաս վարժապետի հետ խորհրդակցութենէ մը
յետոյ , Հրայր մեզ յայտնեց որ , վանքը վտանգաւոր
նկատելով , կարգազրած են որ խումբը ապաստանի մօ-
տակայ անտառը , յայտնելէ յետոյ Մկրտիչ վարդապետ

տի թէ Գաշա կը մեկնի :

Ղուկաս վարժապետ խոստացեր էր հողալ խումբին
անունդը վանքին ուտեստէն, քանի անտառը մնալ ըս-
տիպուած ըլլայինք :

Ու կէս դիշերին, երկու օրուան պաշարով բեռնա-
ւոր, մտանք անտառ : Տաժանելի կարգապահութեան մը
ենթարկուած էինք : Կրակ վառել, ծխել իսկ չկար :
Բարձրաձայն խօսիլ արգիլուած էր : Զգուշութիւններ՝
որոնք անհրաժեշտ էին անտառի մեր թաքստոցը չյայտ-
նելու եւ աւելորդ միջադէպի տեղի չտալու համար :
Հասկցուեցաւ որ մօտ երկու շաբաթ պիտի անցընէինք
այդտեղ : Որով՝ ծառներուն տակ, գետնափոր ասպա-
տաններ պատրաստեցինք դիշերելու համար :

Ժամանցի համա ըզոնէ, անտառին մէջ դինավար-
ժութիւն կատարելու հնարաւորութիւն ալ չկար : Մեր
տաղտկալի սպասումներուն մէջ՝ միակ այլանդակու-
թիւնը՝ օրական երեք անգամ աղօթքն էր : Երբ վանքին
զանգակը կը զօղանջէր, հայրուկները բոլորը կը հա-
ւաքուէին ծնրադիր աղօթելու : Կրօնական ջերմ հա-
ւասք կար բոլոր սրանքուն մէջ, մանաւանդ որ ամէնէն
սկեպտիկն ու թերահաւատն իսկ, չէր կրնար խուսա-
փիլ կանոնէն, երբ օրինակը կուգար Սերոբէն՝ ջերմ
հաւատացեալ մը, աստուածալիս, որ պատկառանք
կ'ազդէր նորեկներուն :

Մեր պաշարը գրեթէ սպառած էր արդէն եւ վանքէն
սպասուած օգնութիւնը չէր հասներ, կամ գոնէ հասնե-
լու նշաններ զոյց չէր տար : Անօթութեան վախը սկսեր
էր բռնել մեզ ու կը մտածուէր մէկը զրկել վանք, երբ
օր մը, նշամարեցինք թէ անտառին մօտիկը՝ ոչխարնե-
րու հօտ մը կ'արածի :

Մէկ քանի հագի զգուշութեամբ մօտեցանք: Վանքին հովիւն էր՝ Գոմեր գիւղացի Սարգիսը, որ յայտնեց թէ մեզ կը փնտսէ քանի օր է: Կարգադրուեր է եղեր որ մեզ յատկացուած ուտելիքը, հաց, թթու թան, սեր իբրեւ շուներուն առջեւ նետելիք կեր վանքէն դուրս հանուի, որպէս զի վանահայրը շնշմարէ խաղը եւ այդ կերպով մեզի բերուի:

Մեր ոտքերը արդէն սկսեր էին կարծրանալ: Շարժումի եւ կանոնաւոր սնունդի պակասը շատերը կը նեղէր, անտառին խոնաւութիւնն ալ, կը նպաստէր մեր առողջութիւնը քանդելու: Արդէն երրորդ շաբաթը կը լրանար եւ տակաւին մեր մասին, որ եւէ կարգադրու: Թիւն չէր եղած:

Օր մըն ալ յայտնուեցաւ թէ Ղուկաս վարժապետի կարգադրութեամբ պիտի երթանք Գոմեր գիւղին վերելի անտառը ապաստանելու:

Այդպէս ալ եղաւ: Ղուկաս վարժապետը հոն եկաւ դտաւ մեզ ու Հրայրի հետ խորհրդակցութենէ վերջ, որոշուեցաւ խումբը ուղարկել դէպի Վան, Հրայրի առաջնորդութեամբ:

Պորոնք գիւղին մէջ, վայելելէ յետոյ տեղացիներու լայն ասպնջականութիւնը, Գոմս գիւղի վրայով անցանք Կուրաու, Քեռիի գիւղը, ուր Հրայրի հրաւերով ժողով տեղի պիտի ունենար:

Ժողովը տեղի ունեցաւ Մուրատեաններու տան մէջ: Պոլմբին անգամներէն դատ, կը մասնակցէին Յիսալու Յարութիւն, Հավրի Ասօն, Պետիկ, Կուրավու ու յս Օհան, եւ մէկ քանի ուրիշ ունեւոր:

Ժողովին նպատակն էր միջոցներ խորհիլ առաջին ասանելու օրթստոքութեան, որ Պիթլիսի ոււսական

հիւպատոսին գլխաւորութեամբ հետզհետէ կը տարածուէր ժողովուրդին մէջ:

Ժողովը վերջանալու վրայ էր երբ տեղի ունեցաւ ինծի հետ կապուած միջադէպ մը, որ յատկանշական է յեղափոխական բարքերու խստութեան տեսակէտէն:

Տան բակին մէջ, հանդիպեցայ ծանօթ գիւղացի կնոջ մը, որ մօտեցաւ ինծի եւ սովորական խօսակցութեան մը հարցումներէն յետոյ՝ հետաքրքրուեցաւ.

— Դո՞ւն ալ եկար Ֆէտայի դարձար:

Տակաւին չէի պատասխանած երբ Հրայրի խոժոռակնարկը գամուեցաւ վրաս:

— Սմբա՛տ, կանչեց:

Շեշտին մէջ յանդիմանութիւն, սաստ ու գայրոյթ կար:

Ձգացի որ կնոջ մը հետ խօսակցութիւնս կրնար ըլլալ պատճառը: Տէրտէրեանց Արամը բաւական կրթեք էր գիտ յեղափոխական ըմբռնումներու ծանօթութեամբ: Գիտէի թէ կնոջ հետ յարաբերութիւնը բանադրուած է հայդուկներու անդիր օրէնքին մէջ: Բայց պարզ, անմեղ խօսակցութիւն մը ծանօթ կնոջ մը հետ, այն ալ բոլորին ներկայութեան, կնոջ մը հետ որ կրնար իմ մայրըս ըլլալ իր տարիքով. ի՞նչպէս կարելի էր արդիւնուած յարաբերութիւն նկատել:

Կի՞նն ալ գգալով բաներ մը, գլուխը կախ հեռապարտ:

Բայց ասով չվերջացաւ միջադէպը:

Ժողովը վերջացաւ նոյն օրը եւ գիշերը, արուած որոշման համաձայն, Սուլուխ պիտի երթայինք: Բայց Հրայր աակաւին ինծի հետ հաշիւներ ունէր կարգադրելիք, մանաւանդ որ ինձմէ յետոյ, մեր իսումբէն՝ Ջրն-

տօն ալ տեսեր էր կնոջ մը հետ խօսած պահուն: Անոր
զատը տուաւ տեղն ի տեղօք, լաւ տիրոջ մը քաշելով:

Պուճբը մեկնումի պատրաստութիւն տեսնելու վը-
րայ էր, երբ Հրայր կանչեց զիս: Զգացի թէ գլխուս
փոթորիկ մը պայթելու վրայ է, բայց չէի գիտեր թէ
ան փայտի հարուածներով պիտի յայտնուի:

— Ի՞նչու ըսաւ, այդ կնոջ հետ կը տեսնուէիր:

— Մանօթ էր, տեղեկութիւններ տուաւ տանս մա-
սին:

Պատասխանս ու բացատրութիւններս չէի լրացու-
ցած տակաւին, երբ ճիւղէ մը նոր կտրուած թարմ ու
ճկուն ճպտտի մը առաջին հարուածը ինկաւ մերկ բուճ-
քիս:

— Շան տղայ . . .

Չեմ յիշեր, Հրայրի կատաղութիւնը քանի՞ հար-
ուածով հանդարտեցաւ: Անողորմը՝ կ'իջեցնէր բարակ
ու ամուր փայտը, իր ծանր ձեռքերուն ամբողջ ուժո-
վը, մերկ ոտքերուս, գրեթէ միշտ նոյն կէտերուն վը-
րայ: Հարուածներուն տակ, արիւնս կ'եռար, կը պոռթ-
կար, տաքութիւն մը կը զարնէր գլխուս. բայց հպար-
տութեամբ կը զսպէի ցաւս ու ձայն չէի հաներ:

Ինձմէ յետոյ, երբ կարգը կրկին Չնտոյին եկաւ,
փայտի երկրորդ մկրտութիւնը ստանալու, հասկցայ
որ՝ ծեծին տակ պոռալու եմ եղեր: Հրայր իմ լուութիւ-
նըս, կ'երեւի, վերագրեր է անողգայութեան, որ չէր
խնայեր հարուածները: Մինչ Չնտոյի առաջին իսկ
ճիչին, բաւ համարեց, ու փայտը նետեց:

Այս չափազանց խստութիւնը, այսօր շատերուն
համար՝ բարբարոսութիւն նկատուի թերեւս, այնքան
գժուար է տարիներ ետ դառնալ, թափանցել անցեալի

ըմբռնումներուն էութիւնը եւ արեւմտեան քաղաքա-
կրթութեան շուայտ կեդրոններուն մէջ նստած գնա-
հասելու ելլել մեր գաւառական վարքն ու բարքը: Յե-
զափոխութիւնը որ այդքան դժնդակ ու անտանելի սլայ-
մաններու մէջ կը կազմակերպուէր, իր մասնաւոր պա-
հանջները ունէր իր իսկ փրկութեան եւ ամբացման հա-
մար եւ եթէ կնոջ մը հետ տեսակցութիւնն իսկ կը մըտ-
ցընէր բանադրուած յարաբերութեանց կարգը, անհը-
րածեչտութիւն մըն էր, որմէ չէր կրնար անփտանդ
հրաժարիլ:

Գաւառական ու գիւղական պարզ ու խիստ բարքե-
րուն մէջ, սովորական գիծէն թեթեւ շեղում մը, մեծ
պայթակղութեան մը համեմատութիւնը կ'առնէ: Վա՛յ
անոր որ փոքր սայթաքում մը ունեցաւ. ըլլայ իսկ ա-
կամայ, ըլլայ իսկ անխուսափելի, պարտադրուած միմ-
չեւ անդամ՝ կեանքի արտառոց պայմաններէն:

Փոքրիկ միջավայրը որուն ներքին ու արտաքին,
բարոյական ու հոգեկան սահմանները գծուած ու հաս-
տատուած են գարերու հոլովումով ու նուիրադործու-
մով, չի սիրեր յուզուիլ ու խռովիլ, չի հանդուրժեր որ
իւր ըմբռնումներու եւ սովորութիւններու միապազազ
հանդարտութիւնը խանգարեն: Յանցապարտը կ'իջնայ
դատապարտութեան անողոք վճռին տակ: Ու վճիռը՝
չաճախ անվերաքննելի է ու կը տեւէ ցմահ:

Հայ յեզափոխական ղեկավարին համար, երբ ան
մանաւանդ Հրայր կը կոչուէր, ժողովուրդի իսկական
գաւակ, որ մօտէն կը ճանչնար անոր թերութիւննե-
րը եւ առաքինութիւնները, հայդուկին ժուժկալութեան
ու պարկեչտութեան օրէնքը կը բխէր ժողովրդային այս
ըմբռնումէն ու կը հասնէր իր ղերադոյն շափաղանցու-

Թեան, Յեղափոխական կազմը ամբողջութեան մէջ, պէտք էր դերձ մնար որ եւ է մեղադրանքէ. այդ կը պահանջէր շարժման շահը: Անհատ յեղափոխականին վատարարքը իր յոռի հեռեւանքով կը տարածուէր ամբողջ կազմակերպութեան վրայ:

Որովհետեւ, ժողովուրդը չի տեսներ կազմակերպութիւն, հաւաքականութիւն, երբ մանաւանդ անգաղտնի է ու խորհրդաւոր, դէմք չունի: Բայց կը տեսնէ անոր պատկանող անդամ մը, կը ճանչնայ զայն եւ զայն բռնած շափանիչ, իր պարզամիտ դատաստանով՝ բռնորը կը թափէ նոյն կաղապարին վրայ:

Մոլի այս ըմբռնումը չէ՞ր որ Գէորգի ձեռքը զինէր էր իր հօրեղբօր դէմ եւ իբր արդարութեան ու վրէժ-խնդրութեան անողոք դորձադիրը սպաններ են զայն առանց դոյզն վարանումի:

Յեղափոխութեան վարկը պէտք է փրկել: Ու ատոր համար Փէտային շատ ալ կանգ չէր առներ վարանումներով:

Ու այս ըմբռնումը մեզ կը պարտադրէր կարգապահութիւն մը, որ այսօր, շատերուն համար մղձաւանջ կրնայ թուիլ իր խստութեամբ: Խմբապետը, ղեկավարը, գործիչը, լիազօրը մեզ համար սրբութիւններ էին, անոնց խօսքը պատգամ էր. մեր վրայ ունէին կեանքի եւ մահուան իրաւունք:

Ու ծեծը շատ չէինք տեսներ, որքան ալ հպարտութիւնը ուռնցնէր մեր սիրտը:

Ծեծէն յետոյ էր, որ, երբ Սուլուխ երթալու համար, ճամբայ ելանք, Մուրատ-Չայէն անցնելու պահուն, առաջարկեցի Հրայրին շալակս առնել զինքը ու դեռէն անցնել: Հրայր կարճահասակ էր. չմերժեց:

— Գոնէ, ըսի, առով վրէժս քեզմէ լուծած կ'ըլլամ :

Երբ Սուլուխ հասանք, ես ուժասպառ վիճակ մը ունէի : Մարմինս կ'այրէր. տենդ ունէի ու ստքերէս որոնք սաստիկ կը ցաւէին, արիւն կուզար՝ Հրայրի ճըպոտին բացած վէրքերէն : Բոլորս մէկ Սերոբի տան մէջ ճաշելէ յետոյ, հինգական հոգի բաժնուեցանք զանազան տուներ : Ես դացի Տէրտէրին տունը՝ չորս ընկերներով :

Տկարութիւնս հետզհետէ կը սաստկանար : Տենդը կը վառէր մարմինս. զլուխս իմս չէր : Զառանցեր ալ էի : Ու զառանցանքի ընթացքին, կ'երեւի, քանի մը հայհոյութիւններ ալ չէի խնայեր Հրայրի հասցէին : Աչքերս երբ կը բանայի, բան չէի տեսներ : Կուրցե՞ր էի : Ու զարհուրելի վախը բռնեց զիս :

— Զնտո՛, կանչեցի, երբ քիչ մը հանդարտեցայ. բան չեմ տեսներ, տղա՛յ. գիշե՞ր է թէ ցերեկ :

— Խելքի՞դ եկաւ, Սմբատ, կէս օր է դեռ :

— Հապա ի՞նչու բան չեմ տեսներ :

Հուր տրուեցաւ Հրայրին որ եկաւ ու քանի մը քաջակերական խօսքերով, փորձեց զիս հանգստացնել : Ենչտէն կը զգայի թէ կը զղջար զիս շարժրկած ըլլալուն համար : Յայտնեց որ թէեւ որոշուած է եղեր նոյն իրիկունն իսկ մեկնիլ, բայց երկու օր պիտի յետաձգէ մեկնումը, մինչեւ որ առողջութիւնս վերադառնեմ : Երէցկնոջ տնական գարմանները՝ երկու օր վերջ բացեր էին աչքերս. բայց տաքութիւնս կը շարունակուէր. ամբողջ մարմինս կուտրուած էր ու ստքերս մանաւանդ՝ կը տանջէին զիս :

Երկու օր յետոյ, Հրայր դարձեալ եկաւ :

— Մտնա՛տ, ըսաւ, մենք անպատճառ պէտք է մեկնինք. չենք կրնար սպասել: Գուն հիւանդ ես, չես կրնար մեզ հետ քալել: Կաւ է որ մնաս այստեղ եւ դարմանուիս, մինչեւ գտնես ատղջութիւնդ:

— Ո՛չ, ըսի, կուգամ ձեզ հետ: Եթէ ճամբան մնացի, ի՞նչ ընենք. դնդակ մը ճակատիս, կը վերջանայ: Քեզ չեմ ըլլար ձեզի:

Հրայրի բոլոր համոզիւի խօսքերը չկրցան կոտրել յամառութիւնս: Որոչա՛մ էի մեկնիլ խումբին հետ ու պիտի մեկնէի:

Հրայր հազիւ հեռացեր էր տունէն, երբ քովս եկաւ Սուլուիս գիւղէն Ստեփանը, որ նոր վերադարձեր էր Մուշէն: Պատմեց որ ներման արժանացած իմ երկու ընկերներս Համբօն եւ Աղաճանը ազատ կը պատին քաղաքին մէջ: Բայց կառավարութիւնը շատ կը նեղէ հայրըս ու եղբայրս: Եարաթը անգամ մը գրեթէ, երկուքը մէկ կը տանին ստիկանատուն հարցաքննութեան, կը նեղեն զանոնք, որպէս զի յայտնեն իմ թաքստոցս, եւ ամէ անգամուն ալ, չորս-հինգ սակի կաշառքով միայն ազատ կ'արձակեն:

Ստեփան կը պատմէր միեւնոյն ատեն թէ թէ եւ Համբօն ու Աղաճանը ազատ կը պատին, բայց գրեթէ կասկածով կը դիտուին տեղացիներէն, յարդ չեն վայելեր եւ թէ շատերու կարծիքով, լաւ ըրեր եմ որ, ահանջ չեմ կատար կառավարութեան ներման ու չեմ վերադարձեր:

Անշուշտ, ներումէն օգտուելով՝ վերադառնալու ոչ փախաք, ոչ ալ մտադրութիւն ունէի: Գիտէի թէ հազիւ վերադարձած, պիտի ստիպուիմ նորէն փախուստ առալ: Ասի՞թներն ու պատրուակներն չեն որ պիտի պակ-

սին զիս հեռացնելու ընտանեկան բոյնի հանգիստէն , որուն կարօտը կը քաշէի թէեւ :

Բայց , իմ պատճառովս , հօրս ու եղբօրս կրած նեղութիւնները կը տանջէին խիղճս : Ի՞նչ ընէի սակայն , որ ոչ մէկ կերպով կրնայի անոնց տառապանքը մեղմացընել : Միակ միջոցը յանձնուիլն էր : Իսկ նման բան մը միտքէս իսկ չէի անցընէր : Ոչ իսկ տնեցիները պիտի յօժարէին նման խենթութեան մը իմ կողմէս : Ընտրեի էի ճամբաս , ուրկէ դատապարտուած էի քալելու , մինչեւ որ մահը զիս զգեանէր :

Սուսքը նոյն օր մեկնեցաւ Ղարս գիւղը :

Մէկ քանի օր յետոյ , Հրայր նամակ մը ստացաւ Մշոյ դաշտի կամիտէէն , որ գէշ գոյներու տակ կը ներկայացնէր ընդհանուր կացութիւնը : Կառավարական խտուրթիւնները հետզհետէ սաստկացեր էին , հակառակ որ երկար ատենէ ի վեր , զինեալ խուճբերու թիւը նուազեր էր եւ միջադէպերէ ու բախումներէ կը զգուշանային բոլորը : Ֆետայիները փախստականի կեանք կը վարէին , գրեթէ աշխատելով մոռցնել տալ իրենց գոյութիւնը :

Բայց քանի յեղափոխութիւնը կը կծկուէր իր պատեանին մէջ՝ ուժեղ նախապատրաստութեամբ՝ իր օրուան սպասելով , կառավարութիւնը այնքան կը լրբանար : Այդ օրերու բարբարոսութեան մասին գաղափար մը կրնայ տալ ոստիկանական սպայի մը գործունէութիւնը :

Արաբ Ապտուլլահ էր անունը , արիւնարբու , շնական խառնուածքով մարդուկ մը , որ իրեն բան – գործըրած էր յեղափոխական հետապնդել գիւղերուն մէջ , եւ ուր որ չգտնէր , իբր ըմբոստ , բանտ կ'առաջնորդէր ի-

րենց շուքէն վախցող գիւղացիներ : Ոստիկանական
խումբով մը յանկարծ կ'արշաւէր խաղաղ գիւղերը, ահ
ու սարսափի մատնելով տեղացիները : Կը մտնէր առ
հասարակ անպաշտպան տուները, ուր գիտէր թէ այդ
պահուն այրերը կը բացակային՝ աշխատանքի մեկնած
ըլլալով : Կը կանչէր կիները ու հաղար ու մէկ նեղու-
թեան կ'ենթարկէր զանոնք՝ իբր թէ յեղափոխական
չարժման վերաբերեալ գաղտնիքներ խոստովանցնելու,
կամ հայդուկներու թաքստոցները յայտնել տալու հա-
մար :

Սեղծ կիները որ բան չէին գիտեր, բնական է, Աս-
տուածն ու սուրբերը վկայութեան կը կանչէին . ի զուր :
Հրէշը, այն ատեն կատղած, բռնի քակել կուտար կի-
ներուն մէջքի կապը ու անոնց վարտիքներուն մէջ կը
դնէր մէկ քանի կատու, որպէս զի անոնց ճանկերէն ու
խածուածքներէն սարսափած, խոստովանին ինչ որ
գիտեն :

Այդ էր այս հրէշին մասնագիտութիւնը եւ ատոր հա-
մար, ամէն անգամ որ մտադրէր գիւղ մը արշաւել, հե-
տը կը պտտցնէր քանի մը կատու :

Այս կացութեան հանդէպ, ոչինչ կարելի էր ընել,
բացի ասարեկելէ մէկ քանի տեղական բռնաւորներ :
Բայց այդ իսկ յաճախ, անհարթելի դժուարութիւննե-
րու կը բախէր . ատկից դատ, երբ տակաւին ինքնա-
պաշտպանութեան գործը բաւական չէր զարգացած, կը
ծառայէր բռնակալութեան կատաղութիւնը հրաւիրելու
գիւղերուն վրայ եւ թերեւս նոր ջարդերու պատրուակ
տալու :

Հրայրի միակ եւ գլխաւոր մտահոգութիւնը դար-

ճամ էր գինեւ գիւղերը տեղական միջոցներով, քանի որ ուրիշ ճար չկար: Արտասահմանէն գէնք եւ դրամ սպասել, ինքնախարէութիւն էր: Եւ արդէն, մէկ կողմէ Ֆետայիներու լուսթիւնը, միւս կողմէ՝ կառավարութեան յարածուն խտութիւնները՝ գիւղացիներուն մէջ տարածած էին սեփական միջոցներով գինուելու յամառ տրամադրութիւնը:

Բնականէն քաջ եւ անվախ, Մշոյ գիւղացին գիտէր գնահատել գէնքի արժէքը եւ ինքնապաշտպանութեան անհրաժեշտ միջոցները հայթայթելու համար, ոչինչ կը ինայէր: Բի շէին անոնք որ իրենց ընտանիքին ամբողջ ինայողութիւնը կը յատկացնէին գէնքի ու փամփուշտի գնման, հակառակ իրենց հօրը կամ մօրը չկամութեան: Այդ պատճառով ալ, ընտանեկան կռիւներ յաճախագէտ էին:

Կային որ մինչեւ իսկ իրենց հողերէն մաս մը կը ծախէին Թուրքերու փոխարժէքը գէնքի յատկացնելու համար: Թուրքերը գիտէին այդ պարագան, եւ առանց քաշուելու, դրամ կը տրամադրէին Հայերուն անոնց հողերը գնելու: Եւ այդ պատճառով ալ, հայկական բազմաթիւ գիւղերու մէջ՝ թրքական գեղեցիկ քօշկեր կատուցուած էին:

Յեղափոխականներու լուսթիւնը՝ մինչ մէկ կողմէ նպատուած էր սաստկացնելու փոքրիկ բռնաւորներու ազատ գործունէութիւնը միւս կողմէ ստեղծած էր ուրիշ չարիք մը. — Ետացուցած էր հայ մատնիչներու եւ լրտեսներու թիւը: Ամէն մէկ գիւղ, եթէ շունէր իսկ իր յայտնի լրտեսը, ունէր իր կասկածելին:

Երբ Արջիձորէն անցանք Եամիրամ գիւղը, կուսակցական իտունակ կեանքի մը առջեւ դտաւ ինքզինքը Հը-

բայր: Դատ, դատավարութիւն, փոխադարձ մեղա -
 դրանքներ տեղական խումբին մէջ: Այս մանր - մուկ
 հարցերու կարգին, Հրայրի առջեւ դրուեցաւ Կոմիտէին
 մէկ որոշումը, որ սաստկացուցած էր խումբին պառակ-
 տումը: Կոմիտէն որոշեց էր ահաբեկել Պախրեւ գիւղի
 տէրտէրը իբր մատնիչ: Ոմանք հակառակ էին որոշման,
 քահանան նկատելով անմեղ եւ չարամիտ գրպարտու -
 թիւններու ենթակայ:

Շօշափելի ոչ մէկ փաստ կար սակայն ամբաստա-
 նութիւնը հաստատող: Կոմիտէն հիմնուած էր գեղակից-
 ներու վկայութեան վրայ՝ որոնց ամենէն ուժեղ փաս-
 տը՝ յամառ կասկածն էր:

Բայց, որովհետեւ Կոմիտէն որոշած էր, պէտք էր
 գործադրուէր: Ու Հրայր խումբ մը գատեց քահանան
 պատժելու:

Բայց, որովհետեւ Կոմիտէն որոշած էր, պէտք էր
 գործադրուէր: Ու Հրայր խումբ մը գատեց քահանան
 պատժելու:

Ինծի հետ կային Լզլաղաճի Արթինը, Յոլակ - Արա-
 մը, Ճնտոն, եւ Շամիրամցի երկու գինուորներ՝ Միսաքն
 ու Յակօն, որոնք իբր սուրհանդակ կը ծառայէին: Գայ-
 ծառ, աստղավառ գիշերով ճամբայ ինկանք: Մեծ ճամ-
 բայ մը շունէինք կտրելիք: Բայց ամէն զգուշութիւն
 ձեռք կ'առնէինք անշուշտ, մերիններէն իսկ չտեսնուե-
 լու համար: Հասանք Ալամիխան, Բահվի Դուրանի վրա-
 յով: Ու յանկարծ, օդը փոխուեցաւ: Սեւ ամպեր կախ-
 ուեցան երկինքէն. մութը թանձրացաւ: Կը զգայինք թէ
 փոթորիկը պիտի պայթի. պահ մը մտածեցինք Ալամի -
 Պան գիւղը մտնել. բայց վտանգաւոր նկատեցինք. մա-
 նաւանդ որ գիւղին շուրջ թուրք պահնորդ խումբեր կը

չրջագայէին եւ կ'երեւի մեզ ալ նշմարեր, կամ մեր ներկայութիւնը զգացեր էին որ մութին մէջէն ձայն մը բարձրացաւ թրքերէն.

— Հէ՛յ, ո՞վ կայ հոն :

Ի հարկէ պատասխան չպիտի տայինք: Մեր լուութիւնը աւելի սաստկացուց անոնց կասկածը որ մեր ուղղութեամբ սկսան կրակ բանալ, երբ փայլակներու խառնուող ահարկու որոտումներու մէջ, տեղատարափ անձրեւ մը սկսաւ: Երկինքէն դոյլով ջուր կը թափէր: Ըստիպուած էինք ապաստան մը գտնել: Պարզ էր սակայն որ գիւղ մտնել անհնար էր առանց վտանգուելու: Նախամեծար սեպեցինք կծկտիլ եւ փշոտ թուփերու տակ ապաստան գտնել՝ որքան կարելի էր: Ուրիշ ճար ալ չունէինք: Մանաւանդ որ ճամբան ալ կորսնցուցեր էինք. մեզ ընկերացող երկու սուրհանդակները շփոթեր էին ուղղութիւնը եւ քանի մը անգամ դարձեր էինք գիւղին շուրջ:

Երբ անձրեւը դադրեցաւ, արդէն լուսաբացը մօտ էր: Առանց նշմարուելու չէինք կրնար թախրել մտնել եւ մեզ յանձնուած գործը շփտանգել: Լաւագոյն էր վերադառնալ Ծամիրամ եւ նոր հրահանգ ստանալ Հրայրէն:

Առաւօտուն արեւը չծագած, երբ գիւղ մտանք, Հրայր տակաւին չէր քնացած. նստած կ'աշխատէր նամակագրութեամբ:

Երբ մեզ տեսաւ, ուրախացաւ, դէմքը պայծառացաւ, լայն շունչ մը քաշեց նեղութենէ ազատած մէկու մը նման ու հազիւ մեր ձախորդ արշաւին պատմութիւնը լսած, ըսաւ.

— Տղա՛ք, Աստուծոյ մատը կայ այս գործին մէջ: Կ'երեւի արդար վճիռ չէ տրուած: Ձեր մեկնելէն յետոյ,

ամբողջ սրտովս կը փափաքէի որ շյաջողէիք, արգելքի մը հանգիստէիք ու վերադառնայիք: Գոհ եմ որ այդպէս եղաւ: Տրուած որոշման համամիտ չէի: Ինձի կը թուէ որ կոմիտէն հապճեպ կարգադրութիւն ըրած է: Պէտք է նոր ու մանրամասն քննութիւն կատարեմ: Գուք հիմա պացէք հանգչեցէք, յոգնած ու թրջուած էք: Տանտէրը հիմա, չոր զգեստ կը հոգայ ձեզի:

Փոթորիկին անակնկալ միջամտութեան մէջ, Հրայրի մաքուր սիրտը աստուածային կարգադրութիւն մը նշմարեր էր տրուած ահաբեկման վճիռին դէմ եւ կ'ուզէր իր խիղճը հանդարտեցնել նոր քննութեամբ մը:

Մեզ կը մնար երթալ հանդաստանալ, որքան թոյլ կուտային պարագաներն ու միջոցները: Թաց – խխուժ էինք: Պէտք էր զգեստները փոխել: Բայց տան մէջ ուր կը պատասպարուէինք, այր մարդու բաւական զգեստ չըկար, ոչ ալ շապիկ: Ստիպուած եղանք շրջադրեալներն ու գիշերանոցներ հագնիլ ու անկողին մտնել, մինչեւ որ մեր զգեստեղէնը չորնար:

Յաջորդ օրն իսկ, Հրայր ձեռնարկեց քննութեան, որուն համար կանչուած տէրտէրը, առանց դժուարութեան եկաւ ու տուաւ պէտք եղած բացատրութիւնները: Պատմութիւնը հետեւեալն էր:

Տէրտէրը երիտասարդ տղայ մը ունէր որ Պիթլիսի մէջ, Շէյխի մը քով կը ծառայէր: Տղան, իր մէկ – երկու տարուան ծառայութեան ընթացքին, կոյր վստահու – թիւնը գրաւեր էր անեցիկներուն, որոնք ոչինչ կը ծածկէին իրմէն: Օր մըն ալ նշմարեր էր որ Շէյխը երկու աման սոկի կը թաղէ տան մէկ անկիւնը: Ու սատանան կը մտնէ փոքր:

Գիշեր մըն ալ, մինչ անեցիկները խոր քունի մէջ

Թաղուած էին, կը պեղէ հարստութեան թաքստոցը, կը գողնայ ոսկին ու կը փախի հօրը քով, որուն կը յանձնէ մօտ երկու հազար ոսկիի գումար մը: Մեծ հարստութիւն էր: Գիւղին ինքնապաշտպանութեան համար, կը գնէ ու կը նուիրէ 7 - 8 նոր հրացան ու բաւական փամփուշտ. եւ ինքը ատեն մը կ'ապրի փախստական: Սակայն պատմութիւնը լսուած էր: Գիւղին յեղափոխական խումբը բաժին կ'ուզէ գողօնէն, նոր զէնքերու գնման յատկացնելու համար: Քահանան յամառօրէն կը մերժէ, միեւնոյն ատեն կաշառքով ճամբելով՝ տղան հետապնդող ոստիկանները: Բարեկամութիւն ալ կը հաստատէ ոստիկանական սպային հետ ու այդ կերպով կ'ապահովէ իր տղուն ազատութիւնը: Այս պարագան էր որ կասկածներ չնշած էր իր մասին եւ խումբին պնդումով, կոմիտէն ահարեկում վճռած էր քահանային դէմ:

Տէրտէրը, այս պատմութիւնը ընելէ յետոյ, կ'աւելցնէր.

— Ահա բոլորը, Գ. Հրայր, եթէ պատմութեանս մէջ սուտ կայ, զիս գիւղ մի՛ դրկէր: Թփէ՛ տեղն ի տեղօք:

Քննութենէ յետոյ, քահանան անմեղ յայտարարուեցաւ ու Հրայր բեկանեց վճիռը:

ՍԵՐՈՐԻ ՏԱՆ ՄԷՋ

Մեկնեցանք դէպի Սողորդ, Աղբիւր - Սերոբի ծնընդավայրը, ուր իր կիներ Սօսէն, բանտէն ազատելէ յետոյ, կրկին բնակութիւն հաստատեր էր իր տղեկին Լեւոնին հետ:

Սերոբի յիշատակը տակաւին թարմ էր բոլորիս մտ-

քին մէջ եւ իր հերոսական կնոջ Սօսէին հանդէպ հիացում ու յարգանք ունէինք: Կարելի չէր Սողորդէն անցնիլ եւ երկիւղած այցելութեամբ մը չհանդիպիլ այն տունը, ուր Սերոբին, հայ յեղափոխութեան ամենամեծ գէմքերէն մէկուն կենդանի յիշատակը կ'ապրէր:

Յուզուեցաւ Սօսէն, երբ տեսաւ մեր խումբը: Մեզմէ շատեր Սերոբի զինուորներն եղած էին: Սնխօս, տակաւին խոր վշտի մը ազդեցութեան տակ կը հեկեկար Սօսէն. յուզուած էինք եւ բոլորս: Ոչ ոք կը համարձակէր անոր լացը խանգարել: Կարծես անզուգական, առասպելական հերոսին ամիւնը հոն, մեր աչքերուն առջեւն ըլլար:

Երբ հանդարտեցաւ, Սօսէն պնդեց որ գիշերը հոն անցընենք: Կ'ըսէր թէ մեզ տեսնելով այնքան ուրախացած է որ կ'ուզէ իր մէկ ուխտը դրժել:

Տան մէջ մեծ սեղան մը ունէր որ անկիւն մը պահած է եղեր խնամքով: Ուխտած է եղեր այդ սեղանին վրայ ճաշ առլ այն օրը որ Հայաստան ազատուի: Բայց մեր այցելութիւնը այնքա՛ն ուրախացուցեր է զինքը, որ որոշեր է ուխտը այդ օր կատարել:

Եւ առանց ժամանակ կորսնցնելու, սեղանը շտկեց ու ճաշի պատրաստութիւն տեսաւ:

Սօսակցութիւնը բնական է պիտի դառնար Սերոբի շուրջ: Բոլորը լեցուած էին անոր անձինջ յիշատակովը: Բաջարի հայդուկին հմայքը գերեզմանէն անդին, տակաւին կը դիւթէր մեզ: Մեզմէ անոնք որ բախտը չէին ունեցած անոր հանդիպելու, կամ գործակցելու, լսած էին եւ ի՛նչ յափշտակութեամբ, անոր յանդգնութիւններն ու յեղափոխական պետի խիզախ գործունէութիւնը: Իսկ մեր անդրանիկներն արդէն՝ իրենց արկածալից

կեանքին ամենէն յուզիչ գրուածներովը կապուած էին Սերոբի յիշատակին :

Սերոբի հմայքը միայն իր քաջագործութիւններէն չէր բխեր : Ան աւելի կը մեծնար իր ծագումով իսկ : Չաւակը մեծ ու հարուստ գերդաստանի մը, երբեք ալ պէտք չունէր բունութեան դէմ մաքառումի վտանգաւոր ճամբաներուն վրայ մաշեցնելու : Կեանք մը զոր կրնար հանդարտօրէն թաւալել գիւղին նահապետական վարք ու բարքին, արտօնուած հաճոյքներուն մէջ : Իր յեղափոխական հայրենասիրութիւնը կրնար այլապէս արժեցընել՝ առանց վտանգելու իր կեանքը :

Բայց իր խիզախ ու անվեհեր նկարագիրը այդպէս չէր տնօրիներ : Ի բնէ ըմբոստ, միջադէպ մը պատճառ տուեր էր որ երիտասարդը նետուի ճնշուող ժողովուրդին իրաւունքներուն պաշտպանութեան գործին մէջ ու քանդեր էր իր մեծ ու հարուստ ընտանիքը : Քանդեր էր առանց վարանումի : Յեղափոխականը կ'ըմբռնէր եւ կ'ընդունէր ազատագրութեան անողոք կուռքին առջեւ, անհրաժեշտ եւ անխուսափելի դոհողութիւնը, որքան ալ ծանր ըլլայ :

Սերոբ օրինակ մը տուեր էր, բաղմաթիւ օրինակներէ առաջ :

Եւ ասով, անգամ մըն ալ մեծցեր էր :

Կը պատմէին ընկերները ու կ'ուզէին որ Սօսէն իր կարգին պատմէ հերոսին կեանքէն գրուածներ, որոնց գլխաւոր գերակատարներէն մէկը եղած էր, այս ցաւատանջ ամուսինն ու դժբախտ մայրը :

Սէնի նոյն տունը համբաւ ունէր գիւղին մէջ ու շրջակայքը, հարուստ, բաղմանդամ ու պատուաւոր : Նահապետական գերդաստան :

Չորս եղբայրներու կրտսերն էր Սերոբ եւ ասոր համար ալ, բոլորին գուրգուրանքին ենթակայ, ինչ որ թերեւս, աւելի նպաստեր էր իր նկարագրին բնածին անկախութիւնը աւելի շեշտելու: Մանուկ հասակէն, իր քմահաճոյքները լայն գոհացում կը գտնէին: Կը սիրէր լեռներու եւ դաշտերու ազատ կեանքը եւ որսորդութեան մէջ կը փնտռէր կեանքին ամենէն մեծ, առողջ հաճոյքները:

1885 - 1886 թուականներուն, երբ Արզէն Սերոբ կայտառ երիտասարդ էր, Պոլսէն կը վերադառնայ իր հօրեղբայրը: Այդ թուականները Պոլսոյ հայութեան համար ազգային յեղափոխական դարթօնքի օրեր կ'արձանագրեն: Սերոբի հօրեղբայրը որ իր ընտանեկան ծագումով իսկ, Պոլսոյ սոփորական դարիւղներէն կը տարբերէր, ազատագրական հովեր մտցուցեր էր գիւղին մէջ: Իր խօսակցութիւնները յաճախ կը դառնային բռնապետութեան, ազատագրութեան եւ ազգային յեղափոխական հեռանկարներու շուրջ: Ու բնական է, տաքարիւն Սերոբը որ գիւղէն դուրս չէր ելեր մինչեւ այն ատեն, եւ կեանքը անցուցեր էր որսորդութեամբ, կ'իջնար հօրեղբորը ազդեցութեան տակ: Գիւղէն դուրս՝ ամբողջ ժողովուրդի մը հայրենական հողերուն վրայ՝ հորիւղոններ կը բացուէին իր աչքերուն առջեւ:

Բայց տակաւին, չկար կազմակերպութիւն որ Սերոբն ու նմանները դնէր գործի համբուն վրայ:

Եւ ահա կը պատահի անխուսափելին: Որսորդ Սերոբը լերան ամայութեան մէջ, կռուի կը բռնուի օր մը երկու Քիւրտերու հետ. ու կը դառնայ հասարակ մարդասպան, ան որ արդարացում չի կրնար գտնել օրէնքին ու մարդոց դատաստանին առջեւ ու ցմահ, նոյն իսկ

ազատ, պէտք է կրէ իր արարքին կնիքը, ինչ ալ ըլլայ
անոր պատճառը:

Ճակատագրական զարմանալի նմանութիւն մը կայ
մեր երեք մեծ հայդուկներու կեանքին առաջին քայլե-
րուն մէջ:

Անդրանիկ Շապին Գարահիսարի մէջ, իր հօրը վը-
րէժը լուծելու համար պիտի ենթարկուի օրէնքի ամե-
նէն վայրագ խտուրթիւններուն: Ու կը փախի:

Մուրատ՝ տակաւին անչափահաս, կը սպաննէ թուր-
քի լաճ մը ու քանի մը ամսուան բանտարկութենէ յե-
տոյ, փրկութիւնը կը փնտռէ փախուստի ճամբուն վը-
րայ:

Սերոբ Քիւրտ մը կը տապալէ ու շունչը կ'առնէ
Պոլիս:

Երեքն ալ զարիպ Պալատյ մէջ, երեքն ալ բեռնակիր՝
որոնք իրենց ուսերուն վրայ՝ երկրի մէջ պիտի կրէին
հայ ժողովուրդի ազատագրութեան բեռը, այնքան օրի-
նակելի կորովով, անօրինակ գիտակցութեամբ ու մե-
ծութեամբ:

Անդրանիկ մեծ էր սրտով եւ աստուածատուր բը-
նազգով, որ իբր տղէտ եւ անուս արհամարհուած մար-
դուն մտքին մէջ կը վառէ անխմանալի խմաստութեան
ճրագը:

Մեծ էր, այլ դարձաւ վիթխարի տիտան մը, ա-
ռասպելական էակ մը: Ճակատագրին շիացած տղան ե-
ղաւ. պարագաները գայն միայն կանչեցին իրենց: Գիտ-
ցաւ բարձրանալ անոնց շջմեցնող մեծութեան: Գարբինի
այս համեստ աշկերտը դէպքերու մուրացիկ մը չեղաւ
երբեք չսպասեց ան որ դէպքերը ծնին ու հասուննան
ճակատագրական օղաւորումով. անոնց ետեւէն չփաղեց

ան փառապատկէն քանի մը թերթ փրցնելու եւ իր ճակ-
տին փակցնելու մարմաջով : Աւելի մեծ էր , երկնատուր
հուրով սր ի ծնէ , իր մէջն էր : Կրնար , մէկ եւ անբա-
ժան ամբողջ հայութեան օգտին համար , դէպքեր ըս-
տեղծել :

• Բայց , գաճաճներու շրջապատը թեւատեց զայն եւ
ուզեց փոքրացնել :

Այս հսկան , մէկ սխալ գործեց իր կեանքին մէջ :
Երբ կրնար մէկ հարուածով եւ առաջին իսկ քայլէն ճրգ-
մել հայկական ցաւին բոլոր շահադէտները , ինայեց :
Հող սխալեցաւ : Ատով իսկ փոքրացաւ :

Մե'ղք : Անդրանիկի պատմութիւնը տակաւին չէ գր-
ուած : Ո'չ իսկ ինքը՝ ուրիշին ձեռքով գրուած իր յու-
շերուն կամ օրագրութիւններուն մէջ , ոչինչ ըսած է իր
իսկութեան մասին :

Գրած կամ գրել տուած է կարծես ինքզինքը արդար-
ացնելու համար մեղքերէ , որոնք իրը չէին սակայն :
Շրջապատը այնքան փոքրացուցեր էր զայն , հպարտու-
թեամբ մեղադրուած վարպետին՝ ամէն հպարտութիւն
մոռցնել տալու աստիճան :

Իսկ Սեբաստացին , անշուշտ , Անդրանիկի մեծու-
թիւնը շունեցաւ : Չէր կրնար ունենալ : Ճակատագիրը
այլապէս օժտեր ու տրամադրեր էր զինքը : Ժողովուր-
դին ծոցէն ծնած այն բացառիկներէն է , որոնք պիտի
հետեւին ժողովուրդին գոյութեան ելեւէջներուն : Պիտի
մեծնան անոր հետ , իյնալու համար անոր հետ :

Անոնց մեծութիւնը կը կայանայ բնատուր հմայքին
մէջ , որ կը բխի իրենց ամբողջ հողեկան ու մարմնական
կազմէն : Աւանց գիտնալու եւ ուզելու կը հմայեն , մին-
չեւ որ հասարակ մահկանացուն իրենց մակարդակին

բարձրացնեն : Իսկական առաջնորդներ չեն այլ ուսուցիչներ, կորովի, քաջութեան, անձնուիրութեան ուսուցիչներ : Ժողովուրդներու կենսունակութեան ու տեւականութեան գաղտնիքը Մուրաաները կը կրեն իրենց սրտին խորը, յանգէտս, խոնարհութեամբ ու համակերպութեամբ : Իրենց կը պահսի վերջին պահու յանդրգնութիւնը, որ իսկական առաջնորդը կը յատկանշէ : Որովհետեւ, եթէ չեն խնայեր իրենց կեանքը, զոր զոհութեան կրկէսը կը նետեն ի հարկին՝ անարժէք գրնդակի մը պէս, սակայն ուրիշին մէկ կաթիլ արիւնը կը կշռեն քառասուն անգամ : Այնքա՛ն բարեխիղճ են :

Բողորովին ուրիշ է Սերոբը : Ո՛չ մէկն է, ոչ ալ միւսը : Այլ միանգամայն երկուքն է, ե՛ւ Անդրանիկ ե՛ւ Մուրատ : Քաջերուն քաջն է. ի ծնէ քաջը : Կենդանական քաջութեան տիպարը :

Կան որ. կ'արհամարհեն մահը, մահուան կը վազեն խաղի հաճոյքով ու տենչով. կը ծիծաղին վտանգներուն առջեւ, զոր կը փնտռեն տեսակ մը հեշտանքով : Բայց քաջ են ընկերով : Պէտք է որ շունչի մը ջերմութիւնն ու հեւքը հասնի իրենց. մարդ չըլլայ թող ընկերը. ըլլայ թող հաւատարիմ կենդանի մը, շուն մը : Առանձնութիւնը ամենէն զարհուրելի դէնքն է անոնց կորովին դէմ : Ընկերութիւնն է որ դանոնք կը զրահէ ու կը զգլխէ, միչեւ դիւցաղնական խոյանք :

Սերոբ միս – մինակը քաջ է : Աւելի՛, քաջ է երբ մինակ է, այնքա՛ն քաջ է որքան քիչ մարդ ունի վտանգի դէմ՝ իր արթուն հսկողութեան յանձնուած : Երբ միայն իր կեանքն է որ կը հոգայ, վտանգը կը սարսափի իր մէն : Երբ կը հրամայէ, իր քաջութիւնը կը փոխանցէ իր ընկերներուն, եւ ինք կը գառնայ անոնցմէ մէկը, տար-

բեր սակայն՝ առաջնորդի մեծութեամբ :

Անդրանիկի այս վարպետը շունեցաւ իր աշակերտին փառքն ու պատմական մեծութիւնը : Չունեցաւ իր զինակից ընկերներուն, իր հերոսութեան անուանի եւ անանուն աշակերտներուն մխիթարութիւնը՝ տեսնելու Հայուն ազատագրութիւնը որուն ամենամեծ դարբիններէն մէկն էր եղեր : Ճակատագի՛ր, պիտի ըսենք : Խլեց զայն իր ուժին ու հմայքին հասունութեանը մէջ, զրկեց զայն գերագոյն մխիթարութենէն եւ անոր տուաւ մահերու վատագոյնը :

Ու այդ վատագոյն մահն իսկ, չկրցաւ զայն մազաչափ փոքրացնել : Մեծցուց աւելի, ընդհակառակն :

Քաջերուն քաջը, իր վերջին քայլով, հոգեվարքին մէջ իսկ տուաւ կորովի, տոկունութեան եւ անվեհերութեան գերագոյն դասը, գրելէ եւ ստորագրելէ յետոյ մեր պատմութեան ամենէն լուսաւոր էջերէն մէկը :

Եթէ մեր ազատագրական դիւցազնատիպ ոգորումները ամբողջ մոռցուին, Բարչէնի կռիւը պիտի բաւէր Հայուն մարտական համբաւը յանձնելու դարերու պատմութեան :

Սերոբի հոգին Բարչէնի մէջ է. սիրտը կելիէ կիւղան, ուր ինկաւ դաւի ցանցին տակ :

Մեր յեղափոխական ռազմիկներէն շատ քիչերը ճանչցած են այնքան արկած ու վտանգ, ցոյց տուած են այնքան պաղարիւն, ենթարկուած են այնքան սուր խղճի պարագաներու, որքան Սերոբը :

1897-ին, արդէն, Սերոբի հուշակը կը վազէր իր առջեւէն : Տիրապետող գլխաւոր դէմքն էր յեղափոխական շարժման, Ժողովուրդին ներշնչած իր հմայքով ու համակրութեամբ եւ կառավարութեան ալ պատճառած վա-

խով ու մտահոգութեամբ :

Կառավարութիւնը միջոց չէր խնայեր զայն ողջ կամ մեռած ձեռք անցընելու համար ու յաջողեր էր վարձել վատագի լրտեսներ իսկ, որոնցմէ մէկը Սերոբի նախկին ընկերներէն Գրիգոր Վարդանեանը : Այս զգուելին իմանալով որ Սերոբ մտած է թեղուտ գիւղը, դրուժանի մը Պողոսի հետ կը փութայ լուրը հաղորդել կառավարութեան : Եւ ասա ոստիկաններու ջոկատ մը կը պաշարէ գիւղը : Հրահանգ ստացած են սպաննելու կամ սպաննուելու :

Բայց Սերոբ արդէն մեկնած է իր գիւղը Սողորդ : Զոկատը կը փութայ հոն : Բայց անկից առաջ, անվախ երխտասարդ մը, վազած է գիշերանց զգուշացնելու Սերոբը :

Հայդուկը կը պատրաստուի փախուստ տալ, երբ կը տեսնէ թէ արդէն պաշարուած է : Ճար չկայ : Անձնատուր ըլլալ՝ մտքէն իսկ շանցնիր : Պիտի պաշտպանէ ինքզինքը : Բայց մինակ է : Ոչ մէկ ընկեր ունի իր քով բացի իր անբաժան եւ հլու զէնքէն :

Ու կռիւր կը սկսի :

Վարժ ու ճարտիկ նշանատու որսորդը կը կրակէ ոստիկաններուն ուղղութեամբ, բայց չվիրաւորելու մտահոգութեամբ : Կ'ուզէ միայն վախ աղղելով իր անվտանգ փախուստի ճամբան ապահովել : Կը վախնայ որ թուրք գինուորին կաթիլ մը արիւնը վայրագ կառավարութեան մը կատաղութիւնը կը հրաւիրէ գիւղին խաղաղ ու անմեղ ժողովուրդին վրայ :

Սակայն թշնամին յամտու է : Կը հետապնդէ գինքը անընդհատ : Ուրիշ միջոց չկայ : Արդէն գիւղէն դուրս ելած է կրակելով ու կռուելով : Փրկարար լեռը մօտ է :

Պէտք է տապալէ մէկ քանի հողի : Ու թուրք զինուորները
 իրարու ետեւէ կ'իյնան : Սակայն փետրուարի ցուրտ հո-
 վը կը փչէ կատաղօրէն : Ձիւնը կը տեղայ ծածկելով
 ճամբան ու վերելքը դժուարացնելով : Կը բարձրանայ
 սակայն Սերոբ, աննկուն քայլերով ու կրակելով մէկ
 կողմէն, մինչեւ Նեմրուտի բարեկամ գազաթներուն վը-
 րայ՝ կը կորսնցնէ իր հետքը :

Վատ թշնամին սակայն, չէր ուզեր պարտութիւն
 խոստովանիլ ու ձեռնունայն վերագառնալ :

Կը ձերբակալէ անոր մեծ եղբայրն ու եղբորորդին ու
 կը տանի բանտ :

Անձնագոհ հայդուկին համար չկայ աւելի գարհու-
 րելի խղճախայթ, քան իր նիրելիները տեսնել յանձ-
 նուած բռնութեան ճիրաններուն, իր իսկ պատճառով :

Սերոբի պատճառով, քանդուած էր Սէէենց մեծ ու
 հարուստ գերդաստանը : Բայց Սերոբ ատկից կորովի եւ
 գոհաբերութեան օրինակներ կը հանէր ուրիշներուն, ու-
 րովհետեւ իր ժողովուրդին հանդէպ սէրը, անոր ցաւե-
 րուն հանդէպ կարեկցութիւնը խոր արմատ նետած էին
 իր մաքուր սրտին մէջ :

Մինակ ըլլար, փոքրաթիւ թէ ստուար խումբով,
 հոն էր ուր հարստահարուող ժողովուրդին օգնութեան
 կանչը կը բարձրանար :

Հարիւրաւոր քիւրտ ձիււորներ անգամ մը պաշա-
 րեր էին թեղուտ գիւղը, կողոպտելու համար : Կուրը
 հասեր էր Սերոբին, որ շորս ընկերներով վազեր էր վը-
 տանդին գէմ : Խոհեմութիւնը կը պահանջէր զգուշանալ
 նկատի առնելով ուժերու համեմատութիւնը : Բայց Սե-
 րոբի սրտին մէջ խոհեմ վախը տեղ չունէր : Ու շորս հո-
 գինոց խումբը շորսի բաժնած, կը հրամայէ կրակել :

« Անհաւասար կռիւ » բացատրութիւնը հոս արդէն
ցոյց կուտայ բուն չափն ու խմաստը: Հարիւրի դէմ չորս
միայն: Աւելի քան հինգ ժամ տեւող կռուի ընթացքին,
Քիւրտերը բազմաթիւ վիրաւորներ ու սպանեալներ տա-
լով, մէկ քայլ չէին յաջողեր ետ կամ սուս շարժիլ. եւ
միայն օգտուելով դիշերուան մութին պաշտպանութե-
նէն, յաջողեր էին փախուստ տալ:

Մեր մէջ առհասարակ, շատ քիչերն են որ իրենց
կենդանութեան արժանացած են ժողովրդային ջերմ հա-
մակրանքի արտայայտութիւններու: Անդրանիկ այդ
ցանցառ բախտաւորներէն է եղած, թէեւ իր հին մէկ
քանի ընկերներուն իսկ անարդար եւ կոյր, աւելի ճիշդը՝
թելադրուած հալածանքին ալ ենթարկուեցաւ:

Անուս ու համեստ հերոսը՝ իր դերին մեծութեան
մէջ ցուցադրուելու համար, պէտք է մեռնի: Կուսակ-
ցական նկատումը անմիջապէս տէր կը կանգնի անխօս
դիակին, զայն եւս շահագործելու համար իր անունով,
երբ ան միայն ու միայն ժողովուրդինն է: Իսկ իր կեն-
դանութեանը, հայդուկը որքան ալ տիրական դէմք ըլ-
լայ՝ պէտք չէ դուրս ելլէ կրաւորական շրջանակէն՝ որ
իրեն սահմանուած է վերին տնօրինութեամբ:

Իայց անձէն ու նկարագրէն բխող հմայքն ու հեղի-
նակութիւնը կանգ չեն առներ բնական կամ ուզուած խո-
չընդոտներու առջեւ:

Այսօր, կը մտածեմ թէ Սերոբի հմայքին ու հեղի-
նակութեան մէջ արդեօ՞ք դեր չեն խաղացած իր յեղա-
փոխական անաչառութիւնը, կարծրասրտութիւնն ու
խստութիւնը պարտազանց ընկերներու հանդէպ, որոնց-
մէ սմանք, գլխաւորները վշտացուցեր էր իր վարիչի ան-
նկատ ընթացքով՝ ինչպէս Գէորգն ու Անդրանիկը:

Հակառակ ատոր, եւ մի գո՞ւցէ ատոր համար իսկ, կը տիրապետէր ամբողջ շրջանի մը վրայ, զոր ինքն էր կազմակերպեր:

Եւ երբեք չէր եղած որ, մզուած որ եւ է սնամասուլթենէ կամ այլ ցաւազար քմահաճոյքէ, ի վնաս ժողովուրդին գործածէր իր հեղինակութիւնը:

Ամբողջ կեանքը կռիւով անցուց, ինկաւ կռուի մէջ: Բայց երբեք կռիւ չէր վնասած: Կազմակերպած էր շրջանները՝ ինքնապաշտպանութեան համար: Կռուի կը բռնուէր պաշտպանելու համար տկար ժողովուրդը բարբարոս բռնատիրութեան դէմ: Հոն ուր կարելի էր, կը ինսայէր աւելորդ արիւնը, կը խուսափէր արիւնահեղ բախումներէն: Բայց եթէ կռիւը պարտադրուէր անպամ մը, փախողը չէր: Կը յարձակէր կատղած առիւծի նման, երբ յարձակման ենթարկուէր:

Իր անհամար կռիւներուն մէջ, Սերոբ իր ամբողջ էութեամբ երեւան կուգայ Բաբշէնի գիւցազնամարտով:

1898-ի վերջերն է: Պիթլիսի նոր կուսակալը յեղափոխականները բնաջնջելու մասնաւոր հրահանգով անցած է իր պաշտօնին դիւելսը: Տակաւին անձանօթ հայգուկներուն յամառ յանդգնութեանը, բայց արդէն լեցուած անոնց դէմ խոր ատելութեամբ, մանաւանդ տողորուած փայլուն յաջողութեամբ մը՝ իր վայրագ տիրոջ՝ Համիտի բարեհաճ ուշադրութիւնը գրաւելու մարմաջով, նորահասի եռանդով գործի լծուած է վալին: Խորհրդակցութիւններ կը կատարէ մահմետական եւ հայ երեւելիներու հետ. հրահանգներ կուտայ քիւրտ ցեղապետներուն, պատգամներ կ'որոտայ հայգիւղացիներուն. եւ խոստումներ կ'առնէ անոնցմէ ոչ սնունդ, ոչ ապաստան տալ ազատագրութեան գինուորներուն: Այլ յայտ-

նել անոնց թաքստոցը կառավարութեան : Գրաւի գըր-
ուած է Սերոբի գլուխը :

Մեծ ու փոքր բռնաւորներուն աչքերը անոր վրայ
են : Ու հայ լրտեսները սկսած են գործի :

Սերոբ տասնեւչորս ընկերներով , ապաստանած է
Բարչէն գիւղը՝ կէս ժամ Բաղէշի : Կուրը սակայն տըր-
ուած է կառավարութեան : Ու լոյսը չբացուած գիւղը
պաշարուած է զինուորներով , սատիկաններով : Շատ
չանցած կը հասնին զինեալ քիւրտ աւազակները :

Սերոբ մօտակայ բլրակի մը վրայ , տեղաւորած է իր
տղաքը , ամէն մէկը մէկ մէկ տուած , ու հրազէնները կը
գոռան :

Սնայել չկայ . սլայթոյ ամէն մէկ փամփուշտ , պէտք
է սիրտ մը ծակէ . հայդուկները համբանքով պէտք է
արձակեն հարուածները . բայց արդէն մէկ հարուած
պէտք չէ վրիպի : Իսկ գիմացէն՝ գնդակները կարկուտի
առատութեամբ կը տեղան : Բայց հայդուկը՝ որ սորվե-
լու պէտք իսկ չէ ունեցած թէ ամէն տեղ եւ ամէն վայր-
կեան իրեն համար մահը մէկ է , երբ նուիրական նպա-
տակի մը կը ծառայէ , ոչ իսկ կ'ուզէ գիտնալ թէ , իր մէկ
զէնքին զէմ , քանի՞ տասնեակ զէնքեր են որ կրակ կը
փոխեն :

Քաղաքէն օդնութեան կը հասնի հրետանին : Ու թն-
գանօթը կը գոռայ :

Սերոբ մէկ քանի վարպետ նշանաւորներ կը յառ-
կացնէ հրետանին լռեցնելու պաշտօնով : Միեւնոյն ա-
տեն թշնամի գորքը՝ զէնքի եւ թիւի գերակշռութենէն
քաջալերուած՝ յարձակում կը փորձէ : Հայդուկին վարժ
հրացանը ետ կը մղէ յարձակումը ու կը լռեցնէ թնգա-
նօթը : Թնգանօթաձիգ սպան արձակուած առաջին սում-

քին իսկ, ստացած է իր արժանի պատիժը. գնդակ մը
ճակատին :

Հրամանատարը որ պոռոտ խոստովներով մեկնած
էր հայդուկները պատժելու, շուարած է. կատաղութե-
նէն՝ հրամաններ կը գոռայ ու վայրկեան չանցած ետ
կ'առնէ : Զօրքը չի համարձակիր առաջ քալել. այլ կը
գոհանայ ջայլամի պէս գլուխը հողին կախած, հրացան
պարպելով :

Մինչեւ երկու կողմերուն համար ալ փրկարար մու-
թը կը կոխէ : Զիրար չեն տեսներ : Աւելորդ է կրակել՝
լաւագոյն է սպասել յաջորդ օրուան : Թերեւս Ալլահը
աւելի բարեացակամ ըլլայ : Ու լռութիւնը չարաշուք ու
խորհրդաւոր, կը ծանրանայ կռուադաշտին վրայ :

Այդ պահուն կը սպասէր Սերոր : Մեռեալ մը ունե-
ցած էին, Պուլանըխցի Սարգիսը : Կ'առնեն անոր գէնքն
ու գնդակները, լալով՝ բոլորը կը համբուրեն ճակատը
ու կը թաղեն : Երկու թեթեւ վիրաւորներ կային : Կը
վերցնեն դանոնք ու անձայն, աչք ու ախանջ կտրած
ճամբայ կ'իյնան : Բլուրը ուր դիրք բռնած էին, ճամ-
բայ չի տար կռնակէն : Փրկութիւնը թշնամի գծին մէ-
ջէն է : Ու միշտ պատրաստ վագրի պէտ նետուելու թըշ-
նամիին վրայ, եթէ սխալը գործէ զիրենք նշմարելու,
համբուած քայլերով առաջ կ'երթան :

Առաւօտուն, թուրքերը երբ իրենց գէնքերը բարձ-
րացուցին, պատասխան չստացան գիմացէն :

Ֆէտայիները անյայտացեր էին ոգիներու նման,
թշնամիէն սպաննելով մօտ 70 հոգի :

Պարտութիւնը աննկրելի էր : Պէտք էր քաջագոր-
ծութեամբ մը գոնէ նուազեցնել ամօթը : Ու կը ձերբա-
կալեն Սերորի մեծ եղբայրը Մխէն եւ անոր կիներ Տարօ :

Իսկ խուժանը կը գոհանայ աւարի տալով Խչենց
հարստութիւնը :

Չերբակալութենէն փրկուեր էին Սերոբի կինը Սո-
սէն , գաւազը Յակոբը եւ միւս եղբայրը Չաքարը : Մտան
անոնք ալ խումբին մէջ : Ուրիշ ճար չունէին :

Սակայն , կառավարութեան համար , այլ եւս ար-
ժանապատուութեան խնդիր էր Սերոբը ողջ կամ մեռած
ձեռք անցընել :

Այլ եւս , ան սմէն յոյս կտրած էր զինուորական
կամ ոստիկանական հետապնդումով , կամ ճակատ ճա-
կատի պարկեշտ կռիւով՝ բնաջնջելու Սերոբն ու իր
խումբը , որուն կը մասնակցէին անուանի հայդուկներ ,
ինչպէս Բալապետի Կարապետը , Առիւծ Աւագն ու Պաղ-
տասարը , Չրհորայ Երկար Ակօն , Հասօն եւ Ֆլիթը , Չու-
լումաթ Օհաննէսը , Եամիրամայ Մխաթն ու Սողօն ,
Հասօն , Պիթլիսցի Սիմօն եւ Մուշեղ ու Ճարտար Յա-
կոբը :

Մատնութեան սովորական միջոցներն ալ մինչեւ
այն ատեն ճախողած էին : Բայց կը շարունակէին մնալ
յոյսի միակ ճեղքը , զոր պէտք էր լայնցնել , մինչեւ կա-
ռավարական զօրքը կարենար անկից անցնիլ ու հասնիլ
Սերոբին :

Երկար ատենէ ի վեր այդ գործը կը հետապնդէր
Հիւսնին , ոստիկանապետ , որ հայերէն ալ գիտէր , իր
ձեռքին տակ ունէր հայ ոստիկան մը Հաւատրիկցի Մա-
կարը : Ասոր կը գործակցէր Նազար անուանով սրիկան ,
որ ինքզինքը ջերմ հայրենասէր ցոյց տալով յաջողեր էր
վստահութիւնը գրաւել հայդուկներուն եւ Հիւսնիի կը
հաղորդէր ինչ լուր որ , օգտուելով իր ներշնչած վստա-

հաւթեանէն կրնար քաղել յեղափոխական շարժման մասին :

Հիւսնիի ճնշումին տակ, Նաղար կը հետապնդէր Սերոբը եւ յաջողեր էր Գեղաշէնցի ուէս Աւէն իր ճանկին մէջ խաղալիք դարձնել : Աւէն պիտի գործէր համաձայն մշակուած ծրագրի մը, — թունաւորել Սերոբը եւ իր մարդիկը : Ոչ ոք կը կասկածէր Աւէնէն : Պարկեշտ, բարեխիղճ եւ հայրենասէր մարդու անուն ունէր գիւղին մէջ եւ շրջակայքը : Աւելի ճիշդ պիտի ըլլար ըսել թէ իր արտակարգ խորամանկութեամբ եւ կեղծաւորութեամբ, յաջողեր էր խաբել գիւղացիներու բնական կասկածամտութիւնն ու վերապահութիւնը :

Եւ վերջապէս կը հասնի շարաշուք թուականը :

1899-ի հոկտեմբերի վերջին շաբաթն է :

Սերոբ՝ իր խումբով ապաստանած է Կելիէ կիւղան : ասեանէ մը ի վեր : Ինքը ծուարած է Տէր Քաջ քահանային տունը : Տղաքը ցրուած են գանազան տուներ :

Ռէս Աւէն մէկ քանի անգամ այցելութիւններ կուտայ Սերոբին, ամէն անգամուն՝ ընկերակցութեամբ գիւղական ծանօթ անձնաւորութեանց եւ ուսելիք տանելով :

Մինչեւ որ Սերոբին ու Տէր Քաջին կատարեալ վրատահութիւնը գրաւէ :

Եւ վերջապէս թոյնը ու թունաւորելու հրամանը կը հասնի Հիւսնիէն՝ Նաղարի միջոցաւ : Աւէն կրկին այցելութեան կ'երթայ Սերոբին, միշտ ուսելիքով բեռնաւոր. բայց այս անգամ, մահն է որ պիտի սնուցանէ Սերոբի արիւնը : Կերակուրը թունաւորուած է : Եւ մինչ Աւէն կը փութայ կատարելու իր գիւղային պարտականութիւնը՝ Նաղար անոր տան մէջ անհամբեր կը սպասէ

արդիւնքին :

Եւ վերջապէս կը վերադառնայ Աւէն, դաւաճան լուրը հաղորդելու : Իր պաշտօնը լրացուցած է : Մնացեալը կառավարութեան գործն է :

Նազար կը վաղէ իր արժանաւոր տէրերուն աւետիար տալու :

Կ'ըսէին թէ Հիւանիի հայթայթած թոյնը այն տեսակ բաղադրութիւն մը ունէր որ փոխանակ անմիջապէս ապաննելու երեք - չորս օր թունաւորեալը կը պահէր դիակնացած վիճակի մէջ, անկարող շարժելու : Կը քայքայէր անոր աղիքները, կը թանձրացնէր արիւնը, կը թուլցնէր ջիղերը, եւ մարդը կը դարձնէր շարժման անընդունակ :

Այդպէս կ'ուզէր կառավարութիւնը, որպէս զի օգտուելով Սերոբի եւ իր խումբին մարմնապէս քայքայուն վիճակէն՝ կէս - դիակներու դէմ, յաղթական կռիւ մը մղած ըլլալու փառքով պարծենար :

Եւ ահա, տակաւին լոյսը չբացուած, գիւղը պաշարման մէջ առնուած է :

Պիթլիսի Ալայի պէյը որ տակաւին քանի մը ամիսներ առաջ, Յրօնքը կոխեր եւ Գուրգէնը նահատակներ իր խումբով, 500 կանոնաւոր զօրքի գլուխն անցած, փութացեր էր հերոսանալու կէս - դիակներու առջեւ : Միեւնոյն ատեն, լուր դրկած է քիւրտ ցեղապետներուն որ աճապարեն թերթ քաղել ձրի դափնեպսակէն : Ու սովամահ գայլերու վոհմակներու նման, գինուորական օգնութեան վազած են արիւնկզակ Քիւրտերը՝ յօտից ցգլուխ գինուած :

Մինակ Քիւրտերը աւելի քան 1,500 հոգի են :

Երկու հազար հոգի՝ մինակ մարդու մը դէմ, մի-

նակ Սերոբին համար, որ գիտեն թէ թուեաւորուած է . . .

Անահնկայ բօթը տրուած է Սերոբին, որ տակաւին կ'անգիտանայ Աւէի դաւաճանութիւնը: Գիտէ թէ իր կեանքին վերջին ժամերը կ'ապրի: Չի ցաւիր որ պիտի մեռնի: Կը ցաւի որ օրհասական այդ կռուին մէջ, մարմինը կը դաւէ իրեն: Սուր խիթեր դետնէ դետին կը դարնեն դինքը: Կը սեղմէ աղօաները ու կը հրամայէ իր ազոց դիրք բռնել թշնամիի մը դէմ, որ ամէն մէկ հայ-գուկի հրացանի դէմ՝ քանի մը հարիւր պիտի պայ-թեցնէ:

Չայրագին կը սեղմէ աղօաները՝ խիթերը զսպելու համար:

— Առտուան այդ պահուն, կը պատմէր Սօսէն, ան մեր ճանչցած կայտառ, փոթորկաչունչ Սերոբը չէր: Մահը արդէն, սկսեր էր իր շարաշուք նշանները դնել անոր դէմքին վրայ: Դեղներ ու նիհարցեր էր մէկ գիշերուան մէջ. դէմքին գիծերը կժկուեր ու ցնցուեր էին եւ եթէ չըլլային անոր շանթարձակ աչքերը, ոչ ոք պիտի ըսէր թէ մեր լեռներու անպարտելի ոգին՝ Սերոբն էր »:

Ու այդ վիճակին մէջ, տակաւին ան սովորական կորովով ու արթնամտութեամբ, իւրաքանչիւրին տուեր էր անհրաժեշտ հրահանգը, խնդրեր էր իր վիճակով չի մտահոգուիլ. թախանձագին յանձնարարեր էր ամէն մէկուն՝ փրկել ինքզինքը:

Ու քայքայուն այդ մարմինը՝ որուն մէջ ըմբոստութեան հուրը չէր մարած եւ յառաջացող եւ արդէն տեսնուող մահուան առջեւ, անզօր կատաղութեան ցունցով մը կը մրրկէր, ուղեր էր առողջութեան բարի օրերուն պէս, խուճբին դլուխը կանգնիլ:

Քանի մը հողի, թեւը մտած, զինքը տարեր էին զիւրէն գուրս, թշնամիին զխմաց, զիրք բռնելու պատնէջի մը ետեւ: Իր հետ էին իր եղբայրները Մխէն ու Չաքարը, զաւակը՝ տասներկու տարեկան Յակոբը եւ աննման Սօսէն:

Ու հրացանները պայթեր էին: Բլուրները կը թընդային, մինչ զիւրը սմբած, զերեզմաննոցի պէս՝ ուր մահը աւար կը պատրաստէ եւ ուր ողջերը վերջին պահուերկիւղած պատրաստութիւններ կը տեսնեն, վախէն կը սառէր:

Սերոբի խումբը բաժնուած երեք անջատ զիրքերու վրայ, իսկապէս օրհասական կռիւ կը մղէր:

Պիտի կռուէին մինչեւ սպառէր վերջին փամփուշտը, մինչեւ իյնային անկենդան: Ու կռուեր էին անդուլ, ժամեր ամբողջ, մինչեւ պատահեր էր անխուսափելին:

Հողիւ զիրք բռնած թումբի մը ետեւ, Սերոբի թեւը մերժեր էր զէնք վերցնել: Թոյնը հետզհետէ կը սաստկացնէր իր աւերը հերոսին մարմնին մէջ: Կեանքին մէջ առաջին անգամ ըլլալով, թշնամիին առջեւ զինուած, այլ կռուելու անկարող, կատաղութենէն մռնջեր էր հիւանդ Առիւծը, լացեր էր ինքն իր վրայ ու զէնքը ձեռքէն ձգեր էր վար, մինչ զնդակ մը վիրաւորեր էր ռաքը:

Բայց հոն էր քաջարի Ամաղոնը, Սօսէն, որ անվախ իր ամուսնին պէս, վերցուցեր էր զէնքը ու կրակեր անընդհատ:

Հետզհետէ ինկեր էին Մխէն, Չաքարն ու Յակոբը: Ինկեր էին եւ հայդուկներէն չորս հողի: Բլրէն, ընդամէնը չորս հրազէն կը պարպուէր, նշմարելի խնայողութեամբ: Թշնամին որ եթէ պուտ մը քաջութիւն ունենար՝ թուքով իսկ պիտի կրնար խեղդել ամբողջ խումբը:

քը, նոր սկսեր էր խանդավառուիլ, անդրադառնալով
հայդուկներու լուսթեան: Ու խուժանային դրոհով մը
հասեր էր հոն ուր Հսկան, վիրաւոր, քայքայուած, սա-
կաւին կը շնչէր:

Եւ արիւնոուշտ Քիւրաը Պշարէ Խալիլ աղան կը
կարէ Սերոբի գլուխը, որ ամբողջ հարսաուլթիւն մը,
հսկայ յաղթանակ մը կ'արժէր բռնապետութեան հա-
մար:

Գլուխը ցիցի վրայ դարկած, յաղթանակօրէն՝ դա-
դան խուժանը պտտցուց Մուշի եւ Բաղէշի փողոցները:
Իսկ Սօսէն բանտ նետուեցաւ, ուրկէ ազատեցաւ ամիս-
ներ յետոյ՝ անլուր տանջանքներէ վերջ:

Խուժբէն փրկուեր էին միայն չորս հոգի, գերմարդ-
կային յանդգնութեամբ ճեղքելով հազարաւորներու
շղթան:

ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՆՔԻ ԿՌԻՒՆԵՐԸ

Մեր Սողորդ այցելութեան նպատակներէն մէկն ալ
էր հետապնդել Սերոբի մատնիչներէն մէկը՝ Սողօն, ո-
րուն հետքը սակայն չկրցանք գտնել՝ որքան ալ զգու-
շութեամբ ու խորամանկութեամբ պրայտումներ կատա-
րեցինք:

Չէինք կրնար առանց գիւղը վտանգելու օրերով հոն
մնալ: Յեղափոխական արդար պատիժի դործադրութիւ-
նը ձգելով յարմար առիթին, անցանք Նեմրուզ լեռը, որ
Սերոբի միջնաբերդն եղած էր. հոն մնացինք մէկ քանի
օր: Յուրտ - ձմեռ էր. յարմար պատասպարաններ ու թա-
քրատոցներ չկային: Պաղ հով մը կը փչէր. լեռան առատ
ցախերէն վառուած կրակը հաղիւ մեր թմբած արիւնը
կը տաքցնէր քիչ մը:

Ճէր: Կարգադրեց որ մինչեւ իր վերադարձը հոն մնանք.

եւ ինքը՝ իր հետ առնելով Սերորն՝ եւ անոր երկու գաւազնները, մեկնեցաւ Վան, խմբապետ նշանակելով Քեռին՝ Բարսեղը :

Տասներհինգ օր վերջ՝ իրմէ ստացուած նամակ մը մեզ կը հրահանուէր երթալ Շէնրք գիւղ եւ հոն իշխան Միքայէլի արամադրութեան տակ մնալ՝ մինչեւ իր վերադարձը :

Գրեթէ ուրախութեամբ իջանք լեռնէն, ուր սասուելէ եւ անշարժ թմրելէ զատ ուրիշ ոչինչ ունէինք ընելիք եւ Վանէն հասած նամակ մը փութով Հրայրը կը կանուղղուեցանք դէպի Շէնրք: Ճամբուն վրայ ստիպուած էինք կտրել ճախճախուտ մը, ուր հազիւ հասած, քրտական Սարը Գէօլէ գիւղին մօտերը՝ յանկարծ կրակ բացուեցաւ մեր վրայ: Քիւրտերն էին որ նշմարած ըլլալով մեզ, չէին ուզած առիթը փախցնել, եւ անընդհատ կը կրակէին: Հրացաններու պայթիւնէն՝ շրջակայքը գրտնուող ոստիկանական ջոկատ մըն ալ հասեր էր անոնց օգնութեան:

Ծանր կացութիւն ստեղծուած էր մեզ համար: Մէկ կողմէ քառապատիկ ուժով թշնամիին անընդհատ կրակը, միւս կողմէ ցեխը որ մինչեւ մեր կէս մէջքը կը բարձրանար, անհնար կը դարձնէր դէպի ետ կամ առաջ որ եւ է շարժում: Առաջին համազարկէն իսկ, վիրաւորուեր էր Ղլլաղաճի Արթինը, որ արիւն կորսնցնելով մէկտեղ քանի կը փորձէր ազատիլ ճախճախուտքէն, այնքան կը խրէր ցեխին մէջ, ուր թաղուեր էր մինչեւ կուրծքը: Տէրտէրեանց Վահանին հետ, հազիւ կրցանք՝ հազար դրժուարութեամբ զինքը փրկել այդ անտանելի վիճակէն եւ տեղաւորել ապահով անկիւն մը, Մեղրադետի եզերքին վրայ:

Քիւրտերը եւ ոստիկանները անընդհատ կը կրակէին ու կը ջանային շրջապատել մեզ :

Կը կրակէինք մեր կարգին . բայց մեր գլխաւոր նըպատակն էր անվնաս փախուստ տալ եւ շնորհիւ մեր երկու առաջնորդներուն որոնք լաւ կը ճանչնային այդ շրջանները ու նաեւ օգտուելով մթութենէն , սողալով անցանք ճախճախուաքին վերջին մասը որ Վարդենիսի դէմը կը գտնուէր : Մեր հետքը կորսնցնել տուեր էինք . թշնամիին հրացանները այլ եւս չէին լսուեր . կարեւոր էր սակայն գիտնալ թէ կը հետապնդէ՞ մեզ թէ ոչ : Մուրաւը զրկեցինք ստուգելու : Վտանգ չկար : Մտանք Վարդենիս , Մուրաւենց տունը գիշերելու եւ հանգստանալու :

Վարդենիսի մէջ անակնկալ լուր մը կը սպասէր մեզ , թէ Առաքելոց Վանքի մէջ , Անդրանիկի գլխաւորութեամբ , երեք օրէ ի վեր կռիւ կը մղուի , վանքը պաշարող կառավարական ուժերուն դէմ :

Պարզ էր որ անմիջապէս օգնութեան փութալու նպատրաստութիւն պիտի տեսնէինք : Բայց արդէն յոգնած , թրջուած , ցեխի մէջ թաթախուած եւ ուժաբեկ , կազդույրի պէտք ունէինք : Չէինք կրնար սակայն , այդքան զինեալ բազմութեամբ , աննշմար մնալ գիւղին մէջ որ արդէն կասկածի տակ էր : Յերեկ մը անցուցինք մօտակայ քարայրներուն մէջ եւ գիշերանց մեկնեցանք Արտօնք , ուր գիւղացիները խրախճանքի մէջ էին : Կ'երգէին , կը պարէին : Գիւղը տօնական կերպարանք ստացեր էր : Վանքին կռիւը որուն յաղթական ելքին վրայ զարմանալի հաւատք մը կը տածէին , գինովցուցեր էր զիրենք : Ամբողջ ոստիկանական ուժը կեդրոնացեր էր Վանքին շուրջ եւ խեղճ գիւղացիները որ երկար ստենէ

ի վեր, դարհուրելի կերպով ճնշուած մթնուրտի մը
տակ, հազիւ կը համարձակէին շնչել, իրենք զիրենք
արդէն ազատ կը զգային:

Անոնց ուրախութիւնը կուրի լուրէն աւելի պէտք է
վերագրել այն ջլատող տպաւորութեան որ առաջ եկած
էր զինեալ խումբերու զգուշաւոր ընթացքէն, մեկուսա-
ցումէն գրեթէ այդ տպաւորութիւնն էր փարատած:

Հրայր որ հայդուկներու եւ ոստիկաններու յաճա-
խակի բախումները աննպատակ կը նկատէր, դէմ էր
մասնակի ըմբոստութեան եւ նախ քան երկարատեւ
պատրաստութեան ազդանշանը տալ, պատասխանատու
մարմնին հետ համախորհուրդ, վերջ տուեր էր — ան-
շուշտ որքան կարելի էր դժոխային այն պայմաններուն
տակ, ուր միջադէպը ամէն մէկ ծուռ ու շիտակ քայլի,
կամ քէ անկախ կը պոռթկար — խումբերու գրգռիչ գոր-
ծունէութեան:

Իսկ ժողովուրդը որ վարժուած է մակերեսէն դա-
տելու, չէր անդրադառնար անշուշտ այս ընթացքին
թաքուն պատճառներուն, եւ յեղափոխականներու փա-
խրտական գոյութեան մէջ կը նշմարէր տեսակ մը վախ,
տեղատուութիւն, յուսաբեկութիւն զօրաւորին առջեւ,
որ մեծ ու փոքր բռնաւորներն էին, իրենց անհամար հը-
պատակներով:

Եւ ահա պայթեր էր Առաքելոց վանքի դէպքը: Ափ
մը հայդուկներ քաջարար կը դիմադրէին պաշարողներու
հսկայ, անհամար զանգուածին, որ հետզհետէ օգնական
ուժ ալ կը ստանար: Ուրեմն ողջ էր հայդուկը, հայ
տանջահար գիւղացիին պահապան հրեշտակը, կենդանի
էր անոր մարտական ոգին: Ու հաւատքը վերածնէր էր
ամբողջ շրջանին մէջ, խանդավառութեան ու գինովու-

Թեան ալիքներ գլորելով գիւղէ գիւղ : Բոլորը կ'ուզէին վանք վազել օգնութեան : Կա՞ր առնական բազուկ մը , որ ղէնք վերցնելու տրամադիր չըլլար , եթէ գտնէր :

Արտօնքէն յետոյ՝ երբ Չարնայ գիւղը հասանք , մեր խումբին ղէնքերու թիւը 100-ի բարձրացեր էր արդէն :

Սակայն վանք հասնելու դժուարութիւնները դիւրաւ չէին հարթուեր : 1901-ի նոյեմբերի սկիզբն էր : Ճամբաները ծածկուած էին ձիւնի թանձր խաւով : Սաստիկ կը փչէր :

Թերեւս վանքի տղոց օգնութեան հասնելու լաւագոյն միջոց մըն ալ , ուրիշ կէտի վրայ կռիւ ստեղծելն էր՝ բաժնելու եւ այդ կերպով դիւրացնելու համար՝ պաշարողներու ուժը :

Այդպէս ալ որոշուեցաւ Քեռիի կարգադրութեամբ :

Ի դուր սակայն , միջադէպեր կը փնտռէինք՝ մեր խումբին վրայ հրաւիրելու համար կառավարութեան ուշադրութիւնը :

Խումբը զինեալ՝ գրգռիչ կերպով կը պատէր գիւղերուն մէջ . անգամ մը երկու սաստիկան գերի բռնեցինք , բանտարկեցինք եւ երեկոյեան ղէմ , բաւական նեղը դընելէ յետոյ , ազատ արձակեցինք , որպէս զի վազեն լուր տալու եւ զօրքը ղրկելու մեր վրայ : Ի դուր :

Անցանք Բեգար գիւղը , ուր լուր առինք թէ դէպի Շէնըք՝ Տիւքեանէ Չիֆքըրը վայրը , բլրան վայրէջքին վրայ՝ երեք հոգի թաղուած եւ անշնչացած են ձիւնի ղէգին տակ : Իէպի վանք , ճամբան փոխուած էր ուրեմն : Քեռին որոշեց սպասել , ինչ որ վհատութիւն պատճառեց խումբին :

Ատոր վրայ էր որ Տէրաէրենց Արամը , Ղզլաղաճի Յարութիւնը , ես եւ ուրիշ չորս հոգիներ , որոշեցինք ա-

մէն գնով քայել : Քեռին դժկամակեցաւ նախ : Բայց մեր
յամառ պնդումներուն վրայ ի վերջոյ տեղի տուաւ : Մեզ
յանձնեց Հրայրի նամակը , որ ուղղուած էր Շէնըքի իշ-
խան Միքայէլին :

Տաժանելի ճամբորդութենէ մը յետոյ , սառած գրե-
թէ կիսամեռ , հասանք Շէնըք , ուր գտանք Միքայէլը ,
որ տեղ պատրաստեց մեզ՝ հոն մնալու համար , մինչեւ
Հրայրի վերադարձը :

Միքայէլ անմիջապէս կարգադրեց որ հանդատա-
նանք Շէնըքի մէջ , մինչեւ Հրայրի վերադարձը :

Սակայն երբ իրեն յայանեցինք վանք մտնելու մեր
մտադրութիւնը , թելադրեց սպասել քանի մը օր , մին-
չեւ որ օգնութեան փութացող ուրիշ խումբերու ալ
պատրաստութիւնները լրանան :

Հող լսեցինք որ Կելիցի Ղազարը սպաննուեր էր ,
իսկ Անգրանիկի հին գինուորներէն Ուրուզ գիւղացի
Յարութիւնը որ գինեալ խումբով եւ շալակաւորներով
յաջողեր էր մօտենալ վանքին , ծանրօրէն վիրաւորուեր
էր գրան մօտ : Խումբին մէկ մասը յաջողեր էր մտնել
վանք . իսկ միւսը վերադարձեր էր :

Յարութիւն մէկ քանի օր վերջ մեռնելով , թաղուե-
ցաւ վանքին մէջ՝ Ղազարի քովը :

Մէկ քանի օր վերջ՝ Սէմալէն մեկնեցաւ ուժեղ
խումբ մը , հետը տանելով հրացան , փամփուջա եւ պա-
շար : Յուրա — ձմեռ էր . ձիւնը կը տեղար տաւտօրէն ,
ծածկելով ճամբաները , սրտնք , առանց ստոր ալ կանո-
նաւոր չէին : Իսկ բուն հովը աւելի կը դժուարացնէր
խումբին շարժումը , որ յաջողեր էր ելլել մինչեւ Միրն-
կասար : Խումբին նպատակն էր գիշերանց յարձակում
գործել պաշարողներուն վրայ , ճեղքել շղթան եւ մօ-

տենալ վանքին : Սակայն բնութիւնը շուտով պարտութեան մատներ էր խուճբին կորովը : Տղաքը լաւ չէին պատասպարուած ցուրտին դէմ : Ոմանց ոտքերը սառեր էին ու խուճբը ստիպուեր էր վերադառնալ :

Այս խուճբին վերադարձէն յետոյ, նկատի առնելով վանքին մօտենալու անյաղթելի դժուարութիւնները, ծրագիր մշակուեցաւ ստուար ուժերով յարձակում գործել մէկ կողմէն Սասունէն, միւս կողմէն՝ ցուրտէն եւ այդ կերպով ստիպել պաշարողները որ իրենց ուժերը բաժնեն :

Պատրաստութիւնները փութով առաջ տարուելու վրայ էին, երբ լսուեցաւ որ վանքը պարպուած է : Սուրհանդակները լուր բերին որ Անդրանիկի խուճբը գիշերանց յաջողած է անվտանգ եւ անվնաս վանքէն դուրս ելլել, կտրել պաշարման շղթան եւ հեռանալ :

Գիւղերուն մէջ, ուրախութիւնը բռնած էր բոլոր սրտերը : 20 - 22 օր տեւող պաշարման ընթացքին մըղուած անհաւատար կռիւր, որուն վերջ տուեր էին վարպետ խաղով մը, կրկին գիւղացիներու սրտերը լեցուցեր էր հայդուկներու հանդէպ ջերմ վստահութեամբ : Գէմքերէն հպարտութիւն կը ճառագայթէր, ու բալորին հետաքրքրութիւնը մանրամասնութիւններ կը փնտռէր : Հասած հատուկտոր տեղեկութիւնները բերնէ բերան կը մեծնային, կը շափաղանցուէին, կ'այլալեւերուէին : Հոն ուր իրականութիւնը կը բացակայէր, երեւակայութիւնը կը հասնէր օգնութեան, մէկ քանի քաջագործութիւն աւելի վերադրելու հայդուկներուն, որոնք նորէն կը դառնային տանջահար ժողովուրդին պաշտպան զաւակները :

Չէինք կրնար անշուշտ, գոհանալ մեզ հասած տե-

դեկութիւններով, որոնք կ'ենթադրէինք թէ իրականութեան կը համապատասխանեն չափով մը միայն եւ ըստոյց լուրեր քաղելու համար, իշխան Միքայէլի կարգադրութեամբ, մէկ քանի հոգիով մեկնեցայ տղաքը տեսնելու:

Կ'ենթադրէի թէ մէկ քանի հոգի անպատճառ պիտի կրնամ գտնել Շէնրքի եւ Սէմալի միջեւ, գոմի մը մէջ:

Եւ իրօք, հոն հանդիպեցայ Հաճիին, Կայծակ - Վաղարշակին եւ մէկ քանիներու, որոնք հոն ապաստաներ էին: Գիշերային փախուստի ընթացքին՝ թանձր մշուշ մըն ալ իջած ըլլալով, խումբին կապը կտրուեր էր: Իսկ մէկ մասը ապաստաներ էր Կելիէկիւզան:

Շէնրք վերադառնալէ յետոյ, որոշեցինք երթալ միանալ Կելիէկիւզան հաւաքուած խումբին:

Եւ վերջապէս մեր հետաքրքրութիւնը լիուլի գոհացնելու առիթը գտանք:

Շէնրքի եւ Սէմալի ճամբուն վրայ գտնուող գոմին մէջ, Հաճիին եւ Կայծակ - Վաղարշակին հետ մեր արագ հանդիպման ընթացքին, աւելի անոնք էին որ մեզմէ տեղեկութիւններ ուզեր եւ աւեր էին արտաքին աշխարհէն, քանի որ աւելի քան 22 - 23 օր, ամէն կապէ կըտրուած մնացեր էին Վանքին մէջ: Մեր հետաքրքրութիւնը կռուին եւ վանքի ներքին անցուղարձերուն մասին, աւելի սրուեր էր մէկ քանի հակիրճ տեղեկութիւններով:

Իսկ Կելիի մէջ, ամէն մարդ բան մը ունէր պատմելիք. հարցնելու պէտք չկար՝ տեղեկութիւններ ու մանրամասնութիւններ խնդրելու համար: Կը բաւէր հայդուկներու կատակախառն խօսակցութիւններուն հետեւիլ:

Յայտնի է թէ Վանքի կռիւր մտածուած ու պատ -

բաստուած էր առաջուց : Ամէն ինչ կազմակերպած ու
կարգադրած էր Անդրանիկ ինքը՝ գլխավորաբար Գէորգի,
Հաճիի, Կորիւնի, Կայծակ – Վաղարշակի հետ խոր-
հրդակցութեամբ : Ասոնցմէ դուրս ուրիշներ բան չէին
գլխեր գրեթէ : Նախապատրաստութիւնները տեսնուելը
էին ծայր աստիճան գազանապահութեամբ :

Անդրանիկ մէկ քանի նպատակ կը հետապնդէր մի-
անգամայն : Ժողովուրդին ինկած կորովը բարձրացնել,
թուրք կառավարութենէն քաջալերուած հարստահարիչ-
ներուն ուժեղ ազդարարութիւն մը ուղղել եւ օտար պե-
տութեանց ուշադրութիւնը հրաւիրել հայութեան վի-
ճակին վրայ :

Ուրիշ առթիւ ըսինք թէ, որոշ կարգադրութեան մը
հետեւանքով, որ պատճառ դարձեր էր Հրայրի եւ Անդ-
րանիկի գծաման, գինեալ խումբերը զատապարտուելը
էին անշարժութեան :

Սակայն, որքան կարելի էր տրուած պայմաններուն
մէջ, յեղափոխական քարոզչութիւնը եւ ինքնապաշտ –
պանութեան պատրաստութիւնները առաջ կը տարուէին
անդուլ ու կորովի, միւս կողմէ սակայն, յեղափոխա-
կաններու լուսթեան առջեւ, եւ աւելի քաջալերուած
կառավարութենէն, հարստահարիչները աւելի յան –
դուղն ու անխիղճ կը դառնային : Կանգ չէին առնել որ
եւ է միջոցի առջեւ, որ կը ծառայէր դաժան աշխատան-
քի լծուած գիւղացիները գրկելու իրենց արդար վաստա-
կէն : Սպանութիւնները աւելի եւս յաճախադէպ էին,
կողսպուտ ու թալան՝ անհաշիւ, առեւանդումներ ու
քոնարարման դէպքեր՝ սովորական :

Եւ այս կացութեան հանդէպ, յուսահատութիւնը
բանէր էր ժողովուրդը, որուն մէջ ձեռքի տակէ, բայց

յաջողութեամբ, կը դործէին օրթոսագրութեան քարոզիչները:

Հակազգել պէտք էր ուժգնօրէն:

Եւ Անդրանիկ սմիաներ առաջ, սկսեր էր պատրաստութիւն տեսնել, մաս մաս, վանք փոխադրելով երկու ամսուան համար պաշար, վառօդ եւ ինչ որ պէտք էր ուժեղ գիմադրութեան մը համար:

Սակայն, երբ վանքը պաշարուեցաւ, պատրաստութիւնները տակաւին չէին վերջացած, մանաւանդ որ Անդրանիկ կ'ուզէր ծայրայեղ զգուշութեամբ դործել: Նոյն իսկ վանահօր եւ վանականներու կասկածները փարատելու մտքով, պաշարի մթերքներուն համար, որոնք օրէ օր վանք կը տարուէին, կ'ըսէր թէ մէկ անգամէն զանազան գիւղեր փոխադրելու համար, առժամաբար հոն հաւաքել կուտայ:

Թշնամին սակայն, աւելի արթուն գանուեր էր շնորհիւ իր վարձած վատագի հայ լրտեսներուն եւ առանց նկատի առնելու ձմեռնամուտի խստութիւնները, ահագին թւով դօրք թափեր էր վանքին վրայ, երբ Անդրանիկ ներսը խորհրդակցութիւն կը կատարէր:

Տակաւին, խուճրերը ամբողջ չէին հաւաքուած: Իւրրսէն գալիք հայգուհիներ կային: Պաշարումէն անմիջապէս յետոյ, Անդրանիկ խոհեմութիւն սեպեր էր շյայտնուել, այլ սպասել եւ կարծել տալ թշնամիին թէ ներսը վիճեալ ոչ ոք կայ, յուսալով որ կը ձգէ, կը հեռանայ: Բայց թուրքը վտաս էր իր հոտառութեան եւ եկեր կոթներ էր վանքին պատերուն:

Կռիւր անխուսափելի դարձեր էր եւ հրազենները պայթեր էին, երբ օգտուելով գիշերուան մութէն, Սասունցիներու խուճրը յաջողեր էր մտնել վանք:

Սաստիկ ցուրտ էր . ձիւնի թանձր խաւ մը նստած էր
ամէն տեղ եւ ուժգին հով մը կը փչէր : Տղաքը սրտնց
թիւք 55 - 60-ի կը հասնէր , լաւ պատասպարուած էին
պարսպանման պատերուն ետին : Իսկ թրքական դօրքը
կը սառէր եւ կը բռնուէր հիւանդութենէ որ օրական
տասնեակներով գերեզման կ'իջեցնէր :

Կացութիւնը պարզապէս անտանելի եւ ամօթալի էր
կառավարութեան համար , որ Փետայիներուն կողմէ եր-
կարատեւ գիմադրութիւն չէր նախատեսեր : Օրերը
կ'անցնէին , նօսրացնելով գինուորական շարքերը ու պա-
շարեալները ամէն օր նոր կորովով կը գիմադրէին : Գո-
տէ այդպէս կը տեսնուէր : Եւ ինչ որ չէր կրնար գինու
դօրութեամբ յաջողցնել , փորձեր էր սպառնալիքով կամ
համոզկերութեամբ ստանալ : Վանահայր Յովհաննէս
վարդապետը որ պաշարման օրը կը բացակայէր Վան-
քէն , ասհարկի , միջնորդի գեր կը կատարէր Մուշի կա-
ռավարիչին եւ Անդրանիկի միջեւ : Մէկուն կը հաղորդէր
բանապետական սպառնալիքներն ու վերջնապէս . միւ-
սին կը տանէր յեղափոխական պահանջները՝ իբր պա-
տասխան :

Եւ օրերը կը յաջորդէին իրարու առանց արդիւնքի ,
կառավարութեան համար ամօթապարտութեան նախա-
տինքով , մերիններուն համար , քաջութեան ու արժա-
նաւոր պարծանքի դափնիներով : Ու Երլարց նստած կար-
միր բռնապետը կը ջղայնանար աւելի եւս , հեռագիր
հեռագրի վրայ տեղալով դողահար կառավարիչին , ան-
կէ պահանջելով ժամ առաջ վերջացնել որ եւ է կերպով :
Մինչեւ որ մերինները համաձայնութիւն յայտնէր էին
վանք ընդունելու կառավարութեան բանադնացները :

Տակաւին անոնք չեկած , Անդրանիկ վարպետ բե-

մադրութիւն մը սարքեր էր . նշանակեր էր այն սենեակը ուր պիտի առաջնորդուէին եւ ընդունուէին թուրք բանազնացները , իւրաքանչիւրին տուեր էր պատուէր մը , որ պիտի ծառայէր ազդու տալաւորութիւն գործելու մարդոց վրայ եւ անկիւն մը իրարու վրայ դիզել տուեր էր բազմաթիւ պարսպ սնտուկներ , ենթարդրել տալու համար թէ հսկայ քանակութեամբ փամփուշտ մթերած է , եւ ընդունելութեան պահուն , առիթը գտեր էր , տեղաւորելու հանդիսաւոր շեշտով .

— Ահա՛ , գացէք ըսէք ձեր մեծերուն թէ այս սընտուկները իրենց զինուորներուն համար են :

Մինչ , իրականութիւնն այն էր որ օրը օրին վաւօդ կը պատրաստուէր եւ պարսպ փամփուշտ կը լեցուէր :

Եւ վերջապէս , բանազնացները հասեր էին , եւ առաջնորդուեր յատկացուած սենեակը : Դողահար , սըմքած ու շիոթ , չէին համարձակեր խօսիլ , յատկօրէն յայտնել պաշտօնը որ իրենց տրուած էր , մինչեւ որ Անդրանիկ վատահութիւն ներշնչեր էր անոնց :

Ու խեղճերը , միշտ չքմեղացնելով իրենք զիրենք իբր « հրամանի ծառաներ » , յայտներ էին թէ Սուլթանը կը պահանջէ եւ կը հրամայէ որ Փետայիները անձնատուր ըլլան , հաւաստելով թէ ներման եւ շնորհներու պիտի արժանանան :

Եւ իրենց պաշտօնը խղճի մտօք կատարած ըլլալու համար , երեք անգամ կրկներ էին կառավարութեան պահանջը :

Իսկ Անդրանիկի կտրուկ մերժումին առջեւ , մինչեւ իսկ դրամ խոստացեր էին , պայմանաւ որ հեռանան երկրէն եւ ազատօրէն երթան՝ ուր որ կ'ուզեն :

Անդրանիկ գիտէր թէ Սուլթանին գլխաւոր մտահո-

դու թիւնը կը կազմէ օտար միջամտութեան մը հաւանա-
կանութիւնը եւ ատար համար ալ, ինքզինքը ծանրէն կը
ծախէր :

Թուրք ապշահար բանագնացներուն բացատրելէ յե-
տոյ յեղափոխական պայքարին էութիւնը, ան ներկայա-
ցուցեր էր իր պահանջները. — Ազատ թողուլ քաղաքա-
կան յանցանքով բանտարկեալները, — Պատժել հարբա-
տահարիչները եւ հատուցում տալ թալանուած գիւղա-
ցիներուն ու մանաւանդ գործադրել բարենորոգումներու
մայիսեան ծրագիրը :

Բանագնացները ջանացեր էին համոզել Անդրանիկը
թէ ի դուր է պայքար մղել հզօր կառավարութեան մը
դէմ, որ կրնայ բանակներ շարժման մէջ դնել ի հար-
կին, թէ եթէ պէտք ըլլայ, կառավարութիւնը տարինե-
քով գիրենք պաշարուած կը պահէ վանքին մէջ, մինչեւ
որ անօթութիւնը գիրենք ստիպէ անձնատուր ըլլալ, թէ
եթէ ուզէ, Սուլթանը թնդանօթի մէկ քանի հարուածով
փլատակի կը վերածէ ամբողջ վանքը, բայց թէ ան, կը
խնայէ վանքին մէջ արգելափակ որբերուն եւ մանա-
ւանդ՝ սրբապղծութիւն կը նկատէ ոմբակոծել կրօնա-
կան հաստատութիւն մը: Բայց եթէ Փետայիները յա-
մառին, ստիպուած՝ կանդ չպիտի առնէ որ եւ է միջոցի
առջեւ :

— Գացէ՛ք, հաղորդեցէ՛ք ձեր տիրոջ, պատասխա-
ներ էր Անդրանիկ, թէ մեր մէջ մահուրնէ վախցող չկայ.
այն օրը սը զէնք բարձրացուցինք, արդէն ինքզինքնիս
մեռած նկատեցինք: Կրնանք բոլորս մեռնիլ: Բայց ամէն
մէկունս ետեւէն հարիւրաւորներ, հաղարաւորներ կը
հասնին: Քանի բռնութիւնը կը տիրէ եւ անմեղ ժողո-

վուրդը կը հարստահարուի, պայքարը կանդ չպիտի
տանէ :

Ու ճամբեր էր բանագնացները :

Կսիւր սակայն չէր կրնար յաւերժանալ՝ առանց
դասնագոյն պարտութեան մատնելու պաշարեայները :
Եթէ նպատակը հայ յեղափոխական ուժին կենդանու
թիւնը փաստել էր, արդէն իրականացած էր : Կը մնար
պատուաւոր փախուստի ճամբայ մը փնտռել :

Շնորհիւ երկու յեղափոխական օրիորդներու Շու -
շանի եւ Չարուհիի, որոնք թուրքերուն վստահութիւնը
վայելող եւ ի հարկին, վանքին ու իրենց միջեւ, իբր
բանբեր ծառայող Հայուհիի մը միջոցաւ, տեղեկութիւն-
ներ կը հաղորդէին, Անդրանիկ ծանօթ էր խանդավա -
ռութեան, որ բռնած էր ամբողջ Տարօնի ժողովուրդը :

Իայց այդ խանդավառութիւնը չէր կրնար դուրս
ելլել գիւղերու սահմաններէն ու հասնիլ մինչեւ իրենց,
չէր կրնար որ եւ է գրական օժանդակութիւն մատուցա -
նել պաշարեայներուն, որպէս զի կարելի դառնայ կոսիւր
երկարել աւելի եւս : Գիտէր թէ մարդով, զէնքով ու պա -
շարով օգնութեան փութալու երկու ձեռնարկներ ձախո -
ղեր էին :

Միւս կողմէ, ժողովուրդն ալ, հակառակ իր ջերմ
խանդավառութեան կը սկսէր լրջօրէն վրդովիլ իրենց
վիճակով . իսկ առաջնորդարանն ալ, Պոլսոյ Պատրիար -
քարանին թելագրութեամբ՝ որ կը շարժէր Սուլթանին
հարկադրանքով, կը յորդորէր ենթարկուիլ կառավա -
րութեան պահանջներուն եւ անձնատուր ըլլալ :

Սակայն, այդքան յանդուգն քայլէ մը յետոյ, վրս -
տահելով ներման ու շնորհներու խոստումներուն՝ անձ -
նատուր ըլլալ, պիտի նշանակէր պարզապէս ամօթալի

նահանջ մը, յաւիտենական արատ մը հայդուկներու
ճակտին, յանցապարտութեան տեսակ մը խոստովանու-
թիւն եւ ընկրկում :

Մանաւանդ որ պահանջներու մէկ մասին գոհացում
տալու կառավարական խոստումը երբեք չէր կրնար իբր
պարկեշտ եւ հաստատ՝ նկատի առնուիլ մարդոց կողմէ՝
որոնք երկար ստենէ ի վեր ծանօթ էին թուրք բանուոր-
ներուն նենգամտութեան :

Ու կ'որոշեն փախուստի խիզախ ծրագրի մը դործա-
դրութեան մէջ փնտուել ելքի ճամբան :

Ատով անձնատուր եղած չէին ըլլար, անգամ մը եւս
կառավարութեան յայտնած կ'ըլլային իրենց արհամար-
հանքն ու անխտասութիւնը եւ յաջողութեան պարագա-
յին, բարոյական խոշոր յաղթանակ մը տարած կ'ըլլա-
յին թշնամիին վրայ, որ հաղարաւոր զօրք հաւաքեր էր
եւ ամէն օր, օգնական ուժերով կը ստուարանար ամբ մը
հայդուկներու դէմ :

Փախուստը որոշուած էր ուրեմն :

Դիւրին չէր սակայն յաջողցնել ձեռնարկ մը, որ կը-
նար ամէն քայլի բախիլ այլտղան արգելքներու եւ վը-
տանդներու :

Պէտք էր նախ աննշմար դուրս ելլել վանքէն, անաղ-
մուկ մ'օտենալ թշնամիին, կարելի պաշարման խիտ շղթան
ու յետոյ ամէն հետք կորսնցնել ոչ միայն հետապնդում-
ներէ խուսափելու, այլ մանաւանդ գիւղերը վերկելու
համար նոր վայրագութեանց սպառնալիքէն :

Վերջին պարագան թերեւս չիրականանար անով որ
Մուշի օտար հիւպատոսները կրնային իրենց վկայու-
թիւններով ու փաստացի տեղեկագրերով՝ իրենց կառա-
վարութեան միջամտութիւնը հրաւիրել. եւ այդ վա-

խով, եթէ բանատիրութիւնը ուզէր իսկ փոխվրէժի դիմել անմեղ ժողովրդին դէմ, հաւանաբար յետաձգէր իր շարաշուք մտադրութեան զործադրութիւնը աւելի յարմար ժամանակի :

Անդրանիկի գլխաւոր մտահոգութիւնն այդ պահուն, նուազագոյն վնասով խումբը փրկելն էր : Եւ քանի մը անգամ, վանքին մէջ՝ փախուստի փորձեր կատարել տուեր էր հայդուկներուն, որոնք տղայական խաղ մը սարքելու մանկուսակ ուրախութեամբ, ենթարկուեր էին արուած հրահանգներուն :

Ու վերջապէս, փախուստի զիշերը իջեր էր : Անդրանիկ խստիւ արդիւն էր վանականներուն եւ վանքի 50-60 սաներուն հետեւիլ խումբին, հրահանգելով մնալ եւ խումբին մեկնումէն յետոյ՝ փակել վանքին դռները :

Ու հայդուկներն սկսեր էին երկուական, իրարու հաւել գուրս ելլել, խումբերու բաժնուած :

Յառաջապահ, յետսապահ եւ կարգապահ խումբեր նշանակուած էին : Առաջքէն կը քալէր Անդրանիկ՝ փոքրիկ խումբով մը : Կոնակի պաշտպանութիւնը վստահ տւած էր Կորիւնի խումբին. իսկ Փէորգի խմբակը պիտի հսկէր փախստականներու կարգապահ յառաջացման : Բոլորը հագեր էին վանքի տիրացուական սպիտակ շապիկներ՝ հեռուէն եթէ նշմարուէին իսկ, շփոթուելու համար ձիւնին հետ, որ թանձր խաւով ծածկեր էր շրջակայքը :

Լուսին չկար բարեբախտաբար. բայց ձմեռնային զիշերը մանաւանդ բաց վայրերուն մէջ կը ստանայ պատար պայծառութիւն մը որ կրնայ սուր ու վարժ աչքերուն մասնել ուրուային շարժումները :

Ու հայդուկները անձայն, անշուկ, միշտ պատրաստ

գրոհելու եթէ յայտնուէին, յառաջացեր էին կծկտամ, երբեմն սողալով ձիւնին վրայ, յաջողեր էին անմնաս բայց ոչ անվտանգ կտրել շղթան:

Պաշարողներու առաջին դժի պահակը որ ցուրտէն ամ քամ ըլլալու էր, նշմարեր էր փախստականները ու փորձեր էր կեցնել զանոնք: Բայց վախէն, լեզուն բրունուեր էր որ ձայն չէր հաներ երբ հասկցեր էր թէ հայգուկներն են որ կը փախին:

Կարգամբուլթեան համաձայն, յառաջապահները վերջին գիծը անցնելէ յետոյ, պիտի սպասէին յետսապահներուն: Սակայն Անդրանիկ չէր կրցած լուրը ստանալ: Վերջին մարդը երբ անվտանգ կտրեր էր թշնամի գիծը, Գէորգ մէկ քանի հոգիով Յրօնքցի Մուրաարը զրկեր էր Անդրանիկը գանելու եւ լուրը հաղորդելու. բայց այդ պահուն թանձր մշուշ մը սկսած էր նստիլ ու թուրքերը գգացած ըլլալով հայգուկներու փախուստը, բունն կրակ մը կը տեղացնէին մութին մէջ:

Անդրանիկի խումբը պահ մը սպասելէ յետոյ, երբ կրակը սկսեր էր, ենթադրելով որ տղաքը ամբողջ ազատած կ'ըլլան, անցեր էր թուրքերու կռուակը ու ատեն մը կրակելէ վերջ, ուղղուեր էր նախապէս նշանակուած հաւաքավայրը, որ գոմ մըն էր:

Թուրքերու կրակին, մութին ու մշուշին եւ վիշոզ սաստիկ բուքին պատճառով, փախող խումբերու միջեւ կապը կտրուեր էր: Բայց երբ հաւաքուեր էին, նշմարեր էին որ Յրօնքցի Մուրաար իր մէկ քանի ընկերներով, կը բացակայի: Բայց գիտէին թէ անոնք ալ ազատուած են:

Կոխը տեւեր էր 22 օրուան շափ: Կամաւոր պաշարեալներուն մէջ, որոնց թիւը 55 - 60-ի կը հասնէր, կային Գէորգ Չավուշը, Կայծակ Վաղարշակը, Կարիւնը,

Կասոյի Հաճին, որոնք կը կազմէին զինուորական խորհուրդը Անդրանիկի հրամանատարութեան տակ: Չինուորներուն մէջ պէտք է յիշել Յրօնքցի Մուրատը, Բերդակցի Մուրատը, Սէյսուն, Արապ Ապտուլլահը, Եահուտի Բարսեղը որ փախուստի գիշերը սպաննուեր էր արկածի մը հետեւանքով, Արլառինճցի Վարդանը, Սուրչուտը, Թարրըթօզ Մարդխար, Բերդակցի երկու եղբայրներ՝ Մխաթն ու Անարօն, եւ այլն:

Այսպէս ուրեմն, վերջացած էր Վանքի կախը, որուն սղեւորող ազգեցութիւնը սակայն հետզհետէ կը զօրանար ու կը տարածուէր ժողովուրդին մէջ: Յեղափոխական շարքերը կը ստուարանային, ժողովուրդը որ հասունցած էր արդէն լմբոստութեան գաղափարով, օրուան հացին հետ՝ կը մտածէր ինքնապաշտպանութեան միջոցներ ապահովել:

Միւս կողմէ ջանք չէր խնայուեր նման գէպքերու տուն տուող պատճառներուն շնորհ մեծ աղմուկ եւ գրողութիւն ստեղծել օտար պաշտօնական շրջանակներու մէջ եւ օտար պետութեանց մօտ: Գործի լծուած էին Փերապայժառ Ներսէս Եպսկ. Չնասյեան, կաթսլիկներու հողեւոր հովիւր, Վարդան վարդապետ եւ Փեղամ Տ. Կարապետեան, բռնութեան, հարստահարութեան, ըսպանութեան եւ այլն, փաստեր հաւաքելու ամէն գիւղէ, տեղեկագրեր պատրաստելու եւ ներկայացնելու օտար դիւանագիտական ներկայացուցիչներուն, նոր եւ աղղու միջամտութենէ մը սպասելով քիչ մը խաղաղութիւն, հանդարտ ապրելու եւ աշխատելու տարրական սպասութիւն մը:

Անոնց կ'օգնէր շրջանի մարմինը որ այն տան կը բողկանար Մխիթար Շէխիկեանէ, Յարութիւն Մխի -

Թարեանէ , Հաժրանցի Ասոյէ , Մոկուենքցի Ղազարէն եւ
Դաւիթէն , Սուլալի առիւծը Սերսբէն՝ որ Առաքելոց
վանքի կուռի օրերուն կը բացակայէր , Հրայրի հետ Վան
մեկնած ըլլալով , Պուլոյեան Մկրտիչէ , եւ այլն :

Գիւղերու մէջ , այդ նպատակով ստեղծուած էին
մարմինները : Յոյց տալու համար շարժումն ու ոգեւո-
րութիւնը , յիշենք մէկ քանին գիւղերու կարգով՝ զըլ-
խաւորները :

Յաժրանի մէջ՝ Հայկ եւ Արամ Տէր Վարդանեան եր-
կու եղբայրները . Յունանի մէջ Մ . Դաւիթեան , Ղազար
եւ Տիկին Չմօն . Նորչէնի մէջ՝ Պուլանուիի եւ Մանազ-
կերտի կարիճ ահաբեկիչներէն Մուսօն , Տիկին Կաքաւ ,
Սոզոմօն Մուրատեան , Գրայիր Մխիթար , — Օղուն
գիւղի մէջ՝ Միքայէլ եւ Կարապետ Փիլիպպոսեան , Օ-
հան Վոլայեան եւ Միքայէլ Սամբէեան . Յաւինճի մէջ
Յարեթ Մարգարեան , Մկրտիչ Խաչիկեան , Գասպար Ա-
նոյեան , — Յարնայ գիւղին մէջ՝ Ռսկան , եւ Գաղիկ
Տիգրան Արամեան , — Աւայ գիւղին մէջ՝ Սաղօն , Գէօրգ
Շիւթեան , Բորոյեան Ղազար , Տիկին Մայրօ , որ վանքի
պաշարման օրերուն՝ Սուրհանդակի գեր կատարեր էր
առնական քաջութեամբ եւ ամէն վտանգ արհամարհե-
լով , — Հաւատորիկի մէջ Ռատա Կարապետ եւ Քեաթիպ
Մովսէսն ու Միօն , — Բերդակի մէջ , Մուրատ Անտրօն ,
իր կինը եւ քոյրը Նեկեարը , — Ագիգունանի մէջ՝ Գաս-
պար , Մանուկ եւ տարէց օրիորդ մը՝ Լուսիկը , — Մըկ-
րագոմի մէջ՝ Քեաթիպ Օհաննէս , Յովսէփ վարդապետ ,
— Յրօնքի մէջ՝ Տէր Յովհաննէս , Յովսէփ վարդապետ ,
Օրիորդ Շուշան , Սլօ Միսակ , Մանուշակի Խաչիկ եւ
Մուրատ Պետրոսեան , — Ալիճանի մէջ՝ Դաթիկ Մխի-

Թար եւ Յարսեղ երկու եղբայրներ, — Արտօնքի մէջ՝
Տէր Մուշեղ :

Եւ դեռ այնքան ուրիշներ՝ բոլոր գիւղերուն մէջ, ուր
ունց անունները կը վրիպին յիշողութենէս եւ որոնց
մէջ, ինչպէս միշտ, իր տենդոտ եւ արթուն գործունէութեամբ
դարձեալ կը յայտնուէր Ս. Յովհաննու վանքին
դպրոցին տեսուչ Ղուկաս վարժապետը :

Մինչ ժողովուրդին մէջ այս աշխատութիւնները առաջ
կը տարուէին, ուրիշ մտահոգութիւններով կը տանջուէր
Անդրանիկ որ իր խումբը հաւաքեր էր Կելիէկիւզանի
մէջ եւ ուր, ես ու ընկերներս դացեր էինք իրեն
միանալու :

Ոչ սնունդի առատութիւն կար, որ բոլոր խումբը
կարենար պահել, ոչ ալ բնակարանի գիւրութիւն՝ ճրմ-
րան այդ օրերուն :

Մանաւանդ որ խումբը հետզհետէ կը ստուարանար՝
նոր փախստականներով՝ որոնք կառավարութենէն հալածուած՝
իրենց շունչը կ'առնէին Կելիէկիւզան :

Ու կացութեան դարձան մը դտնելու համար, Անդրանիկ
խորհրդակցութիւններ կը կատարէր Գէորգին, Կոտոյի
Հաճիին, Կորիւնին, Կայծակին, Միքայէլ իշխանին
հետ :

Այս կացութիւնը մեղմացնելու համար, որոշուել էր
իրենց տուները վերադարձնել անոնք որ նսւազ վտանգուած
էին եւ զինեալ խումբերուն տեւականօրէն չէին
մասնակցեր :

Իսկ մնացեալները երեք խումբի բաժնուած զանազան
աշխատանքներ պիտի կատարէին : Երկու խումբ նըշանակուել էին
Դաշտ իջնալով ցորեն, հազուա եւ այլն հաւաքելու եւ Սասուն
փոխադրելու : Իսկ երրորդ խումբ-

բը՝ Յուլիա - Արամի առաջնորդութեամբ, պիտի անցնէր Ախլաթ, պիտի ջանար կապ պահպանել Հրայրի հետ, որուն վերադարձը Վանէն կ'ուշանար եւ զբաղէր զէնքի փոխադրութեամբ:

Ես կը գտնուէի երրորդ խումբին մէջ: Իսկ Գաշա գացող խումբերու առաջնորդներն էին Գէորգ եւ Կայծակ - Վաղարշակ:

Այս օրերուն պատահեցաւ Նոր Շէնի կռիւը, զոր ահա թէ ինչպէս կը ներկայացնէ տեղանամուս մը՝ Յ. Զընտայեան:

1901 Գեղարշակ 19:

Գէորգ Զաւուշ մէկ քանի զինեալ ընկերներով Նորշէն եկած էր կապմակերպչական դործով: Իրեն հետ էին Առիւծ Վաղարշակ, Սէյառ Պողոս, Անտրո, Միտաբ, Միման, Վարդան, Աստուր, Պօղէ:

Առիւծ Վաղարշակ, Սէյառ Պողոս, Գէորգ Զաւուշի հետ իջած էին Սահակ Աբրոյեանի տունը: Միւսները բաժնուած էին դանադան տուներ:

Հազիւ երկու օր էր որ հայրուկները գիւղը կը դանուէին, երբ Սահակ Աբրոյեան, հեւասպառ տուն կը վազէր՝ հաղորդելու Գէորգին թէ խումբ մը ձիաւոր զինուորներ զէպի գիւղ կ'արշաւեն:

Իրօք, Գէորգի եւ իր փոքրիկ խումբին ներկայու թիւնը գիւղին մէջ՝ մատնուած էր Բենիկ Անտրիկեան կոչուած վատի մը կողմէ:

Լուրէն քանի մը վայրկեան վերջ, Հիւսէյին էֆէնտիի հրամանատարութեամբ հարիւր ձիաւորներ գիւղ կը մտնէին Սոխոյամի կողմէն, օգտուելով այդ ճամբան եզերող ծառերէն, որոնք մինչեւ գիւղին մուտքը՝ անտեսանելի կը դարձնէին յառաջացող խումբը:

Բարեբախտաբար, Հիւսէյին չէր կրցած հասկնալ թէ հայդուկները ո՞ր տուները բաժնուած են եւ իր ձիաւորները քշեց զէպի գիւղին հրապարակը, անցնելով Արարոյեանի տան առջեւէն, ուր կուսելու կապմ ու պատարաստ, փամփոշատեղաները կապած ու հրացանները լեցուցած կը սպասէին Գէորգ, Սէյտո Պօղոս, Ասիւծ Վարդաշահ :

Այն պահուն որ ձիաւորները կ'անցնէին, Սէյտո ուղեց կրակել : Սակայն տեղի տուաւ Գէորգի կտրուկ արդելքին. որովհետեւ այդ անխոհեմ հարուածով, Սէյտո ոչ միայն կը մտանէր երեք հայդուկներուն թաքստոցը, այլ եւ կը վտանդէր տունը ուր ապաստանած էին :

Երբ ձիաւորները բաւական հեռացան, հայդուկները դուրս նետուեցան, դիրք բռնելու, մաս մը ժողովուրդ ալ քաշելով իրենց ետեւէն :

Գէորգ համբուրեց իր զէնքը երկիւզած ու թեամբ՝ ըսելով, — Քեզ տեսնեմ Արարո՛, չդաւաճանես ինձի :

Այդպէս կը կոչէր իր զէնքը՝ ի յիշատակ Արարոյի որուն հանդէպ եղբայրական տաք սէր մը կենդանի մընայեւ էր իր սրտին մէջ :

Այդ պահուն Վարի թագէն զայդ մը հրացան որտայ : Երկու եղբայրներ՝ Բերդակ գիւղացի Անտրօն ու Միսաք, դուրս ելեր էին այն տունէն ուր կը գտնուէին, եւ դիրք բռնած, նախայարձակ կ'ըլլային : Տան մէջ, իրենց հետ էր նաեւ Սիմօնը, որ հիւանդութեան պատճառով, չէր կրնար կսուին մասնակցիլ : Հիւսէյին՝ իր ձիաւորներուն ցտաղքն ինկած, կը գրոհէր պօսալով.

— Յանձնուեցէ՛ք, յանձնուեցէ՛ք :

Հայդուկներուն պատասխանը կրակն էր : Արդէն մէկ երկու ձիաւորներու անկումը, վարանումի մասնակցիլ

սկսեր էր միւսները, որ պահ մը սախազուեր էին կանգ
առնել, երկու քաջարի եղբայրներու անխնայ կրակին
առջեւ :

Այդ պահուն, զօրքին ետեւէն արդէն հասեր ու գիրք
բռներ էին Գէորգ, Սէյտօ եւ Վաղարշակ : Զօրքը մնացեր
էր երկու կրակի մէջտեղ, որ թէեւ տկար, — ամէնը հինգ
զէնք հարիւրի դէմ, — բայց ամէն մէկ հարուածի դոհեր
կը խլէր թշնամ ինն խիտ շարքերէն, երբ հրամանատարը
կանակէն զարնուեցաւ : Փամփուշտ մը ծակած էր սիր-
տը, վայրկենական սպաննելով : Մանր վիրաւորուեր էր
նաեւ սպայ մը : Անդլուխ մնացած զօրքը շփոթի մատ-
նուեցաւ : Եթէ ճամբայ դանէր, անշուշտ պիտի նախընտ-
րէր փախուստ տալ : Բայց ճամբաները բռնուած ու փակ-
ուած էին : Երկու կրակի մէջ մնացած, նախընտրեց ու-
քեմն լքել ձիերը իրենց վիճակին, ապաստանիլ փրփրած
գոմ մը եւ անկից կրակել օդին :

Այդ պահուն լուր եկաւ թէ շրջակայ Քիւրտերը խմ-
բովին կը քայեն գիւղին վրայ : Անոնց ճամբուն վրայ կը
դանուէին երեք հայգուկներ՝ Վարդանը, Պօզէն եւ Աս-
տուրը, որոնք տանիքները բարձրացած, կը կրակէին
Քիւրտերուն վրայ ու կ'արդիլէին անոնց գիւղ մուտքը :
Երեք զէնք կը յաջողէին իրենց տեղը դամել աւարառու-
ներու գինեալ խուժանը :

Հակառակ սպասնացող փառնոյին, մարտական մեծ
ոգեւորութիւն կը տիրէր գիւղացիներուն մէջ, որոնք
մերկացուցեր էին ձիերը, որպէս զի զօրքը չկարենայ
դանսնք գործածել :

Երբ թուրք զօրքը գոմը ապաստանեցաւ, Գէորգի,
Սէյտոյի եւ Վաղարշակի զէնքերը անպէտ դարձան : Եր-
կու անրաժան եղբայրները Անտրօն ու Մխաթը արդէն

կը բաւէին զօրքը բանասարկուած պահելու գամին մէջ :

Բայց ահա նոր լուր մը : Մուշէն թրքական նոր ուժեր կը վազեն Հիւսէյինի խումբին օգնութեան : Միւս կողմէն՝ գիւղը պաշարուած է : Գէորգ, Սէյաօ եւ Վարչակ ստիպուեցան այս անգամ անոնց դէմ փութալ : Հարիւրաւոր երիտասարդներ կը հետեւէին անոնց, թէեւ անդէն, անսաստելով Գէորգի հրահանգներուն որ չհետեւին իրենց : Այնքա՞ն մեծ էր ոգեւորութիւնը : Ու գիւղին շուները, կարծես զգալով թշնամիին ներկայութիւնը, վահմակ – վահմակ, սոնալով կը վազէին սպանագին՝ իբրեւ հայդուկներուն յառաջապահները :

Կացութիւնը ծանր էր : Կռիւր երթալով կը սասաղանար, մանաւանդ որ թուրքերը անընդհատ օգնականութիւն կը ստանային եւ արդէն կանոնաւոր պաշարման ենթարկեր էին գիւղը, ուր տակաւին չէին համարձակեր մտնել, վախնալով հայդուկներու կորովի գիմաղբու – թենէն :

Մինակ Գէորգի խմբակին գիմացը, արդէն մօտ 2000 զինուորներ կային, առանց հաշուելու աւարաւու Քիւրտերը :

Գէորգի օգնութեան հասան Վարդան, Աստուր եւ Պօզէն, որ մինչեւ այն ատեն կռուեր էին քիւրտ խումբանին դէմ : Կացութիւնը կը ստիպէր զիրենք լքել իրենց առաջին գիրքը անոր պաշտպանութիւնն ալ յանձնելով երկու քաջարի եղբայրներուն, Անարային ու Միսաքին, որոնք մինչեւ գիշեր, յաջողեցան անշարժութեան մատնել գոմի ձիաւորները եւ Քիւրտերը :

Մութը կսխելուն, կռիւր դադրեցաւ : Սակայն, հայդուկներուն համար, անկարելի էր այլ եւս գիւղ մընալ : Ստիպուեցան հեռանալ դէպի Յայփառինճ, Սահակ

Աբրոյեանի եւ ուրիշ մէկ քանի երիտասարդներու հետ :

Ու այսպէս իր յանդուզն պաշտպաններէն զրկուած գիւղը կը յանձնուէր բարբարոսներու գիւային քմահաճոյքին : Առտուան դէմ , ջիւրտ պէյեր իրենց հետեւորդներով , խաբէութեամբ կը մտնէին գիւղ , իբր բարեկամ կը զարնէին տեղւոյն երեւելիներէն Ջնտոյեան Վարդանի դուռը , ու տեղն ի տեղօք կը սպաննէին զայն :

Ազդանշանը տրուած էր կողոպուտի , ջարդի , բռնաբարումներու , ամէն տեսակ խժոժութեանց : Ջնտոյեան Վարդանը սպաննելէ յետոյ , լուր կը ղըկէին հազարապետին թէ Սերոբ փաշայի ընկերներէն մէկը ըսպաննած են :

Լոյսը բացուելուն , զօրքն ու խուժանը՝ վայրենի ախորժակներով գրգռուած , մտաւ գիւղ : Չարհուրելի էր տեսարանը : Չինեալ այս հազարաւոր բարբարոսներու ամբոխը , ազատօրէն յանձնուած իր կրքին , կը կոտորէր անպաշտպան ժողովուրդին տան դռները , կը խուժէր ներս , կը կողոպտէր , կը հարուածէր ու կը բռնաբարէր : Կը բաւէ յիշել թէ վաթսուն տարու կին մը մեռաւ բռնաբարումէն :

Զօրքը մտեր էր Ջնտոյեանի տունը , ուր ամէն ինչ կոտորուելէ յետոյ , պարան մը կապեր էր սպանեալին վիզէն ու քաշքշելով կ'ուզէր տանիլ Հիւսէյինի դիակին քով , որ սայլի մը վրայ դրուած էր :

Իրենց մտադրութիւնն էր , այդ կերպով մինչեւ Մուշ տանիլ , յաղթական մուտք մը գործելու համար հոն : Սակայն զօրքին այդ անուպայ ընթացքը այնքան գրգռեր էր ժողովուրդը որ կիներ ու պատանիներ հաւաքուած , սպանեալին կնոջն ու զաւկրներուն հետ , յար-

ճակեցան զինուորներուն վրայ ու յաջողեցան զիակը
խլել անոնց ձեռքէն :

Նորչէնի կռուին այս վերջին դրուագին պահուն էր
որ Ալայի պէյը իր զօրքով զիւզը կը կոխէր, Ջնտոյեան
գերապայծառի խիստ դիմումին վրայ, բնակչութիւնը
պաշտպանելու համար :

Եւ իրօք, կարգը շուտով վերահաստատուեցաւ . . .
երբ արդէն վայրենիներու գաղանային ախորժակները
գոհացեր էին :

Կելիէկիւզանէն ճամբայ ելանք ցուրտ օդով մը, դէ-
պի Բեթար երթալու համար : Դժուար էր քալել : Յուրտ,
կանոնաւոր ճամբայ չկար : Եւ արահետները ծածկուած
էին կիսասառ ցեխով : Կը պատահէր յաճախ որ ոտքս կը
խրէր ցեխին մէջ՝ մինչեւ ծունկս : Ամէն մէկ քայլափո-
խի յատուկ ուշադրութիւն պէտք էր դարձնել, ինչ որ ա-
ւելի կը յոգնեցնէր : Տաք զգեստ ալ չունէինք : Կը կրէինք
թեթեւ շալվարներ՝ որոնց վրայ նստած խոնաւութիւնը
կը սառէր եւ կը կարծրացնէր շալվարները՝ որոնք տախ-
տակի պէս կը շփուէին մեր սրունքներուն եւ աւելի կը
նեղէին :

Ճամբու ընթացքին, առանց նշմարելու կոխեցի սա-
ռոյցի վրայ՝ որուն տակը փոքր փոս մը կայ եղեր ցե-
խոտ ջուրով լեցուն : Մինչեւ ծունկս ինկայ մէջը : Սաս-
տիկ ցաւ զգացի : Ինձ թուեցաւ թէ ծունկս խախտեցաւ :
Բայց ձայն չհանեցի. բան չյայտնեցի ընկերներուս, կը
վախնայի որ զիս ետ դրկելու կարգադրութիւններ կ'ը-
նեն ու ցաւս զսպելով կը շարունակէի քալել. բայց երբ
Բեթարի ճամբուն վրայ՝ Յափնայ գիւղի մօտերը հա-
սանք, տեսայ որ ոտքս կապուտցած եւ ուռած էր : Այլ
եւս մէկ քայլ նետել անկարելի էր : Ստիպուած՝ ընկեր-

ներս զիս ձգեցին Ջրիկ գիւղի այգետաններէն մէկուն
հնձանին մէջ :

Ձէնքերը որ կը կրէի առին ու մեկնեցան առանց
յայտնելու թէ ո՞ւր : Բայց խոստացան շուտով վերա-
դառնալ եւ զիս տեղափոխել : Յաջորդ օրը, տեղական ե-
րեք ընկերներ եկան գտան զիս : Ձգեստ եւ այլն բերած
էին ինձ համար : Թեւերս մտնելով, երբեմն շալակելով,
զիս տարին Յափնայ՝ ուր խումբը իջեւանած էր : Վի-
ճակս աւելի ծանրացեր էր : Բնականաբար՝ խումբը չէր
կրնար ինձի սպասել : Որոշուեցաւ ուրեմն, որ ան շա-
րունակէ իր ճամբան. իսկ զիս յանձնեցին տեղական ըն-
կերներու խնամքին, քովս ձգելով իրենցմէ մէկը՝ Մըկ-
րօն :

Քանի մը օր հող մնալէ յետոյ, փոխադրուեցայ
Բզլից գիւղը : Հող զիս տեղաւորեցին այրի կնոջ մը
տունը, ուր պիտի խնամուէի իբր թէ :

Կինը քանի մը այժ կը պահէր, որոնք ընտանիքին
անդամներն ըլլային իբր թէ, սենեակէն դուրս չէին ել-
լեր : Օր մը, թոնիրին քով երկնցած կը հանգստանայի,
երբ այժերէն մէկը ցատկուտելով մօտեցաւ քովս ու նեւ-
ուեցաւ հիւանդ ոտքիս վրայ : Սուր կանչ մը արձակեցի
եւ նուազած մնացի : Կեանքիս մէջ՝ չեմ յիշեր երբեք
այդքան անտանելի ցաւ զգացած ըլլալ ուրիշ որ եւ է պա-
րագայի : Այժին կճղակները պայթեցուցեր էին ոտքիս
ուռեցքը : Տանտիրուհին՝ ջանաց իր գիտցած միջոցնե-
րով դարմանել վէրքս ու մեղմացնել ցաւը : Սոխ մը
տաքցուց, դրաւ վրան : Անօգուտ : Քանի օրերը կ'անց-
նէին, ձանձրոյթն ու նեղսրտութիւնն ալ, ցաւէն զատ,
կը ճնշէին վրաս : Լուր ղրկեցի քաղաք, եղբօրս որ դե-
ղեր առնէ եւ գայ զիս տեսնելու :

Քանի մը օր վերջ, եկաւ եղբայրս : Իր բերած դե-

ղերը օգուտ չտուին սակայն : Այն ատեն , տեղական ընկերները խորհուրդ տուին որ փոխադրուիմ Սուլուխ , ուր երեցկին մը կայ եղեր՝ այս տեսակ դարմաններու վարժութիւն ունեցող :

Մանաւանդ թէ վախ կար որ ոստիկանները գան զիս այդ գիւղը փնտուելու :

Իրօք , եղբայրս պատմեր էր թէ ոստիկանները ամէն տեղ զիս կը փնտուեն . եւ իբր Սմբատ ձերբակալեր են Մշեցի Դաւիթ Կարապետեանը , որ դատաւորին ծանօթ ըլլալով , կրցեր է օձիքը աղատել դիւրութեամբ :

Սակայն , Սուլուխ փոխադրութիւնս ալ գործ էր : Չէի կրնար քալել : Դազադի պէս բան մը շինեցին . տեղաւորեցին զիս մէջը ու քանի մը ընկերներ ուսամբարձ , զիս տարին Սուլուխ , յեղափոխական կնոջ մը Նշէին տունը , համաձայն տեղական կոմիտէի կարգադրութեան : Հող պիտի մնայի մինչեւ ոտքիս դարմանումը :

Ու վերջապէս եկաւ երէցկինը որ թորթի տակի խոտէն խիւս մը շինեց , սանդի մէջ նախ լաւ մը ծեծելէ եւ կաթով երկար բարակ եռացնելէ յետոյ . . . տաք տաք դրաւ ոտքիս վրայ :

Ցաւը սկսաւ մեղմանալ . աչքս քուն կը մտնէր . վերքս կը հասուննար եւ թարախ կը հաւաքուէր :

Այս դարմանը կրկնուեցաւ քանի մը օր , Նշէի հողածութեամբ :

Եւ ապա , երէցկինը կրկին եկաւ . այս անգամ քանի մը շամփուր կարմրցուց կրակին մէջ ու վերքս տաղեց քանի մը տեղէ :

Այլ եւս հանգիստ կը զգայի ինքզինքս . յոյս ունէի մօտ ատենէն ոտքի ելլել : Բայց բախտը ուրիշ կերպ տընօրիներ էր :

Օր մըն ալ յանկարծ լուր բերին թէ գիւղը պաշարուած է հարիւրի շափ գինուորներով, որոնց հրամանատարը՝ հաւաստելով որ ստոյգ գիտեն թէ ես այդ գիւղը կը գտնուիմ, գիւղապետէն պահանջեր էր զիս յանձնել:

Ի հարկէ, այդ տեսակ պարագաներու մէջ, հաւատարիմ գիւղացիներուն համար, կարգախօսը յամառութեամբն էր, միւս կողմէ զգուշացնելով վտանգեալը, ու, որքան կարելի է, երկար զբաղեցնելով գինուորները:

Այդպէս ալ ըրեր էր գիւղապետը, մինչեւ որ ընկերներ եկան զիս գտան ու գրեթէ առանց շունչ առնել տարու, քաշկռտելով զիս թոցուցին մինչեւ Մուրաս Չայի եզերքը, ցամքած ջրհորի մը քով, որ պահեստի գէնքերու մթերանոց կը ծառայէր ի հարկին:

Ու զիս իջեցուցին հող զգուշութեամբ, ու կտարածութեամբ երկու հին գէնք ալ, իբր պաշտպանութեան վերջին միջոց, քանի մը փամփուշտով՝ քովս ձգելէ յետոյ հեռացան գացին: Հող՝ մութին, ցուրտին ու խոնաւութեան մէջ պիտի մնայի, մինչեւ որ գային զիս փրկէին գուրէն:

Զինուորները տուն չէին ձգած առանց խուզարկութեան. պրպտեր էին գոմերն անգամ ու պարապ սնտուկներու մէջը, մինչեւ որ համոզուելով թէ Մմբատ անունով մէկը չկայ այդտեղ, հեռացեր էին, բաւական չեղելէ յետոյ գիւղացիները:

Հինգ - վեց ժամ մը անցաւ այդպէս՝ հորին մէջ գրեթէ սովահար, սասելու վրայ էի երբ ընկերները եկան զիս լոյս աշխարհ հանելու:

Մուլուխ վերադառնալ՝ այլ եւս վտանգաւոր էր:

Ընկերները որոշեր էին զիս հավրան փոխադրել եւ

ատոր համար ալ ձի մը բերեր էին միասին :

Հավրանի մէջ մնացի մէկ շաբաթի չափ, ընկերակցութեամբ Մկրտչի, որ Յուլակի կարգադրութեամբ՝ քովս մնացեր էր: Ոտքիս ցաւը թեթեւցած ըլլալով, կրնայի քիչ մը զբաղիլ եւ ժամանակս հաճելի կերպով կ'անցընէի զէնքերու մաքրութեամբ ու նորոգութեամբ, երբ օր մը նորէն, լուրը բերին թէ ոստիկաններու ջոկատ մը գիւղը կոխած է:

Մինչեւ վերջին շունչ դիմադրելէն ու մեռնելէն զատ ուրիշ միջոց չէի գտներ, երբ տեղական ընկերներն եկան եւ յայտնեցին առանց կռուի ալ, զիս փրկելու միջոցը ապահոված են իրենք. իրենց կարծիքով՝ պէտք էր կռուէն խուսափիլ, գիւղը չվտանգելու համար: Ինծի կը մնար ենթարկուիլ եւ յանձնուիլ իրենց տրամադրութեան:

Զիս առաջնորդեցին գիւղէն դուրս Յաղջանի ջրաղացը եւ խստիւ յանձնարարեցին որ պահուրտիմ անոր շողտունին մէջ, որուն քսուելով կ'անցնէր ջուրը:

Ուրիշ ճար չկար: Ո՛չ միայն պարտաւոր էի փրկել իմ թանկագին կեանքս, այլ եւ գիւղը ազատել խժոժութիւններէ որոնց կրնար ենթարկուիլ իմ պատճառովս:

Եւ խաչ մը հանելով եւ սուրբերուն ու սատանաներուն գիտցած հայհոյութիւններս ուղղելով, այդ ցուրտին, կծկտեցայ շողտունին մէջ:

Որքա՞ն մնացի այդ դիրքին մէջ: Զեմ յիշեր: Գիտեմ թէ չխեղդուեցայ ջուրէն, որ մերթ ընդ մերթ կ'ողողէր զիս ու կռնակիս վրայ մահուան դողեր պտտցնելով, կը սահէր քրքջալէն: Պարզապէս, հազուած վիճակի մէջ՝ հալող սառի լողանք մը առեր էի, երբ ընկերներս եկան աւետելու թէ փրկութեան ժամը հնչած է:

Բայց պէտք եղաւ որ 4 - 5 հոգի վրաս իյնան ու թեւէս
 ոտքէս քաշկուտելով զիս բարձրացնեն ու տանին: Հրաշ-
 քով մը միայն այդ օրը ողջ էի մնացեր:

Այս տանջանքներուն հանդէպ համբերատար տո-
 կունութեանս վարձատրութիւնը գտայ լուրով մը, որ
 զիս փրկութեան աւետիսի մը պէս ուրախացուց:

Ձէնքի փոխադրութեան համար Ախլաթ գացող ըն-
 կերներս վերադարձեր էին եւ ապաստաներ էին Մատին
 Վանք, ուր պիտի երթայի իրենց միանալու: Իրենց հետ
 բերած էին զէնք եւ ռազմանիւթ: Անոնք ձի մը տրամա-
 դրեցին ինձի որպէս զի կարենամ մինչեւ Կուրավու գիւ-
 ղը իրենց հետեւիլ: Հոգ սակայն, չկրցանք երկար մնալ:
 Գիւղը վտանգուած էր եւ ոստիկաններու ու զինուոր-
 ներու ոտքի կոխան դարձած, ինչպէս նաեւ Սուլուխը:
 Նախընտրեցինք ուրեմն անցնիլ Ալիճան, ուր արդէն մե-
 կնած էր Կուրավայ Քեռին եւ ուր արդէն կը գանուէր
 Ախլաթի զինատար խումբին մէկ մասը:

Մէկ քանի օրէ ի վեր, Ալիճան կը հանգստանայինք
 երբ յանկարծ հասաւ Ս. Կարապետի վանահայր Վար-
 դան վարդապետը: Վարդապետին անակնկալ այցելու-
 թիւնը իր խոր պատճառը չէր կրնար չունենալ:

Իրօք ան, բերեր էր կարեւոր լուրեր, որոնք շուտա-
 փոյթ կարգադրութիւն կը պահանջէին:

Այս յեղափոխական ու քաջարի վանականը որ ի
 հարկին, օձը ծակէն դուրս քաշելու չափ ճարպիկ լեզու
 ունէր, կառավարական կարեւոր գաղտնիքներ կորզելու
 ձեւը գտած էր: Իրեն կապած էր Ռահօ եւ Հախավերտի ա-
 նունով երկու թուրք լրտեսներ, որոնք կառավարական
 բոլոր շրջանակներուն մէջ, ազատ ելեւմուտք ունէին եւ

չկար որ եւ է գաղտնի որոշում որ չհաղորդէին վարդապետին :

Վարդան վարդապետ այդ օրերուն , Ձնտոյեան Գերապայծառի եւ Գեղամ Տէր – Կարապետեանի հետ լրծուած էր կառավարութեան դէմ բողոք հանրագրելու փափուկ աշխատանքին :

Չեոնարկը որքան ալ զգուշութեամբ ու խոհեմու – թեամբ առաջ տարուէր , կարելի չէր որ ծածկուած մնար այդքան տարածուն շրջանի մը մէջ : Կառավարութիւնը հանրագրութեան մէջ կը տեսնէր օտար միջամտութեան մը սպառնալիքը եւ ամէն կերպով կը ջանար խափանել զայն : Սակայն , ուղեւորվ դիմել ամենէն կտրուկ միջոցին , որոշեր էր սպանել տալ Վարդան վարդապետն ու Գերապայծառ Ձնտոյեանը :

Այդ օրերուն , Տէր Վարդան Մուշ իջած ըլլալով , թուրք երկու լրտեսները առիթը գտեր էին իրեն յայտնելու արուած որոշումը : Ըսեր էին նաեւ թէ որոշումը գործադրող թուրքերը՝ Իսմայիլ Չափուշի գլխաւորութեամբ , դարան մտած՝ իրեն պիտի սպասեն Արախօնք գիւղին մօտերը , որ կը գտնուի վանք վերադարձի ամենէն կարճ եւ վարդապետին սովորական ճամբուն վրայ :

Իսկ վարդապետը որ անդէն պտտելու սովորութիւնը չունէր , խոհեմութիւն սեպեր էր պարզապէս ճամբան փոխել ու Ալիճան հանդիպելէ վերջ վանք վերադառնալ :

Բայց Ալիճան իր այցելութիւնը ուրիշ նպատակ ունէր :

Թրքական լրտեսները յայտներ էին նաեւ թէ կառավարութիւնը որոշած է միեւնոյն ատեն խիստ հակողութեան տակ առնել գիւղերը եւ սաստկացնել բռնութիւնը .

եւ այդ նպատակով ալ, հրահանգ տուած էր Մանագիկեր-
տի շէրքէզ Ալալի պէյին իր զօրքերով շարժելու դէպի
Մուշ, եւ ճամբուն վրայ մանրակրկիտ խուզարկութեան
ենթարկելու բոլոր գիւղերը :

Այս լուրը տալով մէկտեղ, վարդապետը եկեր էր
թելադրելու որ ամէն բանէ առաջ, զէնքերը պահելու
մասին կարգադրութիւն տեղի ունենայ :

Իրօք, վտանգը ակներեւ էր, ինչպէս նաեւ կառավա-
րութեան մտադրութիւնը բացայայտ :

Չէնք եւ հայդուկ փնտռելու պատրուակին տակ,
թրքական զօրքը ոչ թէ կանոնաւոր եւ պարկեշտ խու-
զարկութեան պիտի ենթարկէր հայկական գիւղերը, այլ
մանաւանդ՝ խոշտանգումներով, կողոպուտով եւ այլ
բռնութիւններով, պիտի ահաբեկէր բնակչութիւնը : Ա-
ռաքելոցի պարտութեան վրէժը պիտի լուծէր այդ կեր-
պով :

Ու շատ շանցած, երբ արդէն, զէնք ու ռազմանիւթ
պահելու հրահանգ ղրկուեր էր ամէն ուղղութեամբ,
լսուեցաւ որ խուզարկութիւններն սկսեր են գիւղերուն
մէջ :

ԱՍՈՅԻ ՏԱՆ ՈՒԽՏԸ

Մանագիկերտի ալալին հրամանատարը շէրքէզ Իզ-
դէթ պէյ 100 ձիաւորով հասեր էր Մուշ, անհրաժեշտ հը-
րահանգները ստանալու : Իբր ծանօթ գիւղերուն եւ վայ-
րին, անոր խումբին կցեր էին նաեւ տեղացի հարիւր ոս-
տիկաններ : Որմէ յետոյ, խուզարկութիւններն սկսեր
էին Չխուրի շրջանէն, այն նկատուածով որ փոխադրու-
թեան կեդրոնին՝ Ախլաթի մօտ ըլլալուն, ամէնէն աւելի
կրնար զէնք ու ռազմանիւթ մթերած ըլլալ :

Եւ այսպէս ամէն օր մէկ - երկու գիւղ կը խուզար-

կուէր, անօրինակ վայրագութիւններու եւ ամէն տեսակ խոչտանգումներու ենթարկելով բնակչութիւնը:

Իրենց բարբարոսութեամբ ամենէն աւելի ուշագրութիւն կը գրաւէին Իզզէթ պէյի քեռորդին՝ հարիւրապետ Մուրատ եւ Արապ Ապտուլլահ չափուշ, որոնք իրենց հետ գիւղէ գիւղ կատուներ կը պտտցնէին: Եւ երբ գիւղի մը մէջ՝ խուզարկութիւնները որ եւ է արդիւնք չտային, կը քակէին կիներու մէջքի գօտին, անոնց սրունքներուն մէջտեղը կը դնէին մէկ - երկու կատու, որպէս զի անոնց ճանկերուն ու խածուածքներուն սարսափէն՝ կիները յայտնութիւններ ընէին:

Այդ կերպով՝ թէեւ անոնք չէին յաջողեր ձեռք դնել զէնքի պահեստներուն վրայ, բայց իբր կասկածելի կը ձերբակալէին կարգ մը երիտասարդներ:

Դրմերտի եւ Խարսի մէջ ուր բաւական քանակութեամբ նոր զէնքերու մթերք մը կար, զանոնք փրկելու համար, տեղական խումբերը նախընտրեցին մէկ քանի կտոր հին զէնքեր յանձնել եւ ճամբել Ալայի պէյը:

Այսպէս, ան յաջողեցին 150 կտորի չափ հին շախմախլը, ավզալի, մանչեսթըր, այնալը հրացաններ հաւաքել զանազան գիւղերէ եւ ղրկել Մուշ, երբ իր հետեւորդներով հասաւ Յավրան:

Իզզէթ պէյի համար կ'ըսէին թէ բնաւորութեամբ վատ մարդ չէ. թուրք բռնաւոր պաշտօնէութեան սովորական անգթութիւնը չունէր ան: Ինքն իսկ գաղթական ժողովուրդի զաւակ եւ լաւ ընտանիքէ սերած ըլլալով, ժողովուրդին թշուառութեան հանդէպ կարեկցութիւն կը գրայ, կ'ըսէին. բայց հրամաններու գործադրութեան մէջ չափազանց խիստ, նոր զէմքով մը կը յայտնուէր: Քաղցրախօս, բարեղէմ ու ժպտուն անձը

չէր այլ եւս, երբ յուսախարութեան մը, կամ ընդդի-
մութեան մը կը հանդիպէր: Չայնը կը խուսուտէր, դէմ-
քը կը կծկուէր, աչքերէն կրակ կը ցայտէր ու բառերը
կը սկսէր կուլ տալ ու թոթովել զայրոյթէն, երբ մա-
նաւանդ կարծէր թէ խաղի մը հանդէպ կը գտնուի:

Ռէս Ասօ որուն տունը իջեր էր Յաւրան ժամանե-
լուն, արդէն առաջուց տեղեկութիւն քաղեր էր մարդուն
մասին, երբ լսեր էր թէ խուզարկութեանց գործը անոր
յանձնուած է:

Արտակարգ տիպար մըն էր ռէս Ասօն եւ կը յատկա-
նչէր այն դաս մը բացառիկ Հայերը որոնց նկարագրի
ամբողջիւնը սերնդական ժառանգութեան մը տուրքն է:
Հնօրեայ գերդաստանի մը վերջին շառաւիղը, Սաղմո-
սով ու աւետարանով կրթուած՝ ինչպէս իր ժամանակա-
կիցներէն շատերը, արթուն իմացականութեան մը կը
միացնէր հեռատես խորամանկութիւն մը՝ որ զինքը ան-
խոցելի կը դարձնէր, հակառակ իր շուրջ վխտացող վը-
տանգներուն:

Հարուստ հողատէր եւ մեծ առեւտրական ընդեղէ-
նի, չպիտի կրնար նախանձը չզրգուել թուրք աղաներուն
եւ կողոպուտի ու թալանի ախորժակը չսրել Քիւրտե-
րուն: Բայց բոլորը կ'ակնածէին իրմէն ու կը յարգէին
զինքը: Տակաւին չէր եղած որ թուրք մը կամ Քիւրտ
ցեղապետ մը կամ աւաղակ մը, համարձակէր վատ ակ-
նարկութիւն մը ընել իր հասցէին:

Նման պարագաներու մէջ՝ թուրքերն էին որ իր ա-
մենէն ջերմ պաշտպանները պիտի հանդիսանային:

Իր դիրքին մէջ գտնուող ուրիշ Հայ մը՝ հաւանա-
բար, կասկածի եւ վերապահութեան չըջանակի մը մէջ
պիտի խեղդուէր իբր հակայեղափոխական կամ կառա-

վարութեան մարդ : Բայց ան ո՛չ միայն կոյր վստահու-
թիւնը կը վայելէր հայդուհներուն , այլ անոնց ապաւէնն
էր ամենէն վտանգաւոր պահերուն իսկ :

Ո՞ւր էր այս մարդուն հեղինակութեան գաղտնիքը :
Ինչպէս ամէն երկնքի տակ , մանաւանդ գիւղի մէջ ,
անձնական հարստութիւնը , անշուշտ , անձին շուրջ կը
հաւաքէ ակնածանք ու մեծարանք : Բայց ոչս Ասօ , կր-
նար որ եւ է մէկէն աւելի պարծենալ իր հայրենասիրու-
թեամբ , յեղափոխական յանդգնութեամբ ու առատա-
ձեռնութեամբ : Չկար մէկը որ իր բարիքը վայելած չըլ-
լար : Տարրեր էր թուրք ու քիւրտ ազաներուն պարա-
գան : Անոնցմէ ամէն մէկը՝ իր կեանքի ընթացքին , ան-
պատճառ պէտքը ունեցած էր Ասոյի նիւթական օժան-
դակութեան :

Բայց վարպետ ու հեռատես ոչսը , մինչ ուզուածը
տալ կը ձեւացնէր ուրախութեամբ , իբր բարեկամական
տուրք , գիտէր իր շահը կրկնապէս ապահովելու եղա-
նակները : Չախէն կորսնցուցածը աջէն կը հանէր , ինչ-
պէս կ'ըսէին , ու նորէն՝ պարտատէրն էր որ երախտա-
պարտ կը մնար :

Երբ Իզդէթ պէյ իր ջոկատով Հափրան հասաւ , գիւ-
ղին զէնքերը արդէն շատոնց տեղաւորուած էին ապահով
վայրեր : Բացի իր անձնական զէնքերէն , Ասոյի ընդար-
ձակ տան մէջ պահուած էին գիւղին զէնքերէն մաս մը :
Մնացեալները ցրուած էին զանազան տուներ :

Երբ ուրեմն Իզդէթ ափ առեր էր իր դուռը , Ասօ ,
նախ վստահ որ ամենէն մանրակրկիտ խուղարկութիւնն
իսկ չպիտի կրնայ երեւա նհանել զէնքերը , եւ մանա-
ւանդ հաւատալով իր ճարպիկութեանը , փութացեր էր

պատիւներով դիմաւորելու զայն ու հրամցուցեր էր
տուն :

Եւ մինչ ինքը՝ իր երկու չափահաս զաւկըներուն
հետ՝ սպան կ'առաջնորդէր դահլիճ, ծառաները ոստի-
կան - զինուորներուն հանգիստը կ'ապահովէին ու ա-
նոնց ձիերը կը քաշէին ախոս :

Եւ անմիջապէս, ճաշի պատրաստութիւն կը հրա-
մայէր Ասօ : Իրարու ետեւէ, գիւղին երեւելիները կը
հասնէին բարի գալուստ մաղթելու Իզդէթի, որուն հող-
ներկայութիւնը հասկնալի վախով կը համակէր բո-
լորը . բայց Ասոյի անդրդուելի եւ պատկառազդու հան-
դարտութիւնը քաջութիւն կուտար իրենց :

Սօսակցութեամբ որու ընթացքին Իզդէթ ներշնչեր
էր բարեկիրթ ու քաղցրարարոյ մարդու մը տալաւորու-
թիւնը, ժամերը անցեր էին : Իրիկուն եղած էր : Ճոթ
սեղանի մը շուրջ՝ թեթեւ սրտով բոլորուեր էին ամէն-
քը . բաժակներ էին պարպեր Իզդէթի, « բարեխնամ »
կառավարութեան, Սուլթանին եւ բոլոր բռնաւորներուն
կենացը : Ասոյի հետ նաեւ հայ հիւրերուն մէջ համոզում
գոյացեր էր թէ վտանգը հեռացած է եւ Իզդէթ ո'չ
իսկ ձեւական խուզարկութեան մը պիտի ենթարկէ գիւ-
ղը, այնքան զուարթ ու բարի տրամադրութիւն մը կը
ճառագայթէր անոր դէմքէն :

Բայց երբ ճաշը աւարտեր ու սեղանը վերցեր էր,
սուրճի վերջին ումպին հետ, Իզդէթ ըսեր էր .

— Դէ՛հ, Ասօ աղա, կերանք, խմեցինք . սեղանդ շէն
մնայ . Աստուծոյ բարիքը անպակաս ըլլայ տունէն :
Գանք հիմա լուրջ գործերուն . կը յուսամ որ անոնք
ալ այսպէս ուրախութեամբ կը վերջացնենք :

— Հրամայէ՛, պէյ էֆէնտի :

— Գիտես որ կառավարութիւնը հրամայած է բոլոր զէնքերը հաւաքել: Բռնութիւն բանեցնել չեմ ումզեր քեզի պէս պատուական մարդու մը տան ու գիւղին մէջ, մանաւանդ որ գիտեմ թէ դուն պետութեան հաւատարիմ մարդ ես: Քեզմէ կ'ուզեմ որ գիւղին զէնքերը մինչեւ առտու հաւաքած ըլլաս եւ ինծի յանձնես, որպէս զի ես ալ կառավարութեան առջեւ պարտքս կատարած ըլլամ եւ բարեկամութեամբ իրարմէ բաժնուինք:

Իզգէթ բարեմտօրէն կը ժպտէր եւ քաղցրօրէն կը խօսէր. բայց իր այդ պահանջն արդէն, որքան ալ դժբուած ըլլար բարեկամական շեշտով, կը բաւէր ներկայ Հայերու սիրտը սառեցնելու:

Այդ պահուն, եթէ գետինը բացուէր յանկարծ հըրաշքով մը, սիրով մէջը պիտի նետուէին որ եւ է պատասխանէ խուսափելու համար: Լռութիւնը, շարաչուք, սպառնալի ու մահաբոյր, բռներ էր ընդարձակ սրահը, ուր քիչ առաջ շէն ու անվերապահ խօսակցութեան աղմուկը կը բարձրանար:

Եւ ահա, Ասոյի ձայնը՝ հանդարտ, անվրդով, առանց որ եւ է յուզում մատնելու կը բարձրանար.

— Ի՞նչ զէնքեր է կ'ուզես պէյ էֆէնտի: Գիտես որ մենք գիւղացի մարդիկ ենք. մեր գործը հողին հետ է. քաղաքականութիւն չենք ընել. եթէ աւազակներ մեզ կողոպտեն, ողջ ըլլայ կառավարութիւնը, մեզ հարկաւ կը պաշտպանէ: Չէնքը ի՞նչ պիտի ընենք: Մեր կեանքին մէջ այդ տեսակ բանի երեսն իսկ չենք տեսած:

Այնպէս չէ՞, հայրենակիցներ, դուք ըսէք, դարձեր էր ներկայ գեղակից Հայերուն, շեշտով մը որ դարհուրելի երկրնորանքի այդ պահուն, կը նշանակէր.

— Չըլլայ որ զէնքի կտոր մը իսկ յանձնէք . . .

Ու ներկայ Հայերը որոնց իւրաքանչիւրին տան մէկ
ապահով անկիւնը՝ քանի մը զէնք կար պահուած, հաս-
կցեր էին թէ Աստ թերեւս կուտայ իր կեանքը, բայց ոչ
իսկ զէնքի կտոր մը :

— Եա՛, մուտացեր էր Իզզէթ, այս անգամ մտայլ
զէմքով :

Ու պահ մը լռութենէ յետոյ, նորէն խօսք էր առեր :

— Աստ աղա, զիս մի ստիպեր որ բռնութիւն հրա-
մայեմ : Գիտեմ թէ այս գիւղին մէջ շատ զէնք կայ. գի-
տեմ նաեւ թէ դուն ալ զէնք ունիս : Եթէ կամքովդ յանձ-
նեցիր, երդում քեզի հաւատքովս, որ եւ է գէշութիւն չի
պատահիր : Բայց, վա՛յ քեզի ու տանդ, եթէ առանց
զէնքի այս գիւղէն մեկնեցայ . . .

Իզզէթ սկսեր էր բորբոքիլ արդէն. զէմքը դեղնած,
դողդոջուն ձայնով ու բարկացայտ աչքերով՝ դարձեր էր
միւսներուն .

— Ձեզի կ'ըսեմ, լսեցի՞ք :

Մինչ Աստ, իր պարթեւ հասակը ցցած՝ նահապետի
մը պէս որ իր ամենէն նուիրական զգացումին մէջ է վի-
րաւորուեր, կը պատասխանէր զսպուած յուզումով :

— Պէ՛յ էֆէնտի, վերը Աստուած, վարը դուն : Թող
քու կամքդ կատարուի, եթէ տունս քանդուեցաւ, փա՛ռք
տիրոջը. ան տուաւ, ան ալ կ'առնէ : Տունս քուկդ է. հը-
րամայէ՛ որ խուզարկեն : Եթէ զէնք ելաւ իմ տունէս,
պատիժիս յօժար եմ :

Իզզէթ գիտէր սակայն, սորվեր էր նախընթաց խու-
զարկութիւններու ընթացքին թէ անօգուտ է փնտռելով
գտնելու ելլել որ եւ է զէնք, եթէ պահուած է : Միւս
կողմէ սակայն, ստոյգ տեղեկութիւն ունէր թէ Ասոյի
տան մէջ զէնք կայ : Չեռնունայն վերադառնալ ո՛չ միայն

անպատուութիւն էր իրեն , այլ եւ պիտի նշանակէր ինք-
զինքը ծաղրի ու հեզնանքի ենթարկել կառավարութեան
առջեւ , որ բազաթիւ ուրիշներու կարգին , իրեն վստա-
հեր էր զինահաւաքման փափուկ ու դժուար գործը :

Աւելորդ էր ուրեմն խուզարկել . բերանացի սպառ-
նալիքներն ալ օգուտ չէին տուեր : Կը մնար բռնութիւն
բանեցնել . բայց ատկից առաջ , Իզզէթ ուրիշ հնարք մը
ունէր իր տոպրակին մէջ :

— Ասօ աղա , ըսեր էր , զսպելով իր զայրոյթը ,
զիտեմ թէ պատուաւոր մարդ ես . սուտը մեզք կը սե-
պես . եւ ճշմարիտը կը խօսիս : Բայց կառավարութիւնն
ալ սուտ չի խօսիր : Երբ ինձի կը յայտնէ թէ տանդ մէջ
զէնք կայ պահուած , կը նշանակէ թէ կայ : Ըսէ՛ տես-
նեմ , ես ի՞նչպէս ընեմ . որո՞ւ հաւատամ , քեզի՞ թէ կա-
ռավարութեան :

Յայտնօրէն կը նշմարուէր թէ Իզզէթի սրտին մէջ՝
կոխ մը կը մղուէր : Չէր ուզեր որ եւ է նեղութիւն պատ-
ճառել այդ պատկառելի ծերունիին : Բայց միւս կողմէ՝
կար տրուած հրամանին պարտադրութիւնը , եթէ մի-
ջոց մը գտնէր , սրտի թեթեւութեամբ պիտի հեռանար :
Եւ այդ միակ միջոցը , Ասոյի զէնքերը երեւան հանելն
էր : Բայց ծերունին կը յամառէր :

Եւ Իզզէթ գրպանէն կը հանէր թուղթի կտոր մը .

— Ահա , կ'ըսէր , այս թուղթին վրայ եօթը զէնքի
թուահամար կայ : Անոնք որ այս զէնքերը քեզի ծախած
են , միւս կողմէ՝ գացած կառավարութեան յայտնած են :

Ու , կը կարդար զէնքերուն թուահամարները :

— Հիմակ ալ կ'ընա՞ս ուրանալ : Այս զէնքերը կ'ու-
զեմ քեզմէ :

Իզգէթ այդ կերպով՝ կառավարական գաղտնիք մը
կը յայտնէր, պարզապէս եւ թերեւս առանց ուղեւոր եւ
անդրադառնալու, կ'ազդարարէր Հայերուն որ զէնք ճարե-
րելու ուրիշ միջոց խորհին: Բայց իր արժանապատուութիւնը
այդ կերպով կը յուսար փրկել: Բայց ատով,
ծանր կացութեան մը կը մատնէր Ասօն, որովհետեւ իր-
զութիւնը ճիշդ ու անհերքելի էր:

Առաքելոց վանքի կռիւներէն յետոյ, քաղաքի թէ
գիւղերու Հայերը՝ ամէն միջոցի կը դիմէին զէնք ճարե-
լու: Արագ եւ դիւրին միջոցը կառավարական զէնք ձեռք
ձգելն էր եւ այդ կարելի էր համաձայնելով թուրքերու
եւ մանաւանդ շէրքէզ գաղթականներու հետ, որոնք դը-
րամի սիրոյն, որ եւ է միջոցով կը ճարէին զէնք մը ու
կը փութային իբր թէ գաղտնօրէն ծախելու Հայերուն:

— Դուք, կ'ըսէին, զէնքի պէտք ունիք: Մենք ալ
դրամի անօթի սատկելու չենք:

Բայց կային որ զէնքին փոխարժէքը գանձելէ յետոյ,
կը վաղէին ոստիկանութեան յայտնելու անոր թւահա-
մարն ու գնորդը:

Այդ կերպով էր որ Ասոյի գնած եօթը զէնքերուն
գաղտնիքը ինկեր էր Իզգէթի ձեռքը, որ յաղթական երե-
ւոյթով՝ կը սպասէր տանտիրոջ պատասխանին:

— Պէյ էֆէնտի, քեզի երդում չորս գաւակներուս
գլխուն վրայ. ես զէնք չունիմ:

Չէրքէզը կատուած էր այլ եւս, ու նոյն իսկ զէնքերու
յանձնումով չպիտի հանդարտէր այդ պահուն, եթէ որ
եւ է կերպով իր գայրոյթը չպարպէր սրտէն:

Ու ցասկոտ, կանչելով Արապ Ապտուլլահը հրամա-
յեր էր.

— Պառկեցուր սա կաւատը ...

— Պէյ էֆէնտի, պաղատեր էր Ասօ, այս տարիքիս՝
այս անարգանքը մի հասցներ ինձի:

— Չէնքերը յանձնէ՛, որոտացեր էր Իզզէթ:

— Եթէ քեզի երդում տուի որ չունիմ, ծեծով զէնք
մէջտեղ չեւեր:

— Այս տան մէջ, զէնք ունիս պահուած:

— Յանուն Աստուծոյ ...

— Եթէ հոս չեն, գիտես թէ ո՞ւր պահուած են:

— Պէյ էֆէնտի՛ ...

— Պառկէ՛, ուլան ...

Ու, Արապ Ապտուլլահի հրամանով, քանի մը ոստիկաններ նետուեր էին Ասոյի վրայ, զոր գրեթէ նետեր էին գետին եւ սկսեր էին, անխնայ իջեցնել խարազանի հարուածները:

— Լա՛ւ, հիմա, գոռացեր էր Իզզէթ, միտքդ եկա՞ւ, պիտի ըսե՞ս թէ ուր են զէնքերը:

Թուրք ոստիկանները, գիտենք թէ ոչ միայն մեծ հաճոյք, գրեթէ կրօնական պարտականութիւն մը կը նըկատէին քրիստոնեաներու խոշտանգումը, երբ առիթը ներկայանար, այլ տանջանքի գիտութեան բոլոր բարբարոս նրբութիւնները իւրացուցած էին: Երբ կարգը գար տկարն ու անսպաշտպանը ծեծելու, չէին գոհանար միայն հարուածը ուժգին տալով: Իրենց մոլի զայրոյթին եւ բազուկներուն ամբողջ կորովովը՝ խարազանը կ'իջնէր մարմնին վրայ շառաչելով, ու կատարուած կատաղի ճիգին զօրութենէն, հեւք մը խլելով խոշտանգողին կուրծքէն ու կրկին բարձրանալէ առաջ, ակնթարթ մը կը քսուէր հարուածին հետքին վրայ:

Չոհին մորթը կը սկըթուէր, միտք գրեթէ կը մերկանար իր պատեանէն առանց արիւնելու, ցաւը կը կրկ-

նապատկուէր, մինչեւ զգայագիրկ՝ զոհը կ'առնէր ան-
շարժ դիակի երեւոյթը :

Ծեծին տակ, ճիշ մը անգամ շէր լսուեր Ասոյի բեր-
նէն : Բայց ծեծէն յետոյ, երբ Իզգէթ հրամայեց ոտքի ել-
լել, պէտք եղաւ որ ներկայ Հայերէն մէկ քանին ամէն
վտանգ աչք առնելով, յանդգնին վաղել անոր օգնու-
թեան :

Յաւատանջ, դողդոջուն, այլ հպարտ, Ասօ կանգնե-
ր Իզգէթի դէմ, շանթարձակ ակնարկներ շեշտելով ա-
նոր աչքերուն՝ ուր կատաղութեան մուտք բոցեր կը վա-
ռէին :

— Զէնքե՛րդ, եթէ ո՛չ ...

Բայց, դահլիճին փոթորկային լուրթեան մէջ, կարճ
ու խիզախ, վիրաւոր արժանապատուութեան մը զըս-
պուած զայրոյթին շեշտովք՝ բարձրացեր էր Ասոյի
ձայնը .

— Զունիմ ...

— Շամփուրները ... , հրամայեր էր Իզգէթ՝ Արապ
Ապտուլլահի :

Զմեռ էր : Բուխերիկին մէջ՝ կոճղերը ուրախ կը
ձարձատէին, ու բոցավառ կրակին մէջ, շամփուրները
կը սկսէին կարմրիլ :

Իզգէթ դարձաւ միւս գիւղացիներուն :

— Կորսուեցէ՛ք, սրտաց, եւ լոյսը չծագած՝ ձեր
բոլոր զէնքերով՝ ձեզ հոս տեսնեմ : Եթէ ոչ քարուքանդ
կ'ընեմ ամբողջ գիւղը :

Ասօ ծնրադիր ու բազկատարած կ'աղօթէր, մինչ ա-
հարեկ ու կորաքամակ, դահլիճէն մեկնող իր բարեկամ-
ներուն գերագոյն յանձնարարութեան մը, վերջին կամ-

քի պարտադրական ուժով՝ պաղատանքը կը բարձրանար
երկինք ...

— Տէ՛ր, ուխտս մի՛ մերժեր ...

Մեկնողները վստահ էին. Ասօ ոչ զէնք պիտի յանձ-
նէր, ոչ ալ պահեստի տեղ պիտի յայտնէր: Ու այդ վըս-
տահութիւնը սուգի դառնութեամբ կը լեցնէր իրենց
պարզ ու յանդուգն սրտերը: Ոչ մէկ բառ կը յանդգնէր
շարժիլ իրենց շրթներուն վրայ. խօսքի ուժը կորսնցու-
ցեր էին:

Երբ տան ընդարձակ բակէն դուրս ելան, կանգ ա-
ռին յանկարծ բոլորը մէկ, կարծես՝ թաքուն, անլսելի
բայց գերազու հրամանի մը ճնշումով: Իրարու նայե-
ցան անխօս ու կատաղի: Մանր պարտութեան մը անբա-
ցատրելի ամօթը կը ճզմէր զիրենք: Պէ՞տք էր որ հող,
քանի մը քայլ անդին, բռնաւորին վայրագ քմահաճոյ-
քին յանձնած տարիներու իրենց մեծողի բարեկամը,
մեկնէին հանդարտօրէն: Քիչ էին թիւով՝ զինեալ գերա-
կշիռ թշնամիին դէմ. բայց նոյն իսկ մեռնելու գնով
պէտք չէ՞ր որ փրկել փորձէին անձը որ գիւղին պա-
տիւն էր:

Ու նորէն, լռութեան մէջ, առանց նոյն իսկ փափսու-
քի ու շշուճի, կարծես ենթագիտակցական համր խօ-
սակցութեամբ, վճռեր էին: Պիտի երթային, զէնքերը
հանէին, ու վազէին Ասօն փրկելու, եթէ պէտք էր, ամ-
բողջ գիւղը՝ այր ու կին, ծեր ու երիտասարդ, ոտքի
պիտի հանէին:

Եւ սկսեր էին նորէն քալել. բայց այս անգամ՝ ա-
րագ, ամուր, յանդուգն ու վճռական, երբ յանկարծ,
քարացած կանգ առեր էին:

Կարծես, մութին մէջ՝ ծանօթ ձայներ կը փսփսա-
ցին .

— Մի՛, մի՛ ընէք այդ տեսակ բան . միայն ձեզ չէ
որ կը վտանգէք . այլ մեզ բոլորս , ամբողջ գիւղերը , հա-
յութիւնը :

Չարաշուք լուսեան մէջ , առնե՞րն ալ լեզու ելեր
էին , փոթորկայօյգ բոյներու խռովքը կը թանձրացնէր
մթնոլորտը : Կէս գիշերը անցած էր արդէն : Ոչ մէկ ճրա-
գի լոյս կը նշմարուէր : Բայց պատուհաններէն դուրս՝
անքուն աչքեր կը յանդգնէին պրպտել մթութիւնը ու
առններու պատերուն տակ ստուերներ կը խլրտէին : Գիւ-
ղը ամբողջ կը հսկէր բօթերու եւ բարբարոսութեանց
վախէն . նոր ջարդերու եւ հալածանքներու մղձաւանջը
կրակեր էր գլուխները , որոնց միակ մտածումը կը մըղ-
ուէր գէպի Ասոյի տունը , կը ճգնէր թափանցել հաստ
պատերէն ներս , արգիլուած գաղտնիքը խլելու տենդա-
գին հետաքրքրութեամբ , գիտնա՛լ , գիտնա՛լ . . . ու
տեսնե՛լ . . .

Շամփուրներն արգէն կարմրեր էին . Ասօ կիսա -
մերկ՝ հասակը փութեր էր գետնին վրայ . եւ մինչդեռ ատ-
րաշէկ երկաթները կարճ հրամանի մը կը սպասէին ի-
րենց մահացու գործը կատարելու , Իզգէթ վերջին փորձ
մը կը կատարէր Ասօն համոզելու :

— Ասօ՛ , տեսար որ եթէ սկսիմ , մինչեւ վերջը կ'եր-
թամ : Մի՛ յամառիր . յանձնէ՛ գէնքերդ ու վերջացնենք :

— Չունիմ , պէ՛յ էՔէնաի , չունիմ . . .

— Անհաւա՛տ , դաւաճան , շան ձգնած . դեռ խելքդ
գլուխդ չեկաւ , հա՞ : Հիմա , կը հասկնաս թէ որո՞ւ հետ
կը խաղաս : Ապտուլլահ չափուշ , սկսէ՛ :

Ու երեք — չորս ատրաշէկ շամփուրներ միանդա —

մայն, գազանային թաթերու ուժին ամբողջ հրճուան —
քովը՝ իջան ու պահ մը փակած մնացին Ասոյի մարմ-
նին՝ որուն սրունքներն ու վիզը կը զսպուէին հաստ ու
անզգամ բազուկներու ճնշումէն:

Աղիքներու խորէն փրթած՝ խուպոտ կանչ մը մտաւ
հողին մէջ, ու ստորերկրեայ ասեղ որոտումի նման,
բարձրացաւ այրող մսի հոտին հետ ու պայթեցաւ դահ-
լիճին մէջ:

Շամփուրները քաշուեցան, բազուկները թուլցուցին
իրենց սեղմումն ու ճնշումը, ու մահատիպ լռութիւն մը
տարածուեցաւ: Ասոյի մարմինը անշարժ տարածուած
կը մնար գետնին վրայ: Իզդէթ բարեհաճեցաւ հակիւ
մեռե՞ր էր ան, առանց գաղտնիքը յայտնելու: Կը շնչէր
տակաւին, թեթեւօրէն: Զգայազիրկ էր պարզապէս:

— Մի՛ դպիք ձգեցէք այդպէս, հրամայեց:

Ասօ շունչէ շունչ սկսաւ գիտակցութեան գալ, ե-
րեժտկալ, իր կարծրացած անդամներուն շարժումը վե-
րագտնել եւ վերջապէս, բռնի ճիգերով երբ յաջողեցաւ
ոտքի կանգնել, դողէն կը տառապէր. պաշտօտինքի մէկ
քանի շիթեր դանդաղօրէն կը գլորէին քունքերէն. դէմ-
քը կձկուեր էր ու ցաւի դեղնութեան տակ ստացեր էր
վեհափառ արտայայտութիւն մը: Նստեցաւ, վարանոտ,
ապշահար, հարցահան ակնարկներ ուղղելով զինուոր-
ներուն՝ որոնց հող ներկայութեան պատճառը այդ պա-
հուն՝ կը փնտռէր իր մտքին մէջ: Տակաւին իր գիտակ-
ցութիւնը չէր վերստացած բոլորովին: Նուաղում մը
զգաց ու մարած ձայնով, քիչ մը ջուր ուզեց.

— Թոյն խմէ՛, գոռաց ձայն մը:

Ասօ բացաւ աչքերը ու մարմրուն, մշուշապատ ակ-
նարկները, յառեց ձայնին ուղղութեան: Ու տառապան-

քի դրուադները որոնց ենթարկուեր էր, սկսան խուժել իր միտքը, արթնցնել յիշողութիւնը: Տեսաւ խնջոյքը ու լսեց իրեն ուղղուած բարեմաղթութիւնները այն բերնէն որ հիմա՝ թոյն կը հրամցնէր իրեն. տեսաւ ինքզինքը, ամբողջ հասակով գետին փռուած՝ խարազաններուն տակ եւ նորէն զգաց ատրաշէկ շամփուրներուն հպումը իր մսին վրայ. ոտքի ելաւ, նետուեցաւ աւելի, ամբողջ մարմնով կը դողդղար, բայց այս անգամ կատաղութեան դողով, աչքերէն կրակ կը ցատկէր, ու նետուելու պատրաստ վագրի պէս՝ տենդահար գլուխը հպարտօրէն ցըցած՝ գրեթէ ոռնաց.

— Չլմնցա՞ւ գեռ . . .

Պատասխանի՞ կը սպասէր որ լեզուն բռնուեցաւ կարծես ու լռեց. ու լռութիւնը բռնեց բոլորը՝ պահ մը: Ընդարձակ սենեակին մէջ՝ բուխերիկին խորը վառող կոծղերու ճարձատիւնին կը խառնուէր կուրծքերու հեւքը: Ու Ասոյի եղերական հարցման պատասխանը կ'ուշանար:

Ու վերջապէս բարձրացաւ Իզդէթի ձայնը.

— Նստէ՛, Ասօ աղա, հանգչէ քիչ մը. յետոյ կը խօսինք:

Կ'ողոքէր Իզդէթ, ձայնին մէջ դնելով մեղմութիւն մը որ բոլորովին չէր սրբուած բարբարոս մոլուցքի շէշտէն, մինչ մահուան փորձէն ողջ դարձած Ասոյի սրտին մէջ՝ յոյսը կը վերածնէր:

Իզդէթ կը փորձէր դարձեալ անուշութեամբ ստանալ, ինչ որ բռնութիւնը կորսնցուցեր էր: Իսկ Ասօ տանջանքը վերջացած կը կարծէր:

— Մտի՛կ ըրէ, Ասօ աղա, շարունակեց Իզդէթ հանդարտութեամբ. ես քեզ կը յարգեմ. չուղեցի քեզ տեռ

նել այն վիճակին մէջ, որ մինակ դաւաճաններուն վայել
կը տեսնեմ: Բայց երբ կառավարութիւնը հրաման կու-
տայ, իմ պարտքս է գործադրել. քեզի կ'իյնայ հնազան-
դիւ: Երբ կ'ըսեմ թէ տանդ մէջ զէնք կայ, գիտեմ որ
կայ. քու զէնքերուդ թուահամարն իսկ յայտնեցի քեզի,
որպէս զի հաւատաս թէ ամէն բան գիտենք: Այլ ինչո՞ւ
կը յամառիս: Խելացի մարդու գո՞րծ է ըրածդ:

Հակառակ Իզդէթի անուշ լեզուին, Ասօ զգաց թէ
հրէշը արթնցեր էր անոր մէջ ու կանգ չպիտի առնէր:
Տանջանքը որուն պիտի շարունակէր ենթարկուիլ, կը-
նար միայն վերջանալ մահով: Ի՞նչ փոյթ: Բայց եթէ իր
ընտանիքին անդամներն ալ նոյն անգութ վիճակին մատ-
նուէին, պիտի կրնայի՞ն տոկալ: Ու տանջանքին սուր
ցաւերուն յիշատակը, կասկածի փոթորկին մէջ կը նե-
տէր իր միտքը: Տեղատուութեան, յանձնումի, ակամայ
մատնութեան վտանգը պէտք էր հեռացնել: Մտածեց
պահ մը, մինչ Ասոյի լուռ խորհրդածութիւնը կը սկը-
սէր յոյսեր ներշնչել Իզդէթի:

— Հաւատա՛, պէյ էֆէնտի, սկսաւ Ասօ, երդում քե-
զի որ տանս մէջ զէնք չկայ. այդ զէնքերու թուահա-
մարները որ կը յիշես, նոր բաներ են ինձի համար,
թշնամիի սուտեր են, թէեւ մարդու չարիք չեմ հասցու-
ցած: Բայց եթէ տնեցիները ինձմէ դադարնի զէնք են գը-
նած, ատկից լուր չունիմ. ո՞վ գիտէ. չըլլալիք բան չէ.
եթէ թոյլ կուտաս, երթամ կնոջս հարցնեմ անդամ մը:
Ինձի տասը վայրկեան միջոց տուր. վերը կը քնանայ:

Առարկութիւնը տրամաբանական էր:

— Լա՛ւ, ըսաւ Իզդէթ. գնա՛ եւ աշխատէ որ պարտալ
չդառնաս: Քեզի ալ մեղք է, քու կիներուդ ալ:

Վերը ննջասենեակին մէջ, ցուրտէն սմբած ու դող-

գոջուն, վերմակներով փաթթուած, կը հակէին կինն ու երկու շափահաս աղջիկները. անկիւն մը կծկտած, տըխուր սպասման մը գալարումներով կը տուայտէին իր երկու կտրիճ երիտասարդները:

Միշտ կասկածոտ թշնամիի մը հանդէպ, որուն դաբաւոր, աւանդական բարբարոսութիւնը՝ որքան ալ ներկայանար բարեհամբոյր դիմակներով, չէր կրնար վրաստահութեամբ թմրեցնել իրենց արթուն վերապահութիւնը, անհամբեր սպասեր էին կերուխումի աւարտին: Այդ ուրախ մթնոլորտին մէջ, անոնք շատ լաւ կը տեսնէին բռնադատուած կեղծիքը ու փոխադարձ բարեմաղթութիւններուկ տակ վարագուրուած տանջանքի սպանալիքը չէր խուսափեր իրենց նախազգացումէն ու միշտ, գտնուեր էր մէկը որ, գողի քայլերով երթեւեկեր էր հիւրանոցէն ննջասենեակ, մինչեւ Իզզէթի հրամանով, ոստիկանները լեցուեր էին դրան առջեւ, խափանելով ցաւատանջ հետաքրքրութեան առջեւ ամէն միջոց: Եւ այդ վայրկեանէն սկսեալ, ապրեր էին շարաշուք պատահարներու մղձաւանջովը:

Երբ Ասօ ներս մտաւ, անակնկալ յայտնութեան մը պէս, գոհունակութեան ու ցաւատանջ հետաքրքրութեան, յոյսի ու հատնումի խառնակ տպաւորութիւն մը կախուեցաւ դէմքերէն: Ոչ ոք կը համարձակէր հարցում մը ուղղել: Ասօ չէր աճապարեր խօսիլ: Յոգնած, քնատ, ցաւաբեկ, կը վարանէր գերագոյն գոհողութեան պատրաստել կին մը, երիտասարդ զաւկրներ ու հասուն աղջիկներ:

Նստեցաւ պահ մը, աւելի ճիշդը՝ ինկաւ բազմոցի մը վրայ. ջուր ուղեց. տենդ ունէր: Բոլորը հաւաքուեցան շուրջը: Կը զգար ու կը տեսնէր սպասման վիշտը որ

զանոնք կը սպառէր : Ուղեց ժպտիլ , այդպէս անոնց կորով ներշնչելու , վրդովումը թեթեւցնելու համար : Արտառոց ծամածուում մը կծկեց գէմքը : Ու վերջապէս փափսաց .

— Իրան նիգը դրէք :

Երբ ինքզինքը այդ կերպով ապահով զգաց , ամէն ինչ պատմեց ու բացատրեց մանրամասնօրէն :

— Ահա՛ , վերջացուց . հիմա ձեզի կը մնայ ըսել թէ ի՞նչ պատասխան պէտք է տանիմ :

— Մեր մեծը դուն ես , միջամտեց կինը : որոշէ եւ կարգադրէ :

— Մարդիկը , գիտէք թէ անգուլթ են : խնայել չեն գիտեր : Գաղանի պէս կը տանջեն :

Ասօ ակնթարթ մը նայեցաւ իրեններուն : Բոլորին գէմքերէն ճակատագրական համակերպութեան կորովը կը ժայթքէր :

— Եթէ գէնքերը չյանձնենք , կրնան տանջանքով մեռցնել :

— Մէկ անգամ կը մեռցնեն :

Պարզ բառերով , սովորական շեշտով , ընտանիքին մայրը՝ իր եւ զաւկրներուն մարտիրոսութիւնն ու թերեւս մահը կը վճռէր :

Ասօ ծնրադրեց .

— Տէ՛ր ողորմեա՛ , Տէ՛ր ողորմեա՛ . . .

Իողզոջ ու մարմրուն ձայնով , կը պաղատէր Աստուծոյ որ փորձութեան չմատնէ զիրենք , ուժ ու քաջութիւն տայ տոկալու , խափանէ չարիքը , չարը . . .

Ասօ զգա՞ց թէ տառապահոծ ամբողջ ժողովուրդի մը աղօթքն էր որ այդ պահուն կը բարձրանար իր սրտին խորէն ու շրթներէն , երբ իր առջեւը ծնրադիր , իր կիմն

ու զաւկըները, սկսեր էին երգել զարերէ ի վեր չլսուող
աղօթքը :

Չլսուելու վախով, հոգիի երգի մը պէս մեղմ ու տը-
խուր, աղօթքին թախծոտ եղանակը երկչոտ ալիքներով
կը բարձրանար, կը զարնուէր սենեակին հաստ պատե-
րուն ու կը փշրուէր :

Երբ վերջացաւ, Ասօ սաքի ելաւ կայտառ շարժու-
մով, սրքան թոյլ կուտային իր տարիքն ու ծեծին տակ
կարծրացած սրունքները. հոգին թեթեւցած էր : Ամէն
տանջանքի, տակաւին երկար տոկալու ուժ կը զգար իր
մէջը :

— Ուխտերնիդ ընդունական, ըսաւ սրբակրօն քա-
հանայի հանդիսաւորութեամբ, բոլորը գորովագին սեղ-
մեց կուրծքին վրայ ու ամուր քայլերով դուրս ելաւ սեն-
եակէն :

Երբ հիւրանոցը մտաւ, Իզզէթ բուխերիկին առջեւը
կկգած, հանդարտօրէն կը ծխէր :

— Ի՞նչ եղաւ, ձայնեց, Ասօն նշմարելով :

— Պէյ էֆէնտի, երգում քեզի, ով որ ըսած է թէ
ինձի կամ իմ տնեցիներէս մէկուն զէնք է ծախած, սուտ
կը խօսի : Մեր տան մէջ զէնքի երես տեսնող չէ եղած :

Կատաղի շարժումով մը սաքի ելաւ Իզզէթ :

— Անհաւա՛տ, գոռաց, դուն Աստուծմէ ալ չես
վախնար. եօթը հատ զէնք կ'ուզեմ քեզմէ, եթէ ոչ, եօթը
կտոր կ'ընեմ քեզ :

— Պէյ էֆէնտի, եթէ այդ է ուզածդ, նայէ ի՞նչ
կ'ըսեմ : Ես փառք Աստուծոյ, դրամ ալ ունիմ, կալուած
ալ : Միջոցը տուր ինձի, ես քեզի եօթը չէ, տասնրեօթը
հատ զէնք գնեմ ու տամ :

— Ո՛չ, ցած շուն, ահա, այս թիւերը կրող ղէնքերը կ'ուզեմ :

— Աստուած վկայ, սուտ է, չկայ, շունիմ :

Պահ մը լռութիւն տիրեց : Իզգէթ կը Ֆշար կատա-
ղութենէն, բայց այս զարմանալի մարդը, գիտէր ի հար-
կին իր կիրքերը դասել : Քրթմնչիւն մը արձակեց .

— Ապտուլլա՛հ, հրամայեց, հանդարտ ու պաղա-
րիւն, գնա սրւոնք վար բեր :

Ասօ, կը ջանար մեղմութեամբ, Իզգէթի մէջ մարդ-
կային զգացումներ երեւան հանել, շոյել անոր անձնա-
սիրութիւնը, համոզել որ որ եւ է անպատուութիւն ու
տանջանք խնայէ իր ընտանիքին, երբ կինն ու չորս զա-
ւակները ներս մտան Ապտուլլահի առաջնորդութեամբ :

Լուռ ու ահաբեկ, արձանացան Իզգէթի առջեւ :

— Չեզ ըսաւ, ոչ ծեծել կուտամ, ոչ ալ շամփուրով
տաղել : Աւելի գէշը կ'ընեմ, եթէ ճշմարտութիւնը չխոս-
տովանիք : Ո՞ւր պահուած են ղէնքերը :

— Սուտ է, էֆէնտի, մեր տան մէջ մինչեւ այսօր
գէնք չէ մտած, մրթմրթաց Ասոյի կինը :

Իզգէթ հասկցեր էր որ աւելորդ է խոստովանեցնելու
սովորական եղանակները գործածել :

— Քիչ վերջ կը տեսնենք, ըսաւ : Ապտուլլա՛հ, այս
հանրմներուն հետ գիտցածիդ պէս վարուէ :

Հրէշը յայրատ ակնարկներ կ'ուղղէր արդէն Ա-
սոյի աղջիկներուն, կը սպասէր այդ հրամանին : Նետ-
ուեցաւ դուրս : Շատ չանցած՝ վերադարձաւ՝ իր հետ
բերելով մեծկակ վանդակ մը, ուր 2 - 3 կատուներ բան-
տարկած էր :

— Ասոնք, ըսաւ, յոռի խնդուքով մը, որ սարսուռ
պատուցուց աղջիկներուն մորթին վրայ, տեսէք թէ ի՞նչ-

պէս բանալ կուտան ձեր անիծուած բերանները: Դէ՛հ,
չուտ, քակեցէք ձեր մէջքին դօտիները:

Ասօ միջամտեց. Իզգէթի առջեւ ծնրադիր, աղաչեց
որ խնայեն իր տան պատուին: Ամէն վայրագութիւն կը
սպասէր ան գազանացած այս պաշտօնեաներէն. բայց՝
իր ներկայութեան, իր կնոջ ու աղջիկներուն ամենէն
նուրբ զգացումները հարուածել եւ ո՛վ գիտէ, ի՞նչ ամ-
բարիչտ մտքերով. ո՛չ ատիկա, անհանդուրժելի էր:

— Դեռ կը խօսի՞ս դուն, անհաւատ, գոռաց Ապ-
տուլլահ, որ հրճուանքով ու հպարտութեամբ տեսեր էր
թէ գործելու իր ժամը հնչած է:

Ու դառնալով կիներուն.

— Ի՞նչ կեցեր էք կուռքի պէս. որո՞ւ ըսի: Բացէք
վարտիքնիդ:

Ու կոպտօրէն մօտեցաւ անոնց, բռնեց աղջիկներէն
մէկուն ձեռքը, ուժգին ոլորեց բազուկը:

Յաւի ճիշով մը, աղջիկը կռնակը դարձուց հրէջին,
որ միւս ձեռքով, կը ջանար անոր քղանցքը վեր առնել:
Բայց չկրցաւ:

Մինչ աղջկան մայրը, գայրոյթի եւ ըմբոստ կատա-
ղութեան շարժումով մը՝ վազեր ու նետուեր էր ոստի-
կանին վիզը գոր կը սեղմէր իր նիհար բազուկներուն
ամբողջ ուժովը, մեծ եղբայրը՝ գրեթէ խելակորոյս՝
կռուփի մէկ հարուածով գայն կը փռէր գետին:

Իզգէթ հրաման ստացեր էր խուզարկելու: Բայց
խստօրէն արգիլուած էր արիւն թափել, եւ հրահան-
գուած էր զգուշանալ բռնութիւններէ ու չափազանցու-
թիւններէ, որոնք կրնային զանգուածային դիմադրու-
թիւն կամ ըմբոստացում դրդուել:

Արգելքին պատճառը, Առաքելոց Վանքէն յետոյ՝ օտար միջամտութեան վախն էր:

Իզգէթ անմիջապէս անդրադարձաւ որ միջադէպը կրնար ծանր հետեւանքներ ունենալ: Եւ, Ապտուլլահի տապալումէն յետոյ, երբ տեսաւ որ հիւրանոցին մէջ ներկայ մէկ քանի ոստիկաններ՝ դուրսէն օգնութիւն կանչելով, կը պատրաստուին յարձակիլ տնեցիներուն վրայ, կեցուց բոլորը եւ հրամայեց որ ձերբակալեն պանոնք:

Անմիջապէս, յղացեր էր դիւային ծրագիր մը, զոր պիտի գործադրէր շատ շանցած, չրբ օրինակ գիւղացիներուն:

Ոստիկան - զինուորներուն հրամայեց մեկնումի պատրաստուիլ:

Արշալոյսը ծագելու վրայ էր: Գիւղացիները որ ամբողջ գիշերը աչք աչքի չէին դրած, կը սլքտային իրենց դռներուն առջեւ եւ կը սպասէին Ասոյի տան ողբերգութեան վերջաւորութեան:

Երբ ոստիկանները սկսան կարգաւ շարուիլ Ասոյի տան առջեւ, լուրը բերնէ բերան տարածուեցաւ: Ժողովուրդը սկսաւ խռնուիլ գիւղին հրապարակը, ուրկէ ըստիպուած էր անցնիլ ջոկատը՝ ճամբան շարունակելու համար:

Արդէն լսեր էին նաեւ թէ ամբողջ ընտանիքը ձերբակալուած է: Եւ ճամբուն վրայ՝ իրենց ներկայութեամբ, կ'ուզէին յարգանքի, երախտիքի լուռ հաւաստիք մը մատուցանել անոնց որ իրենց ուխտին վրայ մնացեր էին անսասան, թերեւս կեանքի գնով:

Ոստիկաններով շրջապատուած, ձերբակալեալ ընտանիքը հասաւ հրապարակը, ուր Իզգէթ հրամայեց

կանգ առնել: Ոչ ոք դիտէր թէ ի՞նչ պիտի պատահի. ոչ ոք կրնար ենթադրել թէ ի՞նչ ծրագրած է հրէշը: Գիւղացիները Ասոյի եւ իր ընտանիքին ապահովութեան մասին՝ վստահութիւն ունէին. դիտէին յարգն ու հեղինակութիւնը, զոր իրենց ոէսը կը վայելէր ազդեցիկ շրջանակներուն մէջ, ու շուտով, կը յուսային, զայն իր ընտանիքով վերադարձած տեսնել:

Սակայն Իզղէթի կատաղի ու դաժան արտայայտութիւնը՝ վախով իսկ, զիրենք գամեր էր հող. եկեր էին ոչ թէ հետաքրքրութենէ, այլ ազնիւ զգացումէ մը մըղուած: Իժբախտութեան այդ պահուն, ուղեր էին համր համերաշխութեան, սրտակցութեան թաքուն աուրք մը տալ անոնց որ, գիւղին համար տոկացեր էին անլուր տանջանքի: Յոռի նախազգացում մը հիմա զիրենք կը յորդորէր հեռանալ: Բայց, երբ սուր ու կտրուկ շեշտով մը՝ Իզղէթ հրամայեր էր ջոկատին կանգ առնել, իրենք ալ քարացած մնացեր էին տեղւոյն վրայ:

Իզղէթ, պահ մը շուրջը դիտեց: Բարբարոս ժպիտ մը խաղաց դէմքին վրայ. սպառնազին՝ դլուխը օրօրեց եւ հրամայեց հինգ ձի շարել քովէ քով, ջոկատին առաջը:

Ու գիւղացիները սարսափով տեսան թէ ամէն մէկ ձիու պոչին՝ ձերբակալեալներէն մէկը կը կապուէր:

Սարսափանները շաշեցին ու ձիերը սկսան քառաարփ սուրալ:

Սառնակ, խժալուր, ասեղ կանչ մը բարձրացաւ հրապարակէն: Ժողովուրդին զայրոյթի ու սարսափի ազդակներուն, սատիկաններուն վայրենի քրքիջներուն մէջ կորսուեցան զոհերուն ցաւի ազդակները:

Մէկ քանի շրջանէ յետոյ, երբ ձիերը կանգ առին,

հրապարակը գերեզմանի պէս լուռ էր: Տանջապարտներուն կուրծքերէն, մերթ ընդ մերթ կ'ելլէր մեղմաւազ մը: Բոլորին դէմքերը արիւնոտած էին, զգեստները պատառ – պատառ, բայց ցեխէն աղտոտած, կը ծածկէին արիւնը՝ որ մարմիններուն վրայ բացուած վէրքերէն կը հոսէր:

Իզգէթի վայրագութիւնը գոհացեր ու իջեր էր այդ արիւնահեղ դասով զոր տուեր էր գիւղացիներուն:

Արձակել տուաւ կաշկանդուած գոհերը, որոնք ուժարեկ ու արիւնաքամ, կէս – մեռելներ էին: Չանոնք տեղաւորել տուաւ սայլի մը վրայ, ու ջոկատը քշեց դէպի Մուշ:

Երբ հասան գետին եզերքը ու կը պատրաստուէին անցնիլ Սուլուխի կամուրջէն, իրենց դէմ ելաւ քաղաքի ոստիկան սպաներէն Իզգէթ որ փոքր խումբով մը՝ հետախուզութեան ելած էր:

Իզգէթ շատ լաւ կը ճանչնար Ասօն, որուն երախտաւորեալներէն ալ եղած էր՝ իր նեղ օրեպուն: Երբ նշմարեց Ասօն եւ իր ընտանիքը այդ վիճակին մէջ, անհամբերութեան ու բարկութեան նշաններ ցոյց տալ սկսաւ, ու երբ Չէրքէզ Իզգէթէն իմացաւ պատճառը, յորդորեց որ զանոնք ազատ արձակէ անմիջապէս եւ մինչեւ իսկ հսկողութեամբ մինչեւ գիւղ դրկէ: Չպշահար չէրքէզին բացատրեց թէ Ասօ ոչ միայն մեծ յարգ կը վայելէ թըրքական ամենէն ազդեցիկ շրջանակներուն եւ կառավարութեան մէջ, այլ նաեւ սիրուած է: Եւ եթէ, աւելցուց, թուրքերն իսկ զայն տեսնեն այդ վիճակին մէջ, կրնան ըմբոստանալ եւ մեծ փորձանք բանալ իր գլխուն:

Ոստիկան սպան քանի կը խօսէր, Իզգէթ կը մտահոգուէր: Խորհուրդ ուզեց իր պաշտօնակցէն: Գիտէր որ

եթէ ճիշդ էին իրեն տրուած տեղեկութիւնները, եւ կասկածելու որ եւ է պատճառ չէր գտներ, իր պաշտօնը կատարած ըլլալու արդարացումը չէր կրնար զինքը փրկել:

Պահ մը խորհրդակցեցան եւ որոշեցին կիներն ու տղաքը վերադարձնել գիւղ եւ միայն Ասօն տանիլ քաղաք:

Ոստիկան սպան մօտեցաւ Ասոյի, ներողութիւն խնդրեց պատահած միջադէպին համար, բացատրեց իր պաշտօնակցին դժուար կացութիւնը՝ իրեն յանձնուած պարտականութեան բերումով, հաւաստեց թէ ո՛չ մէկ վտանգ կրնայ սպառնալ իր ընտանիքին եւ յոյս յայտնեց թէ Ասոյի քաղաք երթալն ու գիւղ վերադառնալը մէկ պիտի ըլլայ:

Եւ իրօք, հազիւ մէկ երկու օր բանտ մնալէ յետոյ, Ասօ կը վերադառնար գիւղ:

Այս դէպքէն յետոյ՝ « Ասոյի տան ուխտ »ը երկարատեւ հայրենասիրութեան եւ զոհարբութեան ոգիի իբր օրինակ ցոյց կը տրուէր եւ շատեր կ'երդուրննային Ասոյի ուխտով:

Այս դէպքէն յետոյ, եւ անոր հետ սերտ կապով, տեղի ունեցաւ ասարեկում մը, որուն կ'արժէ քանի մը տող նուիրել:

Գիւղին մէջ կը բնակէր ոչս Գրիգորը որ յեղափոխականներուն եւ ժողովուրդին աչքին՝ կասկածելի էր: Կառավարութիւնը յաճախ, ստոյգ տեղեկութիւններ կը ստանար տեղական անցուղարձերու եւ մանաւանդ՝ հայդուկներու երթեւեկին եւ զէնքերու թաքստոցին մասին: Կասկածները կը ծանրանային առաւելապէս ոչս Գրիգորի վրայ, որ անխոհեմութիւնը գործեց՝ իբր թէ գիւղին պահպանութեան համար, բայց իրականին մէջ՝ իր

անձին պաշտպանութեան համար՝ կառավարութեան առաջարկելու որ գիւղին մէջ ոստիկաններ պահէ : Ատոր վրայ՝ օր մըն ալ, չորս ոստիկաններ եկան պահականոց մը հաստատելու : Ռէսի մատնութեան մասին՝ որ եւ է դրական, շօշափելի փաստ չկար : Բայց այդքանը կը բաւէր արդէն զայն դատապարտելու իբր լրտես եւ մատնիչ՝ խղճի հանդարտութեամբ՝ այն օրերուն երբ ազատատենչ գիւղացիներու սովորական կասկածամտութիւնը կրնար արթննալ ծուռ ակնարկով մը իսկ :

Երբ Ասոն բանտէն ազատելով՝ գիւղ վերադարձաւ, տեղական խումբին տղաներէն Իսրայէլ տեղեկացուց անոր թէ որոշուած է պատժել ոչս Գրիգորը՝ իբր դաւաճան :

Այս տեսակ պարագաներու մէջ Ասօ չափազանց ըզգուշաւոր եւ բարեխիղճ էր : Առանց անհերքելի փաստի չէր կրնար որ եւ է եզրակացութեան գալ : Ու տղաքը իրեն կը ներկայացնէին իրարու կապուած ենթադրութիւններ, որոնք տրամաբանութեան առջեւ միայն կըրնային փաստի ուժը ստանալ : Ինչ որ չէր բաւեր Ասոյի խիղճը հանդարտեցնելու : Բայց տղաքը շատ կը յամառէին ու կը պնդէին, վարանումի մատնելով Ասօն ալ, որ թելադրեց վերջնական վճիռը թողուլ Յիսաւու Յարութիւնին, որուն վրայ մեծ համարում եւ վստահութիւն ունէր : Յարութիւն համամիտ գտնուեր էր տղոց : Բայց կարելի չէր մատնիչին պատիժը գործադրել գիւղին մէջ, առանց քանի մը հոգի վտանգելու :

Երկու հոգի ստանձներ էին գիւղէն հեռու, զայն պատժելու գործը : Օր մը կը լսեն թէ առեւտուրի համար ոչս Գրիգոր Մուշ կ'երթայ : Գիտնալով ոչսին ընչաքաղցութիւնը, ըստ այնմ մշակեր էին պարզ ծրագիր մը : Օր

առաջ կ'երթան Մուշ եւ նշանակուած օրը, շուկային մէջ
կը սպասեն ռէսին, հոն ուր գիտեն թէ սովորաբար ան կը
հանդիպի:

Եւ իրօք, շատ չանցած, մէջտեղ կ'ելլէ ռէսը: Կը մօ-
տենան տղաքը, ու յարգանքի սովորական փոխասացու-
թենէն յետոյ՝

— Ռէս Գրիգոր, կ'ըսեն, մէկ քանի գլուխ ոչխար
ունինք. ուղեցինք ծախել. գնող չկայ: Մեծ բարիք կ'ը-
նես մեզ՝ եթէ գնես:

Տրուած գինը շահեկան էր ռէսին համար, որ շուղեր
առիթը փախցնել:

Իրեն ըսեր էին տղաքը թէ ոչխարները ձգած են
Յափնայ գիւղը, Յարդոյի տան մէջ: Ռէսը Յափնան ալ
գիտէր, Յարդոյի տունն ալ: Վախնալու բան ալ չունէր,
քանի որ երկու ոստիկաններու ընկերակցութեամբ կը
չըջագայէր: Ու երեկոյեան դէմ, իր պահապաններուն
ընկերակցութեամբ ռէս Գրիգոր կը մեկնէր Յափնայ՝
ոչխարները առնելու:

Յաջորդ օրը, երբ ոստիկանները վերադարձան, կը
պատմէին թէ ռէսը որ չէր հասեր Յարդոյի տունը, ան-
հետացեր էր գիւղի մօտերը, չէին գիտեր թէ ինչպէս:

— Հիմա կուգամ ըսաւ, սպասեցէք քիչ մը: Գնաց եւ
անգամ մըն ալ չեկաւ:

Եւ իրօք, ռէսին ոսկորներն իսկ մէջտեղ չելան, հա-
կառակ կառավարութեան խիստ պրպտումներուն:

ՏԵՆԴԱԳԻՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Ինչպէս տեսանք, Առաքելոց վանքի կռիւը մինչ մէկ
կողմէ աւելի սրեր էր կառավարութեան շարաշուք հս-
կողութիւնը, միւս կողմէ զայն կը մղէր առժամաբար
զսպելու իր կատաղութիւնը եւ արեւու լոյսին տակ, բա-

ցայայտ վայրագութեամբ ոչինչ կատարելու, որ թուրքիոյ վրայ հրաւիրէր Եւրոպայի ուշադրութիւնը: Քիւրտերն ալ որոնց կողոպուտի բնագղը երբեք չէր մեղմացեր, կը զգուշանային այլ եւս նախկին թափով հարըստահարելէ գիւղացիները: Առաքելոց վանքի կռիւէն յետոյ, իրենք իսկ՝ իրենց աշուղական երգերուն մէջ՝ նուիրագործեր էին « Բաշա » Անդրանիկը եւ իրենք կը փառաբանէին « Չավուշ » Գէորգը:

Վախի եւ հիացման խառն զգացում մը սկսեր էր համակել քիւրտ աւագակները՝ Փետայիին հանդէպ՝ որ պաշտպանն էր անգէն ժողովուրդին եւ որուն գնդակը չէր վրիպեր եւ որուն համար մահուան երթը տեսակ մը զբօսանք էր:

Կար նաեւ նախնական գիտակցութեան զարթօնք մը՝ որ հեռու էր մեզ պատրանքներու մատնելէ Քիւրտերուն հանդէպ: Քիւրտերը կը կողոպտէին, կը հարստահարէին երբ գիտէին թէ կառավարութիւնը կայ իրենց կոնակը: Եւ մեծ մասամբ, այդ էր պատճառը որ երբ զօրքը կը պաշարէր գիւղ մը՝ ուր հայդուկները մատնուած էին, զէնքը առնող Քիւրտը կը վաղէր քանի մը փամփուշտ պայթեցնելու:

Բայց, երբ կրկնուած արիւնահեղ դէպքերու հետեւանքով, եւրոպական պետութեանց ներկայացուցիչներն սկսան քննութիւններ կատարել, տեղեկագրեր պատրաստել ու յղել՝ ցեղախումբերու, անձերու եւ ցեղապետներու անուններու յիշատակումով, սկսան անորոշ վախի մը ազդեցութեան տակ իյնալ: Գիտէին թէ ամէն անգամ որ կը յարձակին հայկական անգէն ու անպաշտպան գիւղի մը վրայ, կառավարութեան հաշուոյն է որ կը գործեն: Բայց սկսեր էին հարց տալ իրենք իրենց թէ

ինչո՞ւ կառավարութիւնը զիրենք մղելէ յետոյ Հայոց
զէմ, դէպքերու պատասխանատուութիւնը կը ձգէ ի-
րենց վրայ, ամէն անգամ որ հիւպատոսները քննութեան
մը ձեռնարկեն: Ու չափով մը կը զգուշանային:

Իսկ կառավարութիւնը իր կողմէն, փորձեր կը կա-
տարէր աղուէսի պէս գործելու: Կը զգուշանար աղմկե-
լէ: Սակայն կը շարունակէր շատ աւելի խստութեամբ
սեղմել Հայերը: Գիւղէ գիւղ տանող ճամբաներուն վը-
րայ, ոստիկանական ձիաւոր խմբակներ անընդհատ
կ'երթեւեկէին, երբ օդը թոյլ տար: Գիւղերու մէջ կը
ջանար պահականոցներ հաստատել եւ մանաւանդ, ջանք
չէր խնայեր հայ լրտեսներու ցանց մը ոտքի հանելու:

Հակառակ հետզհետէ սաստկացող հսկողութեան
սակայն, ժողովուրդը որուն մէջ վերակենդանացած էր
յեղափոխական հաւատքը, տաք տրամադրութեամբ փա-
րած էր ինքնապաշտպանութեան կազմակերպման: Զէն-
քի սէրը բռնած էր բոլորը:

Այս տրամադրութիւնը աւելի բարձրացաւ եւ մտաւ
կանոնաւոր կազմակերպման շրջանի մէջ, Վահան Տող-
րամաճեանի՝ իբր լիազօր – ղեկավար ժամանումովը:

Վահան Տողրամաճեան հազիւ հասած, ժողով նշա-
նակեց Ստան գիւղին մէջ: Եօթն օր տեւեց ժողովը, ո-
րուն կը մասնակցէին բոլոր շրջանի պատասխանատու
մարմիններու ներկայացուցիչները գլխաւոր հայդուկ-
ները նաեւ Սասնոյ իշխաններն ու կարգ մը յեղափո-
խական գիւղապետներ: Պորհրդակցութեան գլխաւոր
նիւթը ինքնապաշտպանութեան կազմակերպումն էր:
Ատկից զատ, Վահան կ'ուզէր ստոյգ տեղեկութիւններ
քաղել շրջանին տրամադրութիւններուն մասին:

Ի հարկէ, տրամադրութիւնը չէր պակսեր. բայց

գլխաւոր պակասը զէնքն էր, ու այդ պահանջը գոհացնել՝ ամէնէն դժուար հարցն էր: Սասունցիք մանաւանդ, կը խոստանային ամէն ինչ տալ. բայց զէնք կը պահանջէին լիազօրէն, վահանէն որուն ներկայութիւնը բարերար ազդեցութիւն գործեր էր թէ՛ հայդուկներուն եւ թէ՛ գիւղացիներուն վրայ: Պէտք է ըսել թէ փոքրիկ կռիւներ, քէն ու ոխեր անպակաս էին առիւծասիրտ այդ ափ մը զինուորներուն մէջ, որոնք կռուի ու վտանգի պահերէն դուրս, մանուկի հոգի կը կրէին: Իրենցմէ ոմանք, մանաւանդ գլխաւորները՝ կարգ մը դժգոհութիւններ պատճառեր էին գիւղացիներուն:

Վահան կրցաւ այդ բոլոր դժգոհութիւնները հարթել ու բոլորը գործի լծել: Իր հետ մաս մը զէնք բերած էր: Իր կարգադրութեամբ, Քղեցի Բիճան (Պօղոսը) Երունցի Մուշեղը ու Վարդենիսի Հասրաթը խումբ մը տղաներով սկսան զէնք փոխադրել Սասուն, գոհացում տալու համար տեղացիներու պահանջին:

Բերդակցի Անտրոյի հետ՝ զիս ալ նշանակեր էր նախապէս գիւղերու մէջ հաւաքուած պաշարի եւ այլ պիտոյքի փոխադրութեան:

Ուտելիքի եւ այլ իրեղէնի մթերումը կը կատարուէր հետեւեալ կերպով:

Իւրաքանչիւր գիւղի ունեւորները իբր՝ յեղափոխական տուրք, տեղին կոմիտէին կը յանձնէին ինչ որ կրնային: Հաւաքուած առարկաները կամ պաշարը կը կեդրոնացուէին որոշ վայրերու մէջ: Կոմիտէներու կողմէ նշանակուած անձեր կը կազմակերպէին շալակաւորներու խումբերը՝ որոնք մեր զինեալ խումբերու հակողութեան ու պաշտպանութեան տակ, ապրանքները կը փոխադրէին նշանակուած Կելիէկիւզան գիւղին մէջ:

Քառասուն օրուան զգուշաւոր երթեւեկի շնորհիւ, ապրանքներու փոխադրութիւնը վերջացած եւ յառաջիկայ ձմրան պաշարը մթերուած էր գրեթէ:

Բացառաբար, փոխադրութիւնը տեղի ունեցեր էր առանց դժուարութեան եւ վտանգի, հակառակ որ Սասունի դրացի Մօլտկցի քիւրտ աշիրէթը որ լաւ գինուած էր, հաշտ աչքով չէր դիտեր մեզ: Վերջին փոխադրութիւնը միայն փոքր դժուարութեան մը մատնեց մեզ: Երբ Մոկունք հանդիպեցանք մթերքը վերցնելու, շալակաւոր չգտանք: Ստիպուած մէկը դրկեցինք Մուշ, շալակաւոր ուզելու: Սուրհանդակը որ Դաւօ Դատիկեան կը կոչուէր, քաղաք հասնելուն, պարտք կը սեպէ մօրս հանդիպիլ եւ տեղեկութիւններ տալ իմ մասիս: Խեղճ կիներ՝ փեսիս Մուշեղի հետ, շունչը կ'առնէ Մոկունք՝ գիտեսնելու: Իրմէն քիչ յետոյ հասան նաեւ 50-ի չափ զանազան խումբի պատկանող տղաք: Միեւնոյն ատեն տեղւոյն վրայ ճարեցինք 10 - 15 հոգի եւ յաջողեցանք ամբողջ մթերքը մէկ անգամէն փոխադրել: Զիարէթ, Կռուածաղկի, Զխուրի շրջանէն նշանակուած անձեր ալ, եկեր էին յայտնելու թէ, Առաքելոց Վանքի կռիւներէն, Բերդակի եւ Նորաշէնի ընդհարումներէն յետոյ՝ իրենք տրամադիր են նիւթական ամէն աջակցութիւն ընծայելու հայդուկներուն, եւ խնդրելու որ Սասունէն իրենց գինեալ ընկերներ դրկելը, երբ իրենց վայրերը վտանգի ենթարկուին:

Այսքան մթերքի փոխադրութենէն յետոյ, որ մեծ ոգեւորութիւն ստեղծեր էր Սասունցիներուն մէջ, իրաւունք ունէի քիչ մը հանգստանալու: Բարոյական մեծ պարտք մըն ալ կը մնար իմ եւ ընկերներուս վրայ կատարելիք: Սերովբի եւ իր ընկերներուն հողաթումբե-

րուն համար, եօթը մեծ քարեր փոխադրեր էինք: Չանոնք տեղաւորեցինք ամէն մէկ հողաթումբի վրայ. որքան որ կրնայինք՝ քարերուն վրայ փորագրեցինք ամէն մէկուն անունը եւ հանդիսաւոր հողեհանգիստ կատարել տուինք: Ատկից յետոյ՝ քանի մը ընկերներով արտօնութիւն ստացանք Վահանէն ու Անդրանիկէն՝ երթալ պատելու Տալուրիկը, զոր չէինք տեսեր:

Մէկ ամսուան հրաման տրուած էր մեզ, որմէ օգտուելով մտադիր էի անպատճառ այցելել Եղկաթ կոչուած վայրը, որուն մասին մեծ հիացումով խօսեր էին ինձ մէկ քանի Սասունցիներ: Այդ վայրը կը ներկայացնէին իբր Սասունի մայրաքաղաքը, ինչ որ կը բաւէր վառելու երեւակայութիւնս:

Ճամբայ ելանք 4 - 5 հողի միասին, մեզ հետ ունենալով Բոլոս Յովհաննէսը, որ Մուրատի եւ Տամատեանի զինուորներէն եղած էր:

Երբ Եղկաթ հասանք, յոգնած, քրտնաթոր, հասկցանք որ Սասունցիները խնդացեր էին մեր քթին: Հովիտի մը խորը, պուրակի մը մէջ ծածկուած, չորս տընակներ էին, անմարդաբնակ, զոր Սասունցիք իբր իրենց մայրաքաղաքը ներկայացուցեր էին մեզ:

Մեզ համար, գէշը այն էր որ, մեծ քաղաք այցելելու երազէն տարուած, ուտելիք հաց իսկ չէինք առած մեզ հետ: Ու թէեւ գիշերը, պատսպարուելու տեղ գրտանք, բայց ստիպուած ծոմ պահեցինք:

Լուսաբացին, ճամբայ ինկանք Տալուրիկ երթալու: Անօթութիւնը եւ յոգնութիւնը միւս կողմէն, ուժ չձգեցին մեր ոտքերուն վրայ: Ճամբու կէսին նստանք հանգչելու:

Բոլոս Յովհաննէս հող յիշեց որ Մուրատի օրով,

ինքը անցեր է այդ տեղերէն եւ թէ անօթութեան պահե-
րու մէջ, երբ ուտելիք չունէին, կեազ կոչուած թուրի
մը արմատները կը ծամէին:

Մեր անօթութիւնը խաբելու մտքով պահ մը փոր-
ձեցինք Քոլոզ Յովհաննէսի առաջարկած միջոցը: Վայրը
ուր կը գտնուէինք, լեցուն էր դիզուած տունկերով: Աշ-
խոյժով, սկսանք մէկ կողմէն խլել արմատներէն, մաք-
րել ու ծամծամել: Անօգուտ: Յուրտն ու անօթութիւնը
մեզ կորստեան պիտի մատնէին, երբ Մոկունքցի Պարօն
ոտքի ելաւ, — Ես, ըսաւ, բաւական ուժ ունիմ տակա-
ւին, կրնամ մինչեւ մօտակայ գիւղ մը երթալ եւ ձեզի
օգնութիւն բերել: Դուք հոս ինձի սպասեցէք:

— Պէտք չկայ այդքան ճամբայ կտրելու, վրայ բե-
քաւ Յովհաննէս, որ մեր մէջ ամենէն տարիքոտն ու
փորձառուն էր: Մինչեւ երթաս ու գաս, մեր գործը ար-
դէն կը լմննայ: Քեզի կարճ ճամբան ցոյց տամ: Քանի
որ ուժ կը զգաս տակաւին, կը բարձրանաս, ահա՛, սա
բլրան գագաթը: Երբ հոն հասնիս, երեք ձեռք զէնք
պարպէ: Բայց ոչ աւելի, ոչ պակաս: Ճիշդ երեք ձեռք:
Բլրան ստորոտը գամ մը կայ: Հոն հովիւներ կը բնա-
կին: Երբ հրացանի երեք հարուածները լսեն, կը հաս-
կընան որ վտանգուած մարդիկ կան եւ օգնութեան կը
հասնին:

Իսրօ սկսաւ բարձրանալ դէպի բլրան գագաթը,
մինչ մենք ալ մեր կարգին, դանդաղօրէն կը հետեւէինք
իրեն, որքան թոյլ կուտար մեր ուժը:

Եւ իրօք, կատարուեցաւ ինչ որ ըսեր էր Յովհան-
նէս: Իսրօ արագօրէն հասաւ բլրան բարձունքը, պայ-
թեցուց երեք փամփուշտ եւ շատ չանցած սկսաւ պոռալ

մեզ քաջալերելու համար որ, մարդիկ սկսան գալ դէպի մեզ :

Նոր կորով ստացած, արագացնել փորձեցինք մեր քայլերը եւ գրեթէ մարդոց հետ միաժամանակ հասանք գագաթը: Գոմը բնակող Տալուրիկցիներ էին որ իրենց սահնակներով փութացեր էին օգնութեան: Մեզ տեղաւորեցին սահնակներուն վրայ, զոր իրենք իսկ՝ քաշեցին մինչեւ գոմ: Իրենցմէ մէկուն կինը որ խաթէ կը կոչուէր, անմիջապէս տաք կերակուրի պատրաստութիւն տեսաւ: Լաւ խնամեցին մեզ, կշտացուցին, հանգստացուցին եւ յաջորդ օրը ճամբու դրին դէպի Տալուրիկ: Քանի մը շարաթ մնացինք այդ շրջանը, շրջագայելով ու մեր հետաքրքրութիւնը գոհացնելով, երբ սուրհանդակ մը լուր բերաւ թէ պէտք է վերադառնանք կելիէկիւզան, ուր իմացանք որ Հրայր վերադարձեր է Վանէն:

Հրայրի վերադարձը ազդանշանը տուաւ խոհեմութեան քաղաքականութեան, որ Առաքելոց վանքի խանդավառող կռիւէն յետոյ, մոռցուած էր պահ մը:

Հրայրի հետ, Վահան Տողրամաճեանն ալ համամիտ չէր յեղափոխական յանդուգն, տենդոտ գործունէութեան, որ աւելի անիմաստ ցուցարարութեան քան թէ իսկական գործի երեւոյթը կը ստանար: Երկուքին ալ հաստատ համոզումով, քանի ժողովուրդը հոգեպէս եւ նիւթապէս պատրաստ չէր միահամուռ ըմբոստացման, պէտք էր զգուշանալ խիզախ քայլերէ որոնք անդէն գիւղացիներուն վրայ կը հրաւիրէին կառավարութեան ու քիւրտ աշիրէթներու անխնայ հարստահարութիւնը:

Սակայն, Առաքելոց վանքի եւ Նորչէնի կռիւէն յետոյ, ու նաեւ զանազան դէպքերու հետեւանքով՝ փա -

խստականներու թիւը այնքան շատցած էր Սասունի մէջ, որ գրեթէ անկարելի կը դառնար զանոնք պահել թուրք եւ հայ լրտեսներու հսկողութենէն: Ատկից զատ անոնց յարաճուն թիւը ղեկավարները կը դնէր ուտեստ հայթայթելու հարցին առջեւ, զոր կարելի չէր լուծել տեղական սահմանափակ միջոցներով:

Հրայր եւ Վահան քննելէ յետոյ կացութիւնը՝ որոշեր էին ոչ միայն փախստականները ցրուել՝ կարելի ապահովութիւնը երաշխաւորելով անոնց, այլ եւ զինեալ խումբերու թիւը նուազեցնել, պահելով միայն ամուր կորիզներ: Ուշ կանուխ իր բազմաթիւ լրտեսներուն միջոցաւ, կառավարութիւնը պիտի լսէր անշուշտ այդ կատարուած կարգադրութիւնը՝ առանց թափանցելու անոր գաղտնիքին եւ թերեւս հանգիստ պիտի թողուր ժողովուրդը:

Ու այդ յարաբերական հանդարտութեան մէջ՝ գաղտնօրէն, ծայրայեղ զգուշութեամբ, առաջ պիտի տարուէր ժողովուրդին յեղափոխական կազմակերպումը՝ լայն չափերով:

Ու մինչ Հրայր Դաշտ կ'իջնէր քաղաքին թէ գիւղերուն մէջ՝ իր ազատ հոգիին ջերմութիւնով վարակելու անտարբերները, Վահան ու Անդրանիկ կը լծուէին խումբերու գտման: Մաս մը՝ իրենց զէնքերը յանձնելով՝ վերադարձան իրենց գիւղերը եւ կամ անցան Կովկաս: Փախստականներէն անոնք որ խիստ հետապնդման ու անմիջական վտանգի տակ էին, վար դրուեցան ու դարձեալ տեսնուեցաւ որ բաւական բերան կար կերակրելիք:

**

Առաքելոց վանքի կռիւէն յետոյ՝ մինչեւ Սահմա-

նադրութեան հռչակումը, Թրքահայաստանի մէջ, ամենամեծ դէպքը որ, եթէ ոչ ըմբոստացման, այլ դանդուածային ինքնապաշտպանութեան մեծութեամբ կրնայ ներկայանալ, Սասնոյ կռիւն է: Բայց ինչպէս կը տեսնուի մեր պատմութենէն, ոչ մէկ դէպք կը նախապատրաստուէր մեր կողմէ. ինչ որ կը կատարուէր ինքնապաշտպանութեան նպատակով, այո՛, օր մը կրնար ըմբոստացման ծառայել: Բայց այդ օրը դեռ չա՛տ հեռու կը տեսնէինք: Որքան ալ մեկուսացած մեր սահմանափակ շրջանակին մէջ, յաւակնութիւններ չէինք սնուցաներ մեր ուժերուն վրայ, որոնց առթած վախը կառավարական ուժերուն՝ գիտէինք թէ եւ: Բայց այդ պարագան մեզ չէր շփացներ ու ծայրայեղութեանց մղեր, մանաւանդ որ Հրայրի խոհեմ յանդգնութիւնը գիտէր ի հարկին զսպել ամէն անհաշիւ խոյանք:

Երբ Հրայրի եւ Վահանի խորհրդակցութեամբ, որուն մասնակցեր էր Անդրանիկ, ծայրայեղ խոհեմութեան քաղաքականութիւն մը կ'որդեգրուէր, ոչ ոք կը գուշակէր 1904-ի աղէտը: Կը տեսնէինք սակայն մեծ վտանգ մը որ կը կազմակերպուէր ու կը մօտենար: Թուրք կառավարութիւնը հետզհետէ կը խստացնէր հակողութիւնը, զգուշանալով աղմկայոյզ միջադէպեր ըստեղծելէ. գիւղերու եւ տուներու մէջ՝ զէնք ու փախստական փնտռելու պատրուակին տակ՝ խուզարկութիւնները յաճախադէպ էին եւ ամէն բանուկ ճամբաներու վրայ, ոստիկանական խումբեր կ'երթեւեկէին անընդհատ: Կառավարութիւնը ուղեր էր նաեւ զօրանոցներ հաստատել ամենէն ապստամբ բոյներուն կողքին՝ ինչպէս Շէնըք, Կելիէկիւզան, Տալուորիկ, եւ այլն: Բայց ժողովրդեան բուռն ընդդիմութիւնն ու աղմկալի բո-

դոքները ճախողեցուցեր էին այդ ծրագիրը: Սակայն կառավարութեան միջոց չէր պակսեր իր ծրագիրը տարբեր ճամբով ու ձեւով իրագործելու, եթէ որոշած էր սեղմել ու ճզմել Տարօնը իր շրջակայքով:

Սրտի թեթեւութեամբ չէր անշուշտ որ կը տեսնէինք կառավարական ուժերու զօրացումը շրջանին մէջ:

Այս կացութեան հանդէպ, տարրական ողջմտու – թիւնը կը պահանջէր անշուշտ, ծայր աստիճան խոհեմութեամբ շարժել: Եւ յեղափոխական ուժերը ցրուելու կարգադրութիւնը այդ խոհեմութեան առաջին թելա – դրութիւնն էր, որ երբեք չպիտի նշանակէր լքել ճակատը: Ընդհակառակն, պիտի ծառայէր զայն աւելի եւս ամրացնելու:

Ատկից զատ, կարգ մը որոշումներու համաձայն, աշխատանքի բաժանում մը կատարուած էր որ կը գործադրուէր շատ վտանգաւոր պայմաններու տակ, ինչպէս զէնքի փոխադրութեան, պարէնի մթերման Քիւրտերու հետ յարաբերութեան եւ ժողովուրդի կազմակերպման մասին կարգադրութիւնները:

Ժողովուրդին կազմակերպումը յանձնուած էր կոմիտէներուն, որոնք Հրայրի շունչին տակ՝ նոր կորովով լծուեր էին գործի:

Ձէնքի փոխադրութիւնը գլխաւորաբար երկու հանգրուանով կը կատարուէր: Վանէն դէպի Ախլաթ փոխադրութիւնը յանձնուած էր Շամիրամ գիւղացի Սողոյին եւ Միսաքին, Ջրհորայ Ակոյին եւ Աճէմին: Իսկ Ախլաթէն Սասուն, որ ամենէն վտանգաւոր ճամբան էր այդ միջոցներուն, գործը կը վարէին Վարդենիացի Մուրատն ու Յարդօնքցի Զնտօն:

Երբեմն, երբ որ եւ է վտանգ չէր սպառնար, զէն–

քերը կը փոխադրուէին լման, անասուններու վրայ
բեռցած կամ շալակով: Յաճախ քակուած վիճակի մէջ,
առանձին կտորներով, շուկայի ապրանքներու հետ
խառնուած:

Իսկ Քիւրտերու հետ յարաբերութեանց մասնագէ-
տը Գէորգ Չափուշն էր:

Պէտք է ըսել թէ Քիւրտերը սիրաշահելու ձգտումը
նոր չէր որ երեւան կուգար: Յեղափոխական կազմա-
կերպութիւնները՝ առաջին օրերէն իսկ պէտքը տեսեր են
եթէ ոչ Քիւրտերը մեզ կապելու իբր դաշնակից, այլ գո-
նէ ապահովելու անոնց բարեկամութիւնը, եւ կամ չե-
զոքութիւնը ի չգոյէ լաւագոյնի:

Չանք չէ խնայուեր այս ուղղութեամբ, յարաբե-
րութիւններ միշտ ալ մշակուեր են քիւրտ ցեղապետնե-
րու հետ՝ դանազան գործիչներու միջոցաւ, յաճախ տե-
ղի տալով զուարճալի տեսարաններու եւ զաւեշտական
դրուագներու:

Առաքելոց վանքի կռիւը նոր թափ տուաւ Քիւրտե-
րու հետ յարաբերութեանց սերտացման ձգտումին, մա-
նաւանդ որ այս անգամ, կարգ մը ցեղապետներ իրենք
իսկ՝ ուղղակի կը փափաքէին մօտենալ մեզ հետ: Ա-
ռաքելոց վանքի կռիւը ցնցեր էր Քիւրտերէն շատերը եւ
մինչեւ իսկ կ'ըսէին թէ Պոլսոյ Պահրի փաշան որ Ալէն-
տի քրտական ցեղախումբէն էր եւ մեր Պասգիւղի մէջ
եւ շրջակայքը՝ հողային հսկայ տարածութեանց սեփա-
կանատէրն էր, հետաքրքրուեր էր եւ իր մարդոց գըր-
ուած նամակներով՝ իբր թէ ուզեր էր հասկնալ թէ յե-
ղափոխականները ի՞նչ ուժ կը ներկայացնեն, ի՞նչ կը
հետապնդեն եւ կը փափաքի՞ն բարեկամութիւն հաս-

տատել Քիւրտերուն հետ ու իբր թէ նաեւ թելադրեր էր իր մարդոց հաշտ երթալ մեզ հետ :

Կրնար ճիշդ ըլլալ, որովհետեւ իր ազգական Խասագիւղի Խուրշիտ պէկը՝ անկից յետոյ՝ մեզ մօտենալու փորձեր կ'ընէր :

Զուարճալի դրուագ մը : Հայեւքրտական մերձեց – ման առաքեալ դարձած էր Նալխըրան Մանուկը, Խասագիւղցի, որ Առաքելոց վանքի կռիւներէն յետոյ՝ վերադարձաւ իր ծննդավայրը Պոլսէն՝ ուր գացեր էր պանդխտելու :

« Նալխըրան » թրքերէն կը նշանակէ պայտ կոտորող եւ իր այդ պատուանունը . . . վաստկեր էր անով որ ձիերու երկաթ պայտերը կ'առնէր մէկ ափին մէջ ու մատներուն ուժովը միայն կը ճզմէր :

Միջահասակ, թիկնեղ, այլանդակ ուժով մէկն էր որ կրնար մըցիլ ամենէն ուժեղ գոմէշներուն հետ : Օր մը իր գիւղէն կը բերեն ջաղացքի խոշոր քար մը : Քարը այնքան ծանր է որ կը խրի հողին մէջ : 10 – 20 հոգի հաւաքուած քարին վրայ, ինչ որկ'ընեն չեն կրնար դայն տեղէն շարժել : Գոմէշներ կը լծեն քարին. ի գուր : Ի վերջոյ ճարահատ, խելք կ'ընեն կանչելու Մանուկը, որ ծառի մը շուքին տակ տարածուած, դաշտային աշխատանքէն կը հանգչէր անմեղի խոր քունով : Կը բացատրեն իրեն իրողութիւնը : Մանուկ աչքերը կը շփէ. ուժեղ գոմէշ մը եւ խթան մը կ'ուզէ : Գոմէշին հետ ինքն ալ կը լծուի ջաղացքի քարին :

— Եա՛ Տէ՛ր Աստուած :

Խթանը կը մշտէ գոմէշին : Մուշտ մըն ալ կուտայ ինքն իրեն ու քարը կը շարժի, եւ կանգ կ'առնէ աղօրթիքին առջեւ :

Ատկից յետոյ ան մեկներ էր Պուլիս՝ բեռնակրութիւն ընելու: Անկից վերադարձն ալ իր պատմութիւնն ունէր:

Պուլիս եկեր էր Կըլտանցի ըմբիշ մը, որ կ'ուզէր իր անօրինակ ուժը ցուցադրել Սուլթան Համիտին եւ ասոր համար ալ, անընդհատ կը պահանջէր Պահրի փաշայէն որ իրեն արժանի մը ցորդ մը ճարէ: Ամիսներ անընդհատ, Պահրի փաշայի փնտռտուքները ապարդիւն մնացեր էին: Ո՛չ մէկ ըմբիշ կը համարձակէր չափուիլ Կըլտանցիին հետ: Քաջալերուած իր գիւղացի բեռնակիր Քիւրտերէն, որոնց հետ կ'աշխատէր ու կ'անցընէր օրուան մնացեալ մասը, Մանուկ կը ներկայանայ Պահրիի, որ թերահաւատութեամբ կ'ընդունի Խասգիւղցիին առաջարկը՝ չափուելու ըմբիշին հետ:

Օրը կ'որոշուի: Ըմբիշները կանգնած են դէմ դէմի՝ Համիտի մութ աչքերուն տակ՝ որոնք վայրագութեան հաճոյքը կ'աղերսեն տեսարանէն: Ազդանշանը կը տրուի: Կըլտանցին կը յարձակի Մանուկի վրայ, որ հողին մէջ արմատ նետած հաստաբուն ծառի պէս, կը մնայ անշարժ: Կըլտանցին ի գուր կը փորձէ զայն տապալել. Մանուկ կը գոհանայ ինքզինքը պաշտպանել առանց յոգնութեան: Կըլտանցին քրտինքի մէջ կը լողայ: Կռիւր կ'երկարի ու Համիտ ժամ առաջ մէկը տապալած տեսնելու իր ախտաւոր հետաքրքրութենէն՝ կը սկսի ջղայնօտիլ:

Մանուկ կը նայի Պահրիի աչքերուն: Նշանի մը կը սպասէ որ գինքը արտօնէ դասը տալու Կըլտանցիին: Պահրիի աչքերուն մէջ, Մանուկ հաւանութիւն կը կարդայ.

— Եա՛, Տէ՛ր Աստուած:

Ու կըլտանցին երկու բազուկներուն մէջ սեղմած,
զնդակի պէս կը նետէ գետին:

— Ի՞նչ կ'ուզես, կը հարցնէ Համիտ յաղթական ըմ-
բիշին:

— Խասգիւղի մէջ արտ մը ունիմ, կը պատասխանէ
մանկամիտ ըմբիշը: Ինծի ձգես, կը բաւէ ...

Ատկից յետոյ էր որ նուէրներով բեռնաւոր, վերա-
դարձաւ Խասգիւղ, ուր ինչպէս ըսինք, հայեւքիւրտ բա-
րեկամութիւն կը մշակէր իր գիտցած ձեւով:

*
**

Քիւրտերու հետ բարեկամական յարաբերութեանց
մշակման մէջ, գլխաւորաբար՝ երկու նպատակ կը հե-
տապնդէինք. — Նոյն նպատակին լծելով, զինակից
դարձնել մեզ զանոնք: Հոն ուր կարելի չէր ատիկա, ա-
պահովել անոնց չեզոքութիւնը:

Անհերքելի է թէ այդ թուականներուն, Քիւրտերու
հետ սերտ, հաւատարիմ զինակցութիւն մը ոչ միայն կը-
նար հիմնովին յեղաշրջել կացութիւնը, այլ օսմանեան
կայսրութեան ճակատագիրը կապել ներքին յեղափո-
խական դէպքերու ընթացքին:

Պէտք է խոստովանիլ թէ ոչ մենք այդքան հեռու-
ները կը նայէինք, ոչ ալ Քիւրտերը տրամադրութիւն
ցոյց կուտային իրենց եզները մեր սայլին լծելու: Նախ
որ, նոյն իսկ 1904-ի Սասնոյ կռիւներուն, հայ յեղափո-
խական շարժումը տակաւին չէր զտուած իր ժողովըր-
դային գրեթէ բնազդական պոռթկումի տարրերէն: Տե-
սարանութիւն մը եթէ կար մեր շարժումին մէջ, ամբող-
ջովին կը պարտկուէր չորս բառերու մէջ, — կեանքի,
ինչքի եւ պատուի ապահովութիւն, — տեղական ինքնա-
վարութենէ մը անդին չէին անցներ մեր ամենէն հեռա-

ւոր ձգտումները: Այդ էր Թրքահայաստանի ազատագրումը որ կ'ըսէին:

Իսկ Քիւրտերը չէին կրնար հասկնալ մեր ցաւերը: Ազգային մշակոյթէ բոլորովին զուրկ, մահմետական ազդեցութեան տակ հոգեւին այլասերած, բաժնուած յաճախ հակամարտ ցեղախումբերու, կ'ապրէին կիսանկախ կեանք մը՝ Թուրք բռնապետութեան բարեհաճ տրամադրութեան տակ: Չունէին եւ չէին կրնար ունենալ հաւաքական ուրոյն գոյութեան հեռանկար մը, որ զիրենք հակադրէր Թուրքին եւ մեզ բարեկամ ու զինակից դարձնէր, շահերու նոյնութեամբ:

Ընդհակառակն, ամէն ինչ կը նպաստէր Հայն ու Քիւրտը թշնամարար դէմ դէմի կանգնեցնելու: Քիւրտ աւատապետներու գանձին ամենէն առատահոս աղբիւրը հա յգիւղերն էին: Ժողովուրդը՝ առհասարակ խոզնակամ երկրագործ, բայց նախասիրութեամբ աւարառու, իր կողոպուտի բնազդին գոհացումը կը գտնէր հայ գիւղերէն: Ու կը քաջալերուէին կառավարութենէն: Տուրք ալ չէին վճարեր յաճախ: Կամ աւելի ճիւղքը, իրենց տուրքի բաժինը՝ Հայերն էին որ կը վճարէին:

Ատկից դատ, Քիւրտերը կառավարական որ եւ է ճնշումէ զերծ էին: Բռնապետութիւնը առաւելապէս կը գործէր Հայերուն վրայ, մինչ Քիւրտերու նախնական, գրեթէ նահապետական կենցաղը՝ իր անհրաժեշտ ազատութիւնը կը գտնէր բռնատիրական դրութեան ու կացութեան մէջ:

Այս վիճակին մէջ, անապատի քարոզ կը դառնար՝ ազատութիւն ճառել մարդոց, որոնք գոհ էին իրենց յատուկ ազատութենէն ...

Եւ սակայն, անկարելին իսկ պէտք էր փորձել՝ հայ

յեղափոխութեան դոյզն նպաստ մը բերելու համար: Ու պէտք է ըսել թէ թափուած ջանքերը բոլորովին ապարդիւն չէին անցներ: Նուէրներով, ցեղապետներու անձնասիրութեանց զգուումով, ոմանց դժգոհութեանց շահագործումով, կը յաջողէինք յաճախ ժամանակաւոր կապեր հաստատել Քիւրտերու հետ եւ ատեն մը, օգտագործել անոնց բարեացակամ տրամադրութիւնները:

Քիւրտերու հետ բարեկամութեան հաստատման ամենէն հաւատաւոր առաքեալն էր Գոէրգ Չավուշը որ արդէն իր սխրագործութիւններով համբաււոր էր աշիրէթներուն մէջ: Ինքը ծանօթ քրտական վարք ու բարքին եւ բարբառին, գիտէր իւրաքանչիւրին համեմատ լեզու թափելու գաղտնիքը:

Կրցանք բաւական սերտ յարաբերութիւններ մշակել քիւրտ աշիրէթներուն հետ, որոնց մեծ մասը, մեր յետագայ ճգնաժամային պահերուն դաւեցին անշուշտ, միանալով կառավարութեան ուժերուն եւ ըստ սովորութեան, թալանի տալով ու աւերելով գիւղերը: Բայց մաս մը գոնէ, եթէ մեզ չօժանդակեց իսկ, գոնէ չեզոք մնաց, ինչպէս Սասնոյ սահմանակից մէկ քանի ցեղեր, օրհասական մեծ կռիւներու պահուն:

Քիւրտերու հետ մեր բարեկամութեան գլխաւոր օգուտն այն էր որ մասամբ մը, անոնց միջոցով կրնայինք ապահովել գէնքի փոխադրութիւնը, զոր ստանձնած էին Շամիրամ գիւղացի Սողոն եւ Միսաքը եւ Ջրհոր գիւղացի Ակօն եւ Աճէմը, Վարդենիսցի Մուրատը եւ Յարդոնքցի Ճնտօն:

Մասնաւորաբար սերտ կապեր ունէինք հայակոչ Մուսա պէյի եղբօրը Ղասրմի հետ, որուն տան մէջ օրեր կ'անցընէինք:

Սասունի շրջանէն Պողոթնի Թելօ որ 400 « չախմախլը » ունէր իր տրամադրութեան տակ, կապուած էր մեղի եւ Սասնոյ կռիւներուն, գոնէ չեղոք մնաց ու չմիացաւ կառավարական ուժերուն եւ քիւրտ աւարառու խուժանին :

Խճուղ գիւղացի Տէրվիշը, ցեղապետ որ իր եօթը եղբայրներով, իսկապէս յեղափոխական խառնուածք ունէր, մինչեւ վերջ հաւատարիմ մնաց մեզ եւ օսմ. Սահմանադրութեան օրերուն, թուրք կառավարութեան դէմ ըմբոստանալով, արիւնահեղ կռուի մը բռնուեցաւ զօրքին հետ, Յալիճան գիւղին մէջ :

Ինքնաբերաբար մեզ մօտեցեր էր ուրիշ քիւրտ ցեղապետ մը, Տրպոյի Սայիտը, որ փափաք յայտներ էր տեսակցելու մեզ հետ եւ դաշինք կնքելու : Լուրը մեզ կը հաղորդէր Իշխանձորի Յարութիւնը, որ կը յայտնէր միեւնոյն ատեն թէ 25 ձիաւորներով մեզ կը սպասէ : Գէորգի գլխաւորութեամբ քսան հոգի, ընտրուած ամենէն ներկայանալի, բարձրահասակ, կարչնեղ հայ դուկներէն, գացինք տեսնուելու որոշուած վայրը, եւ անկից յետոյ, յաճախ, բարեկամական հանդիպումներ կը սարքուէին :

Մեզ բարեկամ էր եւ այդպէս ալ մնաց երկար ատեն, Սասունցի քիւրտ Շէկոյի ցեղը որ Ս. Աղբերիկի Շրջակայքը կը բնակէր : Աշիրէթին պետը Մուրատ յաճախ կը տեսակցէր Անդրանիկի եւ Գէորգի հետ :

Քիւրտերէն զատ, աշխատանք կը կատարուէր նաեւ քաղաքին քիչ թէ շատ լուսամիտ թուրքերուն մէջ : Այս դժուար, գրեթէ անկարելի գործը ստանձնած էին Կոտոյի Հաճին եւ Կորիւնը :

Թերեւս ասոնց աշխատանքներուն շնորհիւն էր որ

Չէքերիա անուանով թուրք աստիճանաւոր ոստիկան մը,
 զոր Չաքար կը կոչէինք յետոյ, մէկ քանի ուրիշներու
 հետ, փախաւ ու մեզ միացաւ եւ Սասնոյ կռիւներուն,
 քաջարար կռուեցաւ մեր կողքին՝ թուրք զօրքին դէմ:

Անցնինք այժմ դէպքերուն:

Քիւրտ աշիրէթապետին՝ Տրպոյի Սայիտին հետ մեր
 տեսակցութենէն քանի մը օր վերջն էր որ, երբ կելիէ-
 կիւզան կը գտնուէինք, Սէմալէն սուրհանդակ մը, նա-
 մակ մը կը բերէր թորգոմ ստորագրութեամբ:

Նամակը կը հաղորդէր թէ յեղափոխականներու 20
 հոգինոց ձիաւոր խումբ մը, թորգոմի առաջնորդու-
 թեամբ, կովկասէն մեկնելով հասած է Սէմալ:

Չէինք կրնար հաւատալ լուրին: Այնքա՛ն անակն-
 կալ էր եւ այնքա՛ն յանդուգն կը թուէր մեզ այդ քայլը
 ու մեծ՝ յաջողութիւնը: Որովհետեւ, լսեր էինք թէ մին-
 չեւ այն ատեն՝ կովկասէն Սասուն օգնական ուժ դրկե-
 լու ձեռնարկները գրեթէ առանց բացառութեան՝ ձախո-
 դեր էին:

Չինեալ խումբերը կովկասի մէջ կը պատրաստուէին
 մեծ գաղտնապահութեամբ. բայց հազիւ թէ կը յաջո-
 դէին թրքական սահմանը կտրել: Համիտի ոստիկանու-
 թիւնը լուրն առած կ'ըլլար արդէն ու զօրքը կը կտրէր
 յեղափոխականներուն ճամբան:

Այս պայմաններու տակ, թորգոմի խումբին անվը-
 տանգ ժամանումը անշուշտ մեզ հիացիկ ապշութեան
 պիտի մատնէր:

Իսկ ժողովուրդին խանդավառութիւնը աննկարա -
 գրելի էր: Քսան զինեալ ձիաւորներ՝ անշուշտ, մեծ ուժ
 մը չէին ներկայացներ: Բայց կուգային կովկասէն, հե-
 աուէն՝ կտրելով լեռ ու ձոր, անարգելով ամէն վտանգ,

խուսափելով թուրք ոստիկանին ու զօրքին զարհուրելի հսկողութենէն: Ժողովուրդին աչքին՝ անոնք յառաջապահներն էին գալիք կարեւոր ուժերու: Ու քանի որ խումբ մը յաջողեր էր անվտանգ Սասուն հասնիլ, պիտի գային եւ աւելի մեծ ուժեր: Այս հաւատքը կ'ոգեւորէր ժողովուրդը որ Սեմալի եւ Շէնըքի մէջ՝ ուրախութեան ցոյցեր կը կատարէր:

Ժողովուրդին չափ խանդավառուեր էինք նաեւ մենք եւ երբ Անդրանիկի կարգադրութեամբ, զացինք զանոնք դիմաւորելու եւ կելիէկիւզան առաջնորդելու, յուզիչ հանդիպում մը ունեցանք: Տարիներով իրարմէ բաժնուած եղբայրներու պէս՝ կարօտագին համբուրուելէ յետոյ, յուզումէն կուլայինք:

Կելիէկիւզանի ամբողջ ժողովուրդը ձորը լեցուած էր նորեկները ընդունելու: Ուրախութեան չափ ու սահման չկար: Սասունցին արդէն ինքզինքը ամէն տառապանքէ ու հարստահարութենէ իսպառ ազատած կը կարծէր:

Թորգոմի խումբին մէջ էին Մուրատը, Սեպուհը, Գուրբախը, Քեաֆթար Արշակը՝ որ յետոյ դարձաւ նշանաւոր Քեռին:

Նորեկները քանի մը օր հանգստանալէ յետոյ, պլատրացուցինք շրջանին բոլոր այն վայրերը, որոնք կըրնային ռազմագիտական արժէք ու կարեւորութիւն ունենալ:

Այս թուականէն երկու ամիս վերջ, երբ արդէն գիտէինք թէ կառավարութիւնը տեղեակ է Թորգոմի խումբին ժամանման եւ թէ հասնող օգնական ուժին թիւը՝ անոր սարսափահար երեւակայութեան առջեւ, հազարներու բարձրացած է, անհրաժեշտ կը դառնար հիմնա-

կան կարգադրութիւններ ընել՝ ինքնապաշտպանութիւնը դնելու համար կազմակերպական ամուր գետնի վրայ: Թուրք ժողովուրդին մէջ, բերնէ բերան տարածուած զրոյցները առասպելի կը վերածէին քսան հոգինոց խումբին ժամանումը: Իբր թէ հազարաւոր նոր հրացաններ բերած են անոնք իրենց հետ, մեծաքանակ ռազմանիւթ եւ մինչեւ իսկ թնդանօթ:

Թուրք կառավարութեան զգացած վախը որ զինքը կը մղէր անակնկալ եւ ուժեղ հարուածով մը կանխելու Հայերու հաւանական ըմբոստութիւն մը, մեր ժողովուրդին համար կը դառնար մարտական ոգեւորութեան ներշնչարան մը: Ու վտանգաւոր միջադէպերը կը շատնային՝ մեր գաղտնի եւ խոհեմ գործունէութիւնը մատնելով աւելի: Որոշուած էր ըմբոստութեան շեփորը հնչեցնելէ առաջ, երկարատեւ պատրաստութիւններ տեսնել: Միեւնոյն ատեն, Վասպուրականն ալ ոչ միայն տեղւոյն վրայ պիտի զօրացնէր իր յեղափոխական կազմը եւ ընդհանուր ըմբոստութիւն պատրաստէր, այլ եւ ի հարկին սերտ գործակցութիւն հաստատէր մեզ հետ եւ դրապէս օժանդակէր մարդով ու զէնքով: Վանէն Տարօն զէնքի փոխադրութիւնը կը կատարուէր Ախլաթի ճամբով: Բայց կառավարութիւնը չորս աչքով կը հսկէր ու բռնած էր բոլոր ճամբաները: Սասնոյ շրջանը, ինքն իր մէջ կիսանկախ, այս կերպով, տեսակ մը պաշարման վիճակի մէջ կը մնար, որ աւելի կը սաստկանար ամենօրեայ միջադէպերով: Գալիք խոշոր դէպքի մը նախազգացումը կ'ապրէինք:

Այս պայմաններու մէջ, որոշուեցաւ ընդհանուր ժողով մը գումարել, թէ կացութիւնը ուսումնասիրելու եւ թէ կարգադրութիւններ ընելու համար, մանաւանդ որ

Թորգոմ պիտի վերադառնար Կովկաս եւ կ'ուզէր իր հետ ստոյգ տեղեկութիւններ տանիլ ու պահանջներ ներկայացնել Հ. Յ. Դ. Բիւրոյին: Ժողովականներէն յիշեմ կարեւորները. — Տեղւոյն ուժերէն՝ Հրայր, Վահան, Անդրանիկ, Կոտոյի Հաճի Յակոբ, Կորիւն, Կայծակ — Վաղարշակ. Թորգոմի խումբէն, Թորգոմ ինքը, Սեպուհ, Մուրատ եւ Դուրբախ:

Անհրաժեշտ նկատուեր էր նաեւ հրաւիրել Սասնոյ շրջանի իշխանները, որովհետեւ ժողովը բախտորոշ կարեւորութիւն մը պիտի ստանար դէպքերու պարտագրութեամբ եւ բոլորին տպաւորութիւնն էր թէ մեր վերջին ժողովը կրնայ ըլլալ: Հոն էին Շէնըքի ոչս Միքայէլը, Սեմալի Քեաթիպ Մանուկը, Տափըք գիւղացի Գրէն, Կելիէկիւզանցի Քեաթիպ Աւէ եւ ոչս Աւէ, Կոբայ Յարէն, Աւերմայ Օսոն, Յիթէնքի Մակարը, Եզկաթայ Գրքօն, Աղբի գիւղացի տիրացու Սինոյեանը, Զորերու Ակօն, Սպաղանաց Մակարը, Տալուրիկէն Համզէ, եւ Թաթար, Այդու տունէն Պալօ Գեւօն եւ Սաչօն, Հոսնուտի Տէր Գաբրիէլը:

Ժողովը որ տեղի կ'ունենար Կելիէկիւզանի բարձունքին վրայ, Ռշկներ կոչուած վայրը, երկար քննեց կացութիւնը, կառավարութեան մտադրութեան մասին մեր մարդոց միջոցաւ քաղուած տեղեկութիւնները, մանրամասնօրէն ծանօթացաւ Սասնոյ շրջանի գիւղերու տրամադրութեան, սեփական ուժերու, մարդու եւ զէնքի ռազմանիւթ եւ ուտեստի ընդհանուր հաշուեցոյցը հանեց եւ որոշեց պահեստի բոլոր զէնքերը բաժնել: Այս որոշման վրայ, Տալուրիկցիներուն յանձնուեցաւ 37 կրտոր զէնք, Կելիէկիւզանցիներուն 70 կտոր. նաեւ ուրիշ գիւղերու:

Կարգադրուեցաւ որ Հրայր շարունակէ Դաշտի իր կազմակերպական աշխատանքները, բայց այս անգամ մասնաւոր ուժ տալով զէնքի գնման: Կայծակ — Վաղարշակ՝ Թորգոմի հետ պիտի մեկնէր Կովկաս, անկից ժընեւ եւ յետոյ մասնակցէր Դաշնակցութեան Ընդհ. ժողովին, իբր մեր շրջանի պատգամաւոր: Նշանակուեցաւ նաեւ զինուորական խորհուրդ մը որուն անգամ էին Անդրանիկ, Մուրատ, Սեպուհ, Սէյտո Պողոս, Աւօ, Կայծակ Առաքել, եւ ես: Այս կազմին մասնակցեցաւ Գէորգ Վանէն վերադարձին:

Այս ժողովին մէջ ծեծուեցաւ նաեւ ընդհ. հրամանատար մը ունենալու հարցը: Երկու թեկնածուներ կային, Անդրանիկ եւ Մուրատ:

Մուրատ կը պնդէր որ հրամանատարութիւնը կը պատկանի Անդրանիկին, իբր ծանօթ տեղին, տեղացիներուն, եւ մանաւանդ զինեալ ուժերուն եւ իր քաջութեամբ ու փորձառութեամբ:

Անդրանիկ կ'ընդդիմանար ու կ'առարկէր իր յողմութիւնն ու առողջական աննպաստ վիճակը:

Սեպուհ եւ Մուրատ, առանձին տեսակցութեան մը մէջ, կրցան համոզել Անդրանիկը որ նշանակուեցաւ ընդհ. հրամանատար կռուող ուժերուն:

Ժողովը ստիպուեցաւ մասնաւոր ուշադրութեամբ քննել փախստական երիտասարդներու համախմբման հարցը՝ Սասունի մէջ: Քիչ անդին, կ'ըսէի թէ ամէն օր միջադէպեր կը պատահէին գիւղերուն կամ քաղաքին մէջ:

Յեղափոխական փոթորկալի շունչ մը վարակեր էր հայ երիտասարդները որոնք իրենց սովորական խոհեմութիւնը մոռցեր էին: Օր չէր անցներ որ չլսէինք թէ

երիտասարդներ ոստիկան մը զինաթափ ըրած են եւ աւոր զէնքը շալկած՝ Սասուն ապաստանած են : Չէնք հայթայթելու ամենէն դիւրին միջոցն ալ այդ էր , բայց ամենէն ալ վտանգաւորը :

Կառավարութիւնը այդ պարագան ալ նկատի առեր էր եւ խստացուցեր գիւղերու հսկողութիւնը , եւ հայ եւ թուրք լրտեսներու միջոցով :

Այս կացութիւնը կրնար վտանգաւոր հետեւանքներ ունենալ պաշտպանութեան գործին տեսակէտէն եւ Սասունը դնել ասեղ սպառնալիքի մը տակ : Ուրիշ միջոց չունէինք , եթէ ոչ հրահանգել կոմիտէներուն որ իրենց կարգին , խիստ հսկողութիւն կազմակերպեն եւ յորդարեն երիտասարդները որ միջադէպերէ խուսափին : Իբրեւ գործնական քայլ , որոշուեցաւ Կոտոյի Հաճիին առաջնորդութեամբ եւ իմ ալ մասնակցութեամբ , խումբ մը ղրկել Դաշտ , հսկելու հրահանգներու գործադրութեան :

Իսկ Վահան Տողրամաճեանը ըստ առաջնոյն պիտի շարունակէր իր լիազօր գործիչի աշխատանքները :

Պէտք է շեշտեմ թէ այս բոլոր կարգադրութիւնները յարձակողական որ եւ է նպատակ չէին հետապնդեր , մանաւանդ որ տակաւին ընդհանուր ապստամբութեան ժամը չէր հնչած մեզ համար : Պարզապէս կը պատրաստուէինք սպառնալի անձանօթին նախատեսութեամբ : Կը տեսնէինք վտանգը որ կը յառաջանար հորիզոնէն , կը մօտենար քայլ առ քայլ եւ մեր դիմադրութիւնը կը կազմակերպէինք :

Այս կերպով աշխատանքի բաժանումը կատարելէ յետոյ , ժողովը ցրուեցաւ եւ ամէն մէկը լծուեցաւ իրեն յանձնուած գործին :

Կոտոյի Հաճիին հետ, իջանք Չխուրի շրջանը մեր պարտքը կատարելու, օգնելով կոմիտէներուն եւ ընկերներուն: Միեւնոյն ատեն համաձայն տրուած հրահանգներուն՝ հանգանակութիւն կը կատարէինք գիւղերուն մէջ. կը հաւաքէինք ինչ որ ժողովուրդը կրնար տրամադրել, ալիւր, ցորեն, զգեստ, երբեմն ալ դրամ եւ Տերգեվանքի եւ Մոկունքի ճամբով կ'ուղարկէինք Սասուն: Աւ ժողովուրդը այս անգամ չէր խնայեր: Կուտար ինքզինքն իսկ զրկելով: Բոլորը կարծես, իրարու հետ մրցումի ելած էին ետ շմնալու հանգանակութենէն, որ այս անգամ, կը հաւատային թէ պաշտպանութեան գործին պիտի ծառայէ: Զոհաբերութեան անսովոր տրամադրութիւն մը վարակած էր ժողովուրդը:

Պզտիկ օրինակ մը՝ հազարներուն մէջէն: Ղարս գիւղն էինք: Երեկոյեան ժողովուրդը խոնուեցաւ մեր գտնուած վայրը: Եկեր էին իրենց հետաքրքրութեան ծարաւը յագեցնելու: Տեղեկութիւններ կ'ուզէին ընդհանուր կացութեան, կառավարութեան մտադրութեան եւ յեղափոխական ուժերուն մասին: Հաճին գոհացուց բոլորը, յուսադրելով ու քաջութիւն ներշնչելով: Ու սկսաւ հանգանակութիւնը: Նուէրները կը տեղային: Երբ հանգանակութիւնը վերջացաւ, Ղարսայ Ակօն որ մեր զինուորներէն էր, յայտարարեց որ այդ օր այլ եւս ընելիք բան չունէինք եւ հետեւաբար, լաւագոյն էր որ ամէն մարդ իր տունը դառնար: Ներկաներէն ոչ ոք կ'ուզէր շարժիլ սակայն: Ակօն կրկնեց իր խօսքը, երբ յանկարծ, անկիւնէ մը վախկոտ ձայն մը լսուեցաւ.

— Եղբայրներ՛ր, զիս ալ լսեցէք:

Ներկայ տեղացիներէն ոմանք որ կը ճանչնային խօսողը, նեղացան:

— Կրողը տանի քեզ ալ, ըսելիքդ ալ: Եկեր ենք քե՞զ լսելու:

Հաճին սակայն ընդհատեց աղմուկը եւ յայտնեց թէ ինքը կ'ուզէ լսել:

Անկիւնէ մը, դանդաղ քայլերով սկսաւ յառաջանալ կոյր աղջիկ մը, որ մուրացկանութեամբ կ'ապրէր. մօտեցաւ Հաճիին եւ դողդոջ ձայնով ըսաւ.

— Մի մերժէք եղբայրս. այս ալ իմ նուէրս թող ըլլայ:

Ու սեղանին վրայ դրաւ 5 զրուշ մանրուք, զոյգ մը գուլպայ, մաս մը ցորեն եւ գարի՝ տոպրակի մը մէջ:

Բոլորս ալ յուզուած էինք:

Կոյր աղջկան այդ սրտաբուխ նուէրը, կարծես մեզ կը դնէր նուիրական նոր ու ծանր յանձնառութեան մը տակ, որմէ կեանքի գինով միայն կրնայինք ազատել:

Զանազան գիւղերու մէջ ալ նոյն աշխատանքները կատարելէ յետոյ, եւ մասնաւորաբար, յորդորելէ յետոյ երիտասարդները որ զգուշանան թուրք ոստիկաններու զէնքերը կողոպտելէ եւ այլ միջադէպերու տեղի տալէ, վերադարձանք Սասուն: Քանի մը օր յետոյ՝ դաշտէն հասաւ Հրայրն ալ ու ամբողջ խումբով մեկնեցանք Քերին սարի ստորոտները, ժամանակ մը հոն անցընելու եւ կառավարութեան հետապնդումներէն զերծ մնալու համար: Հոն մնացինք երկու ամիսէն աւելի: Գիտնալով որ կառավարութիւնը հայ եւ թուրք լրտեսները ձգած է մեր ետեւէն, զգուշական ամէն միջոցներու դիմած էինք: Գիշեր ցերեկ, պահակներ կը հսկէին խումբին ապահովութեան:

Օր մըն ալ, երբ մեր պահակները կը հսկէին Կեապլորի ստորոտը արածող մեր ձիերուն վրայ, կը նշմարեն

երեք ոստիկաններ, որոնք զգուշութեամբ կը տածէին շրջակայքը եւ բաներ մը փնտռելու ձեւերն ունէին :

Մեր պահակները Մշեցի Լեւոն Ղազարեան, Մարնիկցի Պօղէն, Մակարի տղան Կարօն կը բռնեն զանոնք ու կը բերեն մեզ մօտ : Երեք օր շարունակ հարցաքննութեան ենթարկեցինք զանոնք : Հակառակ իրենց ուրացումներուն, հասկցանք որ կառավարութեան կողմէ զրկուած էին մեր թաքստոցը երեւան հանելու : Տափըկ գիւղացի էին եւ հետեւաբար, այդ կողմերը լաւ կը ճանչնային : Որոշուեր էր զանոնք մէջտեղէն վերցնել, որովհետեւ ազատ արձակել՝ պարզապէս պիտի նշանակէր մատնել մեր թաքստոցը : Բայց որպէս զի անոնց անյայտացման մասին՝ կառավարութեան կասկածները հեռանան մեր վրայէն, յարմար դատուեր էր թաքստոցէն վեց ժամ հեռու, Բոտկանցի քիւրտ քոչուորներու ճամբուն վրայ զանոնք սպաննել եւ դիակներուն քով ձգել անոնց զէնքերը :

Եւ որպէս զի ոստիկաններուն ալ որ եւ է կասկած չներշնչուի իրենց ճակատագրին մասին, իրենց ըսուեցաւ թէ ազատ են, բայց որպէս զի որ եւ է վտանգի չենթարկուին, մէկ օրուան ճամբայ, խումբ մը պիտի ընկերակցի իրենց : Որսորդ Գէորգի, Կիւմիւլիւշխանէցի Աւետիսի եւ երեք Սպաղանքցիներու հետ ճամբայ ելանք : Նոյն իրիկունը անցուցինք Սպաղանքի մէջ : Միւս օր, Ծովասարի մօտերը նշմարեցինք թէ քիւրտ քոչուորներու կրակները կը վառին : Ժամանակը եկած էր որոշումը գործադրելու : Տրուած նշանի մը վրայ, երեք ոստիկանները հրացանազարկ եղան : Քիւրտ վրանաբնակները սկըսան զարհուրելի ոռնոց մը արձակել. վրանավայրէն հըրացաններն սկսան որոտալ : Քիւրտերը կը կրակէին օ-

դին, առանց հասկնալու եւ գիտնալու թէ ի՞նչ է կ'ընեն: Մենք մեր գործը վերջացնելէ յետոյ, լուեր էինք: Պարապ փամփուշտ վառելու եւ կռուի բռնուելու օրեր չէին: Ստուգելէ յետոյ թէ ոստիկանները այլ եւս չեն շնչեր, ուրիշ ճամբով մը վերադարձանք թաքստոց:

Այս միջադէպէն վերջն էր որ, երկրորդ ժողովի մը մէջ՝ վերջին կարգադրութիւններ կատարուելէ յետոյ, դէպի Կովկաս ճամբայ ելան Թորգոմ, Դուրբախ, Վաղարշակ եւ Որսորդ Գէորգ:

Ու կառավարական հետապնդումներն ու խստու – թիւնները որոնք կանգ չէին առներ. բայց պարբերաբար կը մեղմանային, վերսկսան նոր թափով, մինչ Հայերը իրենց առօրեայ գլխաւոր մտահոգութիւնը դարձուցեր էին զէնք մը ճարել ամէն գինով: Մեր բարեկամ Քիւրտերն ալ կ'օժանդակէին զէնքի ու ռազմանիւթի հայ – թայթման միջոցներու վրայ եւ գլուխ ալ կը յոգնեցնէին:

Այսպէս Սասնոյ շրջանի քիւրտ ցեղապետներէն Մուրատ որ յաճախ կը տեսակցէր Անդրանիկի եւ Գէորգ Չավուշի հետ: Օր մը, տեսակցութեան մը ընթացքին, կ'ըսէր.

— Քանի որ եւրոպական պետութիւնները ձեզի հետ են, եւ անոնք ալ կ'ուզեն Թուրքին կործանումը, ինչո՞ւ ձեր մեծերը չեն դիմեր անոնց որ դրամ ալ ստանան, զէնք ալ:

Մուրատ իր կարճ խելքով՝ այդ միջոցն էր գտեր հայ յեղափոխականներուն զէնք հայթայթելու:

Իսկ Անդրանիկ ու Գէորգ ճղակոտոր կ'ըլլային բարձրը դիւանագիտական արգելքներ բացատրելով եւ միւս կողմէ հաւաստելով թէ զէնքի ու ռազմանիւթի անհուն մթերք ունինք. բայց ժամանակին կը սպասենք բերել

տալու եւ ժողովուրդին ցրուելու համար . . .

Իսկ աղքատ գիւղացին, հին զէնքի մը փոխարէն, իր ամբողջ խնայողութիւնը կը պարպէր Չէրքէզներու ասիւր, որոնք միւս կողմէ կ'երթային կառավարութեան յայտնելու զնորդ հայուն անունը:

Ու կառավարութիւնը որ ամենէն աւելի կը վախնար Տարօնի եւ Սասնոյ ժողովուրդին զինուելէն, պահ մը՝ դիտումնաւոր կերպով թուլացնելէ յետոյ հսկողութիւնը, յանկարծ երեւան կը հանէր իր շուները թարմ կատաղութեամբ:

Բայց այդ օրերուն, երբ ժողովրդային մշտարթուն բնազդը կը հոտուրտար վերահաս վտանգը անօրինակ սաստկութեամբ, զէնքի գնումը կը հետապնդուէր անսովոր յամառութեամբ եւ յանդգնութեամբ, կառավարութիւնը շփոթի մատնելու աստիճան: Այնպէս որ որոշեր էր աւելի ծանր ու կտրուկ միջոցներու դիմել: Ալայի պէյ շէրքէզ Հիւսնիի հրամանին տակ դրուեր էր նաեւ ձիաւոր ոստիկանութիւնը՝ խուզարկելու համար ամբողջ շրջանը, որ բաժնուեր էր երեք մասի, ամէն մէկ մասի խուզարկութիւնն ու հսկողութիւնը յանձնուելով զանազան բարձրաստիճան սպաներու հրամանին: Սիստ հրահանգներ տրուած էին զէնք ունեցողները ձերբակալելու եւ զէնքերը գրաւելու:

Լրտեսները գործի վրայ էին:

Ու դաշտի երիտասարդները նորէն փախստական կը դառնային եւ իրենց զէնքերով կը խուժէին Սասուն ապաստանելու: Տեղական կոմիտէներու անդամներէն շատերը ձերբակալուած ու բանտարկուած էին, կազմակերպական գործը խախտելու եւ յեղափոխութիւնը առանց կասկի ու գլուխի ձգելու մտադրութեամբ:

Բանտն էին Հրայրի եղբայրը՝ Ղըզլաղաճցի Մանօն, նոյն գիւղէն Սարգիս Մելիքեան, Շէխլանցի Պետրոս, Քիւրտմէյտանցի Գրգօն, Գոմերցի Տէր Սարգիս, եւ իր եղբայրը Օվիկ, Փեթարցի Պետօն, Կարնեցի Մկրտիչ Սողոմոնեան եւ Խաչիկ Սողոմոնեան, Ծափնացի Մկրօն, Յառինճվանքցի Մուշեղ, Յառինճու Սահակ, Ջրիկցի Տէր Մուշեղ, Օղունքցի Մխիթար, Մոկունքցի Դվօն, Տերգեվանքցի Մուշեղ եւ Վարդանի եղբայրը Օվսօն, Խասգիւղցի Տէր Քերովբ, Մկրագոմցի Օվօն, Վարդենիսցի Յարութիւն, Ղարսեցի Գասպար եւ Ակօն, Յերրշտերցի Վահան, Յրօնաց Մուրատ, Յալիճանցի Սարուխանի Արթին, Յախճանցի Մկրօն, Հարթերթու Օվիկ, Յիսաւայ Արութ, Կուրավայ Սըլօն, Սուլուխցի Մեսրոպ, Յավրանցի Ասօն եւ Արամ, Գոմսեցի Տարօն, եւ այլն :

Հակառակ այս ուժեղ ճնշումին ու հարստահարութեան, խանդավառ երիտասարդութիւնը կանգ չէր առներ որ եւ է քայլի առջեւ, որ կրնար զէնք մը հայթայթել կամ որ եւ է ուժ տալ յեղափոխութեան :

Մանրավէպ մը անձկութեան եւ անորոշ սպասման այդ օրերէն, կրնայ գաղափար մը տալ ընդհանուր տրամադրութեան մասին :

Արաղցի Լեւոն, 18 տարեկան, կը ծառայէր Մուշի մէջ գործող յոյն բժիշկի մը տան մէջ : Կը վայելէր իր տիրոջ կոյր վստահութիւնը : Բայց յեղափոխութեան օժանդակելու իր փափաքը այնքան զօրաւոր էր եւ իր նիւթական միջոցները այնքա՛ն ճղճիմ, որ իր տենչը գոհացնելու մէկ միջոց կը գտնէ, — գողնալ : Օր մըն ալ կը կողոպտէ յոյն բժիշկին 170 ոսկին եւ մէկ ոսկիի չափ ալ մանրուք դրամ ու կը բռնէ Սասնոյ ճամբան : Կը ներկա-

յանայ Վահանին ու Անդրանիկին, որոնց կը յանձնէ ամբողջ գրամը՝ իբր յեղափոխութեան իր տուրքը, առանց աղբիւրը յայտնելու:

Բայց չուշանար Պոլոյեան Մկրտիչի նամակը, որ կը յայտնէր եղելութիւնը եւ յոյն բժիշկին ալ դիմումը՝ տեղական կոմիտէին: Դրամը անշուշտ վերադարձուեցաւ բժիշկին, բայց տղան ալ, կուշտ կշտամբանքէ մը վերջ, վար դրուեցաւ եւ յետագային, Սասնոյ կռիւներուն, քաջաբար կռուեցաւ:

Ուրիշ մանրավէպ մը: Օր մը, մեր խումբին ներկայացաւ կայտառ, համակրելի երիտասարդ մը Յերշտէր գիւղէն Մքօ, իր նման 4 - 5 երիտասարդներու գլուխն անցած:

— Ըշտէ՛, մենք եկանք ըսաւ:

Ապշած, երեսը նայեցանք. ո՛չ ղինքը կը ճանչնայինք, ո՛չ ալ իր ընկերները. ո՛չ ալ որ եւ է ծանօթ ունէին իրենք՝ մեր մէջ:

— Ձեզ ո՞վ կանչեց, ըսինք:

— Դո՛ւք ...

— Ի՞նչպէս թէ մենք:

— Հապա՞, ըսաւ խնդալով, ի՞նչ է որ կ'երգէք՝

Ո՛վ որ քաջ է, ի՛նչ կը սպասէ,

Արդէն ժամանակ է, թող գայ ...

ահա, արդէն ժամանակն է, մենք ալ քաջ ենք. — եկանք:

Եկան, մնացին, ու քաջաբար ալ կռուեցան ժամանակին:

Ահա ուրիշ յատկանշական դէպք մըն ալ, որ դըժբախտաբար, նմանը չուներ:

Այդ ժամանակ, Արազ գիւղին մէջ, թրքական զօրամաս մը կար: Այդ զօրամասին ենթասպաներէն ծա-

գումով թուրք, Չեքերիա, զոր հայացնելով՝ Չաքար կը
կանչէինք, քանի մը ուրիշ Սամսոնցի զինուորներու
հետ, դիմում կը կատարէ տեղական կոմիտէին, խնդրե-
լով որ զիրենք ընդունին յեղափոխական խումբերուն
մէջ: Կ'երդուրննային թէ իրենք թէեւ թուրք սրտանց,
սակայն կ'ատեն թուրք բռնակալութիւնը որ հաւասարա-
պէս կը ճզմէ նաեւ թուրք ժողովուրդը, թէ Հայուն ու
թուրքին միջեւ ատելութեան որ եւ է պատճառ չեն տես-
ներ ընդհակառակն: Ու կ'ուզեն կռուիլ բռնութեան
դէմ:

Կոմիտէն, բնականաբար ահանջ չէր կախեր իրենց
երդումներուն ու հաւաստիքներուն. բայց քաղաքավար-
օրէն մերժելու համար, ջերմօրէն դնահատեր էր իրենց
այդ փափաքը եւ յայտներ էր թէ յեղափոխութեան եւ
բռնութեան դէմ պայքարին աւելի մեծ ծառայութիւն
մատուցած կ'ըլլան, եթէ մնան զօրքին մէջ ու ջանան
զայն վարակել իրենց ազնիւ զգացումներով ու գաղա-
փարներով:

Այս կերպով, ճամբեր էր դանոնք:

Իայց ըմբոստ թուրքերը չմնացին այդ մերժումին
վրայ: Յետագային անոնք առիթը գտան Սասուն, մեր
քով բարձրանալու եւ մնալու, ու մեծ կռիւներու ըն-
թացքին, բաւական ալ օգտակար եղան, մանաւանդ Չէ-
քէրիան, որ ծանօթ թրքական բանակի շեփորի լեզուին,
կռուի օրերուն, զայն կը թարգմանէր Անդրանիկի, եւ
ան ալ ըստ այնմ, աւելի ծանօթ կացութեան եւ թուրք
բանակի մտադրութեան, հրահանգներ կուտար խում-
բերուն:

Այս կացութիւնը աւելի կը ծանրանար հետեւեալ
միջադէպով, որ սովորական շրջանի մէջ, չէր կրնար

անշուշտ նշանակելի անդրադարձում մը ունենալ. սակայն մտքերու յուզումնավար վիճակը կը մեծցնէր անոր իմաստը. ինչ որ մեր ալ ուզածն էր: Հայ լրտեսները կը նեղէին մեզ: Մոռցեր էին իրենց նման վատերու քանիցս ստացած մահացու դասը: Յիշեցնելու առիթը կը փնտրուէինք որ չուշացաւ: Մուշէն՝ Չորի թաղեցի Մալխասի Վահան, որ իր անպատիժ մատնութիւններէն բաւակա՛ւ լրբացեր էր, մէկ քանի թուրք ոստիկաններու հետ Շէնըք բարձրացեր էր, իբր թէ տուրք հաւաքելու համար: Արդէն, համաձայն տրուած որոշման մը, ատենէ մը ի վեր զինքը կը հետապնդէինք: Երբ լուրը մեզ հասաւ, փոքր խումբով մը ճամբայ ինկանք եւ դարանի մտանք անտառի մը մէջ, ուրկէ ստիպուած էին անցնիլ՝ վերադառնալու համար: Չուշացան: Կեցուցինք ոստիկանները: Վահանի զէնքերը առինք, յանձնեցինք թուրք ոստիկաններուն եւ լրտեսը վար դնելով ճամբեցինք միւսները:

— Դէ՛հ, գացէ՛ք, ըսինք. Վահանը մինչեւ այսօր ձեզ ծառայեց. ասկից վերջն ալ մեզ պիտի ծառայէ:

Այսպէս շարժելով, միամտօրէն կը կարծէինք մեր ուժին ու յանդգնութեան փաստը տուած ըլլալ բռնապետութեան:

Աւելորդ է ըսել թէ լրտեսը երկար չապրեցաւ թուրքերուն մեկնումէն յետոյ:

Արդէն 1903-ի վերջերն էինք: Հրայր դարձեալ Սասուն վերադարձեր էր Դաշտէն, եւ ընդհանուր կացութեան ու ժողովուրդին տրամադրութեան մասին զեկոյց տալէ յետոյ, խորհրդակցութեան նստեր էր:

Լուրերը մեզ ուրախացնելու բնոյթը չունէին: Մեր լրտեսները որոնք թուրք լաւատեղեակ շրջանակներու

հետ սերտ կապեր ունէին, կը հաւաստէին թէ կառավարութիւնը մտադրած է վերջնապէս, գարնան ձեռնարկել գործողութեանց՝ Սասնոյ շրջանը մաքրագործելու համար: Ու մենք տակաւին պատրաստ չէինք: Ու վանը՝ որուն վրայ մեծ յոյսեր դրեր էինք, քաջալերական լուրեր չէր տար: Դէպքերը կը գահավիժէին ու կացութիւնը հետզհետէ կը վատթարանար, մանաւանդ քաղաքին մէջ, ուր աչքի գարնող բոլոր Հայերը, բացի անշուշտ կառավարութեան վստահելիներէն, վայրկեանէ վայրկեան ձերբակալուելու սպառնալիքին տակ էին:

Ու Ջինուորական խորհուրդը պէտք կը տեսնէր նոր կարգադրութիւններու, կարելի արագութեամբ գործադրելու հրահանգով:

Հրայր նորէն կը վերադառնար Դաշտ, իր գիւղացիի զգեստները կռնակն անցուցած, կազմակերպութիւնը պահելու լարուած այլ զուսպ, կազմակերպելու, հսկելու, քաջալերելու ժողովուրդը եւ միշտ, զէնք գնելու:

Մուրատ կ'անցնէր Լաճկանի շրջանը՝ գլխաւորաբար տեղւոյն պաշտպանութեան դիրքերը ուսումնասիրելու:

Ջինուոր Գրիգոր, Ղարաբաղցի, որ ուսսական բանակի ենթասպայ էր եւ մինչեւ այն ատեն զինուորներու մարզանքով ու դաստիարակութեամբ կը զբաղէր, Կորիւնի հետ կ'իջնային Դաշտի շրջանը:

Սեպուհ կ'երթար Հաւատորիկ: Գլխաւորաբար, անոր գործը պիտի ըլլար մէկ քանի զինագործներ ճարել, հին զէնքերու նորոգութիւնը փութացնելու համար: Երկու զինագործներ գտեր էր ան, զոր համոզեր էր հազար դժուարութեամբ մէկը՝ նոյն իսկ, խորամանկ Հայ մը. խաբելով բերեր էր Սասուն, ուր մեր զինագործին Ա-

խալցիսացի Մատոյին հետ, բաւական գործ տեսան :

Ամենէն տաժանելին եւ մտահոգիչը՝ հացի հայթայթումն էր : Առնուազն մէկ քանի ամսուան բաւելու չափ հացի մթերք ունենալու էինք, երբ կռիւները սկսէին : Այդ գործն ալ յանձնուեր էր ինձի : Անդրանիկի հետ, մէկ քանի մարդ առած, գացինք Չորուտներ ըսուած վայրը փուռ մը շինելու : Փուռը հազիւ վերջացուցեր էինք երբ փլաւ, յուսահատութեան մատնելով մեզ : Անցանք այս անգամ, ուրիշ շրջան մը՝ Դաղվրներ, ուր յաջողեցանք այս անգամ ամուր փուռ մը շինել եւ սկսիլ հացի պատրաստութեան : Երեք ամսուան չափ տեւեց այս աշխատութիւնը : Ամէն օր մեծ քանակութեամբ հաց կը պատրաստէինք ու, մանաւանդ պակցամատ, լաւ մը չորցնելէ յետոյ, որքան կարելի է ամբօրէն պատսպարած չոր խտտի, չուլի ու սնտուկի մէջ, թաղել կուտայինք դանադան վայրեր, ուր համաձայն Անդրանիկի նախատեսութեան, կրնայինք կռիւներ ունենալ :

Սասնոյ կռիւներու նախօրեակին, մօտ 300 տոպրակ հաց մթերած էինք, իբրեւ պահեստի ուտեստ :

Այս աշխատանքները, գրեթէ առանց խանգարող միջադէպի տեւեցին մօտ երեք ամիս :

Սովորական բախում մը միայն եկեր էր պահ մը խռովելու սրտերը : 1904-ի փետրուարի երկրորդ շաբթուն էր : Հրայր որ տենդագին աշխատանք կը թափէր Դաշտին վրայ, որոշեր էր Շրջանի ներկայացուցչական ժողով կատարել այդ օրերուն : Իսկ կազմակերպական անհրաժեշտ աշխատանքներու համար, Յոնան ղրկեր էր փոքր խումբ մը, որուն մէջ էին Կորիւն, Կայծակ Առաքել, Եղօն, Միհրանը, Յրօնքցի Մուրատը, երբ տուրքերը գանձելու համար, ոստիկանները կը հանդիպին

գիւղը: Կարելի չեղաւ ստուգել թէ մատնութիւն. կա -
տարուած էր: Ոստիկանները նախայարձակ եղեր էին:
Մերոնք նախ չէին ուզեր պատասխանել. սակայն, երբ
կռիւր անխուսափելի դարձեր էր, պարտութեան ու փա-
խուստի մատներ էին ոստիկանները եւ իրենք ալ գիշե-
րանց ճամբայ ելլելով, ապաստաներ էին Մատնայ վանք:

Կառավարութեան համար, հարկահաւաքութիւնը
յարմար առիթ մըն էր նաեւ գիւղերը լրտեսելու: Եւ
1904-ի սկիզբէն մինչեւ ապրիլ, մինչ մէկ կողմէ ուժ կը
հաւաքէր եւ Սասունը կ'առնէր տեսակ մը պաշարման
շղթայի մէջ, միւս կողմէ գիւղ չէր ձգեր որ քանիցս չըն-
դունէր հարկահաւաքներու անախորժ այցելութիւնը:

Յոնանի կռուէն առաջ, արդէն Սասուն բարձրացեր
էին Խասգիւղի Տէր Քերովբէն եւ Տիգրանը: Այդ կռուէն
յետոյ, դարձեալ սկսաւ զինեալ եւ անգէն փախստական-
ներու շարանը դէպի Սասուն: Իրարու ետեւէ լեռ բարձ-
րացեր էին Խասգիւղի Մովսէսը տասնեակ մը կտրիճնե-
րով, Մուշէն՝ Կոտոյի Հաճիին եղբայրը՝ Համբօն, Սէ-
մէրճեան Ռաֆայէլը, Էրզրումցի Յարեթ Մամիկոնեա-
նը, Տավուտենց Ախօն, Վերին Թաղեցի Պաչիկը, Աւագ-
եան Արամը, Մոկաց Ղազարը, Սպանդարենց Սամօն,
Տիգրան Հլղաթեանը եւ ուրիշներ:

Կարգ մը քիւրտ ցեղախումբերու մէջ ալ, դէպի Հա-
յերը համակրանքի նոր շարժում մը ծայր տուեր էր, ո-
րուն դրդապատճառը՝ յեղափոխական ուժերու մասին
հիւսուած առասպելներն էին, որոնք բերնէ բերան՝ մին-
չեւ բանտերը տարածուած էին:

Մուշի բանտը կը գտնուէր նաեւ քիւրտ ցեղապետ մը
Ջիրբանցի Իպօն որ տասնեւհինգ տարուան դատապար-
տուած էր: Այս մարդը որ Թուրքերու հանդէպ բարի

տրամադրութիւններ չէր որ կը սնուցանէր, տեսնելով
 հայ քաղաքական բանտարկեալներու բազմութիւնը եւ,
 սկսեր էր հետաքրքրուիլ անոնցմով, եւ ուզեր էր իր ցե-
 ղախումքին եւ Հայոց միջեւ բարեկամական յարաբե-
 րութիւններ հաստատուած տեսնել: Այս իմաստով ալ
 խօսակցութիւններ կ'ունենայ Կարսինու Մկրտիչի հետ,
 ու խօսակցութիւնները այնքան կը զարգանան որ, յան-
 գեցան գործնական քայլերու: Մկրտիչ՝ բանտէն, իր
 զաւկին Մուշեղի միջոցաւ լուր ղրկեր էր Գէորգին եւ
 Անդրանիկին: Շէյխ Իպօ որուն մեծ ազդեցութիւն ունէր
 իր զաւկին՝ ցեղապետ Սայիտի, նման թելադրութիւն-
 քեր էր ըրեր:

Սայիտ որ իր կողմէն առեւանգուած հայ կնոջ մը
 հետ ամուսնացեր էր, Գէորգի հաղորդեր էր իր տրամա-
 դրութիւնը բարեկամական դաշինք կնքելու հայդուկնե-
 րուն հետ եւ հանդիպում մը կ'ուզէր:

Այս լուրին կը զուգադիպէր գրեթէ Բշարայ Սալիւի
 նախկին բարեկամին Բողբայի աշիրէթապետ Թելոյի
 դիմումը՝ Անդրանիկի հետ տեսակցութեան մը համար,
 Քոփցի Արէի եւ Բարթոյի միջնորդութեամբ:

Զինուորական Մարմինը որոշեց օգտագործել ներ-
 կայացած այս առիթները եւ բարեկամութիւն հաստա-
 տել յիշեալներուն հետ, ի հարկին անոնց ուժերէն օգ-
 տուելու, կամ գոնէ, տազնապալի սլահերու մէջ, անոնց
 չեզոքութիւնը ապահովելու յոյսով:

Թելոյի հետ տեսակցութիւնը տեղի պիտի ունենար
 Գեղաշէնի մէջ:

Կազմով եւ զգեստի մաքրութեամբ ամենէն աւելի
 ներկայանալիներէն՝ քսան հոգի զատուեցանք ընկերակ-
 ցելու Անդրանիկի: Նոյնքան բազմութեամբ գրեթէ, Գե-

դաշէն եկաւ թելօն, որ հիւրասիրուեցաւ Գեղին ըէսին՝
Գրէի կողմէ: Կռիւներու ընթացքին, այս ցեղախումբը
որ Սասնոյ սահմանակից էր եւ առանց իր գոյութիւնը
վտանգելու չէր կրնար մեզ հետ շարժիլ թուրքերուն
դէմ, չեզոք մնաց:

ԴԱԻԱԴՐՈՒԹԻՒՆ ՄԸ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԴԷՄ

Այլ եւս մեզ համար բացայայտ էր թէ օրհասական
կռիւներու օրերը մօտ էին:

Կառավարութիւնը մտադրած էր վճռական հար-
ուածը տալ ըմբոստներու բոյնին, սակայն չէինք գիտեր
թէ զայն գլխատելէ յետոյ: Դաւը երեւան ելաւ հետեւ-

երբ Յոնանի կռիւը իմացուեր էր, որովհետեւ ման-
րամասնութիւնները կը պակսէին եւ հաղորդակցութիւն-
ները դժուարացեր էին ձիւնին ու բուքին պատճառաւ,
իմացողը փորձեր էր օգնութեան հասնիլ տղոց:

Անդրանեկն ալ խումբի մը գլուխն անցած կը մեկնի:
Բայց հազիւ հասած Հաւատորիկ, ուր կը գտնուէր Սե-
պուհ, իմացեր էր թէ կռիւը վերջացեր էր մերիններուն
յաղթանակովը: Անոնք արդէն կապ հաստատեր էին Սե-
պուհի խումբին հետ: Անդրանիկ՝ վերադարձի ճամբուն
վրայ հանդիպեր էր Տափըկ քրտական գիւղը ուր քանի
մը տուն Հայեր միայն կը բնակէին: Ստիպուած էր հոն
գիշերել: Քիւրտերը որոնք մեզ հանդէպ բարեացակամ
կը կարծուէին, եկեր էին Անդրանիկի հետ տեսակցելու,
որմէ յետոյ՝ բարեկամական արտայայտութիւններով
վերադարձեր էին իրենց տուները:

Անդրանիկ իր խումբի տղաներով, հազիւ սկսեր էր
քնանալ, երբ տանիքէն՝ զգուշաւոր քայլերու թեթեւ
աղմուկ մը ղինքը կ'արթնցնէ:

Փետրուարի ցուրտը սառ կապած էր տանիքին վը-

բայ, որ ամէն մէկ քայլափոխի, որքան ալ թեթեւ ըլլար, կը խշրտար: Անդրանիկ յստակօրէն զանազաներ էր երկու մարդու ոտնաձայնը եւ կասկածելով, զէնքը առնելէ յետոյ՝ հազիւ դռնէն դուրս նետուած, ձմեռնային գիշերուան պայծառութեան մէջ՝ նշմարեր էր երկու հոգի, որ ցած տանիքէն վար նետուելով, արագօրէն կը փախէին:

Այլ եւս կասկած չկար թէ դաւ մը նիւթուած էր: Փորձը կրկնուեր էր երկու անգամ եւս: Առաւօտուն, անխոհեմութիւն պիտի ըլլար փոքրաթիւ խումբով մը մարտահրաւէր ուղղել գիւղի մը Քիւրտերուն, որոնք ոչ միայն անհամեմատ կերպով բազմաթիւ էին, այլ եւ լաւ զինուած:

Անդրանիկ՝ սուրհանդակներու միջոցաւ եղելութիւնը հաղորդեր էր խումբերուն, որոնք մարդիկ փութացուցեր էին դէպի Տափըկ:

Քիւրտերը տեսնելով զինեալ հայդուկներու անակնկալ ժամանումը, վախցեր էին թէ կուգան զիրենք կողոպտելու եւ ջարդելու եւ այդ վախով ալ, սկսեր էին փախիլ դէպի Մուշ:

Երբ ես խումբով մը հասայ, արդէն գիւղը կէս մը պարպուեր էր: Սկսանք հարցուփորձի: Երեւան ելաւ որ քանի մը Քիւրտեր ծրագրած էին սպաննել Անդրանիկը: Ահաբեկիչները որոնք փախելու առիթը չէին գտեր, գտնուեցան եւ խոստովանեցան թէ կառավարութեան հրահանգով է որ կը դործէին թէ Անդրանիկի սպանման հրամանը իրենց տուած էր գիւղին Գայմագամը, որ այդ պահուն կը բացակայէր՝ օր առաջ Մուշ գացած ըլլալով:

Այդ Քիւրտերը իրենց արժանի պատիժը գտան տեղւոյն վրայ: Իսկ իբրեւ օրինակելի դաս ուրիշներու, գը-

բաւեցինք գիւղին արջառը, հագուստեղէն եւ ուրիշ պիտանի առարկաներ ու փոխադրեցինք կելիէ կիւզան :

Այս դէպքը բաւական զայրացուց կառավարութիւնը, որ փորձեց առիթը օգտագործել հայ յեղափոխականները քաղաքակիրթ աշխարհին ցոյց տալու համար իբր աւարաւու, աւազակ, խոշտանգիչ քրտական խաղաղ ժողովուրդին :

Միւս կողմէ, մատը փաթթելով այս միջադէպը, կը ջանար քիւրտ եւ թուրք խուժանին արդէն թշնամական տրամագրութիւնները գերազրգուել մեզ դէմ :

Այս դէպքին շուրջ, յաջողեցաւ պատմութիւնը այնքան խոշորցնել որ մինչեւ իսկ անգլիական, Ֆրանսական, ռուսական հիւպատոսներն ալ սկսան հետաքրքրուիլ անով : Անոնք նախատեսեր էին Սասնոյ սպառնացող վտանգը եւ անոր չարաղէտ հետեւանքները կը գուշակէին ամբողջ հայութեան համար եւ զանոնք կանխելու համար, կը յորդորէին Անդրանիկը որ իր խումբերով հեռանայ այդ շրջանէն ու երկրէն, առանց կռիւ մղելու :

Կարելի՞ էր սակայն համոզել որ եւ է Հայ, եւ մեզ մանաւանդ, թէ մեր տեղատուութիւնը, կամ նոյն իսկ զինաթափումը, պիտի կրնային հանդարտեցնել կատաղած բռնատիրութիւն մը, անոր ներշնչել քիչ մը մարդկային վարմունք հանդէպ քրտնաջան, անմեղ ու անզէն ժողովուրդի մը, որուն միակ յանցանքը հայութիւնն էր, — իսկ հայութիւն՝ իրեն համար կը նշանակէր մարդկային տարրական իրաւունքներու ստացում, կեանքի ապահովութիւն, աշխատանքի, արդար վաստակի ազատ վայելում : Մեր մէջ, դարաւոր փորձառութեան մը դառն դասերը կը հսկէին եւ արիւնասեղ նոր դէպքեր ա-

մենէն բարեացակամ տրամադրութիւնն իսկ կը հերքէին
կոպտօրէն :

Կրնայի՞նք հանդարտ խղճով՝ Թուրքին ու Քիւրտին
գրգռուած վայրենի ախորժակներուն յանձնել ժողո-
վուրդը՝ որուն միակ ապաւէնը մենք էինք, իր պատ-
րիարքներէն ու կաթողիկոսներէն, օտար հիւպատոսնե-
րէն ու դեսպաններէն աւելի :

Իբր թէ մեզ խոհեմութեան կանչելու համար, հիւ-
պատոսներէն ոմանք ցոյց կուտային թրքական կառա-
վարութեան պատրաստութիւններն ու մեր սահմանա-
փակ միջոցներուն եւ անոր անսպառ ուժերուն բաղդա-
տութիւնովը կը ջանային մեզ զգաստացնել :

Գիտէին անշուշտ թէ մեզմէ ամէն մէկը, տակաւին
երիտասարդ, արդէն քանիցս առիթն ունեցեր էր իր բը-
նածին քաջութիւնը աւելի եւս մարգելու թշնամի բազ-
մապատիկ ուժերու դէմ : Թերեւս գիտէին նաեւ թէ վա-
խի զգացումը, մահուան վտանգէն ահաբեկումը չքացեր
էին մեր մէջ :

Ինչ որ սակայն կ'անգիտանային, հայդուկին յեղա-
փոխական կամաւորի հոգին էր : Ատիկա՝ քաղաքակիրթ
քաղքենիի, հանդարտաբարոյ պաշտօնատարի իրենց մտ-
քերուն համար՝ անլուծելի անծանօթը ըլլալու էր :

Ջարդերու, սպանութեանց, խոշտանգումներու եւ
կեղեքումներու պատմութիւնները, ստոյգ աղբիւրներէ
կը լսէին : Կողոպտուած ու քանդուած գիւղերու մռայլ
տեսարանը՝ իրենց իսկ աչքերով տեսնելու առիթը յա-
ճախ ունեցեր էին եւ ի պաշտօնէ, իրենք իսկ կառավա-
րական բարբարոսութեան փաստերը հաւաքած ու տե-
ղեկագրած էին : Չէին կրնար չհաւատալ հայկական աղ-
բիւրէ բխած վկայութիւններու եւ հաստատումներու,

որոնց մէջ, ոչ միայն դոյզն չափազանցութիւն չկար, չէր կրնար ըլլալ, այլ նոյն իսկ, չէին կրնար իրականութիւնը ներկայացնել նոյնութեամբ: Չոհր՝ անլեզու ժողովուրդն էր որ իր ամենէն խոր ցաւը երկու բառով, մէկ խօսքով կ'արտայայտէ, խիստ ու կրճատ լեզու մը որ, իբրեւ ցաւի բնազդական կանչ մը միայն կրնայ յաճախ հասկնալի ըլլալ լսողէն կամ դիտողէն: Իսկ հայկական ցաւին շուրջ ազմուկ բարձրացնողները օտար հրապարակներու վրայ՝ օրերով հեռու էին տանջարանէն, զոր ներկայացնելու համար, գրգռուած երեւակայութենէ մը կրնային ներշնչուիլ:

Ու հիւպատոսներուն համար, հասկնալի կը դառնար տանջահար ժողովուրդի մը ցասումը բռնատիրութեան դէմ, խումբ մը քաջերու ինքնապաշտպան դիմադրութիւնը, ի հարկին, արիւնարբու խուժաններուն եւ զօրքին դէմ: Բայց ըմբոստանալ անհամեմատ կերպով դերակշիռ ուժերու դէմ, որոնք մարզուած մարդոց եւ վերջին դէնքերու եւ ռազմանիւթի անհուն պահեստի մը առաւելութիւնն ալ ունին, բուն մը մարդոցմով ճակատիլ կառավարութեան դէմ, նախնական զէնքերով եւ փամփուշտի ծայրայեղ խնայողութեամբ, քալել մահուան վտանգին դէմ որ կը զգացուի, կը տեսնուի իսկ, քալել անտարբերութեամբ, արհամարհանքով կամ նոյն իսկ տեսակ մը յափշտակութեամբ եւ այն ալ յանուն դադափարի մը, ո՛չ, հիւպատոսներուն ըմբռնումէն վե՛ր կը մնար, շա՛տ վեր:

Անշուշտ, բարեացակամութեամբ էր որ անոնք մեզ կը յորդորէին լքել կռիւը ու փախիլ պոռոտախօս դասալիքներու նման, յանուն հայ ժողովուրդին օգտին, զոր նոյնպէս՝ իբր օտար կ'ըմբռնէին, նախ իբր մարդ, եւ յե-

տոյ իբր պաշտօնեայ՝ որուն մարդկային զգացման ուղին՝ կը մեկնի իր կառավարութեան շահէն :

Իսկ անոնք որ խոհեմութեան յորդորներ կը ստանային, անգամ մը զէնք առնելէ ու լեռը բարձրանալէ յետոյ, հողեպէս, ի վիճակի չէին ըմբռնելու արտաքին աշխարհի զգաստութեան հրաւերներն ու անոնց դրդապատճառները, որքան ալ բարեացակամ տրամադրութիւններէ բխած ըլլային :

Այն օրերուն իսկ, երբ Սասնոյ դէմ թրջական արշաւը այլ եւս բաց աչքով կը տեսնուէր, յեղափոխութեան աննման առաքեալն ու կազմակերպիչը՝ Հրայր՝ որ կռիւներուն մէջ՝ գլխաւոր ճակատին ղեկավարութիւնը ստանձնեց, տակաւին դէմ էր ըմբոստացման : Ժողովուրդը հակառակ իր քաջարի կորովին, նիւթապէս պատրաստ չէր : Ամէն նախատեսութիւն չէր իրականացած. շատ բան՝ տակաւին թերի կը մնար : Սակայն, ըմբոստացում չէր որ կը կազմակերպուէր մեր կողմէն : Այլ, ակնյայտնի յարձակման դէմ՝ ինքնապաշտպանութիւն :

Այս կացութեան առջեւ, զինեալ խումբերու տրամադրութիւնը կը դառնար յարձակողական, ժամ առաջ, անխուսափելի եւ վերահաս վտանգին բախելու անհամբերութեամբ բացատրելի : Այս տրամադրութիւնը ըստեղծե՞ց միջադէպ մը որ արագացնէր բախումը :

Միակ միջադէպը՝ Տափըկի զսպումը Անդրանիկի դէմ սարքուած դաւադրութեան հետեւանքով, տեսանք թէ ի՞նչ դիտումնաւոր համեմատութիւններով մեծցաւ թրջական կառավարութեան կողմէ, պատասխանատու ցոյց տալու համար յեղափոխական խումբերը :

Ուրիշ առթիւ, աւելի հանդարտ եւ նուազ վտանգա-

ւոր պարագաներու տակ, հաւանաբար, Անդրանիկ այդ-
քանն իսկ չընէր: Բայց այն օրերուն, երբ վտանգը ա-
րագ քայլերով կը մօտենար, ներելի չէր ռազմաճակա-
տին կուրծքին վրայ բացայայտ դաւադիրներ պահել:
Մաքրագործումի հասարակ գործողութիւն մըն էր որ
կատարուեր էր Տափըկի մէջ, անհրաժեշտ, պարտադիր,
կացութեան բերումով:

Այդ միջադէպը չէր կրնար բացատրել յեղափոխա-
կանին հոգին, որ երբեք չդադրեցաւ պաշտպանողական
ըլլալէ, հակառակ իր բնազանց քաջութեան: Իսկ եթէ
մերթ պատահեցաւ որ ան նախայարձակ ըլլար, միայն
պաշտպանութիւնը դիւրացնելու նպատակով էր:

Հայդուկը որ զինավարժութեան եւ կարգապահու-
թեան դասեր առաւ, երբ եւ իցէ պէտք չունեցաւ ոչ իսկ
մէկ խօսք, մէկ յորդոր, մէկ թելադրութիւն լսելու՝
ժողովուրդին պաշտպանութեան անհրաժեշտութեան
մասին: Այդ նուիրական պարտականութեան զգացումը
իր հետ էր բերեր: Զայն սնուցաներ, իրեն հետ մեծցու-
ցեր ու զօրացուցեր էր միջավայրի մը մէջ, ուր իր բնա-
կան, անխարդախ սիրտը ամէն օր կը փոթորկէր, կը
կատդէր արդար զայրոյթով՝ ի տես խոշտանգումներու,
հարստահարութիւններու, եւ այլ վատութիւններու:

Պէտք եղաւ միայն որ յանդուգն ձեռք մը՝ առաջին
գնդակը պայթեցնէ բռնաւորի մը դէմ, որպէս զի ըմ-
բոստ կամ քերու համախմբման ազդանշանը տրուած
ըլլայ:

Ու այդ թուականէն ասդին, այդ համեստ կամ քը,
ո՛չ փառք փնտռեց, ո՛չ հանգիստ, ո՛չ կեանքի վայելք-
ներ երազեց, եւ ոչ ալ վախի վարանումներով տատանե-
ցաւ: Յափշտակուած էր միակ մտասեւեռումով մը, —

Ժողովուրդին պաշտպանութիւնը բռնութեան դէմ :

Այն ատեն , այս գիտակցութենէն միայն կը բխէին քաղաքական այլ եւ այլ ծրագիրներ , եթէ կային՝ յեղափոխական կռուող ուժերուն մէջ : Անոնք , միտք չէին յոգնեցներ այլազան տեսարանութիւններու վրայ՝ որոնք խորթ կը մնային իրենց ըմբռնումին : Մեծ մասամբ գիւղացի , հազիւ այբն ու բենը ճանչցած , կը հասկնայի՞ն լեզուն անոնց որ իբր կուսակցական լիազօր կամ ներկայացուցիչ արտասահմանէն կուգային :

Ողջամիտ ու իրատես , որ եւ է մէկէն աւելի ի վիճակի էին գնահատելու ուժերու անհամեմատ տարբերութիւնը որ կար ազատագրութեան ցանցաւ շարքերուն ու բռնութեան բանակին միջեւ :

Բայց քաջութիւնը որ իրենցն էր , զոհաբերութեան ոգին որուն նմանը՝ հին ազգաց պատմութեան մէջ , բացառիկ դրուագներ միայն արձանագրած են , թշուառ ու անպաշտպան ժողովուրդին հանդէպ անհուն սէրը որ բնական աղբիւրի մը նման վճիտ ու անխարդախ , կը ժայթքէր իրենց պարզ մարդու սրտէն , գիտէին թէ , տեսեր էին քանիցս թէ կը պակսին թշնամիին : Եւ այդ գիտակցութեամբ միայն , հարկին , վայրին ու պարագային նպաստով , անոնք կը մնային հարիւր եւ աւելի թշնամիին դէմ մէկի յաղթական արժէքով :

Անոնց ամենէն տկարն իսկ , երբ եւ իցէ զգա՞ց մահուան վախը : Չեմ յիշեր մէկ հատիկ պարագայ : Ու կը կրկնեմ թէ բոլորը հատընտիրներ էին իբր մարդ՝ նկարագրի տոկունութեամբ եւ իբր մարտիկ՝ անվեհերութեամբ :

Ամէն անգամ որ կռիւր անխուսափելի կը դառնար , գիտէին թէ կ'երթան մահուան : Բայց մինչեւ վերջին

չունչ, իրենց կեանքը սուղ, շա՛տ սուղ ծախելէ յետոյ,
եթէ պատահէր որ իյնային, իրենց աչքերը կը փակէին
նուիրական պարտքը հատուցած ըլլալու յափշտակու-
թեամբ :

Այս հոգին էր որ չէին հասկնար օտար հիւպատոս-
ները, երբ մեծ բախումներու նախօրեակին, կը յորդո-
րէին խուսափիլ քաշուիլ, մեկուսանալ անփառունակ
թաքստոցներու ստուերին մէջ եւ ժողովուրդին պաշտ-
պանութիւնը վստահիլ դիւանագիտական թուղթերու եւ
սակարկութեանց :

Հիւպատոսներու առաջարկին մերժումէն յետոյ,
կռիւր որ անխուսափելի էր երկար ատենէ ի վեր, կը
դառնար վերահաս եւ անմիջապէս Տափըլի դէպքին յա-
ջորդող Լաճկանի կռիւր ատոր ազդանշանն էր :

Լաճկանը քրտական շրջան էր, ուր Տալուէ Գօմի
մէջ, քանի մը տուն Հայեր միայն հաստատուե ըէին :
Մուրատ որ այդ շրջանը գացեր էր նախապէս Քիւրտե-
րու չեզոքութիւնը ապահովելու յոյսով, ինչ որ մեծ նը-
շանակութիւն ունէր Սեմալի եւ Շէնըքի պաշտպանու-
թեան համար, վերադարձեր էր արդէն Սեմալ, ապար-
դիւն աշխատանքէ յետոյ :

Բայց, ահա, մէկ քանի բարեկամ Քիւրտեր կը յայտ-
նէին թէ, տեղացիները որ կառավարութեան ազդեցու-
թեան տակ կը գտնուէին, որոչա՞ծ են փճացնել Հայերը :
Մուրատ իր խումբով հաղիւ ճամբայ ելած էր Հայերը
ապահով փոխադրելու համար Սեմալ, երբ իմացուեցաւ
թէ Քիւրտերն արդէն գործադրած են իրենց մտադրու-
թիւնը : Տալուէի վրայ յարձակելով, կողոպտեր էին ա-
նոնց գոյքերը եւ զիրենք պահեր էին իբր գերի : Մուրատ
գիւղը կրակի տալէ եւ գերի Հայերը առած, կելիէկըն-

ման քաշուեր էր, երբ 200-ի չափ զինեալ Քիւրտերու յարձակման ենթարկուեր էր: Բայց Սեմալցիներու եւ Շէնըքցիներու արագ օգնութիւնը փրկեր էր փափուկ կացութիւն մը: Քիւրտերը հող լաւ ջարդ մը ուտելէ յետոյ, քաշուեր էին. իսկ Մուրատ վերադարձեր էր Շէնըք, զո՛հ տալով Մսկունքի Իսբօն:

Մարտի վերջերը, Չատկի առաւօտուն էր որ կը պատահէր այս կռիւը, երբ թրքական բանակին հոժ զանգուածը հասեր էր արդէն Մրկայ Մօզիք, որ Սեմալէն հազիւ մէկ ժամ հեռաւորութիւն ունի դանդաղ քայլով:

Այս զօրախումբին հետ կը քալէր նաեւ հայ պատգամաւորութիւն մը բաղկացած Մուշի եւ Պիթլիսի առաջնորդներէն, Առաքել եւ Վարդան վարդապետներէ, Մուշի Քաղաքական Ժողովոյ անդամներէն եւ երեւելիներէ, հայ – կաթոլիկ Պոլէի Ստեփան, Սիրունեան Յովհաննէս, Մարտիրոս Սահակեան, Աբօմոսոցի Պօղոս: Այս պատուիրակութեան վրայ պարտք դրուած էր համոզել ժողովուրդը որ չմիանայ ըմբոստներուն եւ այս վերջինները որ անձնատուր ըլլան:

Իրենց հետ ունէին Օրմանեանի մէկ կոնդակը եւ Սուլթանին Իրատէն:

Բայց, յանկարծ, թուրք զօրախումբին հրամանատարը իրենց ներկայացուցեր էր գրութիւն մը զոր կը պահանջէր որ ստորագրէին:

Այդ գրութեամբ, հայ առաջնորդներն ու երեւելիները, փառաբանելէ յետոյ « գորովագութ » կառավարութեան բարիքները հայ ժողովուրդին հանդէպ, խռովութեանց ամբողջ պատասխանատուութիւնը պիտի ձգէին հայ յեղափոխականներուն վրայ:

Այդ թուղթին շնորհիւ, թուրք կառավարութիւնը ոչ միայն պիտի ջարդէր ու բնաջնջէր ազատօրէն հայ անտէր ժողովուրդը, որուն համար արդէն ամէն պատարաստութիւն տեսած էր, այլ եւ բարի վարուց վկայական մըն ալ կըստանար առաջուց, չարդուողներուն կողմէ :

Հայ պատուիրակութիւնը՝ հակառակ իրեն սպառնացող վտանգին, քաջութիւնն ունեցեր էր պահանջը մերժելու կտրուկ կերպով :

Ու կռիւր սկսաւ : Թուրք թնդանօթաճիզները հրամանն ստացան ռումբերու տարափին տակ քանդելու գիւղերն ու ջարդելու բնակիչները :

ՕՐ ՀԱՍԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ

Ի՞նչ ուժ՝ ի՞նչ ներկայացնէինք :

Դժուար է թուական ստոյգ պատասխաններ տալ այս հարցման :

Յեղափոխական խումբերը հազիւ ընդամէնը 100 մարդուած մարտիկ կը համրէին, մօտ 200 հրացանով : Ասոնցմէ դուրս, եթէ օժանդակ ուժ սեպենք զինեալ գիւղացիները, անբաղդատելի կերպով գերակշիռ թշնամիին դէմ կրնանք արձանագրել մօտ 1000 հրացան, մեծ մասամբ հին, հազար դժուարութեամբ գործածելի դարձած՝ մէկ քանի օրուան համար :

Հասկնալի է թէ այս բոլոր զէնքերը միանգամայն չէին գործեր ճակատին վրայ, որ գրաւուած էր միայն յեղափոխական խումբերուն կողմէ : Գիւղացիները որ իրենց ձեռքին տակ ունէին 750 - 800 հրացան, կը նախընտրէին իրենց գիւղերու պաշտպանութիւնը ապահովել թշնամիին գրոհին դէմ եւ ի հարկին օժանդակել հայդուկներուն :

Թնդանօթներով եւ արդիական հրացաններով զինուած թրքական ամէն մէկ գումարտակի դէմ՝ հազիւ ուրեմն տասնեակ մը կամաւորներու :

Իրօք, Անդրանիկի գրուած նամակով մը, շրջանի գայմագամներէն Սալիհ աղա կը գրէր թէ 18,000 զինուոր տրամադրուած է Սասունի բնաջնջման ձեռնարկին, առանց հաշուելու քիւրտ աւազակները, որոնք կանոնաւոր զօրքէն աւելի չտանգաւոր կրնային դառնալ : 18,000-ը իբր կանոնաւոր զօրքի թիւ, թերեւս չափազանց է : Բայց զինեալ քիւրտ աշիրէթներու օժանդակութիւնը առանց հերքուելու վախին՝ կարելի է հաւաստել թէ կը կրկնապատկէր այդ թիւը : Սուլթանը մասնաւոր կարեւորութիւն մը ընծայէր էր Սասնոյ բնաջնջման գործողութեանց, եւ ատոր համար ալ, ջանք չէր խնայուէր, ամէն գինով յաղթական արդիւնք ապահովելու : Թրքական զօրքի յարձակման յատակագծին գործադրութեան կը հսկէր արիւնարբու Քէօսէ պինպաշին, ծագումով չէրքէզ, որ ուսու – թրքական պատերազմի մէջ շահուած հերոսի փառքով կը յոխորտար : Հոն էին Սալիհ փաշան՝ իր եօթը գումարտակներով, Պիթլիսի կուսակալ Ֆէրիտ փաշան :

Իսկ հայկական ճակատը կազմուած էր հետեւեալ բաժանումներով : Անդրանիկ իրեն կեդրոն ընտրած էր Տափըկը որ մասնաւոր կարեւորութիւն մը կը ներկայացնէր Չայէն Կելիէկիւզան յառաջացող թշնամիին դէմ պաշտպանութեան տեսակէտէն : Միւս պաշտպանութեան գլխաւոր կէտերն էին Կելիէկիւզան, Շէնըք, Իշխանձոր, Տալուորիկ :

Գլխաւոր ճակատին պաշտպանութիւնը կը վարէր Հրայր, որ մէկ քանի բաժանում կատարած էր. Չայի

չրջան՝ ուր կը գործէին Մակարը, Կոտոյի Հաճին եւ Սերաստացի Մուրատը: Ալիանքէն Բարբառի հովիտը, ուր կը գտնուէին մեր ամենէն քաջարի հայդուկները, գլխաւորութեամբ Սեպուհի, Ղազարի եւ Մանուկի, Լաճկանցի Արթինի, Քեաթիպ Մանուկի: Հոն էին նաեւ Իսօն եւ Մերկերցի Յովսէփը:

Երբ կռիւները սկսան, Իշխանձոր յանձնուած էր Գէորգի, որուն կցուած էի ես:

**

Ինչպէս արդէն յայտնի եղաւ, Մարտի վերջերը՝ Չատկուան առտուն սկսած Լաճկանի կռիւը ազդանշանն եղաւ թրքական յարձակման:

Ատկից քանի մը օր յետոյ, Քիւրտերը յարձակեցան Մովսասարի եւ Քորախուի վրայ, եւ կողոպուտի տալէ յետոյ, վառեցին տուները: Ապաղանաց Մակարը որուն յանձնուած էր գետին հսկողութիւնը, իր խումբով գընաց օգնութեան. իրեն միացայ նաեւ ես: Կրցինք փրկել Քորախուի բնակիչները եւ դանոնք անցընել գետին աջ եզերքը, թալանի մէկ մասն ալ ետ առնելով Քիւրտերէն:

Թուրք կանոնաւոր ուժերը ձիւնին, բուքին ու ցուրտին տոկալով կը յառաջանային շրջառիկ շարժումով մը, գլխաւորաբար երկու ուղղութեամբ: Չօրասիւն մը կը քալէր Հաւատորիկի վրայ:

Երկրորդ ուժեղ զօրասիւն մը, մօտ 5000 զէնք կը յառաջանար դէպի Շէնք: Քիւրտերն ալ իրենց կարգին, իբր անկանոն ուժ, կը յառաջանային դէպի Բոնաշէն մէկ կողմէն, եւ դէպի Մըրկայ Մօզիկ միւս կողմէն:

Երբ կռիւներն սկսան, ես կը գտնուէի Իշխանձոր, որուն ղեկավարութիւնը յանձնուած էր Գէորգի: Շատ չանցած, նամակ մը ստացանք, որով կը հրահանուէր

Գէորգի, փութով վերադառնալ Կելիէկիւզան, ինծի յանձնելով Տալուրիկի ճակատին զեկավարութիւնը՝ տասնեակ մը զինուորներով:

Նամակին բովանդակութենէն կը հասկցուէր թէ թշնամի գերակշիռ ուժերուն առջեւ, աւելի մտահոգութիւն կը տիրէ կեդրոնին պաշտպանութիւնը ապահովելու եւ թէ Իշխանձորի տեղական ուժերը բաւական կը նկատուէին զիւղին պաշտպանութեան:

Գէորգ իր հետ առնելով ուժերուն մեծագոյն մասը մեկնեցաւ դէպի Կելիէկիւզան: Իսկ ես ալ իմ տասնեակովս դէպի Տալուրիկ, ուր առաջին գործս եղաւ հաւաքել բոլոր զէնքերը զոր ժամանակին բաժնած էինք ժողովուրդին եւ Փուրխ զիւղին մէջ, զանոնք աչքէ անցընելէ, մաքրելէ յետոյ՝ դարձեալ բաժնել տուի կռուող տարրերուն: Հոն յաջողեցանք կազմել 50 հոգինոց կռուող ուժ մը: Զինուորական կեդրոնատեղի դարձուցեր էի Տէր Գաբրիէլի տունը՝ Հոսնուտի մէջ:

Շատ չանցած, լուր կը ստանայի թէ կառավարական զօրք եւ մաս մըն ալ Քիւրտեր երեւցած են Խլովիթի կողմերը: Զինուորներով անցայ հող, ուր անմիջապէս դիրքեր պատրաստելէ յետոյ, կարգադրուեցաւ տեւական պահնորդութիւն, զիշեր եւ ցերեկ՝ որ եւ է անակնկալ կանխելու մտքով:

Մէկ քանի օր վերջ, մեր շրջանին մէջ ալ կռիւներն սկսան: Մեր դէմ կը կռուէին տեղացի Քիւրտերը, մաս մը զինուորներու օգնութեամբ:

Մեր զինուորական ուժերուն մէջ կային տասնապետ Տիգրան, որ բռնած էր Հոսնուտի ճակատը, Թաթար եւ Մկրօ՝ Տալուրիկի իշխաններէն, Խլուրիկ զիւղի բար -

ձուևքները՝ բռնած էին Հաղոյի Գեւոյի հետ. Սասունցի Ֆլիդ դիրք բռնած էր Քէօռ Սլոյի դէմ :

Ես ալ ինձի բան գործ ըրած էի Յավրընայ Գէորգի հետ, թռուցիկ խումբով մը՝ դիրքէ դիրք շրջել եւ օգնել ամենէն վտանգուած կէտին եւ կարգադրութիւններ ընել ու հսկել: Տէր Գաբրիէլի որ Հոսնուտի կեդրոնատեղին կը մնար՝ պաշտօն յանձնուած էր հսկել պաշարի եւ ռազմամթերքի վրայ եւ կապ պահպանել կեդրոնին հետ:

Իսկ Հոսնուտի նշանաւոր Համզէն, իր տղոց եւ եղբայրներուն հետ խումբ կազմած, կը դիմադրէր մեր «բարեկամ» Թէլոյի տան դէմ որ մեզ հետ բարեկամութեան դաշինք կնքած էր կ'երեւի իր ըմբռնած ձեւով եւ որուն պայմանները կը գործադրէր իր հրացանը դարձնելով մեր զինուորներուն եւ ժողովուրդին դէմ:

Ամէն օր գրեթէ փոքրիկ բախումներ կ'ունենայինք թշնամիին հետ, առանց մեր կողմէ որ եւ է կորուստ տալու եւ միշտ յաջողութեամբ ետ մղելով քիւրտ խուժանին յարձակումները: Ուրախ լուրեր ալ կը ստանայինք կեդրոնէն, որ կը հաղորդէր թէ 200-ի մօտ զինուորներ գերի բռնուած են: Այս լուրը մեզ կը տրուէր Ապրիլի կէսերուն, երբ մենք ալ 10 քիւրտ եւ 1 ոստիկան գերի բռնած էինք: Անոնց հարցաքննութենէն հասկցեր էինք թէ մեր դէմ կը գտնուին Տիգրանակերտէն ղրկուած՝ ընդամէնը 200 զինուոր, եւ թէ բուն կռուող ուժը այդ ճակատին վրայ՝ կը բաղկանայ քիւրտ աշիրէթներէ:

Հազիւ այս տեղեկութիւնները հաղորդեր էինք կեդրոնի Զինուորական Մարմնին, երբ անկէ ստացուած նամակ մը մեզ կը հրահանգէր հեռանալ Տալուրիկէն, ամբողջ գիւղերը այրելէ յետոյ՝ որպէս զի թշնամին այդ ցուրտին ու ձիւնին՝ պատասպարուելիք տեղ չգտնէ եւ

ամբողջ ժողովուրդը հաւաքելով անցնիլ Կելիէկիւզան ,
 ուր պէտք է կեդրոնանան բոլոր ուժերը :

Գժուար , շատ փափուկ գործ մըն էր որ կը յանձ-
 նուէր ինծի : Գիտէի թէ գիւղ մը , տուն մը անգամ պա-
 րագային համեմատ՝ վառելու ռազմագիտական պահան-
 ջը կրնայ իր մեծ նշանակութիւնն ունենալ կռուի յաջող
 ելքին տեսակէտէն :

Բայց ի՞նչպէս համոզել ժողովուրդը , որ իրաւուն-
 քով կը գուրգուրայ ամէն մէկ առարկայի վրայ : Գիւղի
 ամէն մէկ տան մէջ , ամենէն համեստ խրճիթին մէջ իսկ ,
 երկար տարիներու ժառանգութիւն մը կայ ամփոփ -
 ուած , նիւթապէս՝ աղքատ , ողորմելի , բայց հոգեպէս՝
 ճոխ ու անգնահատելի ամէն մէկ գիւղացիի համար : Ա-
 մէն մէկ տան մէջ՝ յիշատակներու սրբութիւնը կը հս-
 կէ . տան ամէն մէկ անկիւնին , ամէն մէկ առարկային
 վրայ՝ ցաւի կամ ուրախութեան պատմութիւն մը կայ
 գրուած : Ատկից զատ գիւղացին դիտէ իր քրտինքին ար-
 դար եւ իրական արժէքը ու չի մոռնար թէ ի՞նչ դաժան
 տքնանքի գինով՝ բարձրացուցած է իր հանգստեան ան-
 կիւնը , որ սրբութիւն մըն է իրեն համար :

Ի՞նչպէս յօժարի անոր հրկիզման եւ այն ալ իր ձեռ-
 քով , իր ներկայութեան : Կէս - անձնասպանութիւն մը
 չէ՞ այդ արդէն :

Բայց հրահանգը հրահանգ էր եւ պէտք էր գործա-
 դրել : Անմիջապէս ժողովի հրաւիրեցի տեղին երեւելի-
 ներն ու ազդեցիկները , Տէր Գաբրիէլը , Համզէն , Թա -
 թարը , Մկրտն , Բազօ - Գեւօն , Կիրակոսի Աւետիսը եւ
 ուրիշներ :

Տէր Գաբրիէլ տեղական բարբառով բացատրեց ի-
 րենց ստացուած նամակը , պարզեց ստեղծուած կացու-

Թիւնը, տրուած հրահանգը հիմնաւորեց ու պատկերապարդեց թուրք – քրտական բարբարոսութենէն հին ու թարմ օրինակներով եւ պնդեց հրահանգը անմիջապէս գործադրելու անհրաժեշտութեան վրայ:

Գիւղացի այս քաջ տէրտէրը՝ իր տեսակին մէջ՝ յայտնուեցաւ այդ օր իբր հռետոր, քաղաքագէտ ու վարպետ հոգեբան մը: Ներկաները համոզելով մէկտեղ՝ կ'ուղէր անոնց մէջ տեսակ մը աւուղջ խուճապ ստեղծել: Եւ յաջողեցաւ ալ:

Միաձայնութեամբ որոշուեցաւ այրել տուները, փճացնել հացահատիկն անգամ, որպէս զի թշնամին չօգտուի, եւ հրաւիրել ամբողջ ժողովուրդը որ հաւաքուի Թրֆր Քար կոչուած վայրը:

Կռուի այդ օրերուն, ժողովուրդին մեծ մասը համախուժմբ կ'ապրէր: Ժողովականները ցրուելէ յետոյ, մտան ժողովուրդին մէջ եւ շատ դժուարութիւն չկրեցին բարձրացող առարկութիւնները լռեցնելու: Հեռանալ վտանգուող բնակարաններէն, բայց ինչպէս զայն վառել իր իսկ ձեռքով, երբ օր մը նորէն վերադառնալու յոյսը չէ մեռած: Ինչպէս նորէն ամէն ինչ ծայրէն սկսիլ՝ հիմէն:

Եւ ահա, պարզուեցաւ յուզիչ տեսարան մը:

Ոմանք իրենց ամենէն պիտանի առարկաները աճապարանքով կը թաղէին հողին տակ: Ուրիշներ, բոլորովին յուսահատ, մատնուեր էինք անշարժութեան եւ կը սպասէին կարաւանին մեկնումին:

Իսկ շատեր, կրակը տալէ յետոյ իրենց սիրական բոյնին, ծունր կը դնէին սեմին առջեւ, կը համբուրէին, կ'արտասուէին ու կը հեռանային:

Այսպէս կրակի տրուեցան Ընկուզնակ, Հեղին եւ ու-

րիչ մէկ քանի գիւղեր: Վառող գիւղերէն թանձր ծուխը հանդարտ կը բարձրանար արդէն երբ ժողովուրդը սկըսաւ շարժիլ՝ մարտական խուճբերու պաշտպանութեան տակ, մինչ թրքական զօրքն ու Քիւրտերը կը սկսէին դանդաղօրէն եւ զգուշութեամբ յառաջանալ: Մեր գլխաւոր մտահոգութիւնն էր գաղթող ժողովուրդը ապահով եւ անվնաս հասցնել մինչեւ Եղկարթ սարի գլուխը, ուր շնորհիւ մեր այնտեղի կռուող ուժերուն, մեր գործը չափով մը կը թեթեւնար: Եւ ատոր համար ալ, նահանջելով մէկտեղ կը կռուէինք յառաջացող թշնամիին դէմ: Ծնորհիւ մեր ուժերուն լաւ դասաւորման եւ բարոյական բարձր կորովին, կռիւը յաջողութեամբ յառաջ կը տարուէր եւ ժողովուրդը ապահով կը բարձրանար:

Մինչեւ երեկոյ կռուեր էինք անընդհատ, դանդաղութեան դատապարտելով թուապէս գերակշիւ թշնամին, երբ ժողովուրդին մէջ լուր տարածուեցաւ թէ Տէր Գաբրիէլի առաջնորդութեամբ, խուճբ մը Տալուրիկցիներ յանձնուեր էին կառավարութեան:

Լուրը անշուշտ գէշ տպաւորութիւն պիտի գործէր եւ ճամբու յոգնութեան, սնունդի պակասին եւ այլ դժուարութեանց նպաստովը կրնար յուսալքման մղել ժողովուրդը եւ անձնատուութիւն թելադրել: Ստիպուած՝ մէկ քանի կորովի երիտասարդներու հետ, մտայ ժողովուրդին մէջ լուրին վատ տպաւորութիւնը չեղոքացնելու եւ յոգնատանջ բազմութիւնը խրախուսելու համար:

Բարեբախտաբար, շատ չանցած հասանք Եղկարթ, ուր մօտակայ անտառին մէջ տեղաւորեցինք ժողովուրդը, որ յոգնաբեկ, անօթի, ցրտահար, հանգստի եւ կազդույրի պէտք ունէր: Այդ շրջանին մէջ, բազդատաբար ապահովութիւն կը տիրէր, իբր ամայի վայր, ուր ցան-

ցառ թիւով Հայեր միայն կային տեղաւորուած : Քիւր-
տերն ու թուրք զօրքը , առ այժմ կ'անտեսէին այդ վայ-
րը , ուր ուժ զրկելու պէտք չէին տեսներ , քանի որ յե-
ղափոխականները կեդրոնացած էին ատկից բաւական
հեռու , Կելիէկիւզան : Բազմութիւնը հազիւ ցրուած ու
տեղաւորուած ծառներուն տակ , խարոյկներու բոցերը
սկսան բարձրանալ : Կը տաքնային ու հաց կը պատրաս-
տէին :

Տեղացիներն արդէն ինքնապաշտպան խումբեր ու-
նէին , այնպէս որ անակնկալ յարձակման մը առջեւ ,
ժողովուրդը կարելի էր ապահով նկատել :

Հող ուրեմն , այլ եւս ժամանակ կորսնցնելու պէտք
չունէի : Լաւագոյն էր ժամ առաջ օգնութեան հասնիլ
կեդրոնի կռուող ուժերուն :

Ութսուն հոգիի չափ զինեալ խումբ մը համաձայ-
նեցաւ հետս մեկնիլ : Սկսանք քալել դէպի Հրմոյի Գոմ
կոչուած վայրը՝ տեղատարափ անձրեւի մը տակ : Քանի
մը օրէ ի վեր լուր չունէինք արտաքին աշխարհէն եւ
ժամ առաջ հասնելու մարմաջը կ'արագացնէր մեր քայ-
լերը հակառակ աննպաստ օդին եւ գետնին :

Երեկոյեան դէմ հասանք Հրմոյի Գոմ , ուր հանդի-
պեցանք ծանօթներու , Մակուցի Կարապետին եւ իր հօր-
եղբօր Խաչոյին , որոնց տուած տեղեկութիւններով՝ մեր
հետաքրքրութիւնը պահ մը գոհացաւ , բայց անոնք մեզ
դրդեցին աճապարելու եւ կարելի արագութեամբ հաս-
նելու Կելիէկիւզան , ուր կացութիւնը տազնապալի կը
ներկայացնէին :

Ատկից մեկնելու վրայ էինք երբ վրայ հասաւ Գէ-
որդ՝ խումբով մը :

Մեզմէ քաղած տեղեկութիւնները ան սուրհանդակի

միջոցով հաղորդեց Անդրանիկին : Անդրանիկ կարգա-
դրեր էր որ Գէորգ մէկ քանի զինուորներով եւ մէկ քանի
ալ քահանաներով՝ անցնի Եղկարթ ժողովուրդը խրա-
խուսելու եւ տեղափոխելու :

Եւսկ ինձ ալ կը հրահանգուէր Տաւուրիկցիներու հետ
անցնիլ Փշփուշի սարը եւ այդ ուղղութեան վրայ գլու-
նուող կառավարական ուժերուն վրայ յարձակիմ , այն
տպաւորութիւնը գործելու համար յեղափոխականները
նոր օգնական ուժեր ստացած են :

Գէորգ իր ընկերներով մեկնեցաւ դէպի Եղկարթ .
Իսկ ես իմ խումբովս որ հարիւրի բարձրացեր էր ճամ-
բայ ելայ դէպի Փշփուշի սարը , ուր հազիւ հասած , թր-
քական թնդանօթները սկսան գոռալ : Ռուսները սակայն
մեզ կեցնելու չէին : Պէտք էր որ սարէն վար իջնէինք ու
գրաւէինք Մճելներու գագաթը , ուր տեղաւորուած էր
թշնամին : Հայդուկներուն մէջ մեծ ոգեւորութիւն ու
խանդավառութիւն կը տիրէր : Ռուսքի ամէն մէկ պայ-
թիւն՝ անոնց մարտական կորովը կը հրահրէր . գրեթէ
ցատկուտելով է որ կը յառաջանային դէպի թշնամիին
դիրքերը , որոնք հետզհետէ կը պարպուէին : Թուրք Ձէ-
քէրիա չավուշը որ մեր տղոց հետ կը կռուէր իր բռնա-
պետ ցեղակիցներուն դէմ , ամէն անգամ որ թրքական
նահանջի փողը հնչէր , անոր իմաստը կը յայտնէր իր հայ
զինակից ընկերներուն , որոնք նոր կատաղութեամբ ա-
ռաջ կը խուժէին :

Յոյց տալու համար թէ ինչ տաք կռիւ մղուեցաւ
այդ օրը , կը բաւէ յիշել թէ կռուադաշտին վրայ մօտ
250 թշնամի դիակ համրեցինք : Իսկ մենք կորսնցուցեր
էինք Ախալցխացի Մատօն որուն հետքը չգտանք : Ալ
չգիտցանք թէ կռուի մէջ սպաննուած էր թէ ձիւներու

տակ մնացած ու թաղուած :

Սպաննուեր էր նաեւ Մշեցի Խաչիկը եւ ձեռքէն վիրաւորուեր էր Կոտոյի Հաճի Յակոբը եւ Սօլօն :

Անդրանիկ որ այդ միջոցին Եղկարթ կը գտնուէր, 8 - 10 մարդ զրկեր էր վիրաւորները հոն փոխադրելու եւ դարմանելու : Անկէ յետոյ ինքը անցաւ Հարթի, ուր հաւաքուած էին Դաշտի իշխանները եւ ուր Վահան Տօղրամաճեան, ժողով մը պիտի ունենար անոնց հետ, ինքնապաշտպանութեան խնդրին շուրջ :

Այդ իրիկունը մենք մնացինք մեր գրաւած դիրքերուն վրայ : Յաջորդ օրը, թշնամին օգնական ուժեր ըստացած ըլլալով, սկսաւ կատաղի յարձակողականի մը եւ յաջորդաբար գրաւեց Ալեանցիներու Խոռ, Քափրէ - Շարաֆ խան, Մճելներ եւ Կարապետ Խոռ դիրքերը : Ուժերու գերակշռութեան առջեւ, նահանջելէ յետոյ՝ դիրք բռնեցինք թշնամիին դէմ եւ 5 - 6 օր կռիւր շարունակեցինք անդադար :

Քանի մը օր յետոյ միայն հասաւ Գէորդ իր խումբով եւ յայտնեց թէ Տալուրիկներու կացութիւնը լաւ եւ ապահով է եւ հարկ չկայ անոնց տեղափոխութեամբ մը տահոգուելու :

Բայց շրջանի ժողովուրդը կը փախէր դէպի Մուշ կամ կը յանձնուէր թուրքին գթասրտութեան . . .

Իսկ մեր զինեալ խումբերը եւ անոնց պաշտպանութեան յանձնուած ժողովուրդը կը նահանջէին դէպի Փըշփուշ սար որ անառիկ բնական դիրքեր կ'ընծայէր : Հոն էին արդէն Վահանը, Մուրատն ու Անդրանիկ :

Նոր կարգադրութիւն եղաւ որ Մուրատի առաջնորդութեամբ 70 հոգինոց խումբ մը Դաշտ իջնէ թրքական զօրքի մէկ մասը հոն քաշելու համար :

Վահան Տողրամաճեանն ալ ապահով վայր մը տեղաւորելու մասին մտածուեցաւ :

Իսկ մնացեալ ուժերը՝ Աղպու կամուրջի վրայով ճամբայ ելանք, բարձրացանք Աղպու սար, ուրկէ եկանք Քոփայ վանք, համանուն գիւղին մօտերը, աւերակ եկեղեցիներու կոյտ մը՝ իրականին մէջ: Ժողովուրդն արդէն գաղթեր էր գիւղէն: Աւերակ վանքը թէեւ փոքր էր 80 հոգի առնելու համար, սակայն գիշերը անցընելու ուրիշ ճար չունէինք. լեցուեցանք ներսը՝ պատսպարուելու համար՝ հսկողութեան ամէն կարգապահութիւն դնելէ յետոյ :

Ք Ո Փ Ի Կ Ռ Ի Ի Ը

Արշալոյսը նոր էր բացուած: Արեւուն պաղ ճառագայթները դեղնած պայծառութիւն մը կը տարածէին ու բաւական յստակօրէն տեսանելի հորիզոն մը կը պարզէին մեր աչքերուն առջեւ: Առտուան դէմ, մինչ փլատակ վանքին տակ, մեր զինուորները տակաւին քունի մէջ կը փնտռէին իրենց յոգնաբեկ մարմնին կազդոյրը, ես ու Մոկացի Գրիգորը յանձն առեր էինք պահակութիւնը վանքին դրան առջեւ: Անակնկալ յարձակման վայր միշտ կար եւ անփոյթ գտնուելու ժամանակ չէր անշուշտ, որքան ալ խոնջ ու ուժասպառ ըլլայինք: Առտուան զով օդը ամենէն աւելի կը նեղէր մեզ եւ սպաննացող քունին դէմ մաքառելու համար, Գրիգորին հետ վերաքաղ մը կ'ընէինք վերջին օրերու դէպքերուն եւ խորհրդածութիւններ կը փոխանակէինք, երբ յանկարծ նշմարեցի որ Տափըկի կողմէն բազմութիւն մը կը շարժի: Գրիգորի հետ սկսանք լարուած ուշադրութեամբ դիտել: Բարեկամ էին թէ թշնամի. մերո՞նք էին թէ Քիւրտերը: Որովհետեւ բազմութեան անկանոն ձեւէն ու

ընթացքէն բացայայտ էր թէ կանոնաւոր դօրքը չէր կրնար ըլլալ:

Չայն տուի Տէր Քերովբէին որ մեզ հետ էր, որպէս զի իրեն յանձնուած դիտակին շնորհիւ, ջանայ ստոյգ բան մը ըսել:

Նոյն պահուն, Մուրատն ալ ուրիշ անկիւնէ մը կը դիտէր արդէն:

Տէր Քերովբէի դիտակը պարզեց իրողութիւնը: Քիւրտ ցեղապետ Հաճը Ֆէրոյի մարդիկն էին որ մէկ քանի դիւղեր աւարի տալէ յետոյ Դաշտ կ'իջնէին: Իրենց յառաջապահներն արդէն դիւղը մտած էին եւ կողոպուտ կ'որոնէին: Շատ չանցած, նշմարեցին թէ վանքին մէջ ապաստանած բազմութիւն մը կայ եւ ենթադրելով որ անդէն ժողովուրդ կրնայ ըլլալ, համարձակութեամբ մօտեցան եւ մեր ետեւի դիրքերէն սկսան դիտել:

Մուրատ հրահանգեց որ ես ու Գրիգոր դուրս սողանք տունէն եւ յարձակինք քիւրտ յառաջապահներուն վրայ, մինչեւ որ մեր խումբին տղաքը կարենան դիրք բռնել:

Գրիգորի հետ կրակելով մէկտեղ սկսանք յառաջանալ: Հրադէններու առաջին հարուածները խուճապ ձրգեցին Քիւրտերուն մէջ, որմէ օգտուելով եւ միշտ աւելի արագ հարուածելով, երկուքս վազեցինք բռնելու մօտակայ գոմ մը որ կը հսկէր Քիւրտերու յառաջացման ճամբուն վրայ:

Մուրատ, Աւետիսի օգնութեամբ կը պաշտպանէր Տափըկի նայող դիրքը, որուն վրայ կը քալէր թրքական կանոնաւոր դօրաց ջոկատ մը: Իսկ Արամ եւ Փարհատ կը հարուածէին Քօփէն դուրս ելլող թշնամին: Կուիւն արդէն սկսած էր եւ երթալով կը սաստկանար, քանի

Հաճի Տէրոյի մատուցելը կը հասնէին յառաջապահ խումբերու օգնութեան: Դիրքերը որ գրաւած էինք, անբաւական էին ասլահովելու մեր ինքնապաշտպանութիւնը: Քիւրտերը տասն անգամ աւելի ուժեղ, աւելի լաւ զինուած, կրնային հետզհետէ շղթան սեղմել եւ մեզ առնել անել պաշարման մը տակ: Անհրաժեշտ էր փութով հակազդել եւ թշնամին զարնել կողէն կամ կռնակէն՝ փախուստի մատնելու համար:

Մէկ միջոց կա: Մաս մը զինուոր անցընել գետին միւս ափը եւ անկից երկու կրակի տակ ձգել Քիւրտերը: Գետը որ կամուրջ ալ չունէր, բաւական բարձրացած էր տեղացող առատ անձրեւներէն եւ ձիւնհալէն: Լաստ պատրաստելու մասին չէինք կրնար մտածել, մանաւանդ որ յաջողէինք իսկ, կրնար վտանգաւոր ըլլալ, եթէ նշմարուէր: Միակ միջոցը գետը կտրել անցնելն էր: Գրտանքամենէն ցած կէտը, ուրկէ Աւետիսն ու Հաճի Գեւոն, ուրիշ մէկ քանիներու հետ, յաջողեցան անվտանգ անցնիլ գետին միւս ափը, ուր զանազան դիրքեր բռնած, բռնն կրակի մը տակ առին Քիւրտերը: Այս կերպով անոնք երկու կրակի տակ մնացած եւ կարծելով որ օգնական ուժ ենք ստացած, աճապարեցին փախուստ տալ: Քառասունի չափ վիրաւոր ունեցեր էին, եւ նոյնքան մըն ալ սպանեալ:

Մեզմէ ծանրօրէն վիրաւորուած էին Կոտոյի Հաճիին եղբայրը՝ Համբօն եւ Կուրանցի Մխիթարը, որոնք Տէր Քերովբէին ձեռքէն հաղորդութիւն ստացան: Արդէն օրը իրիկունն եղած էր: Թշնամին բաւական զէնք եւ փամփուշտ ձգած էր դաշտին վրայ: Բայց որքան ալ թանկագին ըլլար, աւարի մասին մտածելու ժամանակ չունէինք, ոչ ալ ուժ՝ զայն կրելու: Թէեւ այդ օր յաղթա-

կան էինք, սակայն չէինք կրնար հող տնտնալ: Անհրա-
 ժեշտ էր ժամ առաջ հեռանալ եւ աւելի ապահով վայր
 մը ապաստանիլ, մինչեւ որ մեր ուժերը ամփոփուէին եւ
 մեր ընթացքին մասին կարգադրութիւններ ըլլային:

Դաշտը մթնելու վրայ էր եւ մենք կը պատրաստուէ-
 ինք մեր ցրուած ուժերը արագօրէն հաւաքելով ճամբայ
 ելլել, երբ բլրան գագաթէն բազմութիւն մը փրթաւ:
 Չէինք գիտեր թէ որո՞նք կրնային ըլլալ: Որ եւ է տեղէ
 օգնութիւն չէինք սպասեր, որպէս զի վստահօրէն գիտ-
 նայինք թէ մերօնք կրնան ըլլալ: Միւս կողմէ, չէինք
 կարծեր որ Քիւրտերը առտուան իրենց ծանր պարտու-
 թենէն յետոյ, աճապարեն եւ այն ալ զիշերանց, վրէժի
 դիմել՝ զինեալ խուճբերու դէմ: Վարանուճի մէջ էինք:
 Ու մեր կասկածը փարատելու համար, որոշեցինք մէկ
 քանի ձեռք հրացան պարպել՝ առանց վնասելու դիտա-
 ւորութեան: Այդպէս ալ ըրինք: Բազմութեան նշաննե-
 րէն ու կանչերէն հասկցանք որ մերօնք էին: Սասունցի-
 ներ էին 100 հոգիի չափ, որոնք տարբեր ուղղութեամբ
 դաշտ պիտի իջնէին:

Երկու խուճբերը միացան, եւ դետը հազար դժուա-
 րութեամբ կտրելէ յետոյ, սկսան մագլցիլ դէպի Քոփի
 բարձունքները: Մուժը արդէն կոխած էր, ցուրտ ու
 թանձր մութ մը: Առանց ձիւնի սպիտակ խաւին որ բո-
 նած էր արահետները, դժուար թէ կարենայինք հաս-
 տատ քայլեր նետել դէպի գագաթը: Հրահանգուած էր
 բարձրանալ դէպի գագաթ: Ու կը քալէինք, առանց սա-
 կայն գիտնալու թէ դէպի ո՞ւր: Սուրհանդակներն ալ
 չէին կրնար առաջնորդել պէտք եղածին պէս: Սուճբը
 հետզհետէ ուժաթափ կ'ըլլար: Արդէն երկու հոգի սա-
 սեր ու ճամբան մնացեր էին: Մնացեալը ամբողջ թր-

Ջուած էին մինչեւ իրենց կէս մէջքը, գետը անցած պահուն: Երեք օրէ ի վեր անօթի էինք ու հիւսիսի հովը կը փչէր մեր կուրծքին: Այլ եւս քալելու ուժ չէր մնացած: Եւ այսպէս, ժամերով, անդադար քալելէ յետոյ, երբ պահ մը, լերան կողին վրայ նստանք պահ մը հանգչելու համար, այլ եւս չկրցանք վեր ելլել: Մեր յոգնաբեկ ու ցաւատանջ ոտքերը կը մերժէին շարժիլ: Չէինք ալ գիտեր թէ, ո՞ւր կը գտնուէինք: Մեր ուղղութիւնը կորսնցուցեր էինք:

Զոյգին բացատրեցինք կացութիւնը, տուինք իրենց պէտք եղած յորդորները, յայտնեցինք իրենց այն անձերը՝ որոնց դիմելու էին մեր կողմէն եւ ճամբեցինք գէպի գիւղ, ու մենք անօթի գայլերու պէս ինկանք հացին ու մածունին վրայ:

Սկսանք ուտել, լափել աւելի ճիշդը, սակայն պատառները կարծես կը յամառէին դառնալ ու մնալ, մեր բերնին մէջ, կարծր կտորներու նման, քանի կը յիշէինք կռուի եւ տառապանքի մեր ընկերները, որ վերը, լերան գագաթը, ձիւնին վրայ, այդ ցուրտին, պատառ մը հացի կարօտովը կը մաշէին: Մեր աչքերը գամուած մընացեր էին գիւղին: Ամէն մէկ վայրկեան կը սպասէինք աւետարեր սուրհանդակի մը երեւման, որ կ'ուշանար: Ժամերը կը յաջորդէին ժամերուն եւ սպասման տառապանքը այս անգամ կը մաշեցնէր մեզ:

Տէրտէրն արդէն իր մէկ բարեկամը տեսնելու պատրուակով, ձգեր էր մեզ հող եւ մեկներ էր Գոմեր: Ու օրերէ ի վեր տեւող յոգնութիւնը, անքնութիւնը մանաւանդ, ծանրօրէն կը չոքէին մեր վրայ: Կը վախնայինք մանաւանդ քնանալէ: Եւ սակայն անկարելի կը դառնար աւելի եւս դիմադրել բնութեան պահանջին, որքան ալ

ուղէինք : Մօսոյի հետ , որոշեցինք քիչ մը հանգստանալ ,
գոնէ մեր աչքերուն կրակը մարելու չափ , առանց սա-
կայն հսկողութիւնը դադրեցնելու եւ հետեւեալ ձեւը
մտածեցինք :

Գոմին առջեւ ծառ մը կար , որուն մէկ ճիւղը հողէն
հազիւ մէկ մեղր բարձրութիւն ունէր : Հրացանս գրկած ,
նստեցայ այդ ճիւղին վրայ՝ կռնակս տուած բունին :
Այդ վիճակին մէջ պիտի շարունակէի հսկել եւ սպասել
գիւղի սուրհանդակներուն : Իսկ Մօսօն , ոտքերուս տակ
երկնցած՝ պիտի քնանար ու հանգստանար : Եւ եթէ պա-
տահէր որ քունս տանէր , այդ գիրքին մէջ որովհետեւ
չէի կրնար երկար մնալ , անպատճառ պիտի իյնայի Մօ-
սոյին վրայ , որ պիտի արթննար : Եւ այսպէս , փոխն ի
փոխ , թէ պիտի քնանայինք եւ թէ հսկէինք : Այդպէս ալ
ըրինք 6 - 7 ժամ անընդհատ :

Ծառէն վար չինկայ : Եւ բարեբախտաբար , որովհե-
տեւ , մարմնիս ծանրութեան տակ , չեմ կարծեր որ Մօ-
սօն անվնաս մնար : Չինկայ որովհետեւ , չքնացայ : Հա-
զիւ կոպերս իրարու կը քսուէին , գլուխս կը կախուէր
կուրծքիս վրայ , ընդոստ կը ցնցուէի , աչքերս խոշոր մը
կը բացուէին ու պահ մը գամուած կը մնային գիւղին ,
յետոյ նորէն , մեղմիկ փակուելու : Այս տաժանելի խաղը
տեւեց մինչեւ արեւամուտ , երբ տասնեակեց շալակաւոր-
ներ հասան , կենսատու պաշարով բեռնաւոր : Անոնք , ի-
րենց այս ուշացումը բացատրեցին գիւղին մէջ՝ թրքա-
կան դօրքի ներկայութեամբ , որ չափազանց կը դժուա-
րացնէր տունէ տուն հացի եւ ուտելիքի հաւաքումը եւ
անկից վերջն ալ դէպի գոմ փոխադրութիւնը , մանա -
ւանդ որ լրտեսներու վախն ալ անհնարին կը դարձնէր
ամէն շարժում :

Հացի տոպրակներով ճամբայ ինկանք դէպի Միրն-
կատար, ժամ առաջ հասնելու փութկոտութեամբ: Շատ
չանցած, Մոսոն նշմարեց որ ստուարաթիւ խումբ մը,
դանդաղ քայլերով լեռնէն վար կ'իջնայ: Կասկած չկար
որ մերիններն էին: Յուրտը, անօթութիւնը մանաւանդ,
եւ մեր ալ ուշացումը՝ ստիպեր էին դանոնք, ամէն վը-
տանդ աչք առնելով՝ առաջ շարժիլ Հաւատորիկի ուղ-
ղութեամբ ու բոլորը՝ կմախացած գրեթէ, մեքենական,
անգիտակ շարժումով կը քալէին խարխափումով դէպի
անձանօթը՝ որ կրնար կեանքի կամ մահուան փրկու-
թիւնն ըլլալ, բայց վերջապէս՝ փրկութիւնը այդ անլուր
տառապանքէն:

Հեռուէն, իրենք եւս նշմարեր էին շալակաւորները
եւ որքան որ թոյլ կուտային իրենց ցրտահար եւ ուժա-
բեկ մարմինները, կը ջանային կարելի արագութեամբ
մեզ հասնիլ: Աւ կ'աճապարէինք մենք ալ որ գիտէինք
թէ կ'երթանք կեանք բաշխելու, կեանքի երկար տարիներ
չնորհել մեր հալածական եղբայրներուն ու քոյրերուն:

Դէպքեր կան որ բոլորին մէջէն անջինջ կը մնան
մարդուն յիշողութեան ճէջ, իրենց բոլոր մանրամաս-
նութիւններով, եւ հոն կը գրաւեն մասնաւոր, սեփական
անկիւն մը, վերջնապէս, ցմահ հոն տեղաւորուելու,
ամէկից չհեռանալու յամառութեամբ, որքան ալ մարդը
ցնցող դէպքերու շարք մը ապրած ըլլայ:

Տարիներ յետոյ տակաւին, շարժուն, կենդանի այդ
պատկերը քանդակուած կը մնայ մտքիս մէջ:

Արեւը մարը մտած է: Հիւսիսի քամին կ'աւլէ ձիւ-
նապատ գետինը: Մութը ալիք ալիք կը կոխէ եւ հեռուի
ստուերները կը մեծնան, անձեւ համեմատութիւններ

կ'առնեն, կը խառնուին հորիզոնի անստոյգ խաւարին ու կ'անհետանան :

Լերան ստորոտէն կը մագլցինք մենք, դէպի վեր, դէպի անօթի եղբայրներու բազմութիւնը, ու քանի կ'աճապարենք, մեզ կը թուի թէ անտես թաթեր կը պլլուին մեր ոտքերուն, մեր ընթացքը դանդաղեցնելու եւ կասեցնելու չար խինդով, մինչ վերէն տառապակոծ բազմութեան մը հզօր կամքը մեզ կը քաշէ իրեն ...

— Դէ՛հ, տղե՛րք, ձեր հոգուն մատաղ, աճապարեցէ՛ք :

Երբ հասանք խումբին յառաջապահներուն, ուրախութենէն կուլայինք: Մենք, կեանք տարած էինք մեզ հետ: Անոնք իբրեւ կենսատու սուրհանդակներու կը մօտենային մեզի: Ու հացին հոտը կարծես կը պատուէր տոպրակները, կը տարածուէր ալիք ալիք ու կը բռնէր օդը: Անօթիներու դէմքերը արդէն կը ճառագայթէին վայրագ, բարբարոս ուրախութեամբ մը, որ երեկոյեան ստուերին տակ՝ արտակարգ կծկում մը կուտար պաղած դիմազծերուն: Ու բազմութիւնը ակնթարթի մէջ, կը խուժէր մեր վրայ, կը պաշարէր մեզ անելի մը մէջ, ուրկէ կրնայինք ողջ, չճզմուած Քամ չխեղդուած փրկուիլ՝ ամէն մէկուն՝ կենարար հացի իր բաժինը տալու պայմանով:

Երբ վերջին մարդուն հացը տուինք ես ու Մօսօն, հալած ու մաշած ինկանք դետին լայն շունչ մը քաշելու եւ կեանքին վերադարձած մարդոց նման, յափշտակութեամբ ունկնդրելու ծամող բերաններու ուրախ կոփկոփը, ծամելու երաժշտութիւնը:

Հիմա նորէն կենդանացած, կրնայինք, պարտաւոր էինք տոկալու եւ բնութեան հարուածներուն եւ մարդոց

հալածանքին ու գրոհ տալու կամ կուռելու օրերով :

Բայց հարցը այդ պահուն, հող չէր : Գիշեր էր արդէն : Կշտացեր էինք եւ նոյն իսկ մաս մը հաց ալ, ամէն մէկս պահեր էինք յաջորդ օրուան : Կը մնար պատսպարուիլ ցուրտէն, ձիւնէն հովէն : Պէտք էր բազմութիւնը այդ գիշերուան համար առաջնորդել ապահով եւ չոր ու գոց վայր մը :

Այդ մասին որոճալու վրայ էինք, երբ ձայներ լսեցինք : Շատ չանցած գաղտնիքը պարզուեցաւ : Հաճի Գեւօն եւ Կիւմիւշխանեցի Աւետիան էին իրենց խումբերով, որոնք նախորդ օրուան կռիւէն յետոյ, մեր նահանջի պահուն, չէինք կրցեր միանալ դանդուածին ու ճամբան՝ կորսուեր էին :

Իրենց առաջին բառերն եղան .

— Ի սէր Աստուծոյ, կտոր մը հա՛ց ...

Ամէն մէկը իր պահած հացի կտորէն փրթուճ մը տըլաւ . անոնք ալ կերան ու կազդուրուեցան : Եւ յետոյ միայն, կրցանք խումբը հաւաքել մօտակայ դոմի մը մէջ :

Մաս մը Մշեցիներ արդէն, իրենց ղէնքերը յանձնելէ յետոյ, Միրնկատարէն բաժնուեր էին դէպի Դաշտ : Սասունցիներն ալ, որոշեցին անցնիլ դէպի Մազրէ, ուր գացեր էր իրենց տէրտէրը՝ մեզմէ բաժնուելէ յետոյ :

Մենք մնացինք միւս զինուորներուն հետ, մօտ 70 - 80 հոգի, ու տեղաւորուեցանք դոմին մէջ՝ գիշերը անցնելու եւ քունի մէջ կազդուր փնտուելու :

Կշտանալէ եւ քիչ մըն ալ հանգստանալէ յետոյ միայն, սկսեր էինք մեր իրական կացութեան մասին մտածել : Արտաքին աշխարհէն որ եւ է տեղեկութիւն չունէինք : Կասլը որ արդէն կուռի սկիզբէն իսկ անկանոն էր հաղորդակցութեան միջոցներու նախնականութեան եւ

դժուարութեան հետեւանքով, բոլորովին կտրուեր էր կեդրոնէն: Ո՛չ մէկ լուր ունէինք Սասնոյ կամ Դաշտի մասին:

Ոչ մէկ հրահանգ, ոչ մէկ կարգադրութիւն կրնար հասնիլ մեզ Չինուորական Մարմինէն, որուն կեդրոնը անյայտ կը մնար եւ որ մանաւանդ, չէր ալ կրնար գիտնալ թէ ի՞նչ վիճակի կրնայ մատնուած ըլլալ մեր խումբը: Անհրաժեշտ էր ստոյգ տեղեկութիւններ քաղել: Ինչ որ կրցանք իմանալ գիւղացիներէն, Բերտակի կռիւն էր որ տեղի ունեցեր էր մէկ քանի օր առաջ: Հող ապաստաններ էին Առաքել, Պօղոս եւ սակաւաթիւ խումբ մը: Ետ չանցած, 300 հոգինոց զինուորական խումբ մը պաշարեր էր գիւղը եւ սկսեր էր անհաւասար կատաղի կռիւ մը:

Հրացաններու բոմբիւնէն, օգնութեան փութացեր էին Արազի, Հաւատորիկի եւ Առաքելոց վանքի զինուորները եւ այդքան ստուար ուժի մը առջեւ, մերինները ստիպուեր էին լեռ ապաստանիլ:

Չկարենալով ուրիշ որ եւ է ստոյգ տեղեկութիւն քաղել եւ ամբողջ ճակատին վրայ՝ ենթադրելով մերիններուն պարտութիւնը, կը ստիպուէինք սպասել, մինչեւ որ կացութիւնը յստակօրէն պարզուէր:

Ու նորէն, թաքստոցի մը հարցը կը ցցուէր: Մեզ կը մնար գոհանալ պատահական ամէն միջոցով որ, գոնէ նուազագոյն ապահովութիւն մը կ'ընծայէր ցուրտին եւ անօթութեան դէմ: Հաւատորիկի դիմացը, մէկ քանի տունէ բաղկացեալ Խոլներ կոչուած գիւղակը կար, ուր կրնայինք մէկ քանի օրուան ապահով ապաստան գտնել: Տուները ընդարձակ էին, տեղացիները ունեւոր եւ հիւրասէր: Հոն ուղղուեցանք գիշերանց, առաջուց լուր զը-

կելով որ կապեն իրենց շուները, որպէս զի անոնց հա-
չիւնէն՝ մօտակայ Հաւատորբիկի գօրքը չկասկածի: Ու
տեղաւորուեցանք երկու ընդարձակ գոմերու մէջ, ան-
հրաժեշտ հսկողութիւնը կարգադրելով:

Մեր նպատակն էր, հող մէկ – երկու օր հանգստա-
նալէ եւ կազդուրուելէ յետոյ, անցնիլ Տերգէվանք, ուր
կը գտնուէր Կոմիտէի անդամ Վարդանը եւ որուն փու-
թացինք սուրհանդակով լուր դրկել, որպէս զի մեզ պա-
տասարելու եւ կերակրելու պատրաստութիւն տեսնէ:
Կը յուսայինք նաեւ Վարդանէն քաղել մեզ հետաքրքրող
տեղեկութիւններ ընդհանուր կացութեան մասին եւ ա-
նոր միջոցով՝ կապ հաստատել կեդրոնին հետ:

Յաջորդ իրիկունը ճամբայ ելանք դէպի Տերգէվանք,
ուր միայն իմացանք թէ Սասնոյ առաջին կռիւներուն
իսկ սպաննուեր է Հրայրը եւ վիրաւորուեր Սեպուհը որ
պահ մը Տերգէվանք մնալէ յետոյ, իր վէրքը դարմանե-
լու համար անցեր է Չխուրի շրջանը, հաւանօրէն Մկրա-
գոմ, ուր Գավրի անունով համբաւաւոր քրտուհի մը
կար, բաւական ճարտար վիրաբոյժ:

** Հոս անհրաժեշտ է կարճ պահ մը փրցնել մեր
պատմութեան թելը եւ յետադարձ ակնարկ մը նետել
նախընթաց դէպքերուն վրայ, աչքի առջեւ ունենալու
համար Սասնոյ կռիւներուն ամփոփ, այլ ամբողջական
պատմութիւնը:

Թշնամիին յարձակողականը սկսեր էր ապրիլի ըս-
կիզբը: Բայց ամենէն կարեւոր բախումը տեղի ունեցեր
էր ապրիլ 11-ին, Շէնրքի վրայ կատարուած յարձակու-
մով մը, երբ արդէն գիւղը կրակի տրուած էր մերիննե-
րուն կողմէ եւ ժողովուրդն ալ փոխադրուած Սէմալ,
մեր պաշտպանութեան շրջանակը սեղմելու, դիրքերը

ամբրացնելու եւ յարձակող թշնամիին սպասող վտանգը սաստկացնելու միտումով: Այս կարգադրութիւնը տեղին էր, որովհետեւ թշնամի ուժերը հազիւ Շէնըք մը տած, կ'իյնային երկու կրակի տակ: Կէս օր տեւեր էր կռիւը, որ վերջացեր էր թրքական զօրքին — ճիաւոր բոլորը — փախուստով:

Բացայայտ էր թէ թշնամին չպիտի յամենար իր պարտութեան վրայ. այլ ընդհակառակն, պիտի ջանար նոր եւ ուժգին գրոհով մը քանդելու արծիւներու բոյնը:

Ատկից առաջ սակայն, ան աւելի յարմար դատեր էր դիմել սովորական, խաղաղ ու խաբեբայ խորամանկութեան:

Կռուին յաջորդ իրիկունը, իբր բանազնած Սեմալ կը մտնէր Ս. Յովհաննու վանահայր Առաքել վարդապետը, որ կառավարութեան վստահութիւնը կը վայելէր: Իր հետ բերած էր Սուլթանին մէկ իրատէն եւ Պատրիարք Օրմանեանի կոնդակը: Օրմանեան կը յորդորէր զինաթափ ըլլալ եւ ենթարկուիլ կառավարութեան հրահանգներուն: Սուլթանը կը պահանջէր ապստամբներէն անձնատուր ըլլալ:

Իսկ կռուակալն ալ խստիւ յանձնարարեր էր վարդապետին ապստամբներու պատասխանը ինչ ալ ըլլայ, շուտով առնել եւ նոյնն իրիկունն իսկ վերադառնալ:

Գլխաւոր ղեկավարներէն ներկայ էին Անդրանիկ եւ Հրայր: Կը բացակայէր Վահան Տօղրամաճեանը որ կռուի չարքաչ կեանքին անընդունակ, կարգադրութեան մը համաձայն՝ պահուրտեր էր Տաղւըրնիի մէջ ապահով վայր մը եւ անկից կը հետեւէ ըղէպքերուն:

Մերիններուն պատասխանը պարզ էր թէ բացառա-

կան պիտի ըլլար : Միւս կողմէ , կառավարութեան առաջարկը վստահութիւն չէր ներշնչեր :

Կը վախցուէր որ այդ ալ խաղ է ժամանակ շահելու , ուժերը կեդրոնացնելու եւ անակնկալ յարձակում մը գործելու :

Վտանգը կանխելու համար , Հրայր եւ Անդրանիկ Սասնոյ իշխաններուն հետ խորհրդակցութեամբ , որոշեր էին անմիջական սպառնալիքի ենթակայ , մօտիկ գիւղերը այրել եւ ժողովուրդը կեդրոնացնել Կելիէկիւղան , ծրագիր որ Անդրանիկինն եղած էր կռուի սկիզբէն իսկ եւ սակայն մերժուած էր Հրայրի կողմէն , որուն ամենէն թոյլ կողմն էր յաճախ ենթարկուիլ ժողովուրդին թելադրութիւններուն :

Այս անգամ սակայն , կացութիւնն էր որ տուն կուտար : Կրակի տրուեցան Սեմալը , Ալեանքը , Գեղաշէնն ու Իրիցունքը : Ժողովուրդը սկսաւ հաւաքուիլ Կելիէկիւղան : Եւ որովհետեւ , Հրայր կը վախնար որ Թուրքը Կելիի ճակատէն խաբելով , կը յարձակի Տափրկի կողմէ , խմբակով մը հոն գնաց Անդրանիկ :

Կարգադրուեր էր որ Անդրանիկի եւ Վահանի կողմէ ալ ստորագրելով , կառավարութեան առաջարկին բացասական պատասխանը պիտի տայ Հրայր եւ յանձնէ վարդապետին :

Սակայն յաջորդ օրն իսկ առաւօտուն , կը պարզուէր թէ թրքական առաջարկը խաբէութիւն մըն էր լոկ : Զօրքը աւելի քան 10,000 հոգի Քիւրտերու հետ միասին , սկսեր էր յառաջանալ դէպի Շէնրք եւ Սեմալ : Կառավարական ուժերը երկու գլխաւոր սիւնի բաժնուած , մէկ կողմէն պիտի յառաջանային Ալեանքի վրայով՝ դէպի Բերբերի հովիտը : Միւս կողմէն՝ Սեմալի վրայով դէպի

Չայ: Երկու զօրասիւները պիտի միանային Կելիի հովտին մէջ, որ իրենց վերջին հանգրուանը պիտի ըլլար, ջախջախած ըլլալու համար Սասունը:

Տազնապալի կացութեան մը մատնուած էին մեր ուժերը, որոնք անբաղդատելի կերպով ուժեղ թշնամիին դէմ, հրաշքի գինով կրնային իրենց դիրքերը պաշտպանել: Այս անգամ թնդանօթները կը գոռային եւ ոռւմբերը անգամ մը եւս կ'աւերէին աւերակ գիւղերը:

Սեմալը՝ որուն վրայ կը քալէր առաջին զօրասիւնը, արդէն կրակի տրուած էր, բայց ժողովուրդը տակաւին չէր քաշուած բոլորովին: Դանդաղեցնելով մէկտեղ թշնամիին յառաջխաղացումը, որովհետեւ պարզ էր որ պիտի ստիպուէինք լքել այդ դիրքը, պէտք էր պաշտպանել ժողովուրդին ճամբան դէպի Կելիէկիւզան:

Հրայր ծանր մտահոգութեան մատնուած էր այդ պահուն: Սակայն, աւելի՛, գործելու ժամն էր: Սեմալը կը սկսէր հետզհետէ թուլանալու տեղի տալ, մանաւանդ որ այդ դիրքին բնական պաշտպան մօտակայ կէտերուն կը պակսէր անհրաժեշտ ուժը: Թշնամին հետզհետէ կ'առաջանար. պաշարման շղթան կը սեղմուէր:

Հրայր որուն հետ են Մուրատը, Կոտոյի Հաճին եւ հարիւրի չափ մարտիկներ, կը սկսի նահանջել կռուելով, հալածուած թշնամիէն գրեթէ քայլ առ քայլ, դէպի Չայ: Հրայրի ծրագիրն է օգնութեան հասնել Բերբերի հովտէն կռուող խումբին, որուն կը հրամայեն Սեմալը ու Աւետիսը:

Միւսները կը նախընտրեն Սեմալի բարձունքէն կըռիւր շարունակել: Հրայր խումբով մը կը մեկնի դէպի հովիտ, որ շատ չանցած կ'ողողուի թրքական նոր ուժերով:

Խումբը կը շտապէ ժամ առաջ բռնելու հովտին բե-
րանը : Սակայն դիմացէն կրակ կը տեղայ :

Գնդակ մը ծոծրակէն կը զարնէ ու կը տապալէ Հը-
րայրը : Կը սպաննուին նաեւ Սեմալցի Կրպօն եւ Ախալց-
խացի Մարտօն :

Սակայն յաղթանակը տակաւին , չպիտի ըլլար թշ-
նամիինը , որ իր տրամադրելի առաւելագոյն ուժերը
թափեր էր հող , ափ մը մարտիկներու եւ անզէն ժողո-
վուրդի մը վրայ :

Անդրանիկ Տափը կը այրելէ յետոյ , անցեր էր Շուշ-
նամերկ , ուրկէ կը բարձրանար Մճելնու գաղաթը , երբ
արդէն թշնամին մօտեցեր էր Կելիէկիւզանի : Գետակին
ափը բռներ էր , որմէ անդին կը մնար երեք - չորս վայր-
կեանի հեռաւորութիւն մը՝ հասնելու համար իր նպա-
տակին : Գիւղը արդէն պարպուեր էր . հոն մնացեր էին
Մուրատը , Իսօն , Աւետիսը Համզօն , Փարհատը՝ տաս-
նեակ մը մարտիկներով , որոնք կատաղօրէն կը պաշտ-
պանէին դիրքը : Օրհասական կռիւ :

Անդրանիկ իր հետ ունէր ընդամէնը հազիւ 50 - 60
հոգի :

Բայց արդէն , դիրքէ դիրք կանչով , խումբը իմացեր
էր թէ Անդրանիկ օգնութեան կը փութայ , ինչպէս , այս
վերջինը որ կացութեան մասին ոչ մէկ տեղեկութիւն ու-
նէր , հասկցեր էր թէ Կելիէկիւզանի վայրկեանները
համրուած են , եթէ արագ եւ անակնկալ հարուած մը
չստանայ թշնամին :

Ու կը փութար , մէկ քանի հրացան ձգելով Մճելնու
գաղաթը , իր վազքը պաշտպանելու համար դէպի ա-
ռաջ , անցնիլ թշնամիին կռնակը :

Մուրատ որ հասկցեր էր Անդրանիկի ծրագիրը քա-

նի մը զինուորներով կը սողոսկի՝ մինչեւ ջրին ափը, թշնամիին դէմ, աւելի մօտէն հարուածելու, եւ իր կարգին այդ կերպով դիւրացնելու Անդրանիկի խաղը, որ յաջողութեամբ պիտի պսակուէր:

Առաջին համազարկին իսկ, թուրք զինուորներն ու քիւրտ աւարառուները խուճապի մատնուած, կը սկսէին փախուստ տալ անկարգութեամբ, մինչ մերոնք կը հալածէին զանոնք այս անգամ, քչելով մինչեւ Շէնըք, Սեմալ եւ աւելի անդին:

Մերիններուն գնահատանքով թշնամին այդ օր կորանցուցեր էր 800 – 1000 հոգի: Կռուի զանազան կէտերէն հաւաքուած էին թրքական յիսուների չափ մավզէր, եւ բուներ էին նոյնքան մըն ալ գերի:

Իսկ մենք կուտայինք այդ օր թանկագին զոհ մը՝ յանձին Հրայրի: Անկից զատ ունէինք երեք սպանեալ, Մարտօն, Կրպօն եւ Աղբեցի Կիրօ Փեւօն: Այդ կռուին վիրաւորուեր էր նաեւ Սեպուհը, որ յետագային, ընդհանուր պատերազմի ազատագրական պայքարի օրերուն, մեծ համբաւի պիտի տիրանար իր վարած ճակատամարտերով ու մարտական գործունէութեամբ:

Մ Ե Ր Կ Ե Ր Ի Կ Ռ Ի Ի Ը

Յաջորդ օրը սակայն, Կելիէկիւզանի առաջ պարտուած թշնամին, ուրիշ կէտէ մը կը փորձէր ճեղք մը բանալ դէպի մեր բնական միջնաբերդը: Ուժեղ զօրախումբ մը, Քիւրտերու մասնակցութեամբ յանկարծ կը խուժէր երկու ժամ հեռու, Մերկեր գիւղի վրայ: Մեր ուժերը տկար էին այդ կէտին վրայ. սակայն Մուրատի եւ իր խումբին արագ օգնութիւնը կտրուկ հարուած մը

տուեր էր թշնամիին, որ մէկ քանի ժամուան կռիւէ յետոյ, հեռացեր էր :

Առնուած տեղեկութիւնները կը յայտնէին թէ կառավարութիւնը նոր փորձ մը պիտի կատարէ այդ դիրքը գրաւելու : Եւ հետեւաբար, Քէորզ որ Իշխանձորէն նոր վերադարձեր էր, իր խումբով բռներ էր այն կէտն իսկ, ուրկէ նախորդ օրուան կռուին մէջ, թշնամիին սկսեր էր յարձակման :

Եւ իրօք, կառավարութենէն նոր ուժ ստացած ըլլալով, այս անգամ Քիւրտերն էին որ նախայարձակ կ'ըլլային, երկու ժամ տեւող կռիւէ մը յետոյ՝ փախուստ տալու համար :

ԿԵԼԻԿԻԻԶԱՆԻ ԱՆԿՈՒՄԸ

Ապրիլ 20-ին, զարհուրելի պայմաններու տակ, աւելի քան տասը օր տեւող անհաւասար կռիւներէ յետոյ, մեզ տրուած էր կրել ամենէն դառն պարտութիւնը :

Քանի կը պարտուէր ու կը կոտորուէր, այնքան ուժ կը հաւաքէր թշնամին : Կելիկիւզանի առաջին կռիւէն յետոյ, թուրք հրամանատարը որ փոխադրութեան արագ միջոցներէ զուրկ էր, զօրքը սնուցանելու դիւրութիւն չունէր, ոչ ալ ցուրտէն պատսպարուելու, ստիպուած էր նահանջել դէպի Դաշտ՝ ուտեստ ու պաշար հայթայթելու համար : Սակայն, այդ ակամայ նահանջին բուն պատճառը ինչ ալ ըլլար, իբր պարտութեան փաստ պիտի նկատուէր : Այդ ամօթէն խուսափելու էր, կարելի արագութեամբ ապահովելով մէկտեղ զօրախումբերու պարենաւորումը :

Թուրքերը նախ ենթադրեր էին թէ Հայերը զիրենք պիտի հետապնդեն, ու պատրաստուեր էին աւելի հեռու քշելու իրենց նահանջի գիծը : Սակայն տեսնելով որ մե-

ըիններուն կողմէ ոչ մէկ շարժում կը յայտնուի, թուրք զօրքը կանգ առեր էր Շէնքը եւ Սեմալի ետեւը: Իսկ կուսակալը որ հայ կրօնական պետերուն եւ երեւելիներուն հետ, բանակին կ'ընկերանար, մտածեր էր հետեւիլ հընարքը՝ Դաշտի ճամբով Մուշէն Սասուն մօտ մէկ օր կը տեւէր արագ ընթացքով. ինչ որ այդ ցուրտին՝ անօթի եւ անպատսպար զօրքին մահը ըսել էր: Իսկ լեռնային ճամբով, չորս ժամէն կարելի էր կտրել հեռաւորութիւնը:

Սակայն արահետները ծածկուած էին ձիւնի թանձր խաւով կամ սառոյցով. ձիւ ու ջորիի կարաւանները որոնք ուտեստ եւ ռազմանիւթ պիտի փոխադրէին, չէին կրնար անվտանգ քալել լեռնային այդ նախնական ճամբէն, եթէ չմաքրուէր: Հետեւաբար, մինչ մէկ կողմէն Մշեցի 10,000-ի չափ հայ եւ թուրք այրեր, բահով, բրիչով ու թիով կը թափէր լեռներուն վրայ, արահետը մաքրելու, միւս կողմէն, ուտեստով եւ փամփուշտով բեռնատար ձիւ ու ջորիի հսկայ կարաւան մը ճամբայ քանել կուտար:

Եւ այս կերպով, կարելի արագութեամբ, իր անհրաժեշտ մթերքը ապահովելէ, Մուշի եւ Սասնոյ իր դիրքերուն միջեւ, արագ երթեւեկը հաստատելէ յետոյ, թուրք հրամանատարութիւնը, նոր յարձակողական մը կը շղթայադերձէր Կելիէկիւղանի դէմ, ապրիլ 19-ի լուսարացին:

Մերիններուն համար պարզ էր թէ այդ օրուան բախումը ճակատագրական ելք պէտք է ունենայ: Օրհասական պաշտպանութեան վերջին դիրքն էր որ պիտի տուար կատղած թշնամիին ասեղ գրոհին: Կատաղի կռիւ էր: Թշնամիին թնդանօթները կ'որոտային՝ հայդուկնե-

ըստ թղթուկ այլ յամառ հրացաններուն դէմ, եւ իրենց գոռիւնը կը խառնէին կեւի մէջ խոնուած 20,000-է աւելի ժողովուրդին վախի ու սարսափի կանչերուն: Զօրքը խնայելու պէտք չունէր իր փամփուշտը ու կարկուտի առատութեամբ կրակ կը թափէր մեր դիրքերուն վրայ, մինչ մերիններուն ամէն մէկ հարուածը՝ քանի մը անգամ համրուելու եւ հաշուուելու էր: Եօթը - ութ դիրքերու վրայ բաժնուած, ընդամէնը 170 փրթած - թափած դէնքեր էին որ պիտի պատասխանէին աւելի քան 10,000 նոր դէնքերու:

Քիչ մը աւելի քաջութեամբ, պարզ էր որ թշնամին թուքի տակ իսկ կրնար խեղդել բոլոր մը այդ քաջերը, որոնց միայն կորովն ու յանդգնութիւնը անսպառ էին:

Եւ սակայն, երբ մութը կոխեց ու հակառակորդ դիրքերը դէմ դէմի լռեցին, թշնամին՝ իր առտուան դիրքերէն մէկ քայլ իսկ առաջ չէր նետած:

Բայց տագնապալի այդ կացութիւնը չէր կրնար յաւերժանալ մերիններուն համար: Ուտելիք կար քանի մը օրուան համար: Բայց յաջորդ օրուան կռուին ոչ պատրաստ փամփուշտ կրնար դիմանալ, ոչ ալ վառօդ: Միակ ելքը գաղտագողի նահանջն էր, ապահովելով ժողովուրդը, որ օգտուելով մթնութենէն, սկսեր էր ցրուել արդէն դէպի զանազան դիւղեր:

Մերիններուն կը մնար քաջուիլ ուրիշ դիրքեր, պարպելով գիւղը, զոր թշնամին կը գրաւէր յաջորդ օրն իսկ:

Ու նոյն օրը, մերիններուն կողմէ գիւղը վերագրաւելու փորձ մը որ յաջող սկիզբ մը ունեցեր էր, մնացեր էր ի վերջոյ ապարդիւն:

ԱՆՈՐՈՇ ԿԱՑՈՒԹԻՒՆ

Մեր ինքնապաշտպանութեան միջնաբերդին՝ Կելիէ-
կիւզանի անկումով՝ մեր առջեւ կը ստեղծուէր անորոշ
կացութիւն մը: Սասունի 45 գիւղերու բնակչութիւնը՝
աւելի քան 20,000 հոգի, տեղահան, կիսամերկ, անօթի,
աւելի ճիշդը հայրենակիցներու եւ ազգականներու վախ-
կոտ ու գաղտնի կարեկցութեան յանձնուած, կը թափա-
ռէր գիւղէ գիւղ, եթէ կարենար, կամ սարէ սար, պա-
տառ մը հացի կարօտ: Քանի մը հազար հոգի յաջողեր
էին Մուշ ապաստանիլ: Մաս մը՝ ապաստաներ էին հայ-
կական գիւղերու գոմերը: Մնացեալները կապուած մը-
նացեր էին կռուող ուժերու ոտքերուն, խափանելով ա-
նոնց շարժումը:

Մեր կռիւր կը շեղէր այլ եւս իր բուն նպատակէն՝
որ ժողովուրդին տարրական իրաւունքներուն պահան-
ջէն կը բխէր ու կը դառնար հալածող բռնատիրութեան
դէմ՝ գոյութեան կատաղի պայքար մը, անողոք, յա-
մառ: Մեզ համար այլ եւս ոչ կամաւոր զինաթափում
կրնար ըլլալ, ոչ ալ անձնատուութիւն: Պատուաւոր փր-
կութիւնը կուրծք կուրծքի կռուին ու մահուան մէջ էր:
Ուրիշ ճար չունենալով պիտի կռուէինք, ինչ միջոցով որ
կարենայինք, ուր որ ըլլար, խուսափելով աւելորդ բա-
խումներէն: Թերեւս բախտը միայն, մեր առջեւ փրկու-
թեան ուրիշ ճամբայ մը բանար:

Այս էր կացութիւնը երբ Տերգէվանքի մէջ, մեր 70 -
80 հոգինոց խումբը կը հանգստանար մէկ քանի օր:

Սակայն բոլորին ալ մտքերն ու հոգիները կ'աշխա-
տէին դեռ ու կը յոգնէին: Պարտութիւնը որքան ալ ար-
դարանալի, նոյն իսկ մեզ համար փառաւոր նկատուէր,
ծանրօրէն կը ճնշէր մեր վրայ, եւ ուժգին ու ցնցող հար-

ուածի մը իբր փոխ – վրէժ պէտքը կը տանջէր մեզմէ շատերուն միտքը :

Սորհրդակցութեան նստանք : Կշռեցինք մեր կռուելու կորովն ու հաշուեցինք փամփուշտը : Արագ, անակնկալ եւ հատու հարուածի մը համար՝ բաւարար գտանք զանոնք : Ու որոշեցինք յարձակիլ Մուշի վրայ ու գրաւել քաղաքը : Արդէն, Կելիէկիւզանի անկումով, եթէ կռիւները շարունակուէին, բնականաբար անոնք Դաշտ պիտի փոխադրուէին :

Ու այդ վճռական նպատակով ալ ճամբայ ելանք դէպի Մոկունք, որ Մուշի մօտերն էր եւ պիտի կազմէր յարձակման մեր առաջին խարխիսը :

Հող սակայն արգելքի մը հանդիպեցանք : Գիւղին ուսը ԴԵՕ, Կոմիտէի անդամներ Դաւիթ եւ Ղազար իմանալով մեր այդ մտադրութիւնը՝ եկան մեզ տարհամոզելու :

Կ'առարկէին թէ նոյն իսկ մեր ձեռնարկին յաջողութիւնը կրնայ չափազանց վտանգաւոր հետեւանքներ ունենալ ամբողջ Հայութեան համար, որ անպատրաստ է ինքնապաշտպանութեան եւ հաւանաբար շատ տեղերու մէջ՝ լուր անգամ չունի Սասնոյ անցուղարձերէն : Թէ ի դուր պիտի խռովենք Մուշը, որ ինչ ալ ըլլայ ներկայ կռիւներուն ելքը, մեր յեղափոխական գործունէութեան յենարանն ու կռուանը պիտի մնայ եւ հետեւաբար պէտք է խնայել անոր՝ ապագայ ձեռնարկներու յաջողութեան համար : Իսկ ձախողութեան պարագային՝ պարզ էր որ կ'ըսէին անոնք, կառավարութիւնը փոխանակ յարձակումը վերագրելու քանի մը տասնեակ յեղափոխականներու յանդգնութեան, պատասխանատու պիտի բռնէ ամբողջ ժողովուրդը՝ զոր անխնայ պիտի ջարդէ, մանա-

ւանդ որ ահագին ուժ կեդրոնացուցած է հոն: Իրենց վերջին առարկութիւնը քաղաքական էր: Կ'ըսէին որ օտար հիւպատոսները անընդհատ կ'երթան կուգան քըննութիւն կատարելու եւ տեղեկագիր տալու իրենց կառավարութիւններուն: Թէ ցարդ այդ քննութիւնները պատասխանատու ցոյց կուտան թուրք կառավարութիւնը: Սակայն մեր յարձակումը Մուշի վրայ՝ կրնայ հզօր փաստ ծառայել կառավարութեան ձեռքը՝ ամբողջ պատասխանատուութիւնը նետելու մեր վրայ՝ իբր խռովարարներու: Թէ ատոր հետեւանքը կ'ըլլայ մեր արդար դատին դատաստարութիւնը օտար պետութեանց կողմէ:

Անոնց այս առարկութիւնները բոլորովին չհամոզեցին մեզ, բայց բաւական վարանում սերմանեցին մեր մէջ:

Մուշի մօտիկութիւնը՝ վտանգաւոր կը դարձնէր Մօկունքը մեզ համար: Որոշեցինք հեռանալ անկից եւ անցնիլ Բերդազ, հանդարտ մտքով ու երկար հոն խորհրդակցելու եւ ճշդելու մեր ընթացքը:

Երբ գիւղ մտանք, շուներու վոհմակ մը մեզ դիմաւորեց կատաղի հաչիւնով: Մարդ – մարդասանք չկար: Այրերը լեռ բարձրացեր էին: Կիներն ու մանուկները հեռացեր էին դէպի իրենց ազգականներու տուները: Գիւղին մէջ մնացեր էր միայն Շամիրամցի Գրգօն որ յայտնեց թէ Առաքելը գիշեր ատեն գիւղ կ'իջնէ, իսկ ցերեկին՝ լեռ կը բարձրանայ:

Եւ իրօք, գիշերը Առաքելը եկաւ գտաւ մեզ: Ու նորէն, նստանք խորհրդակցութեան, կացութիւնը քննելու որքան որ կրնայինք մեր ստացած հատ ու կտոր տեղեկութիւններով եւ մեր ուղին ճշդելու: Մուրատ, Աւետիս, Առաքել կ'առաջարկէին խումբով անցնիլ Վան եւ

անկից զէնք ու ռազմանիւթ առած վերադառնալ՝ կռիւը
չարունակելու ցվերջ:

Ոմանք հակառակը կը պնդէին, չուզելով ո՛չ իսկ
կարճ պահ մը հեռանալ երկրէն, ինչ որ այլազան մեկ-
նութիւններու, եւ արհամարհական վերագրումներու
կրնար տեղի տալ, մանաւանդ որ միւս խումբերուն մա-
սին ոչ մէկ տեղեկութիւն ունէինք:

Մեծամասնութիւնը մնալու կողմնակից էր. բայց
Վան մեկնելու համամիտները յամառ էին. ժողովը չկը-
ցաւ միաձայն եզրակացութեան մը դալ: Իսկ վայրը ուր
կը դտնուէինք վտանգաւոր էր մեզ համար. կրնար մէկ
պահէն միւսը կոխուիլ կառավարական ուժերուն կողմէ,
մեզ պարտադրելով աննպատակ կռիւ մը:

Որոշուեցաւ հեռանալ այդտեղէն, անցնիլ Չխուրի
չրջանը՝ Ղարս գիւղը: Սումբը ճամբայ պիտի ելլէր ամ-
բողջութեամբ, մինչեւ Ղարս հասնէր, որպէս զի անա-
կնկալ դէպքի մը առջեւ ուժեղ ըլլայինք: Անկից յետոյ
միայն, անոնք որ կ'ուզէին Վան մեկնիլ՝ ազատ պիտի
ըլլային:

Այդպէս ալ եղաւ: Ղարսի մէջ մենք իրարմէ բաժ-
նուեցանք: Ես անցայ Մկրագոմ: Եօթանասուն զինեալ
մարդ էինք մնացեր այդ օրը: Մուրատ որ մտադրած էր
Վան անցնիլ անպատճառ, իր քով քանի մը զինուոր մի-
այն պահած էր:

ՄԿՐԱԳՈՄԻ ԿՌԻԻԸ

Յոր մը յանկարծ, գիւղին մէջ մենք մեզ շրջապատ-
ուած գտանք թուրք զինուորներէն, որոնց մեծ մասը
ձիաւոր էր: Կատաղի կռիւ մըն էր սկսաւ դէմ դէմի:
Ձիաւորները կը փորձէին գետը անցնել եւ գիւղ մտնել:
Մակայն ամբողջած մեր զիւրքերուն մէջ՝ բուն կրակի մը

տակ՝ կը խափանէինք իրենց ճամբան: Հրացաններու բոմբիւնէն խրտչած 40-ի չափ ձիեր, սկսան յանկարծ վազել մեր ուղղութեամբ: Ինչ որ երկինքէն կը փնտռէինք, գտանք գետնէն: Ձիերը որ իրենց շունչը առին գիւղին մէջ, բեռնաւոր էին ուտեստով եւ ռազմանիւթով:

Չգուշութեան համար մենք քանի մը խումբեր տեղաւորած էինք գիւղին կռնակը: Կռիւը թուրք զօրքին դէմ մէկ քանի ժամէ ի վեր կը շարունակուէր, երբ գիւղին կռնակէն, ձայներ սկսան բարձրանալ, — Կռուեցէ՛ք տղե՛րք, կռուեցէ՛ք, կը պոռային, հա՛, հասանք:

Երբ թրքական ձիերը փախած եւ գիւղ մտած էին, անոնցմէ երկուքը տալով երկու ընկերներու, յանձնարարած էի, քառատրոփ Ղարս սուրալ եւ կռուի լուրը հաղորդել Մուրատին:

Երբ աղմուկը փրթաւ, պահ մը կարծեցի թէ Մուրատն է որ օգնական ուժ հաւաքած՝ կը հասնի: Սակայն, Տէր Քերովբէն որ մեզ հետ կը կռուէր, զգուշացուց: Եւ իրօք, Պալաքցի Քիւրտեր էին, որոնք Հաճի Ֆէրոյի մարդոց հետ, վազեր էին կողոպուտի, ինչպէս միշտ եւ մեզ շփոթութեան մատնելով պաշարելու համար, դիմեր էին այդ կեղծիքին: Արդէն յաջողեր էին զգուշութեամբ այնքան մօտենալ գիւղին որ, լուրջ սպառնալիքի տակ կը ձգէին մեզ:

Մեզ կը մնար կռիւը սաստկացնել, մինչեւ կուրծք կուրծքի գալու աստիճան: Մեր խումբին միացեր էին Մկրազոմցի 10-ի չափ կտրիճներ, որոնց օժանդակութեամբ, Քիւրտերու դիմաց՝ մեր դիրքերը յաջողեցանք ապահովել:

Գլխաւոր մտահոգութիւնս էր մինչեւ մութը արգիլել թշնամիին յառաջխաղացումը եւ մութը կոխելուն,

Ժողովուրդին հետ հեռանալ գիւղէն :

Երեկոյեան գէմ նշմարեր էինք որ թշնամին յողնու-
թեան ու թուլութեան նշաններ կը սկսի ցոյց տալ : Կար-
գաղրեր էի որ գիւղին բնակչութիւնը պատրաստ կենայ
ամէն վայրկեան հեռանալու : Արդէն Քիւրտերը բուն
գիւմարութեան հանդիպելով եւ բաւական ալ զոհեր
տալով, անօգուտ սեպեր էին յամառիլ եւ կողոպուտի ի-
րենց ախորժակը աւելի յարմար առիթի պահելով, հե-
ռացեր էին : Ժողովուրդը՝ փոքրիկ խումբերով եւ զգու-
շութեամբ, սկսեր էր մեկնիլ : Քիչեր մնացեր էին գիւղին
մէջ՝ երբ մութը կոխեց :

Սկսայ խումբերը հաւաքել, մեր կարգին մեկնելու
համար, եւ որպէս զի գետին միւս ափը հսկող թշնամիին
չզգացնենք մեր փախուստը, կարգադրեր էի որ յետսա-
պահները՝ մերթ ընդ մերթ՝ անոնց ուղղութեամբ՝ մէկ
քանի ձեռք հրացան պարպեն :

Թրքական ձիերու մեր կողմ փախուստը, ցերեկին՝
ուրախացուցեր էր մեզ : Սակայն հիմա, մտահոգութիւն
կը պատճառէր : Երբ պատրաստ ուտելիք բերեր էին մե-
զի, որ շարաթներով կուշտ մը ուտելու կարօտը քաշեր
էինք, անմտութիւն էր այդ կենսական բեռէն հրաժա-
րիլ, թեթեւ քալելու համար : Սակայն, որքան ալ ու-
զէինք, եւ որքան օգտակար նկատէինք մեզ համար,
չէինք կրնար ձիերը մեզ հետ տանիլ : Լռութեամբ փա-
խելու պէտք ունէինք, մանաւանդ գիշեր ատեն՝ երբ
թեթեւ աղմուկ մը անգամ լսելի կը դառնայ վարժ ա-
կանջներուն : Իսկ ձիերը իրենց կոպիտ պայտերով կը-
նային մեզ մատնել : Կը մնար զիրենք հոն ձգել երեսի
վրայ, շալկելով իրենց բեռները, ուտելիք եւ փամ -
փուշտ :

Այդպէս ալ ըրինք ու ճամբայ ելանք դէպի Նոր – Շէն
 ուր մտնելու համար Մեղրագետը անցնելու էինք: Սա-
 կայն գետը բարձրացեր էր եւ անկարելի կը դարձնէր
 ոտքով կտրել: Սէյտօ Պօղոսի խորհուրդով՝ մէկը լողա-
 լով անցնելու էր գետը եւ լուր տալու էր Նոր – Շէնցի-
 ներուն, որ լաստերով գան խումբը փոխադրելու: Այդ
 գործը ինկաւ Պասգիւղացի էլոյին որ վարպետ լու –
 ղորդ էր:

Գիւղէն՝ մեզ փոխադրելու եկողներուն մէջ էր մեր
 ընկերներէն Մօսօն, որմէ խնդրեցինք որ գիւղէն դուրս՝
 մեզի ապահով պատսպարան մը հոգայ: Լաստը ամէն մէկ
 անգամուն հազիւ կրնար տասնական հոգի փոխադրել:

Հակառակ մեր փափաքին, խումբին փոխադրութիւ-
 նը գաղտնի կատարելու, մաս մը գիւղացիներ իմացեր եւ
 գիւղին մէկ թաղին մէջ՝ տեղ ալ պատրաստեր էին, այն
 յոյսով ու ենթադրութեամբ որ հող կը մնանք երկար ա-
 տեն: Սակայն հող մնալու մեր գլխաւոր արգելքը փամ-
 փուշտի պակասն էր: Ատկից դատ, փոխանակ խումբերը
 անկապ, ու ցրուած վիճակի մէջ պահելու, եւ ատով՝
 մեր արդէն տկար ուժերը ջլատելու, կը փափաքէինք
 ժամ առաջ միանալ զանգուածին եւ սպասել կարգա –
 դրութեան մը, որ անշուշտ, պիտի հասնէր կեդրոնէն,
 եւ վերջ տար մեր անորոշ ու անկայուն կացութեան:

Ու նաեւ, գիտէինք թէ կառավարութիւնը դարձեալ
 մէջտեղ ձգած էր Ալայի պէյը, որ բոլոր անպաշտպան
 գիւղերը խուժելով, ամէն մէկ տան մէջ պահուրտած յե-
 դափոխական կը փնտռէր, գիտնալով որ տուներուն մէջ՝
 հազարէն մէկ կրնայ հանդիպիլ այդ հազուագիւտ թո-
 չունին: Բայց բուն նպատակն անշուշտ՝ այդ չէր: Այլ
 խոշտանգել ժողովուրդը, հարստահարել ու ահաբեկել:

Գիտնալով՝ չէինք կրնար գիւղը վտանգել մեր ներկայութեամբ :

Եւ հետեւաբար, գիւղէն դուրս՝ գոմի մը մէջ գիշերելէ յետոյ՝ ճամբայ ելանք դէպի Ալվառինճ : Նոյն գիշերը գոմին մէջ՝ ստիպուեր էինք մեզ հետ բանտարկուած պահել երկու քիւրտ հովիւներ, որոնք կը պատմէին թէ մեր նախորդ օրուան կռուին մէջ՝ թշնամին բաւական ծանր կորուստի ենթարկուած էր. 40 սպանեալ եւ 60-ի չափ վիրաւոր :

Ալվառինճի մէջ հանդիպեցանք Մշեցի երկու մասավաճառներու, որոնք անասուն գնելու եկած էին հող : Թարմ եւ բաւական ստոյգ տեղեկութիւններ ունէին : Կը պատմէին թէ կառավարութիւնը ոչ մէկ ջանք կը խնայէ գլխաւորաբար՝ ձեռք ձգելու Վահանն ու Անդրանիկը՝ որոնց գլուխներուն 500-ական ոսկի գին կտրած է, թէ, ենթադրելով որ այդ երկուքը մեր խումբին հետ կրնան ըլլալ եւ իմացած ըլլալով որ մենք իջած ենք Չխուրի շրջանը, սկսեր է հետապնդել մեժ ուժով : Ատով կը բացատրուէր մեր նախորդ օրուան անակնկալ հանդիպումը թուրք զօրքին եւ կռիւր :

Կը պատմէին նաեւ թէ հիւպատոսներու ստիպման տակ, կառավարութիւնը խոստացած է թոյլ տալ որ Սասնոյ փախստական ժողովուրդը վերադառնայ իր տեղերը :

Օրը անցուցինք Ալվառինճի մէջ ու նստեցանք խորհրդակցութեան : Փամփուշտի պակասը անընդհատ կը մտատանջէր մեզ : Կը մտածէինք թէ առանց ապահովելու մեր պաշտպանութեան ու կռուի այդ անհրաժեշտ ու նախնական նիւթը, անխոհեմութիւն էր գիւղէ գիւղ ու նոյն իսկ լեռնէ լեռ թափառիլ, առանց ուշ - կանուխ,

կառավարութեան ուշադրութիւնը հրաւիրելու մեր վը-
րայ : Միւս կողմէ խումբն ալ ցրուել անկարելի էր , ա-
ռանց վտանգելու խումբին ամէն մէկ անդամը եւ առանց
վհատած նկատուելու մեր նուիրական նպատակէն՝ որ
ժողովուրդին պաշտպանութիւնն էր , մանաւանդ այդ օ-
րերուն , երբ կառավարական խտութիւնները դարձեալ
սաստկացեր էին , հակառակ օտար հիւպատոսներու ա-
շալուրջ հսկողութեան եւ անոնց տրուած հաւաստիքնե-
րուն :

Այս պայմաններու տակ , խումբին սպառնացող որ
եւ է վտանգ նուազեցնելու յոյսով , որոշուեցաւ դայն
քանի մը մասերու բաժնել եւ ցրուել զանազան ուղղու-
թեամբ , միշտ կանոնաւոր կապ պահելով իրարու հետ՝
խումբ մը դրուեցաւ Տէր Քերովբէի տրամադրութեան
տակ , որ գնաց Սասգիւղի սարերը , հոն պահուած մնա-
լու ատեն մը , մինչեւ որ կացութիւնը պարզուէր : Սէյտօ
Պօղոս մնաց Ալվառինճի շրջանը՝ իր խումբով . իսկ ես ու
Յուլակ Արամ անցանք Ղըղլաղաճի շրջանը :

ՎԱՀԱՆ ՏՕՂՐԱՄԱՃԵԱՆԻ ՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

Մօտ մէկ ամիս անցուցինք այդպէս , բաղդատաբար
հանդարտ կացութեան մէջ , ապահով եւ դրեթէ առանց
կռուի , եւ մանաւանդ առանց ուտեստեղէնի հոգեսպառ
մտատանջութեան : Չոր հաց մը գոնէ կանոնաւոր կը
գտնէինք ամէն ժամի : Փամփուշտի հարցն ալ առ այժմ
լուծած էինք , ամէն մէկուս համար կուսակցական սլա-
հեստներէն առնելով երկու հարիւրական գնդակ :

Արդէն գարնան վերջերն էր ու կը պատրաստուէինք
լեռը բարձրանալու նորէն ու պահ մը հոն մնալու , խու-
սափելու համար կառավարական ուժերու հետ ամէն ա-
նախորժ հանդիպումէ , մանաւանդ որ կռիւներէն յետոյ՝

բացուեր էր տեսակ մը Իանակցութեան շրջան : Հրացան-
ները լռելու էին քանի որ խօսքը այլ եւս քաղաքական
մարմիններուն ու մարդոցն էր , մանաւանդ որ Վարդան
Վարդապետն ու Գեղամ Տէր Կարապետեան Վահան Տող-
րամաճեանի ներկայութիւնը կը պահանջէին իրենց քով՝
բանակցութեանց ուղղութիւն տալու համար եւ անոր ե-
տեւէն սուրհանդակներ ղրկեր էին :

Երբ լուրը մեզ հասաւ , մենք մեր կողմէ Վահանը
փնտուելու ղրկեցինք Մշեցի Լեւոնը եւ երկու Տալուորիկ-
ցիներ՝ Հրբոն ու Մկրոն : Վերջէն իմացանք որ Անդրա-
նիկն ալ իր կողմէն ղրկած էր խումբ մը՝ որպէս զի Վա-
հանն ապահով հասցնեն Դաշտ :

Մեր տղաքը գտեր էին Վահանը եւ անոր յանձներ
իրենց քով գտնուած նամակները : Քիչ ժամանակ յետոյ՝
հասեր էր նաեւ Անդրանիկի ճամբած խումբը : Վահան
պատրաստուեր էր մեկնելու եւ յաջորդ օրը ճամբայ
կ'ելլէ դէպի Եղկարթ , մէկ քանի մարտիկներու առաջ-
նորդութեամբ :

Իր հետ էին Մարտոն , որ տոպրակի մը մէջ կը կրէր
կարգ մը թուղթեր եւ Աւէն ու Օվօն , նաեւ Տիգրանա-
կերտցի զինագործ Հաճին : Եղկարթի մէջ , անոնք կրակ
կը վառեն , կը հանգստանան : Բայց առաւօտուն , երբ կը
պատրաստուէին ճամբայ ելլել , դէմի բլուրէն կը նշմար-
ուին խումբեր : Ոմանք կը պնդէին թէ ատոնք թրքական
զօրքերն են որ թափառական Սասունցիներն ու յեղա-
փոխական խումբերու մնացորդները կը հալածեն : Վա-
հան կը կարծէր թէ իրեն ուղեկցելու ղրկուած մեր տը-
ղաքն են : Շատ շանցած սակայն կացութիւնը կը պար-
զուէր երբ դիմացէն՝ կրակը պայթէր :

Ու կռիւր կը սկսի : Վահանի ուղեկիցները կը պա-

հանջեն որ ինքը դանդաղ մարդ, անվարժ կուռի, փախուստ տայ եւ ապահով թաքստոցի մը մէջ պահուըտի, մինչեւ որ կուռը վերջանայ: Սակայն, արդէն ուշ էր: Սմբակը մնացած էր զօրքին երկու կրակներուն մէջտեղը: Անոր դիրքն ալ յարմարութիւն չունէր: Հեռաձիգ գէնքն ալ կը պակսէր: Միայն ատրճանակներ ունէին: Աւէն միայն իր ձեռքը ունի հին հրացան մը՝ բերդանկա մը, որ առաջին հարուածէն իսկ կ'աւրուի: Հաճին որ թէեւ վարպետ զինագործ, բայց անկարող կուռի, գետը կը նետուի, միւս ափը անցնելով ազատելու: Սակայն փամփուշտը կը հասնի ետեւէն ու կը զարնուի:

Սպաննուեր էր նաեւ Վահանը, որուն դիակը մէկ քանի օր յետոյ գիւղացիները վերցնելով, թաղեր էին Եղկարթի գերեզմանոցը:

Այս լուրը շատ գէշ տպաւորութիւն գործեց մեր վըրայ, մանաւանդ որ Վահանի մահով, կը կարծէնք թէ յեղափոխութիւնը գլխատուեցաւ: Այլ եւս որոշ ուղղութեամբ ու նպատակով շարժելու, խումբէ խումբ խզուած կապերը վերահաստատելու, մեր մարտական ճիգերը համադրելու որ եւ է հնարաւորութիւն չէինք տեսներ: Սումբին մէջ ընդհանուր տրամադրութիւն մը կը զարգանար ու կը սաստկանար ատեն մը ցրուելու եւ որոշ հրահանգներու վրայ կրկին միանալու, մանաւանդ որ Վան գացող Մուրատի խումբէն ալ որ եւ է տեղեկութիւն չէր հասներ: Ի վերջոյ, որոշեցինք հեռանալ Ղըզլաղաձի շրջանէն, որ լեցուած էր զօրքով եւ անցնիլ Բերդակ, ուր կը յուսայինք քաղել ստոյգ տեղեկութիւններ՝ որոնք հաւանաբար՝ տուն տային մեր ընթացքին:

Հող ալ սակայն, նոյն անստուգութիւնը: Սումբը որոշեց ցրուիլ առժամաբար, 15 օր վերջ դարձեալ, Բեր-

դակի սարը հաւաքուելու պայմանով :

Սէյաօ Պօղոսի հետ, մնացինք տասը – տասնեւէկ հոգիով, եւ Սուրբ – Աղբերակի անտառին մէջ, ատեն մը պահուած մնալու համար, պաշար պատրաստել տը-
ւինք :

Մեկնելու վրայ էինք, երբ հասան Մարնկայ Պօ-
ղոս եւ Յակոբ, որոնք մեզ հաղորդեցին թէ Անդրանիկ
Մարնկայ սարը կը գտնուի : Լուրը ղրկեցինք Տէր Քե-
րովբէին եւ մենք ալ ճամբայ ելանք միանալու Անդրա-
նիկին, որ կրցեր էր փոքր խումբով մը փրկուել վտան-
գաւոր հալածանքէ մը :

Գէպքը տեղի էր ունեցեր հետեւեալ պատրգաներու
տակ :

Վահանին ետեւէն խումբ մը ղրկելէ յետոյ, երբ ո-
ւէկ լուր չէր ստացեր, Անդրանիկ այս անգամ ճամբեր
էր Գէորգը : Այդ միջոցին, կառավարութեան լուր տըր-
ւեր էր թէ Անդրանիկ կը գտնուի Գոմեր գիւղը, ուրկէ
սակայն գիշերանց հեռացեր էր :

Այս լրատուութեան վրայ, թրքական հրամանա-
տարը աւելի քան մէկ վաշտ զօրք ղրկեր էր Գոմերը պա-
շարելու, եւ այդ առթիւ ալ, մէկ քանի ձեռք հրացան
պարպուեր էր զօրքին եւ գիւղացիներուն միջեւ :

Ու վերջապէս, Մարնկայ սարի վրան հանդիպե -
ցանք Անդրանիկին : Հող նորէն, մօտ 80 հոգի եղած
էինք, բոլորս ալ ժամ առաջ մեր գիրքն ու ուղղու -
թիւնը ճշդելու, մեր անստոյգ եւ շփոթ ընթացքին վերջ
մը տալու փափաքով տոգորուած :

Խումբին մէջ երկու տրամադրութիւն կը տիրէր :
Մաս մը գիտէր թէ Վարդան վարդապետ Մուշի Կեղը .
Կոմիտէին հետ համախորհուրդ՝ կը թելադրէ Անդրա-

նիկին, որ ցրուէ խումբը այլեւս եւ ինքն ալ՝ ապաստանի Մուշի սուսական հիւսաւորսարանը, ուր իրեն համար թագստոց մը սլատրաստուած էր: Այս խումբը համամիտ էր ցրուելու եւ պայքարը դադրեցնելու, թոյլ տալով որ կուսակցակա նեւ ազգային մարմինները վարեն անհրաժեշտ բանակցութիւններ: Իսկ մաս մըն ալ կը պնդէր կռիւր շարունակելու պէտքին վրայ:

Վէճը կտրելու համար, խորհրդակցութիւն մը կատարուեցաւ: Երկու տեսակէտները դէմ առ դէմ դրուեցան: Հարց տրուեցաւ Անդրանիկի թէ ինչո՞ւ չուղեր անսալ Վարդան վարդապետի եւ Կեդր. Կոմիտէի թելադրութեան:

Անդրանիկ, հին ու նոր օրինակներով, կը ջանար հաստատել թէ կարելի չէ վստահիլ քաղաքացիներուն, թէ կացութիւնը սղտորէ, առաջարկին տակ կրնայ խաղ մը պարտկուած ըլլալ ու կ'առաջարկէր որ Գէորգն ու ես դաշտը իջնենք, հաւաքենք ու Մարնկայ սարը փոխադրենք որքան զէնք ու մարդ որ կրնանք եւ գրոհ տանք թշնամիին վրայ:

Ժողովի մեծամասնութիւնը դէմ կ'արտայայտուէր այս առաջարկին, այն նկատումով որ, առանց առատ ուղմաթերքի, պաշարի նեղութեամբ եւ սահմանափակ ուժերով, աւելի կը վտանգենք շրջանին կացութիւնը, որ արդէն նախանձելի չէր կրնար ըլլալ:

Մինչ այդ՝ վրայ կը հասնէր Վարդան վարդապետի նոր մէկ նամակը, որ կը յայտնէր թէ կառավարութիւնը իմացած է մեր թագստոցը, եւ նոր ուժեր կը կեդրոնացընէ Նորաչէն, Ալի - Զոնան, Արաղ, Առաքելոց Վանք, Հաւատորիկ, Ալվառինջ ու կը պնդէր որ նոյն գիշերն իսկ Անդրանիկ փոխադրուի քաղաք:

Այդ ալ ազդեցութիւն չգործեց Անդրանիկի վրայ :
 Ու խումբը բաժնուեցաւ երկուքի : Անդրանիկ որուն
 հետ էին Գէորգը եւ Մակարը , որոչեցին վերադառնալ
 Սասուն , կռիւը շարունակելու մտադրութեմբ : Սէյտո
 Պօղոս , Տէր Քերովբէն վերադարձան Բերդակ :

Իսկ ես , խումբով մը մեկնեցայ Տէրգէվանք , միւս
 խումբերուն հետ համաձայնելէ վերջ որ կապը պիտի
 չկտրենք իրարմէ եւ տասնըհինգ օր յետոյ , նորէն Բեր-
 դակի մէջ պիտի հանդիպինք իրարու : Ինձի հետ էին
 Բզլից գիւղացի Յակոբը , Արաղցի Մօսօն եւ Յակոբը ,
 Ալիճանցի Մխիթարը , Երկար եւ Կարճ Մխաքները :
ՏԵՐԳԵՎԱՆՔԻ ԿՈՒՒԼ

Տերգէվանքի մեր տեղական ընկերները տաք ըն-
 դունելութիւն մը ըրի նմեզ եւ մեր փոքր խումբը տեղա-
 ւորեցին Սաչոյի տունը , ուր իմացանք թէ մշեցի գի-
 նադործ Արամ Սահակեանը , Ջինուոր Գրիգորը եւ ուրիշ
 մէկ քանի Սասունցիներ գիւղն են , վիրաւոր և կը դար-
 մանուին :

Տան մէջ էր ճալոյի Նազարը որուն վրայ կասկած
 կը ծանրանար իբր հին լրտեսի եւ ըսողներ իսկ կային
 թէ Սերոբի մատնիչներէն է : Յայտնեց մեզ թէ Վարդան
 վարդապետի մէկ նամակը Անդրանիկի յանձնելու գոր-
 ծով էր որ այդ կողմերը կը գտնուէր : Ոեւէ փաստ չու-
 նէինք իր դէմ , բացի յամառ կասկածէ մը , զոր ոչ կըր-
 նայինք արդարացնել ու հիմնաւորել , ոչ ալ փարա-
 տել : Թէեւ , գործունեայ եւ բաւական անվախ մարդ ,
 յեղափոխականներու ալ կը գործակցէր , պարագային
 համեմատ՝ կարգ մը դժուարութիւններ հարթելով՝
 հոն ուր մերինները կ'անճրկէին :

Մեզ կը մնար, վերապահութեամբ շարժիլ իրեն
հետ, որքան ատեն որ առհարկի, պիտի ընկերակցէինք
իրեն նոյն երգիքին տակ:

Առաւօտեան նախաճաշը տակաւին չէինք վերջացու-
ցած, երբ հեւ ի հեւ ու դեղնած, տանտէրը վազեց
յայտնելու թէ թրքական զօրքը անակնկալ կերպով կո-
խած է գիւղը:

— Հոս մնալը վտանգաւոր է ձեզ համար, կ'ըսէր:
Ելէք, զգուշութեամբ գիւղին ետեւի հեռաւոր բլուրը ա-
պաստանեցէք: Ի հարկին, իբր լաւ դիրք ալ կրնայ ծա-
ռայել:

Աճապարանքով գէնքերը շալկեցինք ու դուրս թը-
ռանք տունէն: Հազիւ քանի մը քայլ առեր էինք, երբ
դէմս ցցուեցաւ կայտառ կտրիճ մը, սպայի զգեստով,
որուն համար յետոյ ըսին թէ զօրաբաժնի հրամանատա-
րին քեռորդի նէ եղեր:

Ձէնքը կրծքիս ուղղած, կը գոռար.

— Չշարժի՛ս, անձնատո՛ւր եղիր, ծօ՛:

Յանկարծակիի եկեր էի: Բայց շուտով սթափած,
յաջողեցայ իրմէ առաջ կրակել: Երիտասարդը վիրա-
ւոր, տապալեցաւ գետին: Խուճ մը գինուորներ իրեն
կը հետեւէին: Երբ իրենց սպան վիրաւոր տեսան, սկը-
սան նահանջել աճապարանքով, մինչ ես եւ ընկերներս
կը փութայինք ապահով հասնիլ բլրան գագաթը:

Չափազանց վտանգաւոր կը յայտնուէր մեր կա-
ցութիւնը: Հազիւ հրացանս պայթած, գիւղէն դուրս,
վերջին տուներուն պատերուն տակ հանգչելու նստած
զինուորները սկսեր էին ներս խուժել, եւ մեզ նշմա-
րած ըլլալով՝ կը կրակէին մեր վրայ ու կը հետապնդէին
մեզ: Արգիլելու համար անոնց արագ եւ անվախ յառա-

Չացումը, կը ստիպուէինք մերթ ընդ մերթ զիրք բըռնել եւ կրակել: Սակայն, քանի կը բարձրանայինք գէպի դադաթը, այնքան աւելի անելի մը մէջ կը մխրճըւէինք: Դէպի դիւղ՝ զինուորներուն վրայ քանի մը ձեռք հրացան պարսկէ յետոյ՝ երբ կը սուրայինք գէպի վեր, աւելի քան երկու հարիւր հրազէններէ տեղացող համադարկին տակ, նոյնքան խիտ կրակ մը յանկարծ մեզ գիմաւորեց ճակատէն, շատ մօտիկէն, հազիւ հարիւր քայլ հեռաւորութենէ: Անակնկալը մեզ հաճոյք չէր կրնար պատճառել անշուշտ: Շշմեր էինք պարզապէս եւ հազիւ մէկ մէկ քարի ետեւ կձկտած, հազար զգուշութեամբ արագ ակնարկով մը ճամբայ փնտռեցինք, կը նշմարէինք թէ ամէն մէկ քարակոյտէ թրքական զինուորի գլուխ մը կը բարձրանար ու գէնք մը կրակ կը փսխէր մեր ուղղութեամբ: Պաշարուեր էինք երկու կրակի տակ մնալով, աւելի ճիշդը, մահացու ծուղակ մը ինկե ըւ հոն յառաջացեր էինք առանց գիտնալու, մանաւանդ որ գէպի աջ, ոչ մէկ քայլ կրնայինք առնել. քիչ անդին, հակայ, անդնդային խոռոչ մը կը խորանար: Ելք չկար: Կը մնար կռուիլ մինչեւ վերջին փամփուշտը եւ պատուով մեռնիլ, կամ կռիւը քաշքշել մինչեւ մութ եւ օգտուելով զիշերուան բարերար մեղսակցութենէն, թըրքական շղթային մէջէն ձեզք մը փնտռել: Կացութիւնը արդէն վհատեցուցեր էր մեր սակաւաթիւ խումբէն, հազիւ վեց – եօթը հոգի, երկուքը, Ալիճանցի Մխիթարն ու Բզլիցի Յակոբը, որոնք գէնքերը վար դրած, ու քարակոյտի մը ետին կձկտած, եթէ անձնատուութեան մասին չէին մտածեր, սակայն, ասպահովարար կը սպասէին զարհուրելի մահուան մը: Կեանքի իրենց ջիղը արդէն փրթեր էր վախէն: Բայց իրենցմով չէինք կրնար

զբաղիլ այ դպահուն : Ո՛չ ժամանակ ունէինք զիրենք համոզելու , ո՛չ ալ արամադրութիւն՝ իրենց կորով ներշնչելու : Մե բամէն մէկ բոպէն հաղար հրաշքով օգտագործելու ժամ էր , մանաւանդ որ վարէն ու վերէն կըրակը կը տեղար մեր վրայ , անդադար . մէկ միջոց կը մնար մեզի , — դէպի ձախ քալել , ո՛չ թէ փրկուելու , այլ՝ գոնէ կրակի խաչածեւումէն ազատելու , թշնամիին երկու կրակներուն ճակատ տալու եւ մեր խումբին հըրացանները աջ ու ձախ երկու մասի բաժնելու : Փամփուշտը բաւական առատ էր : Այդ կողմէ հոգ չունէինք առայժմ : Կը մնար քալել դէպի ձախ : Երկու վայրկեան անդին կը բարձրանար սեպ ժայռերու միակտուր խումբ մը , որուն անգամ մը կռնակ տալէ յետոյ , մէյ մէկ քարի ետեւ զիրք բռնած , կրնայինք անվախ կրակել , սպասելով գիշերուան մութին կամ մահուան : Կարգադրեցինք որ մինչ խումբի մէկ մասը պիտի կրակէր երկու ուղղութեամբ , դէպի առաջ ու դէպի ետ , միւս մասը պիտի վազէր դէպի ձախ : Եւ այսպէս փոխն ի փոխ , զիրար պաշտպանելով , օգտուելով ժայռերու մեծ ու փոքր ցցունքներէն , հողին անհարթութիւններէն , մերթ վազելով , մերթ սողալով , յաջողեցանք որոշուած տեղը հասնիլ անվնաս : Կէս ժամ տեւեր էր , երկու վայրկեանի այդ ճամբան , ուրկէ օձի ճամբայ բանալով միայն կրնայինք ժայռերու վիթխարի գլուխները ճեղքել ու անցնիլ : Արահետ մը կը սողոսկէր դէպի վար , դէպի գիւղը , որ պաշարուած կը մնար թուրք զօրքերէն :

Հազիւ հոն հասած , յանկարծ նշմարեցինք ճերմակ զգեստով մէկը , որ դէպի մեզ կը վազէր : Չէինք գիտեր թէ ո՞վ է . կը զգայինք սակայն թէ մերիններէն կրնայ ըլլալ : Չայն տուինք : Հասոյենց վահանն էր , մեր ըն-

կերներէն մէկը որ յայտնեց թէ զինքը սլիտի բռնէին :
Բայց փախեր ու մեզ փնտռեր է մեզ միանալու համար :
Առաւ մեր հոգեբեկ ընկերներէն մէկուն զէնքն ու սկը-
սաւ կրակել : Մեր դիրքերը լաւ էին . կրնայինք հան-
դարտ նշանառութեամբ կրակել եւ ամէն մէկ հարուա-
ծի զէնք մը լռեցնել :

Թշնամին՝ մեր շուրջ օղակ կազմելու զինով միայն
կրնար մեզ խեղդել : Կը մնար ստուգել թէ Առաքելոց
Վանքէն կրնա՞ր ունէ վտանգ սպառնալ մեզ : Եթէ թըր-
քական զօրքը չէր գրաւած դայն , կրնայինք երկար ժա-
մերու համար ապահով նկատել մեր դիրքերը , թերեւս
մինչեւ գիշեր հոն սպասել :

Արդայ Մօսոն զրկեցի այդ ուղղութեամբ հետա-
դատելու : Քանի մը ժամ յետոյ , ճերմակ թաշկինակով
մը , ինչպէս համաձայներ էինք , հեռաւոր բլրան մը գա-
դաթէն հասկցուց մեզ թէ վանքը պարապ էր : Այդ կողմէ
ալ ուրեմն ապահով էինք : Սակայն , թշնամին սկսեր էր
չզթան սեղմել եւ հակառակ մէկ քանի անյաջող փորձե-
րու , կը յամառէր շրջանակի մէջ առնել մեզ , մաս մը
զօրք անցընելով մեր դիրքին կռնակը :

Յանկարծ , նշմարեցինք որ Ծծմակի կողմէն , խուճբ
մը ձիաւորներ կ'արշաւեն դէպի կռուի վայրը : Նախ
կարծեցինք թէ օգնական զօրք է որ կուգայ թուրքե-
րուն : Ետ շանցած , սակայն , հրացանաձգութիւնը
գաղբեցաւ : Տիրեց լուսթիւն մը որ կ'երկարէր , հազար
ենթագրութիւններու մղելով մեզ : Պահ մը մտածեցինք
թէ թուրքերը խաղ մը կը սարքեն , անակնկալ հարուա-
ծով մը բնաջնջելու համար մեր փոքրիկ խուճբը : Տը-
ղաներէն ոմանք սակայն , նշմարեր էին սողալով նահան-
ջող մէկ քանի զինուորներ : Իրօք , հետախուզութեան

համար, հազար զգուշութեամբ յառաջացող մէկ քանի մարտիկներ երբ վերադարձան, հաւաստեցին թէ ոչ ոք կայ մեր շուրջը:

Քաջալերուած, սկսանք բարձրանալ դէպի Սեւ Վանէսի քարերը կոչուած վայրը, որ կը նայէր Առաքելոց Վանքին: Պահ մը հոն հանգստանալէ յետոյ, Աստղաբերի վրայով իջանք Մոկունք, ուր գիւղացիները կանոնաւոր հսկողութիւն կազմակերպած էին: Հոն տեղեկացանք որ այդ օրուան կռիւին մէջ՝ Տերդեւանեցի 40 հոգի, կիներն ու մանուկներն ալ հաշուելով, սպաննուած են, եւ թէ ձիաւորներու խումբը որուն յառաջացումը նշմարեր էինք Օծմակէն, օտար հիւպատոսներ էին: Անոնց ժամանման լուրին վրայ էր որ թուրքերը դադրեցուցեր էին կրակը ու քաշուեր էին: Հիւպատոսները եկա ծէին քննութիւն կատարելու կռուին մասին եւ կարգ մը տեղեկութիւններ քաղելէ յետոյ՝ վերադարձեր էին:

Տեղւոյն Կոմիտէի անդամներէն Դւօն որ մեղ պատասպարեր ու կերակրեր էր, յայտնեց թէ Մուշ կը մեկնի: Խնդրեցի որ հանդիպի եղբորս՝ Աբգարին, եւ հաղորդէ անոր որ իրեն կը սպասեմ Մոկունքի Չորին թուիս Մանուկ կոչուած սրբատեղին:

Որոշեալ ժամուն եղբայրս եկաւ, ընկորոջ մը հետ: Մուշի մէջ, թաքստոց մը պատրաստած էին ինձ համար, Յուրակ Արամենց տունը: Տասնըհինգ օրուան չափ հոն մնացի, երկու օր միայն անցընելով մեր աան մէջ, մօրս փափաքին վրայ:

Սուրհանդակ մը լուր բերաւ թէ Անդրանիկ եւ Գէորգ Մարնկայ Սարն են: Բաժնուելէ առաջ, իմ խումբիս ղինուորներուն ըսուած էր որ որոշեալ թուականին Բերդակ հաւաքուին: Բոլորս մէկ, անկից անցանք Մարնիկ,

ուր մեզ միացաւ նաեւ Մուրատ, որ Մկրագոմի կռիւէն
յետոյ, օգնութիւն բերելու յոյսով, մեկնեք էր Վան ու
վերադարձեր էր ձեռնունայն գրեթէ:

ԿՈՒՐԱՎՈՒԻ ԿՈՒՐԱՎ

Հող, Զինուորական Սորհուրդի մնացորդ անդամ-
ները նիստ մը գումարեցին, կացութիւնը քննելու եւ
ընթացք ճշդելու համար. կը մնար փորձ մը կատարել՝
ստիպելու համար կառավարութիւնը որ ժողովուրդին
աւելի նպաստաւոր զիջումներ ընէ: Առաջարկ ներկա-
յացաւ աննշմար անցնելու Ս. Կարապետի անտառը, հոն
ծուարած մնալու քանի մը օր եւ յարմար առթիւ անա-
կնկալ յարձակում մը գործելու Զիարէթի վրայ ուր մէկ
գումարտակ զինուոր կը բանակէր: Այս յարձակման նը-
պատակը պիտի ըլլար ուժեղ տպաւորութիւն մը գործել
Երոստական հիւպատոսներուն վրայ եւ անոր ազդեցու-
թեան տակ, մղել զանոնք որ խիստ միջամտութիւն մը
գործեն ի նպաստ ժողովուրդին:

Բոլորս համամիտ գտնուեցանք, չունենալով ուրիշ
միջոց ու ճամբայ ելանք դէպի որոշեալ վայրը: Անվը-
տանգ ու աննշմար կտրեցինք Եփրատը եւ գիշերեցինք
Կուրավու գիւղը, եօթը խումբի բաժնուած:

Գիշերը անցուցինք առանց միջադէպի: Սակայն,
ըսուած էր որ բուն կռիւի մը համար պիտի արթննա-
յինք առանց ուղեւոր:

Երբ աչքս բացի առաջին լոյսին հետ, նշմարեցի որ
մեր տանտիրուհին ամանով թան կը փոխադրէր արա-
գօրէն եւ զգուշութեամբ, չնշմարուելու ճիգերով: Կը-
նով ընթացքը ուշադրութիւնս գրաւեց, առանց զիս մը-
ղելու որ աւելի հետաքրքրուիմ սակայն: Երբ վերա-

դարձաւ, հարց տուի թէ այդքան կանուխ, որո՞ւ է որ
թան կը տանի:

— Մեր երկրագործներուն, պատասխանեց, կէս մը
չփոթ, ու փութով հեռացաւ միւս սենեակը, քիչ յետոյ
նորէն, նոյն ամանը լեցուցած դուրս ելլելու համար:

Կասկած մը թէ անսովոր բան մը տեղի կ'ունենայ,
ծանրացաւ մտքիս վրայ, պատրաստուեցայ դուրս ելլել
եւ ստուգել, երբ յանկարծ շատ մօտէն հրացանի մէկ
քանի պայթիւններ օդը թնդացուցին: Չայն տուի ըն-
կերներուս, որոնք տակաւին կը քնանային. տանտիրու-
հի, դողահար ու շնչասպառ ներս մտաւ ու գաղտնիքը
պարզուեցաւ:

Ստուար զօրախումբ մը առանց խուզարկելու կամ
նեղելու մտադրութեան, կանգ առեր էր գիւղին առջեւ:
Ու ոեւէ պատրուակով անոնց գիւղ մուտքը կանխելու
համար, գիւղապետին թելադրութեամբ, տեղացիները
հաց, ջուր ու թան կը տանէին անոնց, որպէսզի իրենց
տեղէն չչարժին: Այդ կերպով կը յուսային պահել ա-
նոնցմէ՝ գիւղին մէջ մեր ներկայութիւնը, մինչեւ որ ա-
նոնք հեռանային, մանաւանդ որ պահ մը հանգչելէ յե-
տոյ՝ ճամբան շարունակելու համար կանգ առեր էին
հող. իսկ մենք ալ, գիտէին գիւղացիները թէ կռուելու
մտադրութիւն չունէինք այդ պահուն, եւ հող մանա-
ւանդ:

Եւ սակայն, մէկ քանի զինուորներ յաջողեր էին
գիւղ սպրդիլ, եւ առաջին դուռը որ հրեր էին, կը բաց-
ուէր մեր մէկ խումբին վրայ...: Զինուորները հազիւ
նշմարած մեր խումբը, փախուստ տուեր էին՝ կրակելով
օդին մէջ: Ու պայթիւնները լսողը զէնքը առած՝ դուրս
էր նետուեր: Շատ չանցած՝ զինուորական փողը հնչեց,

ու մաս մը զինուոր սկսաւ խուժել զէպի գիւղ, ստիպե-
 լով մեզ որ կուսինք կուրծք կուրծքի: Երբ գիւղ մտած
 զինուորները ստիպուեցան փախուստ տալ, արդէն մեր
 ամէն մէկ խումբը զիրք գրաւած էր ու կանոնաւոր կը-
 ուիւ կը մղէր թշնամիին դէմ: Տասնեակ մը բարձրացեր
 էր եկեղեցիին դանդակատան վրայ, զիրքեր պատրաս-
 տուած էին նաեւ եկեղեցիին տանիքին վրայ, ուրկէ կը-
 րակը անվրէպ նշանառութեամբ կը տեղար զօրքին վը-
 րայ, որուն մէկ մասը ստիպուեր էր գերեզմանատան մէջ
 զիրք բռնել, քարերուն ետին: Մշեցի Նազար Արամ-
 շատեան, որ առաջինն ըլլալով մտածեր էր օգտագործել
 դանդակատունը իբր զիրք, անխնայ ջարդ կուտար թըշ-
 նամիին: Զօրքը կը սկսէր հետզհետէ լքել գերեզմանա-
 տան իր զիրքերը, բայց կուր կ'երկարէր ու կը շա-
 րունակուէր կատաղօրէն, ու ամէն կողմէ, Սուլուխէն,
 Յիւաւուէն, Հավրանէն, Արթերթէն որոնք իրարմէ կէս
 ժամ – երեք քառորդ հեռաւորութիւն ունեցող գիւղեր
 են, օգնութիւն կը ստանային թուրքերը, որոնց թիւը
 Չէրքէզներու եւ Քիւրտերու յաւելումով, մեր գնահա-
 տութեամբ կը մօտենար 1500-ի, մեր հազիւ 80- 90-ին
 դէմ: Կուր տեւեց մինչեւ երեկոյ եւ տակաւին դադրե-
 լո ընչանց ցոյց չէր տար: Մեզ տրուած հրահանգին հա-
 մաձայն, օգտուելով մութէն, պիտի քաշուէինք զէպի
 Ախջան, որ հեռու չէր, բայց հոն հասնելու համար,
 գետը կտրելու էր նորէն: Թուրքերը արդէն, շնորհիւ ի-
 րենց ստացած օգնութեան, յաջողեր էին գրաւել գիւղին
 կէսը. իսկ մենք կուսելով կը նահանջէինք քայլ առ քայլ
 զէպի գետը: ուր երբ հասանք, տեսանք որ ճամբան կտ-
 րուած է: Գետին դէմի եզերքը գրաւած էին Ալայի պէյին
 զինուորները: Վտանգաւոր կացութիւն էր: Երկու կրա-

կի մէջտեղ մնացած, թիւով անհամեմատօրէն տկար եւ ուժասպառ օր մը տեւող կռուին մէջ, անօթի նաեւ, յուսահատական յանդգնութիւն մը միայն կրնար մեզ փրկել:

Քսան հոգինոց խումբ մը հրաման ստացաւ հրադեցնելու զինուորները, մինչ միւսները պիտի փորձէին գետը անցնիլ լողալով: Ու գնդակներու տարափի տակ, նետուեցանք ջուրը, վեր բռնած զէնքերն ու փամփշտակալները: Դժուար թէ մեզմէ շատերը ողջ կամ անվրնաս հասնէին գետեզրը, եթէ անակնկալ միջամտութիւն մը օգնութեան չհասնէր: Իրօք, Ախջանէն, յանկարծ համազարկ մը պայթեցաւ, շփոթի մատնելով թուրքերը: Գիւղի մեր ընկերներն էին, որ աչք առնելով ամէն վրտանդ եւ տեսնելով մեր վրայ ծանրացող մահացու սպառնալիքը, կը մտնէին կռուի մէջ: Չօրքը կը սկսէր փախուստ տալ, իր կարգին մնացած ըլլալով երկու կըրակի տակ, ու մենք բոլորս ապահով կը կտրէինք գետը: Մենք ընդամէնը մէկ զոհ տուեր էինք, Յրօնքցի Խուչօն, որ սխալմամբ սպաննուեր էր եւ ուրիշ մըն ալ վիրաւորուեր էր թեթեւօրէն, դարձեալ հայդուկի մը կողմէն: Գիւղացիներէն ալ երկու վիրաւոր ունէինք: Իսկ, ինչպէս յետոյ իմացանք, թշնամին ունեցեր է 150 սպանեա լեւ 100 վիրաւոր:

Սակայն, Ախջան, ուր նախապէս մտադրած էինք քաշուիլ, վտանգուած էր այլ եւս. չէինք կրնար հոն ապաստանիլ. լաւագոյն էր ուրիշ ուղղութիւն մը բռնել. Անդրանիկի կարգադրութեամբ, սկսանք քալել դէպի Բերդակի սարը որ աւելի ապահովութիւն կը ներշնչէր մեզի, եթէ յաջողէինք առանց նշմարուելու հոն հասնիլ: Չար բախտը սակայն մեր դէմ հանեց երկու քիւր-

տեր, որոնք եթէ ազատ մնային, կասկած չկայ որ նոյն իսկ առանց չարակամութեան, պիտի յայտնէին մեր ուղղութիւնը եւ հետեւաբար նաեւ թաքստոցը: Կարելի չէր 90 հոգի վտանգել անխոհեմաբար: Ստիպուած, մեզ հետ տարինք այդ երկուքը, որոնք Մուսա բէկի մարդիկն էին եւ հոգ վերցուցինք մէջտեղէն, Անդրանիկի կարգադրութեամբ: Հոգ մեզ միացան Պոլէի Մճօն որ պահուած կ'ապրէր եւ Հաճի Յակոբը որուն վէրքը առողջացեր էր:

Բաղդատաբար ապահով էինք ատենուան մը համար. բայց մտահոգութիւնները չէին պակսեր. սնունդի յաւիտենական պակասը լերան գլուխը չէր որ պիտի փարատէր. կը պակսէր նաեւ փամփուշտը: Եթէ պատահամբ անգամ մ'ըն ալ կռուի բռնուէինք, մեր ամբողջ պահեստը կը սպառէր եւ մեր ինքնապաշտպանութեան համար իսկ, մէկ գնդակ չէր մնար: Միւս կողմէ, կը զգուշանայինք յախուռն ո եւ է քայլով պատրուակ տալ կառավարութեան, նոր խստութիւններով ճզմելու արդէն ուժասպառ ժողովուրդը:

Արդէն յարբերութեան մտած էինք Մշոյ Մարմնին հետ, յայտնելով Վան մեկնելու մեր մտադրութիւնը եւ մեր իրական կացութիւնը:

Մուշ՝ իր պատասխանին մէջ՝ մեզի կը թողուր մեր ընթացքին ընտրութիւնը: Որոշուեցաւ անցնիլ Վարդենիսի շրջանը, ուր մեր առաջին կեդրոնը եղաւ Ղարս գիւղը. հոգ երկու օր մնացինք, գումարելով փոթորկալի ժողով մը: Հարցը կը դառնար Մշեցի Ճալոյի Նազարին զոր միասին առեր էինք Բերդակէն եւ զոր կը ճանչնայինք իբր Սերոբի մատնիչ: Սերոբի սպանութենէն յետոյ, Նազար փախուստ տուեր էր Կովկաս, ուր յե-

դափոխականներու հետապնդումէն ազատելու համար վերադարձեր էր թուրքիա, ապաստանելով իր բարեկամին՝ ոստիկանապետ Հիւսնիի պաշտպանութեան: Միւս կողմէ, զերծ մնալու համար մերիններուն ահաբեկումէն, Հրայրի խոստացեր էր սպաննել Հիւսնին: Բայց ամէն առթիւ ալ, մէյ մէկ պատրուակ դտեր էր իր խոստումը դրժելու, միեւնոյն ժամանակ, իբր սուրհանդակ կարգ մը ծառայութիւններ մատուցանելով մեզի:

Մէջտեղ դրուած էր Նազարի ահաբեկման հարցը, որ երկուքի բաժնած էր խումբը: Անդրանիկ կը պահանջէր անմիջապէս պատժել մատնիչը: Իսկ Կոտոյի Հաճին յամառօրէն կ'ընդդիմանար փաստարկութիւններով՝ որոնք շատերուն համար համոզիչ էին: Եթէ ան իբր մատնիչ եւ կառավարութեան մարդ, կ'ըսէր, կասկածելի է, ինչո՞ւ ցարդ ազատ ձգեցինք, երբ երկու — երեք տարուան ընթացքին, առիթը չէր պակսեր զայն պատժելու, եւ մանաւանդ ինչո՞ւ զայն յաճախ, մեղ հետ պըտըտցուցինք եւ դիմեցինք անոր կարգ մը ծառայութիւններուն:

Բայց, երբ տեսաւ որ փոթորիկը կը մեծնայ, սպառնալով պառակտել խումբը, Հաճին եւս համամիտ գտնուեցաւ զայն ահաբեկելու այդտեղ իսկ: Ոմանք առաջարկեցին ահաբեկումէ առաջ, զայն ենթարկել սեղմ հարցաքննութեան, լուսաբանելու համար կարգ մը հարցեր որոնց կ'ենթադրէին թէ ծանօթ ըլլալու էր Նազար, ինչպէս Սերոբի մատնութեան եւ սպանութեան պարագաները մանրամասնութիւններով, Անդրանիկի եւ Սերոբի միջեւ ծագած պաղուծեան պատճառները, եւայլն:

Բայց այդ կացութեան մէջ, աւելորդ նկատուեցաւ

նման հարցեր յուղել ու որոշուեցաւ անմիջապէս անց-
նիլ մահապճուխն գործադրութեան, որ ինծի յանձնուե-
ցաւ :

Ահաբեկումէն յետոյ, մատնիչին դիակը թաղուե-
ցաւ Ղարս գիւղի եղերքը :

Ու խումբը ճամբայ ինկաւ դէպի Շամիրամ, ուր
հասանք առտուան դէմ, ամբողջ գիշերը քալելով :

ՇԱՄԻՐԱՄԻ ԿՌԻԻԸ

Կ'ենթադրէինք թէ մեր խումբի մասին ամէն ուղ-
ղութեամբ հեռագրուած պէտք է ըլլայ կառավարու-
թեան կողմէն, խիստ հսկողութիւն կատարելու համար,
մանաւանդ որ մեր մէկ քանի օրուան բացակայութիւնը
Դաշտի շրջանին մէջ կամ շրջակայքը եւ մեր հետքը գտ-
նելու համար կատարուած ասպարդիւն խուզարկութիւն-
ները կրնային ուշադրութիւն գրաւած ըլլալ :

Մէկ քանի օր պիտի մնայինք գիւղ, մինչեւ որ Վա-
նէն սպասուած կարգ մը տեղեկութիւններ հասնէին,
որպէս զի շարունակէինք մեր ճամբան : Անհրաժեշտ
զգուշութիւնները ձեռք առնուեցան ուրեմն, եւ գիւղը
եղերոյ կարեւոր դիրքերու պահպանութիւնը յանձնուե-
ցաւ խումբերուն, եւ հաւանակա նկուղի ընթացքին, ան-
միջապէս գրաւուելու համար, դիրքեր ալ սահմանուե-
ցան մնացեալ խումբերուն :

Ու առաջին գիշերը անցուցինք հանդարտ : Սակայն
առաւօտուն, լուր տրուեցաւ թէ գիւղը պաշարուած է :
Ամէն մարդ հրահանգ ստացաւ որոշուած դիրքերը գրա-
ւելու : Թշնամին որ մեզ համար վիթխարի ուժերով հա-
սած էր հոն, պիտի գրաւէր անշուշտ գիւղին տիրապե-
տոյ բարձունքները եւ նեմրուտը, կտրելու համար մեր
փախուստի ճամբան : Մեր խումբերը, անշուշտ աւելի

յանդուգն եւ արագաշարժ, ժամանակ չձգեցին զօրքին
 բարձրանալու: Շրջակայ երեք գլխաւոր բլրակները գը-
 րաւած էին Անդրանիկը, Մուրատը եւ Սեպուհը: Ես մէկ
 քանի ընկերներով, որոնց մէջ Ալիջանցի Միսաքն ու
 Հավրանցի Գէորգը, կը պաշտպանէի Աղբիւրի դերքը:
 Անդրանիկի կարգադրութեամբ, յետոյ ինձի միացաւ
 նաեւ Սասգեղցի Մոսոն: Իսկ Սերոբի հին զինուորնե-
 րէն Չուլումաթի ինկած էր Եկեղեցին: Ճակատադրա-
 կան կռիւը կը մղուէր բլուրներուն շուրջ, ուր կեդրոնա-
 ցած էր թրքական ուժին զանգուածը, որ տեսնելով զա-
 նոնք խլելու անկարելիութիւնը, կը սկսէր յարձակողա-
 կանի ուրիշ ուղղութեամբ: Լուր տրուեցաւ մեզ թէ զօր-
 քը ձորի ճամբով դէպի Աղբիւր կը յառաջանայ: Կը հը-
 րահանգուէր միեւնոյն ատեն կորովի կերպով դիմա-
 դրել: Մէկ քանի հոգի ալ կուգային մեր կողքին կըռ-
 ւելու: Կռիւը այս անգամ կեդրոնացած էր մեր դերքին
 եւ Եկեղեցիին միջեւ: Սումբէս երկու հոգի, Միսաքը
 աչքէն, Գէորգն ալ կռնակէն արդէն զարնուած էին: Ա-
 նոնց փոխադրութեան հոգն ալ կը ճնշէր դիս, մինչ թշ-
 նամին արագօրէն կը մօտենար: Արդէն դէմ առ դէմ,
 հայհուռներ կը փոխանակէինք: Թուրքերը կը ջանային
 օգտուելով հողին անհարթութենէն, սողալով կամ ա-
 րագ ոստումով, աւելի մօտենալ Աղբիւրին: Բայց շնոր-
 հիւ մեր անթերի նշանառութեան, զիրենք զամած էինք
 իրենց տեղերը: Ոչ ոք իրենցմէ կը համարձակէր քայլ մը
 յառաջանալ: Գլուխը վեր առնողը, առ յաւէտ կը տա-
 պալէր: Դէմ առ դէմ այս մահուան խաղը տեւեց աւելի
 քան երկու լժամ: Բլուրներէն կը տեսնէին անշուշտ մեր
 դերքին ճգնաժամային կացութիւնը, բայց չէին կրնար
 օգնութեան գալ, առանց երկու կրակի մէջ մնալու: Մէկ

քանի փորձեր կատարեր էին, սակայն անյաջող: Միայն
 Լեւոնը յաջողեր էր տոպրակ մը փամփուշտ շալկած՝
 հասնիլ մեր քով, երբ մեր ռազմանիւթը սպառելու վրայ
 էր:

Նոր կորովով, հակառակ յոգնութեան, սկսանք
 բուռն կրակ մը, երբ թշնամի ճակատէն բարձրացած
 ձայն մը կը յայտնէր թէ Իպրահիմ պէյը զարնուած է:
 Այդ կանչը զօրքին մէջ ինկած սարսափի մը ազդանշանը
 կը բերէր ինձ: Ճիշդ ժամանակն էր ուժեղ յարձակում
 մը գործելու, բայց անհրաժեշտ ուժը կը պակսէր: Միւս
 կողմէ կրակելով, կը պոռայի ամբողջ ձայնովս որ օգ-
 նութիւն ղրկեն բլուրներէն: Եւ վերջապէս, 7 հոգինոց
 խումբ մը յաջողեցաւ միանալ մեզ: Ու սկսաւ կատաղի
 յարձակում մը մեր կողմէն, թիւով ու նիւթով գերա-
 կշիռ թշնամիի մը դէմ, որ յոգնութեան ու վախի նը-
 շաններ կը մատնէր եւ շատ չանցած, կը նահանջէր գը-
 րեթէ խուճապահար: Թշնամիին նահանջը, թերեւս ան-
 խոհեմ յանդգնութիւն մը կը ներշնչէր մեզի, բայց ան-
 գամ մը ոտքի ելլելէ եւ մէկ քանի քայլ առաջ նետուե-
 լէ յետոյ, ալ չէինք ուզեր կանգ առնել: Իսկ բլուրներէն
 կը պոռային որ կանգ առնենք, աւելի առաջ չերթանք:
 Մութը կոխելու վրայ էր: յաջորդաբար եւ արագօրէն
 թշնամին վտարելով իր դիրքերէն, հասեր էինք ձորը,
 ուր երեսունի չտի զինուորներու դիակներ փռուեր էին:
 Աւելի առաջ երթալ, երբ մանաւանդ դիշերը վրայ հա-
 սեր էր, անխոհեմութիւն էր: Հրացանիս փողն ալ ճա-
 թեր էր արդէն եւ հազիւ ամի մը փամփուշտ մնացեր էր
 ամէն մէկուն քովը: Որոշեցինք վերադառնալ եւ հաւաք-
 ուիլ բլուրը, շարժելու համար համաձայն կատարուե-
 լիք կարգադրութեան:

Կռիւր սկսած էր առտուն կանուխէն եւ անդադար տեւած էր մինչեւ այդ պահը :

Ահա՛ թէ այդ կռուին վերաբերեալ ի՛նչ մանրամասնութիւններ կուտայ լաւատեղեակ ազանատես անձնաւորութիւն մը՝ Պ. Արշակ Սաֆրաստեան, որ այդ թրւականին, առկաւին երիտասարդ, անգլիական հիւպատոսարանին թարգմանի իր հանդամանքով, առիթը կ'ունենար յաճախ անձամբ քննութիւններ կատարելու գիւղերուն մէջ :

Շամիրամի Հերոսամարտը

(Օգոստ. 11. 1904, Դշ. (հին տոմար Յուլիս 29))

Զօրավար Սմբատը արդէն դրած է 1904 թուի Սասունի եւ Մշոյ Դաշտի հերոսական կռիւններու մասին : Պատմակա նայդ անհաւասար հերոսամարտին անձամբ ազանատես լինելէ յետոյ, անգլ. հիւպատոսի հետ Սասունէն Բաղէշ վերադարձայ 1904 յուլիս 16ին, երբ արդէն խաղաղած կը թուէր իրաց դրութիւնը :

Օգոստոս 11-ի Դշ. առաւօտ լուր հասաւ ինձ որ ահեղ կռիւ վերսկսած էր թուրք հեծելազօրքի եւ հայ Ֆէտայիներու միջեւ՝ Շամիրամ գիւղին մէջ, եւ թէ Բաղէշ քաղաքը գտնուող բոլոր կանոնաւոր զօրքերը, ժանտարմաները եւ ահագին թիւով քիւրտերը պիտի փութային դէպի Շամիրամ՝ օգնելու հեծելազօրքին : Անգլ. հիւպատոսը օրերէ ի վեր կը տառապէր տենդէ եւ ի վիճակի չէր ձի նստելու : Դեռ Մուշէն վերադարձած չէին Բաղէշի ուսն հիւպատոս Շիրքով եւ Փրանս. հիւպատոս Ռոպէն :

Հրահանգ կար Պոլսոյ անգլ. դեսպանէն՝ հայ - թրքական բոլոր բախումներուն ներկայ լինել հնարաւո-

րութեան չափով արագ, քննել իրերը տեղին վրայ եւ հեռագրել դէպքը ի գիտութիւն:

Անգլ. հիւպատոսը՝ Մր. Հէթքըթ, առաջարկեց որ անմիջապէս մեկնիմ դէպի Շամիրամ, գնամ ուղղակի վայրին եւ զինուորական հրամանատարին քով եւ հետեւիմ անցքերին: Անսահման ուրախութիւն զգացի այս առիթին համար: Օրէ օր արձանագրած եմ օրագրութեան մէջ պատանեկական զգացումով եւ բանաստեղծութեամբ նկարագրած եմ այդ դէպքը: Բայց այստեղ կը բաւականանամ մի ամփոփ պատմական համարատրուութեամբ:

Շամիրամ հայաբնակ գիւղ էր Նեմրուսի ստորոտը, Վանայ Մովու նաւահանգիստ Դատուանէն ժամ մը հեռու դէպի արեւմուտք, իսկ Բաղէշ քաղաքէն մօտ չորս ժամ հեռու հասարակ գնացքով դէպի հիւսիս:

Վերցուցի երկու լաւ ձիեր եւ ուղեկցութեամբ հիւպատոսարանի զինուած քավազին (թուրք) եւ մի կառավարական ոստիկանի՝ մեկնեցայ անմիջապէս: Չորս ժամուան ճանապարհը կտրեցի երկու ժամէն. կարելի էր գնալ աւել իարագ, սակայն ճանապարհը բռնուած էր զինուորական սայլերով, աստ անդ շարժող կանոնաւոր զօրքերով եւ մանաւանդ անկիրթ քիւրտ խուժանով: Ճանապարհին կը գտնուի Պաշ - խան եւ Ալամեկ - խան, ուրկէ դէպի Շամիրամ մեկնած էին արդէն պահակազուկը: Շեղելով մի քիչ դէպի արեւմուտք՝ բրոնեցի Ջրհոր հայ գիւղի ճամբան, ուրկէ արդէն յատակօրէն լսելի էր հրացանաձգութիւնը: Շատ տաք եւ փոշելից օգոստոսի օր էր: « Ուղտու Քարեր » կոչուող հեղեղատն ի վեր քչեցի սրընթաց, թէեւ թուրք հեծելազօրքը փորձեց համոզել զիս որ վտանգաւոր էր յառաջանալ

այդ ճամբէն, տեղացող գնդակների սուլոցէն: Մօտեցայ թուրք բանակետղին, եւ վալիի թիկնապահը զիս առաջնորդեց ուղղակի կուսակալ Ֆէրիտ փաշայի վրանը, զոր կանգնած էին մի բարձունքի ետեւ՝ Շամիրամէն մէկ քառորդ ժամ հեռու:

Դեռ բոսլրտիքս չնայած՝ վալին սկսաւ շատ լկտի բոլիթիքոսի բառերով հայհոյել՝ հայ էշփիաներ, չափքըններ (աւաղակներ, սրիկաներ), եւայլն; որոնք արդէն սպաննած եւ վիրաւորած էին բազմաթիւ զօրքեր եւ ձիաւորներ:

Շատ վարնոց եւ գռեհիկ արարած մըն էր Ֆէրիտ փաշան, կատարեալ աւաղակ մը, որուն գլուխը ջարդեցին Բաղէշի քիւրտերը 1907-ի գարնան, կողոպտեցին անոր գոյքը եւ մերկ էշու վրայ հեծցուցած՝ իշու պոչը դրին Ֆէրիտ փաշայի ձեռքը ման ածելու քաղաքին մէջ: Ապտիւլ Համիտի մասնաւոր կարգադրութեամբ՝ ջնջելու «հայ էշփիա»ները: Մարտէն մինչեւ յուլիս թէ՛ Սասունի եւ թէ՛ Տարօնի մէջ, Փէտայիներուն հետ նա ունեցած էր ոչ մի յաջողութիւն, թէեւ սպաննած էին բազմաթիւ անմեղներ եւ քանդած բազմաթիւ գիւղեր:

Այժմ Շամիրամի մէջ ինքզինքս դէմ յանդիման կը գտնէի Ֆէրիտ փաշային, ինչպէս իրեն հանդիպած էի Սասունի եւ Մշոյ մէջ, հայ էշփիաներու գնդակների տեղատարափին տակ:

Դուրս եկայ վրանի տակէն՝ մի քիչ նայելու բոլորտիքը. պայծառ արեւին տակ անգամ շատ քիչ բան կարելի էր տեսնել: Հեծելազօրքի շարժումներէն կը բարձրանար փոշիի մի խաւ: Ախլաթէն հասած նշանաւոր գաղան Չէրքէզ Ալի պէյ, 400 սուլարիներով շրջապատած էր Շամիրամը Նեմրուտի փէշերէն եւ Գրքուռի

ստորոտներէն : Հարաւային դիրքերը բռնած էին կանոնաւոր դօրքը , ժանտարմաներ , քիւրտեր , եւայլն , ընդամէնը մօտ երեք հազար օսմանցի՝ մօտ 70 հայ Ֆէտայիների գէմ , որոնք օր մը առաջ գալով Տարօնի գաշտէն , իջած էին Շամիրամ գիւղը՝ յաջորդ օրը Դատուանէն նաւ առնելու գէպի վան : Հայ հերոսներու գլխաւորներն էին՝ յաւերժ անմահ Անդրանիկը , դօրավար Սմբատ , դօր . Սեպուհ , Առաքել Աղան , եւայլն :

Վալին ինձ հաւաստեց որ էշֆիաները բողոքականաց եկեղեցիին վրայ բարձրացուցած էին հայկական դրօշակ . գուցէ դա մի պատրուակ էր՝ ոմբակոծելու համար բողոքականներու ժողովարանը որ իսկապէս ալ ամէնէն շատ վնասուած շէնքը դուրս եկաւ : Պէտք է ըսել որ թուրքերը արձակեցին փոքրիկ թնդանօթի մի քանի հարուածներ միայն : Կռիւը մղուեցաւ հրացանի անդուլ եւ անդադրում կրակով :

Վալիէն խեր չտեսայ . հարցուցի Բաղէշի զինուորական հրամանատար միրալայ Սայիտ պէյի վրանը : Սայիտ պէյը հին տիպի հաւատարիմ թուրք զինուորական էր , վաթսուներ անց , հաստ ու կլոր , բայց կորովի եւ բարի թուրք մը . ինձ մասնաւոր պատիւ կ'ընէր , որվհետեւ կ'օգնէի ինձ տարեկից իր զաւկին սորվելու Փըրանսերէն :

Սայիտ պէյը վրանը չէր . իր թիկնապահը խնդրեց նստիլ մինչեւ որ դար նա : Բոպէներ կային երբ կրակը երկուստեք կ'առնէր մի ձեռն առ ձեռն կռուի սաստկութիւնը : Քրանաթոր ու փոշուտ ներս մտաւ Սայիտ պէյը , բարեւեց , ապսպրեց մածուն երկուքիս համար : Սիկարէթը վառելուն պէս հրացանաձգութիւնը սաստ -

կացաւ անսովոր չափով : Այդ տպաւորութեան տակ ա-
հա Սայիտ պէյի խօսքերը .—

« Պու Քէռաթալար արսլան կիպի քավկա էտիյոր-
լար » (Այս ստահակները (հայ Քէտայիները) առիւծի
պէս կը կռուին) : Կ'երգեն, կը թռվռան եւ մեզ կը զար-
նեն անվրէպ : Ափսոս որ մեր տէօվլէթը այսպիսի ճա-
հիլները շահիլ չի գիտեր, փոխանակ մեր կողմը շահե-
լու այսպիսի քաջ մարդիկ, մենք անոնք մեր դէմ կը
դարձնենք . . . » :

Բարի եւ ուղղամիտ զինուորական էր Սայիտ պէյը-
նա կռուած էր Եէմէնի «էջ Արաբներու դէմ եւ շրջած
էր թուրքիոյ ամէն կողմերը :

Ամէն հինգ ըռպէին թիկնապահը հրամանատարին կը
բերէր մատիտով գրուած թուղթի կտորներ : Խնդրեցի
իրմէ ըսել թէ ի՞նչ գրուած էր թուղթին վրայ : Դէմքը
խոժոռած, երեսը շիկնոտ, զգացմունքով ըսաւ որ, ը-
սաւ որ մէկ հեծելազօրք եւս սպաննուած էր եւ երկուք
ալ՝ վիրաւորուած :

Խնդրեցի Սայիտ պէյէն անցնել բլուրի միւս (Շա-
միրամ տանող) կողմը, մի քիչ մօտէն դիտելու կռիւը :
Նա ըսաւ որ կար իրական վտանգ, որովհետեւ գնդակը
ոչ ոքի չի ճանաչեր : Իմ քավազի հետ յառաջացայ մի ա-
ռուի միջով մօտ երեք — չորս վայրկեան եւ պառկեցայ
աւազին վրայ : Արդէն այնքան մօտ էի որ յստակօրէն կը
լսէի Շամիրամի եկեղեցու տանիքէն կրակող հայ հե-
րոսներու խօսքերը՝ եկեղեցիէն վար դիրք բռնողներու
հետ, քիւրտերու եւ թուրք սպաներու հետ անոնց փո-
խանակած կատակներն ու հեզնանքը : Դժբախտաբար
չատ հեռուն կարելի չէր տեսնել :

Վերադարձայ վալի Ֆէրիտ պէյի մօտ . իրեն հա-

զորդեցի հիւպատոսին յոյսը որ անմեղ ժողովուրդը պիտի պաշտպանուի կանոնաւոր զօրքէն: Եւ իսկապէս կանոնաւոր զօրքը լաւ պահպանեց գիւղը: Սպաննուեցաւ միմիայն մի պառաւ կին, որ անխոհեմաբար դուրս եկած էր ջուր առնելու: Գիւղին մէջ ունէ կողոպուտ չեղաւ, եւ երբ քիւրտերը փորձած էին մօտակայ Ջրհոր գիւղէն գողանալ ոչխարներ, հեծելազօրքը խարաղանած եւ փախցուցած էր աւագակներին:

Յետ միջօրէին վերադարձայ քաղաք:

Դեռ մինչեւ այսօր ահանջիս կը հնչէ թուրք պարկեշտ գինուորական Սայիտ պէյի վճիռը հայ հերոսների մասին. — « Պու քէոաթալար արսլան կիպի քավկա էտիյորլար »:

Իսկապէս հայ տղաքը կուուեցան առիւծների պէս, այ զօրերին: Մեր ասպագայ սերունդը ոչինչով ետ պիտի մնայ այդ վեհ եւ ներշնչող աւանդութիւններէն:

ԱՐՇԱԿ ՍԱՖՐԱՍՏԵԱՆ

Դ Է Պ Ի Վ Ա Ն

Խումբերը երբ հաւաքուեցան, ճամբայ ելանք դէպի Ջրհոր գիւղ, ուրկէ ուղղուեցանք Դատուան, որուն բռնակչութիւնը, Շամիրամ գիւղի փախստականներուն հետ, նաւերն ասպատանած էին, կոտորածէ մը փրկուելու նախազգուշութեամբ:

Հազար դժուարութեամբ եւ խորամանկութիւններով, մենք ալ յաջողեցանք նաւ մը մտնել եւ յաջորդ օրը երեկոյեան հասանք Աղթամար, ուրկէ Անդրանիկ յարաբերութեան մտաւ Վանի հետ. իսկ խումբը խորհրդակցութեան նստաւ, մեր ընթացքը ճշդելու համար:

Գէորգ իր մտադրութիւնը յայտնեց Մուշ վերադառնալու :

Մեզմէ ոմանք եթէ հետեւեր էին Անդրանիկի կարգադրութիւններուն մինչեւ Շամիրամ, իրենց մտքէն իսկ չէին անցըներ վտանգի գօտիէն հեռանալով, իրենց անձը ապահովել բռնատիրութեան հալածանքներէն : Շամիրամի անակնկալ կռիւն էր որ այլապէս տնօրիններ էր եւ ստիպեր էր զանոնք նաև մտնելու եւ Աղթամար ապաստանելու : Եթէ ոչ իրենց մտադրութիւնն եղած էր ժամանակ մը, Նեմրուտի քարայրներուն մէջ պահուիլ, մինչեւ որ վերջին կռիւներու թարմ տպաւորութեան հետ, չափով մը նաեւ մեզմանար կառավարական հսկողութիւնը, Դաշա կեդրոնացած զօրքը քաշուէր եւ իրենք դարձեալ կարենային նուիրուիլ ժողովուրդին պաշտպանութեան :

Եւ հիմա, Աղթամարի մէջ ուր ոչ մէկ լուրջ վտանգ կը սպառնար մեզի, իրենք զիրենք նուաստացած կը զգային : Խուճբին հեռացումով, որ կառավարութեան կողմէ պիտի մեկնաբանուէր իբր յեղափոխական ուժերու վերջնական պարտութիւնն ու քայքայումը, ժողովուրդը ինքզինքը բոլորովին անտէր ու լքուած պիտի զգար, դիւրին որս մը պիտի դառնար յետադիմականներու վատ ու երկչոտ ազդեցութիւններուն, հաւատքը բոլորովին պիտի վերցնէր յեղափոխութենէն եւ որ աւելին է, աւելի եւս պիտի ենթարկուէր բռնապետներու եւ աշիրէթներու հարստահարութեան :

Լաւագոյն էր ուրեմն շքացակայիլ ժողովուրդին ծոցէն, թէեւ թաքստոցներու մէջ ծուարած, սակայն միշտ պատրաստ, ի հարկին ահաբեկելու ժողովուրդին թշնամին, անակնկալ հարուածներով :

Բայց անխոհեմութիւն էր ստուար խումբով մը վերադառնալ. բազմութիւնը նախ, կը դժուարացնէր թաքստոցի հարցը. եւ յետոյ, ուտեստի եւ փամփուշտի հարցերն ալ որոնք միշտ մեր մղձաւանջն էին եղած, դիւրին չպիտի ըլլար լուծել:

Հաւագոյն էր ուրեմն փոքր խումբերով վերադառնալ Դաշտ եւ հոն սպասել դէպքերու զարգացման:

Այս տեսակէտը կը բաժնէին քսանի չափ հայդուկներ, որոնց գլուխը կը կանգնէր Գէորգ:

Այդպէս ալ ընդունուեցաւ եւ Գէորգ 1 - 2 օր հանգչելէ յետոյ՝ իր խումբով բռնեց վերադարձի ճամբան:

Իսկ մենք կը պատրաստուէինք դադտագողի վան մտնել:

Սակայն յաջորդ առտուն, կղզին ենթարկուեցաւ անակնկալ յարձակման մը: Յետոյ ստուգուեցաւ որ վանքէն Արսէն վարդապետը մեր ներկայութիւնը մատներ էր կուսակալին:

Կառավարութիւնը նաւեր զինած, կը ոմբակոծէր վանքը: Իր գլխաւոր նպատակը կը թուէր ըլլալ ընկղմել մեր չորս նաւերը որ Դատուանէն բերեր էինք մեզ հետ եւ մեզ զրկելով փոխադրութեան ամէն միջոցէ, կղզիին մէջ պաշարուած պահելով, անօթութեան դատապարտել:

Այս ոմբակոծումը տեւեց երկու օր: Թուրքերը ընդամէնը 40-ի չափ ումբ արձակեր էին մօտ երկու քիլոմետր հեռաւորութենէ, առանց որ եւ է վնաս պատճառելու մեզ:

Երկրորդ օրը երեկոյեան նաւ առինք դէպի Կտուց անապատ, ուրկէ լուր զրկեցինք մօտակայ Ալիւր գիւղի մեր մէկ ընկերոջ Կեսարացի Հաճի Կարապետի, որուն

յանձնեցինք մեր վիրաւորները եւ մեր խումբը այդ գիւղէն անցաւ Լեսկ կոչուած գիւղը ուր մեզ միացան Վանէն զրկուած երկու վալատներ՝ Դաւիթ եւ Քոթոթ, մեզ առաջնորդելու համար: Լոյսը նոր բացուելու վրայ էր, երբ աննշմար ու անվտանգ մտանք Այգեստան, ուր զանազան տուներու մէջ բաժնուած հանգստացանք:

Վստահ էինք թէ մեր Վան մուտքը աննշմար մնացած է եւ եթէ կառավարութիւնը ենթադրութիւններէ տարուած կասկածի եւ պնդէ մեր ներկայութեան վրայ, մեր ղեկավար ընկերներուն դիւրին պիտի ըլլայ ուրանալ եւ յամառիլ թէ անյայտ ուղղութեամբ հեռացած կրնանք ըլլալ: Կրնայինք ուրեմն, մենք մեզ ապահով նկատել քանի մը օր, մինչեւ որ մեր կացութիւնը ճշդուէր:

Շատ չանցաւ սակայն, հասկցանք թէ սխալեր էինք. լրտեսները շարժեր էին արդէն եւ կառավարութիւնը կը հսկէր ու գիշեր մը, երբ Սեպուհ խումբ մը կը տեղափոխէր, բախում մը տեղի ունեցաւ թուրք շրջուն պահակախումբի մը հետ:

Ու յաջորդ առտուն 400 հոգինոց զինուորական խումբ մը կը կոխէր Այգեստանը: Քաղաքին հայութիւնը սարսափած էր. իսկ մենք չէինք համարձակեր երեւան գալ, վախնալով աւելի եւս վտանգելէ ժողովուրդը, որմէ 6 - 7 հոգի մը սպաննուած էին արդէն: Հայերը խմբովին ապաստաներ էին հիւպատոսարանները. իսկ հիւպատոսները եւ նաեւ ժողովուրդը կը պահանջէին ու կը թելադրէին որ ժամ առաջ հեռանանք քաղաքէն:

Ուրիշ ճար չունէինք արդէն:

Ու գաղտագողի, բռնեցինք Պարսկաստանի ճամբան:
ՄԻՀՐԱՆԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Պարսկաստան կարճ ժամանակ մը մնալէ յետոյ,

խմբովին անցանք Կովկաս : Կը շարունակուէր յեղափոխական շարժումը . բայց մարտական գործունէութեան շրջանը առ այժմ փակուած էր բոլորիս համար , որ միշտ պատրաստ էինք պատասխանելու առաջին կոչին :

Այլ եւս մեր առջեւ կը բացուէր մեր աշխատանքով օրապահիկ մը հայթայթելու հոգը , միջավայրի մը մէջ , որ բոլորովին անծանօթ էր մեզի եւ որուն բարքերն ու սովորութիւնները , մեզ նման գիւղացիներու համար , որոնք անօրինակ բռնատիրութեան մը ճնշումին տակ միայն ճանչցած էին կեանքը , այլանդակ կը թուէին :

Մեր խումբէն շատերը տեղաւորուեցան Մանթաշէֆի գործարանները : Ես ու Հաճին բացը մնացեր էինք ու կուսակցութեան կողմէ մեզ տրուած 40 ռուբլին ալ ըստպառելու վրայ էր :

Ընկերներու օժանդակութեամբ , ես ու Հաճին յաջողեցանք Պաթումի մէջ սրճարան մը բանալ , որ շատ չանցած , յեղափոխական ընկերներու հաւաքավայրն ու թաքստոցը կը դառնար :

Երկար չտեւեց սակայն մեր հանգիստը : Օր մըն ալ Ռոստոմ Պաթում եկաւ , զատեց կռուի ընդունակ ու տրամադիր տարրերը ու զիս ղրկեց Երեւան , Կեդր . Կոմիտէի հրամանին :

Հայ – թաթարական կռիւներն սկսած էին : Այս անգամ վտանգուած էր Կովկասի հայութիւնը զոր պէտք էր պաշտպանել ու բոլոր թրքահայ տղաքը՝ իրենց խմբապետներով՝ նորէն գործի գլուխ էին :

Այժմ դանց կ'առնեմ այդ կռիւներու պատմութիւնը որոնք առանձին հատոր մը կը կազմեն , ինչպէս նաեւ Կովկասէն մեկնելէ վերջ , մինչեւ Օսմանեան Սահմանա-

դրութեան հուշակումը, պարսկական շրջանակի մէջ գործունէութիւնս :

Պիտի անդրադառնամ երկու կարեւոր դէպքերու, մէկը Միհրանական շարժումը, որ պարզ բողոք մը չէր միայն Դաշնակցութեան որդեգրած տեսարանութեան դէմ, այլ եւ ուժեղ պոռթկում մը դեկավարութեան դէմ :

Միհրան չէր գոհանար պահանջելով միայն որ Դաշնակցութիւնը իր ծրագրէն դուրս նետէ ընկերավարութիւնը եւ իր ամբողջ ուժով լծուի Թրքահայոց ազատագրութեան, որուն համար կազմուած էր : Այլ եւ դեկավարութեան դէմ բուն բողոքներ կը բարձրացնէր՝ ամենէն վատ կասկածները յայտնելով անոնց հանդէպ :

Կայտառ ու անվեհեր, կենդանական քաջութեամբ օժտուած այս հասուն երիտասարդը, եթէ կարող ըլլար իր շուրջ հաւաքել բոլոր այն խմբապետները որոնք իրեն պէս կը մտածէին, եթէ կարենար լոեցնել հաւասարի, վիճակակցի նախանձներն ու չկամութիւնները բոլոր անոնց մէջ որոնք իրեն պէս կը զգային եւ գործակցութեան մղել, շարժումը բոլորովին տարբեր երեւոյթ կը ստանար, եւ այլ ելքի կը յանդէր :

Միհրանի գլխաւոր յանցանքն եղաւ այն որ բոլորին մէջ առաջինն եղաւ քարը հետելու յանդգնութիւնն ունեցող : Իր յանդգնութիւնը հիացում պատճառեց իր չեղոք համախոհներուն . բայց նոյնիսկ Թրքահայ այնմտաւորականները որոնք կը բաժնէին Միհրանի տեսակէտը, ինչպէս Սարգիս Մինասեանը, չէին փորձեր իսկ անոր մօտենալ, զայն առաջնորդել իրենց խորհուրդներով, կերպով մը զայն հովանաւորել ու կանխել անխուսափելի սայթաքումներ, որոնք ամէն բանէ առաջ, պիտի ծնէին իբր հետեւանք ներկուսակցական հակամարտութեան, կիր-

քերը աւելի եւս հրահրող փոխադարձութեանց :

Ու Միհրան մնաց առանձին իբր ղեկավար շարժման մը որ սրտէ կը բխէր, բայց ղեկավարուելու համար ուժեղ մտքերու կը կարօտէր :

**

Հայ - թաթարական կռիւները վերջացեր էին մեզ համար յաղթական ինքնապաշտպանութեամբ, հայ եկեղացական կալուածները վերադարձուեր էին ու ռուս-ճափոնական պատերազմի ահաւոր պարտութենէն սահմուկած, միեւնոյն ատեն սարսափած ներքին յեղափոխութեան սպառնալիքէն, 1905 հոկտեմբերին, Յարը կը յայտարարէր սահմանադրութիւն . . .

Ազատութեան տաք հով մը կը փչէր ամբողջ Կովկասի վրայ եւ այս պայմաններու մէջ 1906 օգոստոսին էջմիածնի մէջ կը դռամարտէր համազգային ժողով մը, որուն ստուար մեծամասնութիւնը դաշնակցականներէ կը բաղկանար: Նպատակն էր Կովկասահայոց ազգային կեանքի կազմակերպումը:

Այդ օրերուն, Կեդր. Կոմիտէէն տրուած հրահանգին համաձայն, էջմիածին կը մնայի, Պարսկաստանի ճամբով, երկիր վերադառնալէ առաջ: Թիֆլիզէն հոն եկած էր նաեւ Միհրան: Ժողովը տակաւին չէր բացուած, պատգամաւորները հետզհետէ կը սկսէին ժամանել: Անօրինակ եռուզեռ մը կը տիրէր էջմիածնի մէջ:

Այդ օրերուն էր որ լուր էր զրկեր ինծի թէ կ'ուզէ առանձին խօսակցիլ ինծի հետ: Տակաւին զինքը տեսնելու առիթը չէի ունեցեր: Սասունի կռիւներէն յետոյ, երբ Երեւան մասեր էի, Միհրանը հոն, իր բանտարկութեան պատիժը կը քաւէր, ու բանտէն ելլելէ յետոյ, կուսակցութեան կարգադրութեամբ, զինավար -

Ժուլթիւն կը սորվեցնէր երիտասարդներուն, Երեւանի
այգիներուն մէջ:

Յարգուած ու սիրուած էր իր սրտբաց ու կորովի
նկարագրով, վստահութիւնը կը վայելէր ղեկավար շըր-
ջանակներուն, մինչեւ այն պահը որ ըմբոստացաւ անոնց
տիրական, ամէն քննութենէ եւ հսկողութենէ խուսափող
հեղինակութեան դէմ:

Միհրանականութեան պատմութիւնը գրող դաշնակ-
ցականը այսօր տակաւին կը յամառի անոր ծագման մէջ
տեսնել հակադաշնակցական ազդեցիկ տարրերու դըր-
դումն ու քաջալերանքը եւ Միհրանը ցոյց տալ իբր ցա-
րական լրտես մը, մատնիչ մը, դաւաճան մը:

Երբ Միհրանի ստեղծած շարժումը իր զարգացման
ամենէն տենդոտ ու խռովայոյզ շրջանը կը բոլորէր, բը-
նականաբար, հայ պահպանողականութեան բոլոր ա-
ռաջնորդները դայն պիտի իւրացնէին իբր զէնք ընդդէմ
Դաշնակցութեան՝ զոր կ'ատէին: Կը նշանակէ՞ թէ Միհ-
րան անոնց դրդումով ու ազդեցութեամբ կը գործէր:
Հետագային, ներքին դժգոհութեան ուրիշ շարժումնե-
րու հանդէպ, տեսանք թէ ի՞նչպէս փորձեր կը կատար-
ուին ռամկավարի կամ բոլշեւիկի մատ տեսնելու ամէն
տեղ, ամէն առթիւ:

Իսկ թէ Միհրան մատնութի՞ւն կը կատարէր, ո՞չ
ոք կրնայ ձեռքը խղճին վրայ՝ պնդել ու փաստել:

Նախ, որովհետեւ Միհրան մատնելիք ոչինչ ունէր:
Այն թուականներուն, երբ իր շարժումը արդէն պայթած
եւ Դաշնակցութեան Բիւրոյին հանդէպ, ճշմարիտ կռիւի
մը սաստկութիւնն ստացած էր, կուսակցութիւնը ոչինչ
ունէր դադտնի զոր կարելի ըլլար մատնել:

Կը հրատարակէր իր թերթը, որուն հասցէն ծանօթ էր բոլորին, խմբագրութեամբ Ա. Ահարոնեանի եւ ուրիշ ծանօթ դաշնակցականներու, որոնք չէին ծածկեր իրենց ինքնութիւնն ու դիրքը: Բիւրոյի եւ կեդր. կոմիտէի անդամները յայտնի էին բոլորին:

Բոլորը գիտէին թէ Դաշնակցութիւնը մինչ կովկասի մէջ կը զբաղի ընկերային շարժումի կազմակերպութեամբ, միւս կողմէ, մարդ, զէնք ու դրամ կը մտցնէ թրքական Հայաստան:

Այս տեսակէտէն, ցարական ու համիտական ոստիկանութեանց լաւագոյն լրատուն կրնար ըլլալ Թիֆլիսի դաշնակցական «Յառաջ»ը, ուր հայ ղեկավարութեան սովորական պոռոտախօսութիւնը իր ամենէն բարձր դիրքը դրաւած էր:

Իսկ եթէ մշակուած էին գործունէութեան գաղտնի ծրագրեր, Միհրան որ արդէն յայտարարուած էր Դաշնակցութեան թշնամի, չէր կրնար որ եւ է տեղեկութիւն ունեցած ըլլալ, որպէս զի մատնէր ոստիկանութեան:

Այսուհանդերձ, կը հաստատուի թէ ապաստանած էր եւ վերջերը միայն — ցարական ոստիկանութեան պաշտպանութեան:

Բայց, ատկից մինչեւ մատնութիւն, պէտք է ընդունիլ թէ բաւական հեռաւորութիւն կայ, երբ ամենէն գաղտնի ծրագրերն իսկ, յաճախ, նոյն այդ ոստիկանութեան համար, զարմանքով կը հաստատէինք թէ բաց գրքեր էին եւ միայն իր ապիկարութեամբ, կամ կաշառակերութեամբ, չէր կրնար կանխել անոնց գործադրութիւնը:

Միհրանի վերագրուած մատնութեան եւ լրտեսութեան մէջ՝ ճշմարտութիւնը զոր հակառակորդը իր ու-

զած ձեւով կը ցուցադրէ ու կ'օգտագործէ, իրօք այն է որ, իր ամենէն հաւատարիմ ու կորովի համախոհներուն ահաբեկումէն յետոյ, անընդհատ հալածուած բոլոր դաշնակցականներէն եւ յատուկ ահաբեկիչներէ, պարտուած, գրեթէ մինակ ու անօք, իր կեանքին պաշտպանութիւնը յանձնած էր ոստիկանութեան:

Այս կարգի վերագրումներ, մարդուն, տեղին ու պարագային համեմատ կը գործածուէին Միհրանը վարկաբեկելու եւ անոր դէմ թշնամացնելու համար բարեմիտ հայդուկները:

Մանրավէպ մը իբր պատկերագրում:

Բալապըյըխ Կարապետ գեղջուկի մանուկ հոգիով տարիք կապած այն անձնուէրներէն էր, որոնց համար հայ ժողովուրդի ազատագրութիւնը կրօնք մըն էր, ու այդ կրօնքը կը խորհրդանշուէր կուսակցութեան կնիքով՝ որ անբռնաբարելի սրբութիւն մը կը դառնար ատով:

Արդ, Միհրանական շարժումը բերնէ բերան իր ականջը հասեր էր ազաւաղումով: Իրեն ըսեր էին թէ Բիւրօն փոխած է Դաշնակցութեան ծրագիրը — Կովկասեան նախագիծը արդէն հրապարակի վրայ էր — թէ ան կ'ուրանայ թրքահայ դատը եւ փաստ՝ փոփոխութիւն մը ցուցած է կուսակցութեան կնիքին վրայ:

Այս վերջին պարագան արդէն սրբապղծութիւն էր Կարապետի համար, որ իր մարդոցմով խումբ մը կազմած, պայքար յայտարարած էր Բիւրոյին դէմ: Ու այս քաջարի հայդուկը, իր ոխին ու թշնամութեան մէջ, անհաշտ ու յանդուգն էր: Բիւրօն գիտէր ատիկա. բայց գիտէր նաեւ զայն շահելու կերպը: Ձեւով մը զայն հրաւիրեր էին Թիֆլիս, Բիւրոյի գրասենեակը, իբր թէ իր

դժգոհութիւնները լսելու . բայց իրօք, անոր ցոյց տալու
կնիքը, որուն վրայ որ եւ է փոփոխութիւն՝ քրէական
ոճիրի նշանակութիւն ունէր Կարապետի համար :

Արդ, կնիքը կը մնար նոյնը :

Ուրեմն, Միհրան ստախօս մըն էր, սրբապիղծ մը,
դաւաճան մը, կուսակցութեան ու ազգին հանդէպ ուխ-
տադրութ մը . . .

Ու Կարապետ, այս անգամ Բիւրոյի գրասենեակէն
կը մեկնէր, ցմահ թշնամացած Միհրանի հանդէպ, որուն
դէմ մղուած պայքարի հազար ձեւերէն մէկ օրինակն է
որ կը յիշեմ :

Բայց դառնանք Միհրանի :

Ի՞նչ է որ կ'ըսէր ու կ'ուզէր :

Երբ իրեն հանդիպեցայ գլուխ գլխի, նախ երդում
առաւ ինձմէ ոչինչ յայտնելու, իրեն համամիտ ըլլամ
կամ ոչ, եւ յետոյ սկսաւ պարզել իր դժգոհութիւններն
ու բացատրել ծրագիրը :

Միհրանի մտքին մէջ, զարհուրելի կասկած մը տե-
ղաւորուած էր, զոր չէր ծածկեր :

Սասունի օգնութեան փութացող բոլոր ղինեալ
խումբերը որոնք Կարսի ճամբով կամ ուրիշ կէտերէ կը
փորձէին գաղտագողի յառաջանալ, յանկարծ, սահմա-
նագլուխին վրայ իրենց դէմ կը գտնէին թրքական ուժեղ
զօրախումբեր, եւ բնականաբար, անհաւասար կռիւնե-
րու մէջ կը կոտորուէին : Այս եղած էր ճակատագիրը
Քայլ Վահանի, Թորգոմի եւ Պանի ձիաւոր խումբերուն,
Կայծակ - Վաղարշակի, Սերոբի եւ իր տղաներուն խում-
բերուն : Միհրանի խումբը աղատած էր ոռւս զօրքին մի-
ջամտութեամբը, բայց բանտարկուելու եւ դատաւարու-
թեամբ՝ պատիժ կրելու համար :

Այս եւ նման դէպքեր , այն տպաւորութիւնը կը գործէին թէ համիտեան կառավարութիւնը այնքան ալ դժուարութիւն չի կրեր մեր ամենէն մեծ գաղտնիքներն իսկ խլելու :

Միհրան կը զարգացնէր այս տպաւորութիւնը , դայն կը հասցնէր իր տրամաբանական եզրակացութեան եւ ուղղակի կապ կը նշմարէր Սարային ու Բիւրոյին միջեւ :

Աւելի առաջ կ'երթար : Անուններ կուտար :

Պէտք է ըսել թէ Միհրան մինակ չէր իր կասկածին մէջ : Ուրիշ շատեր էին որ կը բաժնէին դայն , կրկնուած դէպքերու ազդեցութեան տակ : Բայց չէին համարձակեր որ եւ է կասկածի տակ ձգել Բիւրօն ու մատնութիւնը ուրիշ տեղ կը փնտռէին , առանց անշուշտ հետք մը գտնելու :

Միհրանի դժգոհութիւններէն մէկն ալ այն էր որ հսկայ գումարներ կը հաւաքուին , բայց չեն յատկացուիր բուն նպատակին :

Իր գլխաւոր առարկութիւնը սակայն , Դաշնակցութեան ուղեգծին ու ընդհանուր գործունէութեան դէմ էր :

Սասունի կռիւներէն յետոյ , դէպքերու ճնշման տակ եւ թերեւս , չափով մըն ալ , ձգտումներու եւ հակումներու պարտադրութեամբ , Դաշնակցութեան գործունէութիւնը սկսեր էր աւելի կեդրոնանալ դէպի Կովկաս : Հոն էին բոլոր մտաւորական ու ղեկավար տարրերը , հոն էին եւ մարտական ուժերը եւ երկրին մէջ տիրող յարաբերական ազատութիւնը կը բաւէր գգուելու շատերու փառատենչ հակումները լծուելու համար ցուցական գործունէութեան մը անպէտ մարզանքներուն , որոնց բեղուն հող կ'ընծայէր այդ օրերու Կովկասը : Միջավայրը իր հոծ հայութեամբ եւ ազգային տաք կեանքով , մշակ -

ուած դաշտ մըն էր հակամարտ ձգտումներու ցուցա —
դրումին ու պայքարին, տեղական դիւրին ու անվտանգ
գործունէութեան: Ու մարտական յեղափոխական գոր—
ծը որ կը պահանջէր յամառ, ընդերկրեայ դաժան ճիգ
ու զոհողութիւն, կը սկսէր տուժել յօգուտ միւսին:

Միւս կողմէ, 1905-ի կովկասեան նախագիծը որ ար—
դէն տարիներէ ի վեր տիրող երկուութեան խտացումն
ու արտայայտութիւնն էր ոչ միայն կը համապատաս—
խանէր դաշնակցական հոծ զանգուածի մը սիրական տը—
րամադրութիւններուն, այլ եւ աւելի կը քաջալերէր ու
կը զօրացնէր զանոնք: Դաշնակցութիւնը՝ կովկասի մէջ
դարձեր էր բացայայտ ընկերվարական մինչ Թուրքիոյ
մէջ կը շարունակէ ըզործել իբր դաւադիր ազգայնական:

Մինչեւ այդ Թուականը, ընկերվարութիւնը քանի
Դաշնակցութեան մէջ մնացեր էր իբր անգործածելի,
մոռցուած տառ մը, կամ իբր աւելորդ դարդի առարկայ
մը, ոչ մէկ խրտչեցնող արձագանգ տուեր էր մարտիկ—
ներուն մէջ: Անոնց շատ շատերը բառն իսկ կ'անդիտա—
նային: Իրենց նշանաբանն եղած էր — Մա՛հ կամ ազա—
տութիւն », — մէկ կրօնք կը դաւանէին, — Ազգին փրը—
կութիւնը եւ այդ ազգը Թուրքիոյ մէջ էր եւ ոչ թէ Ռու—
սիոյ մէջ, որուն դէմ ազատագրական ոչ մէկ պայքար
կրնային ունենալ ազգային, վարչական կամ հողային
պահանջներու հիման վրայ:

Բայց կովկասեան նախագիծի հրապարակումը, անոր
հետեւող քարոզչական եւ իրական գործունէութիւնը՝
արդէն խեղաթիւրուած արձագանգներով, խլրտում ձը—
գեր էին մեր մէջ:

Իսկ Լեւոն Աթարպէկեանի գլխաւորութեամբ, ձախ
դաշնակցականներու երեւումը, ազդանշանը տուաւ հա—

կառակ ուղղութեամբ կազմակերպուելու :

Ասոնք, բոլորը նորաբոյս երիտասարդներ, մեծցած ու կրթուած մեծ քաղաքներու խժալուր կեանքին մէջ, հեռու դարհուրելի ցաւէն որ թուրքիոյ հայ ժողովուրդինն էր, դիպուածով միայն ինկած ըլլալու էին կուսակցութեան մը մէջ, որ կազմուեր էր միայն ու միայն թրքահայ ժողովուրդին ազատագրութեան նշանաբանով եւ եթէ կովկաս տեղաւորուեր էր, անոր համար որ իբր սահմանին կից երկիր, որոշ ազատութիւններ կ'ընծայէր կազմակերպուելու, կազմակերպուելու, նիւթական եւ այլ միջոցներ հայթայթելու, ինչպէս Պարսկաստանը :

Ասոնց կրօնքը ընկերավարութիւնն էր, որուն փարեր էին նորընծայի ջերմ եռանդով եւ կովկասեան ու համառուսական շրջանակէն դուրս՝ գործունէութեան ուրիշ որ եւ է դաշտ չէին տեսներ. հայկական դատը այնքան կրնար խօսիլ իրենց սրտին, աւելի ճիշդը մտքին, որքան իբր ընկերային ցաւի երեւոյթ մը, կրնար կապ ունեցած ըլլալ ընկերավարական պայքարին հետ : Ու կը պահանջէին որ թրքահայոց ազատագրութեան հետապնդումը՝ Դաշնակցութիւնը ձգէ թրքահայերուն, ինքը կովկասի մէջ լծուելով միայն ու միայն ընկերային պայքարի, իբր ուս ընկերավարութեան մէկ հատուածը :

Բնականաբար, Դաշնակցութեան ծոցէն փրթած այս տեսակ շարժում մը, որ ժխտումը կը հանդիսանար կուսակցութեան հիմնական նպատակին, աւելի ճիշդը անոր ծագման ու դոյութեան իրաւունքին, իր խոր անդրադարձումները պիտի ունենար :

Եւ այդ անդրադարձումներուն իբր խտացեալ ու կազմակերպուած արտայայտութիւնը, երեւան կուզար Միհրանական շարժումը :

Միհրան որ ըսինք թէ խոր դժգոհութիւններ ունէր
կուսակցութեան վարիչ մարմիններուն եւ տարրերուն
դէմ, կը պահանջէր նաեւ որ ընկերավարութիւնը կարճ ու
կտրուկ, միանգամ ընդմիջտ դուրս նետուի կուսակցու-
թեան ծրագրէն ու գործունէութենէն:

Կ'ըսէր ան ինծի մեր առաջին հանդիպման ընթաց-
քին.

— Մեզմէ շատ աւելի ուժեղ, պայքարի ամէն մի-
ջոցներով օժտուած, անխիղճ կառավարութեան մը դէմ
մահու եւ կենաց կռիւ ենք յայտարարեր: Մեր ամէն մէ-
կը անոր հազարին դէմ է: Պէտք է մեր մէջէն դուրս նե-
տենք ամէն ինչ որ մեզ կրնայ ջլատել, որպէս զի մեր
ամբողջ ուժը, տրամադրենք նոյն նպատակին:

Ու կը պահանջէր որ Դաշնակցութիւնը ամբողջովին
նուիրուի թրքահայ դատին եւ որպէս զի այլ եւս խանգա-
րումներ չստեղծուին, ընկերավարութեան հետ, կուսակ-
ցութենէն դուրս նետուին նաեւ բոլոր ընկերավարական-
ները, ու Բիւրօն բաղկանայ միմիայն թրքահայերէ:

Երբ վերջացուց, հարց տուաւ ինծի.

— Ի՞նչ կ'ըսես:

Ըսելիք չունէի: Իր խօսքերը սրտէս կը բխէին: Բայց
չէի կրնար, առանց խորհրդածելու, կամ մէկ քանի ըն-
կերներու հետ խորհրդակցելու, գործակցութիւն խոս-
տանալ իրեն:

— Որո՞նք կան հետզ, հարցուցի իմ կարգիս:

— Ի՞նչ դիտնամ պատասխանեց, դուն ես, Սեպուհն
է, Մուրատն է. դուք ալ մարդ էք, չէ՞:

Երբ իրմէն բաժնուեցայ, այն տպաւորութիւնը կրեր
էի թէ, ես ու յիշուած անձերը եւ նման ուրիշներ, իրեն
միանային կամ ոչ, ինքը պիտի պայթեցնէր շարժումը

եւ իր գլխաւոր բաղձանքն էր, եթէ ոչ մեր գործակցութիւնը, գոնէ մեր բարեացակամ չէզոքութիւնը ապահովել այդ պարագային:

Տեսակցութեանս ընթացքին, ցոյց տուաւ սենեակին մէկ անկիւնը՝ տպուած թռուցիկներու դէզ մը: Իր յայտարարութիւնն էր, որ շատ չանցած, պիտի ցրուէր ժողովուրդին մէջ, ահաւոր խառնակութեան մատնելով Դաշնակցութիւնը, որ այն ատեն եւս, հակառակորդը պարտութեան մատնելու երկու միջոց ունէր, նախ վարկաբեկել զայն իրաւ ու սուտ ամէն կարելի վերագրումներով եւ յետոյ զգետնել զայն:

*
**

Միհրանի հետ երկրորդ տեսակցութիւնս տեղի ունեցաւ Թիֆլիզի մէջ, ուր իոխադրուեր էր եւ ուրկէ կը վարէր իր շարժումը, շրջապատուած անձնական հաւատարիմ պահակներու խումբով մը:

Աջ ու ձախ թեւերուն մէջ, Դաշնակցութիւնը փոթորկած էր ու կեդրոն, գրեթէ չկար: Կեղծաւոր ու աղետալի երկուութեան տագնապը կը բոլորէր այդ պահուն: Փոքրամասնութիւն մը, բայց ուժեղ, երիտասարդ ու զարգացած, եռանդազին ու կորովի կը հակէր դէպի ընկերվարութիւն: Անոր դէմ, նոյն կազմակերպութեան ստուար զանգուածը, զգացումներով գեղուն ու պոռթկուն ամբոխը, որուն շրջահայեաց ու հեռատես գլուխ մը կը պակսէր, իր ձգտումներուն մէջ ծայրայեղ, անհամբեր ու յանդուգն, կը կանգնէր վերահաս քայքայիչ աղէտի մը ահաւորութեամբ:

Ու այս աջ ու ձախ երկու ճնշումներուն միջեւ, Բիրոյի ամբողջ իմացականութիւնն ու հնարամտութիւնը կը կայանար վատ երկերեսութեան մը մէջ: Մէկ շարժ-

ման հետեւորդներուն ցոյց կուտար կովկասեան նախագիծը, մինչ միւսներուն առջեւ կը բանար Դաշնակցութեան ծրագիրը ուր Թրքահայոց ազատագրութեան նըստատակը կը դրաւէր պատուոյ տեղը ու կը յիշեցնէր մղուած կռիւները, թափուած արիւնը, կատարուած զոհողութիւնները: Մինչ միւս կողմէ, շարժման մէջ կը դնէր իր մարդիկը՝ թէ մէկ եւ թէ միւս հոսանքներու գլխաւոր տարրերուն դէմ, զանոնք հալածելու, վարկարեկելու, ի հարկին գեղին փռելու համար:

Մինչ յեղափոխական անկեղծութիւնն ու ղեկավարական իմաստութիւնը պիտի պահանջէին թերեւս, իբր նոյն ժողովուրդին շահուն համար տքնող տարրերու, բերան բերնի խօսիլ զժողովեան հոսանքներու մղիչ ուժերուն հետ, հասկնալ ու հասկցուիլ ուղղակի: Բայց ապատեսը յատկանշող յոռի հպարտութիւնն է որ միշտ ուռեցուցած ու առաջնորդած է առհասարակ մեր կուսակցական բոլոր ղեկավար շրջանակները, նման պարագաներու առջեւ: Անգամ մը ղեկը ձեռք առնելէ յետոյ, գլխաւոր առաջին մտահոգութիւն մը ունեցած են, — ամէն բանէ առաջ, վերէն վար, երկաթեայ կարգապահութեան մը օղակներուն մէջ կաշկանդել բարձրացող գլուխներն ու մտածումները, զանոնք զգետնել վարպետ շահագործումովը սրտաբուխ զգացումներու, որոնք հետապնդուած դատին նուիրականութեան կը կապուէին ամբօրէն:

Ի՞նչ ոճիրներ են գործուեր յանուն այդ կարգապահութեան որ միայն մէկ նպատակի է ծառայեր, — հաստատել ղեկավար մարդոց բացարձակ տիրակալութիւնը, որ միեւնոյն ատեն գիտէր, իբր թէ նոյն կուսակցութիւ-

նը վարող ժողովրդավար սկզբունքներու եւ կանոններու խաղը դարձնել ի նպատակ իրեն :

Կարգապահութիւնը դեկտեմբեր մարտնին շուրջ կը քաշէր շինական հաստ պարիսպ մը, որուն առջեւ կանգ կ'առնէին տրանջացողները, իրենց տրտունջներով : Բայց անոնց արձագանգը կը հասնէր ներս շնորհիւ բարեմիտ թէ վարձկան լրտեսներու :

Այսպէս է եղեր մինչեւ այսօր, հետագայ ուրիշ պոսթիւմներու առթիւ ալ :

Մինչ յուլիմնալի այդ թուականին, 1904-ի Սա - սունի պարտութենէն յետոյ, երբ մարտական գործունէութիւնը կասեց էր ու հայ ժողովուրդին յեղափոխական հաւատքը երկրնտրանքի տաղնապ մը կ'անցընէր, Միհրանի եւ իր մարդոց հանդէպ թիչ մը բարեացակամութիւն, նուազ գոռոզութիւն, կրնային շատ անպատեհութիւններ կանխել եւ ընդհակառակն, կուսակցութեան վարկն ու հմայքը աւելի բարձրացնել :

Բայց կարգապահութիւնը կը հսկէր խտտօրէն եւ կը հրահանգէր՝ փրկելու համար դեկտեմբերներու հպարտութիւնը, դիմել քովնախ միջոցներու :

Այդ միջոցներէն մէկն էր անշուշտ, Միհրանի քով զրկել վրան ազդելու ընդունակ մարդիկ :

Ահա, այս պայմաններու մէջ էր որ, օր մըն ալ, Բիւրօն, իր գրասենեակը կը հրաւիրէր Սեպուհը, Մուրատը, Առաքել աղան, Աւետիսը եւ զիս, ու մեզ կը հրահանգէր որ անպատճառ հանդիպինք Միհրանին եւ հասկցնենք իրեն որ աւելի լաւ կ'ընէ լռելով, կամաց մը մէկընի քաշուելով, եւ դեռ այսօրուան պէս կը յիշեմ « այս թիւրիմացութեան վերջ տալով » :

Ուրեմն, պաշտօնական Գաշնակցութեան համար,

Միհրանական շարժումը « Թիւրիմացութիւն » մըն էր :

Մեզ կը մնար ենթարկուիլ հրահանգին, մանաւանդ որ բոլորս ալ, համակիր ըլլալով մէկտեղ Միհրանի պահանջներուն, դէմ էինք շարժման եւ մանաւանդ, անոր ստացած ձեւին :

Բայց դիւրին չէր Միհրանի հետ տեսնուիլ : Նախ որ անակնկալ ասարեկումներու վախով, յաճախ բնակարան կը փոխէր եւ յետոյ, հնդիկ իշխանի մը նման, զինեալ անձնուէրներու անընդհատ պաշտպանութեան տակ էր եւ իր դրան առջեւ, պահնորդներ արթուն կը հսկէին :

Տեսակցութիւնը տեղի ունեցաւ վերջապէս : Բայց Միհրան որ իր անձին կարեւորութիւնը մեծցած կը զգար այլ եւս իր շարժման յարուցած աղմուկէն եւ առհասարակ, գտած ջերմ ընդունելութենէն, ոչ միայն կը յամառէր իր տեսակէտներուն վրայ, այլ եւ կը պահանջէր որ Բիւրօն գլուխ ծռէ, հաշիւ տայ զէնքի, դրամի, գործունէութեան :

Այս ապարդիւն տեսակցութենէն վերջն էր որ յատուկ կնիք շինեց Դաշնակցութեան անունով եւ շարժման նիւթական պէտքերը հոգալու համար, սպառնալիքի տակ դրամ սկսաւ պահանջել հարուստներէն :

Այս կարգի արարքներ, որոնք Բիւրօյի ձեռքին մէջ զէնք կը դառնային իր դէմ, չէին նպաստեր անշուշտ Միհրանի վարկը բարձրացնելու : Ան սիրելի էր հայ հարուստներուն, այնքան ատեն որ իրենցմէ հեռու մնալով, կը ծառայէր Դաշնակցութեան դէմ իրենց պտելութիւնը յազեցնելու : Բայց երբ փրկագին մը տալ պէտք ըլլար, կը նախընտրէին մօտենալ ընդդէմ Միհրանի, Բիւրօյին, որ արդէն չէր ուշացեր յատուկ շրջաբերականներով Միհրանը եւ իր մարդիկը ցոյց տալու դաւաճաններ եւ

զանոնք յանձնելու մոլի կուսակցականներու ատելու -
թեան ու ոխին :

Եւ երբ կը դումարուէր Վիեննայի մէջ Դաշնակցու-
թեան համագումարը, Միհրան հոն ունենալով մէկտեղ
իր տեսակէտներուն ջերմ պաշտպաններ, ոչ մէկ անձնա-
կան բարեկամ կրնար ցոյց տալ սակայն :

Մուրատէն սկսեալ բոլորը, կ'իւրացնէին իր տեսա-
կէտը, արհամարհանքով դուրս ձգելու համար իր անձը :

Ու ժողովը կը վերջանար՝ Միհրանի եւ իր ընկերնե-
րուն դէմ անարեւելի ման որոշումով :

Իր անմիջական գործակիցներն էին Խնուսցի Տիգրա-
նը, Շապուհը, Մշեցի Մելիքը, Ալիճանցի Մխիթարը,
Առիւծ Մուշեղը, Շէյխ Ալի (Պարսկաստանցի Ստեփան)
Պուլանըիցի Պարոնը, որ հարուստ էր եւ նիւթասէս կ'օ-
ժանդակէր շարժման, ու Կոփեցի Խեչօն :

Յաջորդաբար սպաննուեցան Պարոնը, Ստեփանը,
Մուշեղը եւ ուրիշներ : Իսկ Պանդուխտ, որ յետոյ
հնչակեան դարձաւ, ապաստանեցաւ Ամերիկա :

Իսկ Միհրան, անարեւելի ման ենթարկուեցաւ Ղարաբաղ-
ցի Միշայի կողմէ (Տէլի Ղաղար) որ սպաննուեցաւ իր
ծննդավայրին մէջ, Հայաստանի խռովայնօյգ օրե-
րուն :

Այսպէս, արիւնի մէջ խեղդուեցաւ շարժում մը,
որ անկեղծ ու մտացի հայրենասէրներու ձեռքին տակ,
զոտուելով, մշակուելով ու զարգանալով, պիտի կրնար
թերեւս Թրքահայ Դատին հաւաքել առաւելագոյն բազ-
մութիւնն ու ջանքերը :

ԳԷՈՐԳ ԶԱՎՈՒՇԻ ՍՊԱՆՈՒԹԻԻՆԸ

Գէորգ այն տիպի մարտիկներէն էր որոնք իրենց ա-
նօրինակ քաջութեամբ ու հնարամտութեամբ, անձ-

նուրացութեան հասնող իրենց գոհաբերութեան ոգիով ,
 ծառայելու իրենց տրամադրութեամբ , եղած են ան-
 հրաժեշտ օժանդակը մեծերուն , ղեկավարներուն , ա-
 նոնց , որոնք իրենց կարգին՝ ունենալով նոյն խմորը՝
 բայց աւելի բարձր որակով , դէպքերուն կապած են ի-
 րենց անունը՝ առանց հպարտութեան եւ առանց մաս-
 նաւոր դիտումի , առանց սնափառ տենչանքներու , ինչ-
 պէս Սերոբն ու Անդրանիկը եւ ցանցառ ուրիշներ :

Վարպետ օժանդակ մըն էր Գէորգ , բայց տկար ղե-
 կավար մը , հակառակ իր մեծ հմայքին , ինչպէս տես-
 նուեցաւ Սասունի կռիւներէն յետոյ , երբ Վանէն Տա-
 րօն վերադարձին , ստանձնեց շրջանի մարտական ուժե-
 րուն վերակազմութիւնն ու ղեկավարութիւնը :

Սպաննուեր էին Հրայրն ու Վահանը : Անդրանիկ հե-
 ապեր էր : Կեդրոնի հետ կապը ոչ միայն դժուարացեր
 էր , այլ եւ սահմանին վրայ հսկողութեան սաստկացու-
 մով , սուրհանդակներու անցքն ալ անհարթելի արգելք-
 ներու կը բախէր : Տարօնը մնացեր էր առանց գլուխի :

Այս պայմաններու մէջ , բնականաբար Գէորգի
 կ'իյնար , իբր տիրական դէմքը շրջանին , կազմակեր-
 պել ու վարել մարտական գործը : Սիրուած Հայերէն ,
 յարգուած Քիւրտերէն , որոնց հետ մեր յարաբերու-
 թեան գլխաւոր օղակն էր , իր համբաւով կը սմբեցնէր
 թշնամին : Քիւրտերը կ'երգէին արդէն իր սխրագոր-
 ծութիւնները ու թուրքերը երկչոտ ակնածանքով կ'ար-
 տասանէին անունը , իբր մէկը որ աստուածային մաս-
 նաւոր շնորհով , անխոցելի դարձած է :

Իբր ղեկավարը այդ շրջանին , իրեն համար գէշը
 հոն էր սակայն որ իր տրամադրութեան տակ՝ յեղա-
 փոխութեան ծառայելու կոչուած մարտիկներէն շա-

տերը, անոնք մանաւանդ որ համբաւ ու հմայք շինած էին ժողովուրդին մէջ, իրեն հետ նետած էին առաջին քայլերը՝ մարտական յեղափոխութեա նարկածալի կըրկէսին մէջ եւ թերեւս իրաւունք կը զգային պահանջելու որ Գէորգի հետ հաւասար մակարդակի վրայ դըրւին. թերեւս փոքրիկ նուաստացում մը կը զգային հնազանդելով մէկու մը, որուն գերակշռութիւնը կ'ընդունէին, բայց որուն հետ՝ կողքողքի մղած էին բազմաթիւ կռիւներ, իբրեւ զէնքի հաւասար ընկերներ: Փոքրիկ նախանձ մը թերեւս կը բանէր գիւղական այս համեստ հոգիներուն խորը: Հայդուկը սուրբ մը չէ վերջապէս եւ չի կրնար յեղափոխութեան աւազանին մէջ, բոլորովին սրբուած ըլլալ մարդկային թերութիւններէ:

Ու թերեւս, նաեւ իր կարգին, Գէորգն ալ իր ընթացքով տեղի կուտար որոշ դժգոհութիւններու: Իբր գինուոր, Գէորգ որ հլու ծառայող մը եղած էր, անվարան ենթակայ մը ունէ հրամանի, նոյնը կը պահանջէր իբր ղեկավար: Այդպէս տեսած էր Սերոբէն ու Անդրանիկէն, իր երկու վարպետներէն: Կը մոռնա՞ր որ ինքը ոչ Սերոբ մըն էր, ոչ ալ Անդրանիկ մը: Ո՛չ, անշուշտ բայց եթէ պարագաները զինքը դրեր էին դիրքի մը վրայ, գիտէր թէ խիստ կարգապահութիւնը, կարգադրութիւններու անվարան ենթաբեկումը կը կազմեն անոր միակ խարիսխը:

Արդէն հանրածանօթ դրուագ մը այս հայդուկին կեանքէն՝ կը բաւէ լուսարանելու անոր հոգին:

Գէորգի հօրեղբայրը աղջիկ մը փախցուցեր էր Սասունի մէկ գիւղէն, հետը ամուսնանալու համար:

Գիւղացիք դայրացած, դատ պահանջեր էին ու գիւմեր էին Աղբիւր Սերոբի որ դատէ ու վճռէ:

Սերոբ, այդ դէպքին առջեւ, չէր վարանէր հրապարակաւ կշտամբելու Գէորգը, եւ կասկած յայտնէր էր թէ առանց իր հաւանութեան, իր հօրեղբայրը պիտի չյանդգնէր այդ տեսակ արարքի մը մէջ գանուելու, ու դայրոյթով՝ դատ ու վճիռ ձգեր էր Գէորգին:

Առանց վարանելու եւ ժամանակ կորսնցնելու, Գէորգ դացեր էր հոն ուր փակուած կը մնային իր մօրեղբայրն ու առեւանգուած աղջիկը եւ առանց բերնէն խօսք մը հանելու, սպաններ էր երկուքն ալ, յետոյ իր խոր սուգը երթալ ծածկելու համար մարդոցմէ հեռու, բնութեան գաղանապահ ծոցին մէջ:

Այսպէս էր Գէորգ, համեստ, անձնուէր ու անվախ մարտիկը, որ եղերական վախճան մը պիտի ունենար՝ քստմնելի դաւաճանութեան մը հարուածին տալ իյնալով:

Ըսինք թէ ի՞նչ պայմաններու տակ ան կոչուեր էր վարելու Տարօնի պաշտպանութեան գործը, իր շուրջ յարուցանելով դժգոհութիւններ, որոնց բուն այլ ծածկուող դրդապատճառը նախանձն էր եւ որոնց արդարացման ծառայող պատրուակները, այսօր՝ ծիծաղելի կը նկատուին, բայց այն ատեն կը բաւէին մթնոլորտը պղտորելու, մանաւանդ որ արանջացողները Գէորգի ամէնէն մտերիմ, երկար տարիներու զինակիցներն էին, ինչպէս Սպաղանաց Մակարը՝ սասունցի իշխան, ազդեցիկ անձ մը իր շրջանին մէջ, Չօլօն ու Գալօն, Մանուկն ու Ղազարը, եւ այլն:

Գէորգի դէմ գլխաւոր դժգոհութիւններէն մէկը կը վերարերէր իր անձին: Կը մեղադրուէր թէ յեղափոխա-

կան աւանդութեան դէմ գործելով՝ ամուսնացած է եւ հետեւաբար, ինչ որ մեղք մը եւ մարտական տկարութեան պատճառ մը կը նկատուէր ժամանակին՝ Սերոբի համար, կարելի՞ էր թոյլատրուիլ Գէորգի: Երկրորդը՝ հայեւքիւրս գործակցութեան քաղաքականութիւնն էր զոր Գէորգ կը դարձացնէր յամառօրէն, հակառակ քրտական նախընթաց բաղձաթիւ դրժումներու:

Այս կացութեան մէջ էր որ Վանէն՝ իբր գործիչ Տարօն կը դրկուէր կովկասցի նորաբոյս երիտասարդ մը՝ Ռուբէն Տէր Մինասեան, որ յետոյ, «փաշա» տիտղոսը փակցուց իր անունին չես գիտեր ինչ սխրագործութեան համար եւ մինչեւ այսօր, կրկնել կուտայ ուրիշներուն, անշուշտ հոն ուր այդ տիտղոսը կրնայ տակաւին ազդել: 1906-ին էր: Դաշնակցութեան Բիւրօն Ռուբէնը եւ Չաւէնը դրկած էր Վան, շրջանին ղեկավար Արամ Մանուկեանի յանձնարարութիւնով: Բայց հոն չկրցաւ կենալ Ռուբէն: Փառատենչ այս երիտասարդը, որ միշտ գիտցած է իր հասակէն ու ընդունակութիւններէն վեր նայիլ, բռնուեր էր իր շրջանի ղեկավարին՝ Իշխանի դէմ դաւի ու սադրանքի վրայ եւ տեղն ի տեղօք, մարտական – յեղափոխական ծեծի մը դասը առնելէ յետոյ, անկից ճամբուեր էր Տարօն, իբր պատիժ ... խեղճ ժողովուրդին ու անգէտ մարտիկներուն դըլխուն:

Պարզ է թէ յաւակնութիւնները չեն բաւեր ղեկավարութեան խաղին ու այս նորածին յեղափոխականը չէր որ պիտի կրնար Գէորգի համատարած ազդեցութիւնը չէզոքացնել, դայն փոխարինելու համար իր իսկ անունին հմայքովը, որ շունէր եւ չէր կրնար ունենալ: Բայց մարդը խորամանկ էր եւ ինկած գեղջկական ան-

կեզծ ու պայծառ հողիներէ կազմուած մթնոլորտի մը մէջ, գիտէր շահագործել ամէն մէկուն տկարութիւնը, բաժնելով տիրելու սկզբունքը որ արդէն իր մէջ առաջին օրէն իրեն հետ հասակ նետած էր:

Երբ Ռուբէն Տարօն հասաւ, դժգոհութիւնները կային արդէն Գէորգի դէմ, Սպաղանաց Մակարի դրդումներով՝ գլխաւորաբար, բայց դեռ անհամարձակ, Գէորգի հմայքին առջեւ կը լռէին:

Ռուբէնի ժամանումէն վերջն է որ կը տեսնենք թէ այդ դժգոհութիւնները փոխանակ մեղմանալու, կը խորանան ու կը լայնանան, լեզու կ'առնեն ու կը յանդին անհնազանդութեան միջադէպերու ընդդէմ մարտական անվիճելի դեկլարին որ Գէորգն է եւ ուրիշը չի կրնար ըլլալ, ատկից վերջն է որ կը տեսնենք թէ մթնոլորտը աւելի կը ծանրանայ եւ կը թունաւորուի, հոն ուր եղբայրական սէրէն աւելի վեհ ու հաստատ փոխադարձ գուրգուրանքը պէտք է տիրէր:

Կեդրոնի անպէս լիազօրը կը լսէ իր կրկին տարիքը եւ աւելի ունեցող հայդուկներու արտունջները, դժգոհութիւնները, եւ ինչպէս հաստատուեցաւ յետոյ, Օսմ. Սահմանադրութեան հռչակումէն յետոյ՝ կատարուած մանրակրկիտ քննութեան մը ընթացքին, իրեն համար այնքան ալ դժուար չէ եղած այդ տարեց մանուկներու միամիտ ու հաւատաւոր հողիներուն խորը, աւելի պեղել դառնութեան աղօսները՝ ակնարկութիւններով, երկդիմի խօսքերով, լուռ քաջալերանքներով:

Ան, միեւնոյն ատեն, ճանչցած է Գէորգի մաքուր ու ազնիւ սիրտը: Իր դէմ յարուցուած դժգոհութիւնները՝ որոնց մէջ գիտէ նախանձի բաժինը, իր մէջ ոխ ու ատելութիւն չեն կրցած տեղաւորել իր հին զինակից-

ներուն եւ նախկին քարեկամներուն հանդէս: Բայց կ'ընդունի թէ կացութիւնը չի կրնար յաւերժանալ, առանց վնասելու գործին, պէտք է կարգադրութիւն մը ընել եւ այդ պարտքը կ'իյնար իրեն՝ Ռուբէնին: Նոյնը կը պահանջեն նաեւ այլեւս բոլոր հայդուկները:

Ու կ'որոշուի ժողովի մը մէջ կարգադրել վէճերը, Ռուբէնի ներկայութեան:

Հսուելէ յետոյ բոլոր գժգոհութիւնները եւ ասարկութիւնները Գէորգի գէմ, կ'որոշուի զինաթափ ընել Մակարը, Շէնրկցի Ղազարը, Լաճկանցի Արթինը եւ Շէնրկցի Մանուկը:

Ամենամեծ պատիժն է որուն կ'ենթարկուին իր զեկալարին անհնազանդ մարդիկը. զինաթափ ըլլալ, զըրկուել այն գործիքէն, որուն վրայ կը դուրդուրայ իբր նուիրական մասունքի, պատժի անարդանքը այդ պարզ ու մաքուր հողիերուն համար՝ չի կրնար երբեք աւելի ծանր լիլայ: Որոշման կ'ենթարկուին գժկամակութեամբ, ոմանք նոյնիսկ ընդգլխութեամբ: Ու տղու պէս կուլան:

Բայց խոսոված է Գէորգի անհուական հողին: Իր հակառակորդներուն տրուած պատիժը, իր յաղթանակը հեռու իրեն գոհունակութիւն եւ հպարտութիւն առթելէ, խորապէս կը յուզեն զինքը եւ տղու պէս պլլուած Սպաղանայ Մակարի, իր գլխաւոր ոսոխին վիզը, կուլայ անոր հետ: Ու ժամ մը յետոյ, կ'երթայ պահանջել Կեղրոնի լիազօրէն... որ պատիժը վերցուի եւ գէնքերը վերադարձուին:

Ահա Գէորգի հողիին ամբողջ մեծութիւնը՝ փոքր գրուագով մը:

Ու այդ մեծութիւնը քանի կար ու կը տիրապե-

տէր Տարօնի շրջանին վրայ, լիազօր Ռուբէնի հողին
ինքզինքը ճղմուած ու ճնշուած կը զգար. գաճաճ տի-
րակալի իր մականը քարայրներէ եւ թաքստոցներէ
դուրս չէր կրնար ցուցադրուիլ:

Մականի եւ Գէորգի հաշտութիւնը աւելի կը բար-
ձրացնէր ու կամբարացնէր այս վերջինն հեղինակութիւ-
նը: Պէտք էր վերջ տալ ատոր եւ տհա, անակնկալ օր
մը, Ռուբէն Գէորգին կը ներկայացնէր Բիւրոյի նամա-
կը որով իրեն կը հրահանգուէր Կովկաս անցնիլ:

Հնազանդ բարձրագոյն որոշումներու, առանց կա-
րենալ վայրկեան մ'իսկ տարակուսելու անոր թաքուն
դրդապատճառին մասին, Գէորգ՝ իր հետն առած քանի
մը զինուորներ, կը հեռանար Տարօնի աշխարհէն դէպի
Կովկաս:

Սակայն, Գէորգ չհասաւ Կովկաս: Ահա թէ ի՛նչ էր
պատահեր:

Ճամբորդութեան ընթացքին Կովկասէն Հայաստան
գացող սուրհանդակը, Աղեքսանդր, հանդիպեցաւ իրեն
եւ անվերապահօրէն արտայայտուեցաւ արտասահմանի
այն քաղաքներու մասին ուր ինք գտնուած էր, Թիֆ-
լիս եւ Ալեքսանդրապոլ: Կը պատմէր թէ ի՛նչպէս եւ
ինչո՛ւ սպաննուած էին Միհրան, Ստեփան, Մուշեղ եւ
ուրիշներ եւ ուր հաղար տեսակ քսութիւններ վարա-
գոյրին ետեւ կը գործուէին յանուն գաղափարական
սրբութեան, թէ՛ Կեղրոնական Կոմիտէն եօթը տաճ-
կահայ տղաք սպաննել տուած էր եւ որոնցմէ մին էր
Հաւատորիքցի Աղաճանը:

« Աւելի լաւ կ'ըլլար, եզրակացուց, երթալ զին-
ուորութիւն ընելը, քան թէ մնալ Ռուսաստան »:

Կասկածը բոյն դրաւ Գէորգին ուղեղին մէջ: Խոր-

հեցաւ պահ մը : Ինք որ որոշած էր ենթարկուիլ Բիւրոյի որոշման՝ անդրադարձաւ թէ մի գուցէ Ռուբէնի խաղը ըլլար իր մեկնումը՝ նման վախճանի մը հասնելու համար : Ու որոշեց խակոյն վերադառնալ հայրենիք, ի պահանջել հարկին հոն մեռնելու, իր ժողովուրդին պաշտպանութեան ճակատին վրայ :

Իր վերադարձը ողջունուեցաւ խանդավառութեամբ : Բայց Ռուբէնին դէմքը խոժոռեցաւ, երբ իրարու հանդիպեցան : Գէորգ ըսաւ Ռուբէնին. — «Պէտք չունիմ կռնակէս դարնուելու» :

Օր մը՝ Քէօսէ Պինպաշին լուր կը դրկէր Գէորգին, տեսակցութեան մը համար հանդիպում մը ունենալու՝ Արադ գիւղը :

Մէկը քաղաքէն, միւսը լեռնէն կ'ուղղուին ժամագրավայր : Երկու սպաներ ընկերացած էին Պինպաշին, որոնք կը թուէին իրեն համախոհներ եղած ըլլալ :

Գէորգին հետ էին Ակէն, Չաթօն, Պօղոսը եւ մշեցի Ռուբէն Տօնիկեանը :

Երկու օրուան խօսակցութենէ մը վերջ՝ բաժանման րոպէին, քիւրար իբրեւ լաւագոյն բարեկամութեան արտայայտութիւն եւ իբրեւ գաղափարի կապ՝ կը թելադրէ իր վրայ չյարձակիլ օր մը, երբ կառավարութեան հրամանով զիրար ճակատեն : Արդ, այդ րոպէին ճանչցուելու համար ճերմակ պաստառ մը պիտի պարզեմ, կ'ըսէ :

**

Մինչ այս մինչ այն, Ռուբէն չէր դադրեր սակայն Գէորգին դէմ վարագոյրին ետեւէն խաղեր խաղալէ :

Գէորգ կ'իմանայ որ Ռուբէն Բեթար գիւղի զին-

ուորները հաւաքած է Ռէս Պետոյի տունը՝ յարգուած եւ սիրուած մէկը եւ կը կասկածի թէ իր դէմ դաւ մը կը լարէ :

Կ'որոշէ երթալ եւ անպայման հասկնալ անոր այցելութեան շարժառիթը, ի պահանջել հարկին բռնի ուժով :

Ռէսը տեղեակ էր ամէն մանրամասնութեանց, ու կուահելով հետեւանքները՝ անմիջապէս կ'ընդառաջէ դայն :

— Ռուբէնը ձեր տո՞ւնն է :

— Այո՛, հանգստացիր նախ ու յետոյ կը տեսակցինք :

— Հանգստանալու պէտք չունի՞մ, կ'ուզեմ իր հաշիւը մաքրել :

Պետոն խնդրեց : Խնդրանքին տեղի տալով, անցաւ դրացիի մը տունը, զայրոյթը իջեցնելու ու յետոյ տեսակցելու համար, Ռուբէնին հետ :

— Ես իշխանի նման չեմ ըներ, կը դարնեմ, կը սատկեցնեմ, դոչեց Փէորդ, երբ հետեւեալ օրը հանդիպումը տեղի ունեցաւ :

Ռուբէն՝ Ռէսին եւ տղոց առջեւ մեղայի եկաւ Փէորդին, խոստանալով անգամ մըն ալ նման արարքներու մէջ չգտնուիլ :

— Գնդակահարէ՛ դիս, հակառակ պարադային, ըսեր էր ան :

*
**

Այս միջադէպէն մէկ — երկու ամիսներ անցեր էին արդէն : Փէորդ՝ իր բարի եւ անյիշաչար բնաւորութեամբ, մոռցեր էր արդէն Ռուբէնի հանդէպ ամէն քէն ու սխ, եւ անոր կը դործակցէր առանց ոեւէ յետին

մտքի : Ու այսպէս , մէկ – երկու ամսուան թափառումներէ յետոյ , որոնց ընթացքին նոր այցելութիւններով ու հանդիպումներով շարունակէր էր ամրացնել հայ եւ քրտական յարաբերութիւնները , Գէորգ իր խումբին հետ կ'ուղղուէր Սուլուխ : Խումբին հետ էր Ռուբէն :

Գէորգ կը հիւրասիրուի Սաղոյենց տունը , Ռուբէն՝ Կուլանի Ստեփանի տունը , Գալէն եւ Մշեցի Ռուբէն՝ Չենոյենց տունը :

Անոնց ապահովութեան համար՝ նոյն երեկոյ գիւղին տղաքը կը ստանձնեն պահակի պաշտօնը :

Հետեւեալ օրը երկու սուրհանդակները , Ալօ եւ Ալօ , լուր բերին քաղաքէն թէ մատնուած են եւ թրքական ջսկատ մը արդէն կ'ուղղուի Սուլուխ , կէս ժամէն հասնելով գերեզմաննոց , որ գիւղէն հաղիւ քսան վայրկեան հեռաւորութիւն մը ունի :

Կռուի անհրաժեշտ պատրաստութիւնները կը տեսնուին , որոնց իրենց պատրաստակամութիւնն ալ կը բերեն գիւղին տղաքը :

Ֆէտայիները սկսան համբուրուիլ իրարու հետ , ինչպէս սովորութիւն էր ամէն անգամ որ կը պատրաստուէին կռուի :

Քանի մը տղաք զրկուեցան կամուրջին կողմը , ուրկէ մարդ պէտք չէր որ անցնէր :

Մնացեալ լուծը կեդրոնացաւ թրքական զանգուածին դէմ :

Գէորգ երկարօրէն քննելէ վերջ բանակը , տեսաւ որ զայն առաջնորդողը ուրիշ մարդ չէր եթէ ոչ իրեն այնքա՛ն ծանօթ ու մտերիմ Քէօսէ Պինպաշին , որուն հետ բարեկամութեան ուխտ էր ըրեր :

— Չկրակէ՛ք , յանձնարարեց Գէորգ իր զինուորնե-

բուն : Եթէ կարողանանք այսպէս կէս ժամ շահիլ, կը միջնէ՛ եւ կրնանք քաշուիլ մեր թաքստոցները՝ լեռները : Չկրակէ՛ք, սպասեցէք միայն անոնց յարձակման :

Բանակին դանդաղ ընթացքը տեսնելով, Ռուբէն կը մօտենայ Գէորգին .

— Ինչո՞ւ այսօր թրքական զինուորները արագ չեն :

— Կ'երեւի Քէօէ Պինպաշին կը հրամայէ, որպէս-զի կարողանանք սլատրաստուելու համար ժամանակ շահիլ :

Մինչ այդ կամուրջին կողմէն կրակը կը սկսի : Կռուի աղղանշանը տրուած էր :

Մէկ ժամ վերջ՝ Գէորգ կ'ուզէ կրկին քննել թըշնամի բանակին դիրքը ու կը տեսնէ որ Քէօէ Պինպաշին ճերմակ պաստառ մը ձեռքը կ'ընթանայ դէպի առաջ : Կը յիշէ՛ր անմիջապէս իրենց միջեւ դոյացած համաձայնութիւնը : Բայց հազիւ սլատրաստ իր կարգին դայն դիմաւորելու, Քէօսէ Պինպաշին ծանրապէս վիրաւոր կ'իյնայ գետին : Չարնուած էր Փէտայիներէն :

Գէորգ ժամանակ չունեցաւ աւելին տեսնելու : Բախտին չարադուշակ մէկ դիպուածով . . . ինք ալ կը տապալէր գետին՝ կռնակէն դարնուած :

Արդ, ինչպէս հաստատուեցաւ յետոյ, այդ պահուն Գէորգի ճիշդ ետեր եւ շատ մօտը կը դանուէր միմիայն Ռուբէն, որուն թշնամական զգացումները Գէորգի հանդէպ, ծանօթ էին բոլորին :

Գնդակը կռնակէն մանելով ձախ ծիծն էր ծակած :

Երկու ժամ եւս տեւեց կռիւը ու գիշերը իջաւ :

Փէտայիները եկան հաւաքել ինկա ծհերոսներուն գիակները :

Գէորգ մեռած չէր, բայց ծանրապէս վիրաւոր ու
ողեւար: Իր մարմինը տարին Մուրատի ափը ու անոր
եղերքէն սկսան դանդաղօրէն յառաջանալ դէպի Գոմս
գիւղը:

Բայց աւելի առաջ չկրցան երթալ: Գէորգ հետզհե-
տէ կը սպառէր: Գիտէր թէ պիտի մեռնէր: Թախանձա-
գին խնդրեց իր զէնքի ընկերներէն, հրամայեց անոնց
որ զինքը ձգեն հոն ուր հասեր էին, վրան քիչ մը խոտ
ծածկելով ու հեռանան, իրենց կեանքը փրկելով:

Լալով ու տաք համբոյրներով բաժնուեր էին զէնքի
ընկերները:

Առաւօտեա նդէմ քիւրտ մը՝ աշխատանքի համար
դաշտէ նանցած միջոցին, կը լսէ հծծիւններ: Ու կը
տեսնէ Գէորգին վիրաւոր մարմինը խոտերով ծածկը-
լած:

— Ավէ՛, ավէ՛ (Չուր, Չուր):

Քիւրտը փորձառութեամբ ծանօթ՝ թէ կրնայ Չու-
րը մահը փութացնելու նպատակ, կը յանձնարարէ չը
խմել: Բայց տեսնելով անոր թախանձագին խնդրան-
քը, չի կրնար մերժել:

Կը տեղեկանայ անոր անուան ու ապշահար՝ կրկին
կը խնդրէ չխմել:

Գէորգ խմած էր արդէն ու կը խնդրէ քիւրտէն որ
իւր զաւկին՝ Վարդգէսին, յայտնէ իր վերջին կամքը,
որ իր հօրը պէս ազատատենչ մէկը ըլլայ, ծառայէ հայ
ժողովուրդին:

Շատ չանցած, իր դիակը փնտռող զինուորները կը
հասնին:

Գէորգ մեռած էր արդէն. անոր տաք դիակին միայն
կրցան տիրանալ թուրքերը:

Ու գիտակը սայլին վրայ դրուած՝ Մշոյ քաղաքը
առաջնորդուեցաւ: Ամէն ոք, հայ թէ քիւրտ, տխրու-
թեամբ մը համակուած, մեծ յուզումով եւ դարմանքով
կը հարցնեն իրարու թէ ի՞նչպէս կրնար բլլալ որ նման
հերոս մը սպաննուի:

Մարմինը յանձնուեցաւ տեղւոյն առաջնորդարանը:

**

Գէորգի վիրաւորուելէն վերջ, կռիւը հազիւ վեր-
ջացած, Ռուբէն կ'անհետանար Սուլուխէն, ոչ ոքի
յայտնելով իր ուղղութիւնը եւ շերտը ատեն մնաց
պահուած, կորսնցնել տալով իր հետքը, չհամարձա-
կելով մէջտեղ ելլել ու երեւնալ:

Խուճիկը գոյութիւն չունէր այլեւս, չկար դեկավար,
չկար իր հմայքով ու լհեղինակութեամբ գոնէ անձնա-
պէս պարտադրուող մէկը որ հաւաքէր մարտական ու-
ժերը եւ ժողովուրդին պաշտպանութեան գործը, այդ-
քան զսոցութիւններու դիմով հասած այդ վիճակին,
փրկէր անխուսափելի քայքայումէն: Միակ անձը որ իր
պաշտօնին իսկ բերումով, իբր Կեդրոնի լիազօր կ'իյ-
նար այդ պարտականութեան տակ, կը ծածկէր ինքզին-
քը եւ կը փախէր իբր եղբայրադաւ սպանիչ՝ ժողովուր-
դին ու մարտիկներուն մեղադրական դայրոյթէն:

Երեք հոգի միայն մտածեր էին ելք մը գտնել այս
վատ կացութեան: Սերկօ եւ Ջնդօ, որոնք Կովկաս՝
հայ - թաթարական կռիւններուն մասնակցած էին, եւ
մտերմացեր էին Ռուբէնի հետ Տարօն եկած Չաւէնին,
ապաստաներ էին Արտօնք ուր երկար խորհրդակցու-
թենէ մը յետոյ, ուրիշ միջոց չգտնելով, եւ իրենց վի-
ճակը չափով մը բարուղեւոր յայտով, որոշեր էին դի-

մեւ թիւրտ Ղասըմ պէկին, որ Գէորգի մտերիմ բարեկամն էր :

Ռուբէնը աներեւութացեր էր . կը կարծէին թէ ան գաղտնի ճամբաներով եւ աննշմար ապաստանած է Կովկաս եւ փրկութիւնը կը սպասէին թիւրտ ցեղապետէն, որուն կառավարութիւնը դէշ աչքով կը նայէր իբր ըմբոստ եւ ըմբոստներու բարեկամ :

Ու տեսակցութեան մը համար լուր ղրկեցին իրեն :

Չաւէնի, Սէյտոյի եւ Չնտոյի հրաւերը սիրով ընդունեց Ղասըմ պէկ : Հինգ – վեց համակիրներու ընկերակցութեամբ գնաց տեսնել զանոնք :

Երկար խօսակցութիւն : Գիշեր : Կը բաժնուին իրարմէ հանգստանալու համար :

Տղաքը կընկղմին անվրդով քունի մը մէջ՝ այն յոյսով թէ շուտով իրենց մասին կարելի կարգադրութիւններ կ'ըլլան իրենց թաքստոցային դիրքերէն ազատուելու, կարելի ազատութիւնը ձեռք բերելու եւ թերեւս կարողանալ Կովկաս անցնելու համար :

Բայց մինչ անոնք կը քնանային, Ղասըմ պէկ՝ դիւային ծրագիր մը նախապէս պատրաստած, օգնու – թեամբը իր ընկերակիցներուն, երեքն ալ իրենց քունին մէջ կը սպաննէ ու կը հեռանայ գիւղէն :

Ըրաւ այդ բանը, կարողանալ ըսել տալու համար թէ իրապէս կապ չունի հայ «հրոսակներ»ու հետ, եւ թէ իրապէս ուրեմն արժանի է ներման : Արարք մը պէտք էր երեւոյթները փրկելու համար :

Իրեն ներումը գնուեցաւ երեք Փէտայիներու արեան գնով՝ իրեն բարեկամ շէյխերուն միջոցաւ :

Այս ալ ուրիշ դժբախտութիւն մըն էր իր կարգին՝ Գէորգին մահէն վերջ :

Մինչեւ մօտ ամիս մը՝ իր ներսումը, Գէորգի սպանութեան մասին ոչ մէկ բան կ'արտայայտէր Ղասրմ պէկ: Բայց յետոյ սկսաւ տարածայնել թէ Չաւէն, Սէյտօ եւ Ջնտօ իրեն ըսած են, իրենց մեռած օրն իսկ, երբ միատեղ եղած են, թէ Գէորգին մահացու հարուածը ուրիշ մարդէ չէր կրնար դալ եթէ ոչ Ռուբէնէն: Ինքն ալ իր կարգին նոյն եզրակացութիւնը հաստատող կապած մըն էր ունեցած, նկատելով որ Ռուբէն իրեն այցելութիւններ չէր տար ինչպէս նախապէս, Գէորգին մահէն վերջ:

*
**

Եւ վերջապէս յայտարարուեցաւ Օսմ. Սահմանադրութիւնը, իր հետ բերելով քաղաքական գինովութեան սկիզբի շրջանէն վերջ՝ ազատութեան հով մը, որ յետոյ, մեզ պիտի նետէր դարհուրելի փոթորիկի մը յորձանքին մէջ:

Գարմէն (Խրիմեան Հայրիկի դիւանապետ՝ Տաճատ վարդապետ) գործիչ դարձած էր ու անցած Տարօնի աշխարհը: Իր գործունէութեամբ իսկ ժողովուրդին այնքա՛ն սիրելի յեղափոխական:

Սահմանադրութեան հռչակումով ներուեցան նաեւ բոլոր Ֆէտայիները: Ռուբէն ամէնէն վերջ իր թաքստոցէն ելած՝ անցաւ Ռուսաստան, ուր իր ծնողքը կը գտնուէին:

Ռուսաստանէն ու Պարսկաստանէն վերադարձան շատ շատեր՝ իրենց ծննդավայրը: Հաճի Յակոբ Կոտոյեան, Մկրտիչ, Արշակ եւ Պօղոս Պոլոյեաններ, Արօ Շահրիկեան, Արամ Յակոբեան, Վարդենիսցի Հարաթ, իւրաքանչիւրը իւր խմբով, վերադարձան Պարսկաստանէն՝ Տարօն, ինչպէս ես:

Ամէնքս մէկ ուխտագնացութիւն մը կատարեցինք
 դէպի Չափուշին գերեզմանը եւ օրհնել տուինք դայն :
 Այլեւս, աւա՛ղ, անցած էր զգուշութեան, գաղտնի եւ
 շրջահայեաց գործունէութեան շրջանը : «Վաթանտա?»—
 ներու բաց աչքին առջեւ, քիչ մըն ալ դանոնք շլացնե-
 լու մանկամտութեամբ, լծուեր էին գործունէութեան
 մը, որ ոչ մէկ գաղտնի երես ունէր . . .

Տարօնի մէջ ընտրուեցաւ կեդրոնական կոմիտէ մը՝
 նախաձեռնութեամբ Գարմէնի : Անդամներն էին՝ Սա-
 սունցի Մանուկ, Պոլոյեան Մկրտիչ, Կոտոյեան Հաճի
 Յակոբ, Կառնէն գիւղացի Մկրտիչ, Արօ Շահրէկեան եւ
 ես :

Մեր ընտրութենէն անմիջապէս յետոյ, խումբերը
 մեզ գրին գրաւոր ու բերանացի պահանջներու առջեւ,
 որոնց գլխաւորներն էին .—

1.— Գէորգի սպանութեան պարագաներուն քնն-
 նութիւնը :

2.— Ձեզմարարութեամբ ամբաստանուած Պոէ-
 եան Միսաքի խնդիրը :

3.— Հողային հարց, որ յառաջ եկած էր, բռնա-
 տիրութեան դէմ ժողովուրդը գինելու համար դրամ
 հայթայթելու նպատակով, հողերու գրաւադրումէն :

Առաջարկներու կարեւորութեան առջեւ կեդր. կո-
 միտէն որոշեց Շրջ. ժողով հրաւիրել :

Ժողովին համար անհրաժեշտ պատրաստութիւն-
 ները տեսնուեցան ու պատգամաւորները սկսան հաս-
 նիլ (4 պատգամաւոր Չիտուր գիւղ, 4՝ Յրօնքի շրջան,
 4՝ Ձիարաթի շրջան եւ Սուրբ Կարապետ, 4՝ Աւաքելոյ
 վանք եւ Արաղի շրջան, 2՝ Վարդովի շրջան, 2՝ Մալադ-
 կերտի բերդ, 2՝ Գոփ եւ իր շրջանը (Պուլանուխ), 4՝

Սասուն եւ Տալուորիկ, 8 պատգամաւոր ալ քաղաքը) :
 Հրաւիրուած էին նաեւ Չաւարեան եւ Տոքթ. Չավ-
 րիէվ :

Շրջանային ժողովը տեղի ունեցաւ Մշոյ քաղաքի
 ազգային առաջնորդարանի ընդարձակ շէնքին մէջ եւ
 տեւեց 15 օր :

Հաստատուեցաւ Միսաք Պտէեանի ղեղծարարու-
 թիւնը՝ որ իր տրամադրութեան տակ գտնուած յեղա-
 փոխական գործերու գումարները յատկացուցած էր
 անձնական առեւտրական գործերուն :

Վճռուեցաւ որ վճարէ տարեկան 250 օսկի տո-
 կոսով մինչեւ այդ գումարին լրացումը (1000 օսկի) :
 Միսաք ընդունեց :

Հողային խնդրոյն համար ժողովը որոշեց Բարե-
 գործականէն փոխառութիւն մը կնքել ի նպաստ հայ շի-
 նականներուն՝ իրենց դրաւ դրձուած հողերուն ձերբա-
 դատմանը համար :

Յուզումը մեծ էր պատգամաւորներուն մէջ երբ
 զարգը եկաւ եկաւ Գէորգի սպանութեան պարագանե-
 րուն :

Հոն էր անոր դիակին մերկ լուսանկարը, որ աւելի
 կը նպաստէր բնականաբար տիրող յուզումը խորացնե-
 լու :

Շրջանային ժողովը նկատելով այս պարագան որ
 կրնար անհամեմատօրէն մեծ հետեւանքներու հասնիլ,
 որոշեց հինգ հոգինոց յանձնախումբի մը կազմութիւ-
 նը, որ առարկայօրէն հաւաքելով ամէն վկայութիւն,
 վերջնական արժէք ներկայացնող եզրակացութեան մը
 հասնի :

Յանձնախումբը դիմեց այն Փէտայիներու վկայութեան, որոնք Գէորգի կողքին կռուած էին վերջին անգամուն ու ծանօթ էին մանրամասնօրէն ոչ միայն Գէորգին այլեւ իւրաքանչիւր կռուողի մարտական դիրքին՝ կռուի ընթացքին :

Դիմեց Ղասըմ պէկի եւ քիւրտերուն՝ Ավզուտ դիւղացի Ռէս Մալխասի միջոցաւ, ու հասաւ այն եզրակացութեան թէ Գէորգը մահացնող դաւադիր ձեռքը Ռուբէն Տէր Մինասեանինն էր :

Այս որոշմամբ կը չքմեղանար նաեւ Սուլուխցի Սամօն որ կ'ամբաստանուէր իբրեւ մեղսակից՝ Գէորգը սպաննողին :

Հակահարուածը մեծ պիտի ըլլար ժողովականներուն մէջ ի լուր սոյն եզրակացութեան : Յանձնախումբը կանխատեսեց այս բանը ու բաւականացաւ միայն իր կազմին աւելցնելով Զաւարեանը, Տոքթ. Զաւրիէվը, Վարդան վարդապետը, Հաճի Յակոբը, Պոլոյեան Մկրտիչը, Սասունցի Մանուկը եւ դիս :

Խորհրդակցաբար ամէնքը որոշեցին գաղտնի պահել Գէորգի սպանութեան պարագաները՝ ժամանակի ընթացքին կարելի մոռացութեան մը տալու համար :

Ժողովը որոշեց նմանապէս պատարագ մը մատուցանել տալ ու առիթը օգտագործել քիչ մը դրամ հաւաքելու, Գէորգին եւ բոլոր նահատակներուն դամբարան մը կառուցանելու համար :

